



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

«ԱՆԱՏԻՏ»  
ՆԱՆԴԵՍԸ

Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 9 9

ՅՈՒ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԸ

ԳՏՀ 002»2  
ԳՄԻ 76.1  
Ա 791

*Նվիրում են պատիս և տատիս՝  
Վեցի Հնայակ և արաչկերպիկի Մայրապրիտ  
Հակոբյանների եկամտակին*

Ավետիսյան Յո. Ա.

Ա 791 «Անահիտ» հանդես.-Էր., Երևանի համար. կրտ., 1999,  
228 էջ:

Գրքան ներկայություն է Արշակ Շարանյանի խորհրդած «Անահիտ»-  
ազգային, գրական և գեղարվեստական համերկի ստաշին շրջանի (1898-  
1911) գործունեությունը: Շարանյանը է համերկի կրտարանորոշյան  
պատմությունը, բնութագրվում են տխրարանական համերկյաները, բնու-  
թյամբ է նրա տեղն ու դերը հայ կրտարանական մայրի, ստրկային գրական-  
ության զարգացման և պրոգրեսիան մամուլի պատմության մեջ:

Ա 4502010000  
704/02/-99 - 99

ԳՄԻ 76.1

ISBN 5 - 8084 - 0166 - 6

© Յո. Ա. Ավետիսյան, 1999

**Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

ԵՐԿՐԻ ԽՈՍՔ .....	5
<b>I. «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ</b>	
ԵՎ ՀԻՄՆԱԳՐՈՒՄԸ .....	7
1.1 Ա. Չոպանյան (կտակի և տակնագրածության ուրվագիծ) .....	7
1.2 «Մաղիկը» Ա. Չոպանյանի խմբագրությունը .....	29
1.3 «Անահիտ» հանդեսի կրտարանկարության պատմությունը և ծրագիրը .....	41
<b>II. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱՎԱՆ ԿՅՈՒՄԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ</b>	
ՀԱՆԴԵՍԻ ԷԶԵՐՈՒՄ .....	63
2.1 Թուրքական իշխանությունների հակահայկական քաղաքականության քննադատությունը .....	63
2.2 Հայ-երկառուրդական առևտրյունները .....	66
2.3 Ազգային ազատագրության ուղիների հարցը, ար- տաքին միջամտության անհրաժեշտությունը .....	71
<b>III. ԳՐԱՎԱՆ-ԳԵՎԱՐՎԵՍԱՎԱՆ ԸՆԹԱՅՔԸ ԵՎ</b>	
«ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԸ .....	74
3.1 Հոգևոր-գրական սրնդորտոր և «Անահիտ» գրական ծրագիրը .....	74
3.2 Ազգային ակադերնը և դասական ազանդները .....	81
3.3 Համաշխարհային գրականության վարձը .....	99



3.4 Ժամանակի հայ գրականության վերածական բնույթը և գրական ուղիների հարցը .....	119
3.5 Ազգային արվեստի ուղիներում .....	139

#### IV. ԱՐԵՎԱՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԸ

ԵՎ «ԱՆԱՀԻՏԸ» .....	151
4.1 «Անահիտը» լեզվի և ոճի մասին .....	155
4.2 «Անահիտի» հրատարակատարյան լեզուն և ոճը .....	161

#### V. «ԱՆԱՀԻՏԻ» ԸՆԹԵՐՅՈՂ ԱՍԱՐԱՆԸ

5.1 Ասարանի բժական կազմը .....	175
5.2 Աշխարհագրական կառուցվածքի յուրահատկությունները .....	178
5.3 Մոդիարական (բնիկային) կազմը .....	193
5.4 Ասարանի առաջին արձագանքները .....	194

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈՆԱՐԵՆ	209
ՀՂՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	214

#### ԵՐԿՈՒ ԽՈՍԸ

Բացառիկ է «Անահիտ» հանդեսի դերը հայ մշակույթի պատմության մեջ: Ազգային, գրական-գեղարվեստական այդ հանդեսի հրատարակությունն սկսվել է 1898-ին Փարիզում և քննադատմանը՝ չարամակվել մինչև 1949 թվականը (1898-1911, նոր շրջան՝ 1929-41, 1946-49): Հրատարակի վրա լինելով շուրջ երեսուն տարի՝ պարբերականն անվիոխարինելի ծառայություններ է մատուցել հայ գրականության ու գեղարվեստի զարգացմանը, մեծապես նպաստել հայ ու եվրոպական ժողովուրդների գրական կապերի ամրապնդմանը, արևմտահայոց ազգային դատի պաշտպանությանն ու Սփյուռքոտրիդային Հայաստան կապի զարգացմանն ու զորացմանը և հայ պարբերական մամուլի հարուստ պատմության մեջ գրավել յուրահատուկ ու առաջնակարգ տեղ:

«Անահիտ» հանդեսը առ այսօր հետազոտության առարկա չի դարձել, քեև հանդեսի գործունեությանն անդրադարձել են ինչպես անցյալում, այնպես էլ ներ օրերում, քեև հանդեսը մշտապես եղել է հայ պատմագրության, գրականագիտության ու գեղարվեստական մտքի ուշադրության կենտրոնում: Նույնիսկ կարելի է խոսել ստեղծված որոշակի ավանդույթի մասին, որ բավանդակում է հայ մամուլի էջերում հրատարակված մի բանի սասնյակ հոլվածներ և ուսումնասիրություններ, գրական ակնարկներ ու անալիզներ, հանդեսի խմբագրի՝ Արշակ Չոպանյանի կյանքին ու գործունեությանը նվիրված մի շարք մենագրական հետազոտություններ՝ «Անահիտի» մասին զուգահեռ խոսք է տալի նաև տարբեր գրողների ու հրատարակատեսերի ժառանգությանը նվիրված ուսումնասիրություններում, ինչպես նաև հայ ժողովրդի պատմության, մշակույթի ու գրականության բնիհանուր խնդիրների կապակցությամբ:

Այդ ավանդույթին, որի արժեքավորությունն անմխտելի է, հասակ է, սակայն, հանդեսի գործունեության միայն մեկ կամ մի բանի

կողմերի վերածության հանդեմ կամ էլ ամենարդիանոր գնահատմանը ու դիտարկումներով սահմանավակրելու իրողությունը: Այդ հետազոտություններն ու ուսումնասիրությունները ըստ իրենց բնույթի ու նպատակների չեն հավանում տալ «Անահիտ» հանդեսի հասարակական ու գրական-գեղարվեստական ամբողջական նկատարվողը<sup>2</sup>:

«Անահիտում» ամփոփված նյութը ընդգրկում է երևույթների բավական լայն շրջանակ՝ հայ հասարակական և մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառները: Իր հարցասիրությունների հանդուգիտական իրողությամբ, բնաստիկայով ու քվեանդակությամբ հանդեսը կոչված էր ծառայելու մեկ և հիմնական նպատակի՝ նպաստելու հայ ազգային գաղթոնքին, հայ ժողովրդի եղևոր ու քաղաքական վերածնությանը: Այս իմաստով «Անահիտը» ներկայանում է որպես մի յուրօրինակ ամբողջական համակարգ, որի յուրաքանչյուր տարրը, ներքին ու արտաքին կառուցվածքի, գաղափարական ու գեղարվեստական հղացման յուրահատկությունները ստեղծվում ու արահատայվում են մեկ ընդհանուր էություն վրա:

Ներկա ուսումնասիրության մեջ հենց այդ ստեանկյանն էլ փորձ է արվում բացահայտել ու մեկնաբանել հանդեսի գործունեության էությունը կողմերը, ապա այդ գործունեության ազգային-հասարակական ու գեղարվեստական գնահատականը<sup>3</sup>:

Առաջադրված խնդրի լուծման իմրնին ներառում էր ժամանակաշրջանի հայ մտնոլի, հասկապես արևմտահայ տասնյակ րեբրի ու հանդեսների մանրակրկիտ ու հետազոտական ուսումնասիրություն: Այնատանրը շարադրելիս օգտվել ենք նաև Հայաստանի մշակույթի նախարարության Ե. Չարնեցի անվան գրականության և արվեստի քանգարանում պահվող՝ Արշակ Չոպանյանի արխիվից, Մ. Մաշտոցի անվան մատենադարանի տասնմիկն ձեռագրից, որոնք անցվում են «Անահիտին»: Ուսումնասիրության համար էիմնական աղբյուր են հանդիսացել հայրենական գրասպանոցներում պահվող «Անահիտ» հանդեսի հավաքածուները:

## 1. «ԱՆԱՀԻՏ» Ն ՀԱՆԳԵՍԻՍ ՆԱԽԱՊԱՍԻՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԳԻՐՈՒՄԸ

Արևմտահայ հասարակական կյանքի և գրական ընթացքի էությունական պահանջներով հրապարակ իշամ «Անահիտ» հանդեսը, ըստ էության, արգամիրն է նրա խմբագրի՝ Արշակ Չոպանյանի անհատականության, գրողի ու բնագաղայի նրա հոսանդուն չանբերի, ստեղծագործական ու գաղափարական հղացումների: (Հանդեսի նյութերի երկու երրորդից ավելին հեղինակել է ինրը՝ Չոպանյանը): Այս իմաստով հանդեսը կարելի է նկատել իբրև շարունակության և անբաժան մաս Չոպանյանի ստեղծագործական վաստակի: Ուստի և մինչև «Անահիտի» գործունեության ընթացյանն անցնելը փորձենք համառոտակի ներկայացնել Ա. Չոպանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը ջանալով հնարավորին չափ համակողմանիորեն գույց տալ նրա աշխարհայացքի, հասարակական կոմունորչունների ու գեղարվեստական ընթրնումների ձևավորման, զարգացման ընթացքը, գրական ժամանգության հասկանչական կողմերը:

1.1 ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ  
(ԳՅԱՆՔԻ ԵՎ ԱՏԵՎԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՐԱՍԿԻՑ)

Արշակ Չոպանյանը ծնվել է 1872 թ. հունիսի 15-ին Պոլսի Պեչկերաշ արվարձանում՝ Ալեկից սելված Հովվյանների էին գեղդաստանում: Վաղ հասակում գրվելում է մտքից: Նրա դաստիարակությամբ գրադվում են Էրպիս և Ազգայի քալրերը, որոնց շնորհիվ էլ Արշակը դառնում է գրանամալ: Հայրը՝ ոսկերիչ Հովհաննեսը, դժվարությամբ էր վաստակում ընտանիքի ապրուստը, րևև ճանաչված ու հնուա արհեստավոր էր: Արշակի մտնորությունն անցնում է մայրու-

կան սիրո կարողի, այլսոր մտորմունքի, աամանորյան և նյորական անպապառի կյանքի մրնորարում: Մի հանգամանք, որ ոչ միայն գեղարվեստական ամբիջական արտագրում և գտել նրա տասյի ստեղծագործություններում, այլև որդյակի ազգեկորյուն և անցելի Չոպանյան աննասականորյան ձևավորման վրա, նրա սպարվորվող հուզում ի հայտ բերել նուր ու զգայուն յարիք:

Կրթորյունն ստացել է Մարցոնիյան (1882-1886) և Գլազարի նորաստեղծ Կեղորնական (1887-1891) վարժարաններում: Այդ տարիները Չոպանյանի համար եղան բնատոր ճիթրիի հասունացման ու ստեղծագործական մտքի կազմավորման արտասպար մի շրջան: Ապագա գեղագետ բննորարար հաղորակից դարձավ «զգակամորյան իննաստական նրբակրկիտ ընկալումի առաջին» հայտնագործումներին<sup>1</sup>, ձնոր բերեց տեսական գեղեղարներ:

Կրթորյան պակաար իրագրվել էր բերկցամորյունք. խանվածքով ներիուն, բախձուտ, բայց և անհանգիստ ու աննորուն պատամու վրա մեծ ազդեցորյուն են բողնում ոտմանսիկ բանաստեղծներ Գ. Ալիշանը, Մ. Պեշկերաշչյանը, Պ. Դորյանը, համաշխարհային գրականորյունից՝ Հյուգոն, Բայրոնը, Ռիչընսն և Մյուսեն: «Անաստվածներս», - գրում է նա բարեկամներից մեկին<sup>2</sup>: Իր այս «աստվածների» հետ Արշակը հաճախ էր աամաննանում Ենի-Մեսապիկ մուշկ բորող ժառասանում և ժամեղով ինքնամոռաց բայվում Կրակցերի ու կապույտի գրավիչ աշխարհում: Մանկորյուն բախձուտ օրերի կրակներով նրբացած ճաշակը հարուստ լիցրեր էր ստանում բերկցամորյունից: Չեակվորում էր բանաստեղծական մի խանվածք, որ սիրելի ոտուցիներ է. Մորապայտի, Ս. Ռոյլանի, Թ. Խեղզյանի, Գ. Մովսեճյանցի, Ե. Տեմիրճիալչյանի խանդավառ հեղամորյունք իմաստավորվելով հայ գրականորյուն ու մշակույթի կրկանմամբ մեծ սիրով հետա այնքան ներդաշնակորն պիտի կյուսվեր կրպարակախու-բննայտի ինքնատիպ տաղանդի հետ:

Գրական նախավորները բանաստեղծորյուններ լին, գերազանցապես սիրո ու բնորյուն գեղեղիկ պատկերներ: Իսկ հետո՝ արձակ էչեր, գրական-կրպարակախուսական բնորի հուրվածներ, բարձրամորյուններ (Յրանսերենից հայերեն, հայերենից Յրանսերեն) և այլն<sup>3</sup>:

Պատանորյուն օրերից Չոպանյանը մեծ հետարբորյուն և ցուգարերկ եկրուպական մշակույթի նկատմամբ՝ վայելալիով Յրանսիայում ոտուրը շարունակելու կրպանը: Մակայն նյորա-

կան սող պայմանները հնարավորորյուն չեն սպի այն իրականացներ: Ավարուելով Կեղորնականը նա աշխատանքի և անցնում է Պոլսի հայկական դպրոցներում, իսկ «Հայրենիք» ազգային-գրական և բարարական օրարերի իննամորյունից հետո (1891) Արիխար Արվիխայանի կողմից կառավորում է աշխատակցելու բերրին իրրև օգնական-խմբագիր և մնայուն աշխատակից: «Հայրենիքի» շորքն են համախմբվում ժամանակի արննաստիպ մտավորականորյուն սկսանալոր դեմերք Գ. Ձեղարաղ, Լ. Բաշալյանը, Տ. Կամսարականը, Ե. Տեմիրճիալչյանը, Թրվատիցիին, Լ. Սևորյանը (Շանր), Ե. Օռլյանը, Մ. Կյարճյանը և արիչներ: Չոպանյանին բախտ էր վիճակվել գործելու այդ նշանալի մտավորականների ընկերակորյունը, նրանց բարեբախտ աղեկգորյունը կրկելու կրպարակախու-բննայտի իր միտքն ու գեղագետի ճաշակը: Շատ շուտով «Հայրենիքի» խմբագրատանը նրա համար դարձավ «այն միակ անոր Պոլսա մեք որ ամենեն ազատ, ամենեն գեղեղիկ, ամենեն կենսակալ գործը կատարելու բաղձանը գոյորյուն ուներ»: «Հայրենիք» դարձավ ամենեն ժողովրդական բերքը, -հավատում է Չոպանյանը տասնամյակներ անց, գոր միչև այն աման ունեցած զրար Արննաստիպորյունը, աղաներու տիրավորյունը սող դրավ մտավորականներու տիրավորյունը, գարգացուց բննայտական ուղին, գեղեղիկ գրականորյուն սերը աարածեց ժողովորդին բողը խավերուն մեք»<sup>4</sup>:

«Հայրենիքին» գուպախն և մույնպիսի անալով Չոպանյանն աշխատակցում է նաև 1892-ից Հրանտ Մատարի և Գրիգոր Չեղարի նախաձեռնամորյունը Պոլսում կրպարակալով «Մասիս» գրական շարարարերկում, աամանճին գրվածքներ ուղարկում «Արևելիին», ապագրվում արևելահայ պարբերակներում և Յրանսիական կրպարվում<sup>5</sup>: Սակ մյուսի հետևից լույս են տեսնում նրա առաջին գեղքը «Արշալույսի ձայներ» խարագրով (1891), «Թրքուսներ» բերկվածների ժողովածուն (1892), «Թորայի վապ» հոգերանական վիպակը (1892): Չոպանյանն իր ժեղեր վործում է նաև դրանաստարկայի սպարերկում «Հայրենիքի» Կեղում երևան հանելով «Մոր խավեր» ինց գործողորյունը դրանամ: 1893 թ. վերջերին սկսարում է «Պոլսորս Դորյանի կյանքն ու գործը» մննագրական ոտունասիրորյունը (1894, Թիֆլիս), որ նրա գրականագիտական առաջին լուրջ աշխատանքն էր, միաժամանակ Դորյանի մասին գրված բննայտական անդրակի ծանրակալիտ հետազոտորյունը, որով ինքը դրվեց մեծ բանաստեղծի ժառանգորյուն գիտական ոտունա-

սիրմանը<sup>6</sup>:

Այս հրատարակությունների առիթով հեղինակի գրական առաջնորդ բարձր են գնահատում է. Տեխերնյալյանը, Գ. Չոխրապ, Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը, Հովի. Հովհաննիսյանը: Իսկ հետագայում Չոպանյանի այդ օրերի գործը արևմտահայ գրականության պատմաբան Հակոբ Օշականը բնութագրում է հետևյալ տոնով. «Իրապաշտ շարժումին լիարյանք մեջ իր ստաղանը կազմավորող այս պատանին սխալ չլլար բեռանին մանրանկար արևմտահայ գրականությունն ճ»<sup>7</sup>:

Երկաստաղ Չոպանյանի գրական դաստիարակության գործում պակաս կարևոր դեր չեն կատարել է. Պոլսի արվարձաններում Օրբազոյում և Գասազոյում արևմտահայ երիտասարդ գրողների ուժերով պարբերաբար կազմակերպվող սեմյակային գրական աստիակները, որոնց ակտիվ մասնակից էր նաև ինքը՝ Չոպանյանը:

1893-ի աշնանը «Մար խավեր» պեխն բնագրությունից ստացված գոմարով և բարեկանների օժանդակությամբ Չոպանյանին վերջապես հասցրվում է մի կարճ ժամանակով (մոտ մեկ տարի) մեկնել Փարիզ, ինչպես ինքն է ասում, «ազատ *էրջաներ* ընելու համար»<sup>8</sup>: Այստեղ նա ունկնդրում է Սորոսի և Բելմո դը Յրանոսի դասախոսություններին, ներկա լինում արվեստի բազմաթիվ ցուցահանդեսների ու քանդակարան ներկայացուցիչների, այցելում քանդակարաններ, հանդիպումներ ունենում և ծանոթություններ հաստատում Կրասիկան մարի ակադեմիայի ներկայացուցիչների՝ Էնի Չոսայի, Ալֆոնս Դոդիկի, Ժան Լաբենի, Հանրի Պոնրի և այլոց հետ: Չոպանյանը եղավ նաև Եվրոպական այլ քաղաքներում Էնդոնում, Անվիլում, Բրյուսելում և այլուր: Տպագրությունները հարուստ էին ու բազմազան: Այդ մասին են խոսում այն բազմաթիվ բրոնշիկները, գեղարվեստական պատկերներն ու ռեպրտաժները, որ նա Փարիզից պարբերաբար ուղարկում էր պղտասայ թերթերին ու հանդեսներին՝ «Բարիզյան քրոնիկ», «Նրատերական քրոնիկ», «Քարիզյան պատկերներ», «Լոպոլին մեջ պաուլյաներ» և այլ խորագրերով:

Նոր միջավայրը մեծ չափով նպաստեց Ա. Չոպանյանի գեղարվեստական ճաշակի բարձրագույնը, քննադատ մտածողի գործը, հարուստ գիտելիքներ ավելց կերպով կան ճշակույթի և հատկապես արվեստի նորագույն ուղղությունների մասին:

Փարիզից վերադառնալուց անմիջապես հետո (1894 թ. աշնանը) Չոպանյանը փորձ է անում հրատարակել «Հայրենիք» օրաթերթի

կիրակնօրյա գրական հավելված: Այդ փորձը, սակայն, ձախողման էր դասապարսաված «Հայրենիքի» խմբագրի շվանուրյան պատճառով: Շատ չանցած (1895թ.) նա ձևափոխելու եղավ «Մաղիկ» գրական-գեղարվեստական հանդեսի հրատարակմանը այստեղ լիարյանք դրսևորելով նաև իր խմբագրական առաջնորդ: Միաժամանակ Չոպանյանը շարունակեց մանկավարժական գործունեությունը Պոլսի հայոց դպրոցներում: Անդրոնական վարժարանում նրան են հանձնվում նաև Կրասիկական գրականության գասերը:

1894-96-ի ապետայի դեպքերը շրջապարձային նշանակություն ունեցան Արշակ Չոպանյանի կյանքում: Գրականության և արվեստի հրայրներով ապուրդ երիտասարդ գրագետի առջև անուպակոխորեն բազմից իր ժողովրդի ուրբերգական կյանքի դրաման: Պոլսի փառացներում, Բուժորի ակերին նա ակնհաստես եղավ այն տեսվոր սպանողին, որ անդապակողուն սպանում էր քաղաքակիրք մի անբոջ ազգի գոյությանը: Եվ նույն ժամանակ, երբ զավառներում ու մայրաքաղաքում համվրյան կոտորածները իրենց սե գործն էին կատարում, Եվրոպական մամուլի օրգանները կան բազմաանշանակ լռում էին, կամ էլ հակասաղ հողվածներով էին լցնում իրենց էջերը: Իսկ Եվրոպան ուղղում էրիտարարական քննողիմադիր թերթերն ու հանդեսները ոչ միայն ձգտում էին չարտերի անբոջ պատասխանաժողովությունը բարդել հայերի վրա, այլև հեղքում էին հայ ժողովրդի անզան քաղաքակիրք ազգ լինելու հանգամանքը, փորձում էին իրենց քննրեցողներին համոզել, թե «հայերը վիպասամենք, բանաստեղծներ, դասական ու նոր գրականության չեն ունեցել, որ նրանց կուլտուրան նույն բարբարական կուլտուրան է»<sup>9</sup>: Այսպիսով, դարերի վիթխարի ժառանգության կուսակառու մի ժողովուրդը ներկայացվում էր բարբարազորի մի տարր, որն իր հեղավոխական խաղոպյաններով իր պատճառ է դնում զանգվածային կոտորածների Բուրյր գաղափարականների ու նրանց Եվրոպական համակիրների որդան էլ անհերթ, որքան էլ կեղծ այսօրինակ հանգարանությունները, այնուամենայնիվ, որոշ ազդեցություն էին ունենում՝ ապակողմնորդելու եվրոպական հասարակական կարծիքը հայերի մասին:

Քաղաքական այսպիսի պայմաններում խորապես գիտակցելով իր ժողովրդի արդար գասի պաշտպանության անհրաժեշտությունը և գնահատելով Եվրոպայի առաջադիմական ուժերի աջակցությունը՝ Չոպանյանը մի կողմ է դնում գրողի ու բանաստեղծի խաղաղ կյանքը և մտնում է հասարակական կյանքի հորձանուտը՝ իր ուղղակի և

անմիջական ժառանգությունը մատուցելու ազգին: «Մինչև հայկական կոտորածները գոր Մուրան Համիտ կազմակերպից, - գրում է Չուպանյանը, - ես իմ ազգին հանդես գալստով խորին սերն կարոտանայ- նով անոր զբաղվածությունը ճոխացնել ձգտող աշխատանքներով միայն, բանաստղծություններ կարդալով, բանաստղծություններու ու զբաղված դիմելու վրա ուսումնասիրություններ գրելը իմ միակ կրայիս էր ու միակ հրմմանը: ... Ջարդերը զիս ցնցեցին, իմ մեկուսացած գաղափարական հանդարտության անբարեխիտ ու հանգա- պարտ ցույց տվին ինձի: Կյանքիս ամենն խորին կերպարանափո- խություններն են նկատ կրեցի»<sup>10</sup>:

Փորձելով ի մնալուս հայկական դատի կողմնորոշվել Եվրոպայի հասարակական կարծիքը՝ Չուպանյանը Պուխից հայրենասիրական ոգևույնը նամակներ է կղում Փարիզի իր ծանոթ մտավորականներին՝ Ռոչֆորին, Սևոթին, Հանրի Գուրին և այլք: Պիտե Էլիան միջոցով, որ այդ ժամանակ Պուխում էր, քրտակում է ֆրանսիական մամուլին: Բայց չանբերն ի դերև էին կլնում: Պուխի միջավայրը, ոստիկանա- կան հալածանքներն ու խտտությունները մի կողմից, մյուս կողմից ֆրանսիական մտավորական շրջանների հետ անմիջական հարաբե- րություններ հաստատելու անհրաժեշտությունը ստիպում են նրան 1895-ի աշնանը հեռանալ Պուխից: Չուպանյանի համար հանգրվան է դառնում Փարիզը, հանգրվան հեռանալու ողջ կյանքի համար: Փարի- զում սկսվում է նրա կյանքի ու գործունեության նոր՝ ավելի բերնեա- վոր ու նշանակալից շրջանը:

Փարիզ հասնելուն պես Լ. Չուպանյանը անմիջական կապել է հաստատում ճանաչված գրականների հետ, այցելություններ ատլիս հայտնի քաղաքական դեմքերի, ձեռնարկում իր ֆրանսերեն գրքերի ու ժողովածուների հրատարակությունը: Նրան ծանոթ ֆրանսիացի մտավորականները շտաով հասկացան, որ այդ «երկաստարդ արևելքիցին» գրագիտական բարձր տաղանդով օժտված էր և այն ստպարեզը գոր ստան էր Պուխ, ավելի մեծ փայլով կը շարունակեր Փարիզի մեջ ...»<sup>11</sup> (Ֆրեդերիկ Ֆեյդի):

Արշակ Չուպանյանը մշակել էր գործունեության ուրույն ծրա- գիք, որի բնութագրական գիճը լուսավորականությունն էր: Այդ ծրագ- րի կիճնական կետերը նա բնորոշում է հետևյալ կերպ. «ճանճգնել հայը հայուն, հայը՝ Նրկոսային, Եվրոպայի հայուն»: Անստանան հավատ ոնենալով իր ժողովրդի հոգևոր ուժերի նկատմամբ՝ Չուպան- յանը մտածում էր, որ բազում արհավիրքներ տեսած հայ ժողովուրդը

բաղաբակիքը աշխարհին պետք է ներկայանա ոչ միայն և ոչ գերա- զանցատես իր ստատարներնելով ու ցավիլով, կոտորածներով ու ողբերով, այլև տաշյին հերքին իր հերոսական պատմությամբ, բարձրարվեստ մշակույթով, մանավանդ՝ մեծերի գրականությամբ և աշխարհից պահանջի հարգանք ու կիտան իր քաղաքակրթական ձիքրերի նկատմամբ, մտանդություն՝ իր ճակատագրի համար: «Կու- զն ըսել, - ֆրանսիական բեմերից հայտարարում էր հայ բանախոսը, - չէ թե հայ ժողովուրդին ինչպես տեսալիք, այլ այդ ժողովուրդին ինչ՝ ըլլալը»<sup>12</sup>: Եվ ապա՝ «Կը մտածեմ որ ազգ մը ուրիշ բանով ի- րավունք չունի հպարտանալու քայց երբ իր վարդերովը, այսինքն այն ամբողջ գեղեցկությամբը գոր իր հոգին կը հանն և մարկուր- յան կը հանճն»<sup>13</sup>:

Մես թե ինչու հայ գրագիտը Փարիզում ազգային-մշակութային գործչի իր կենսագրությունն սկսեց նկրտական հասարա- կանությունը հայ ժողովրդի պատմության ու գրականության քաղա- յությամբ, 1896 թ. հայտնի հասարակական (հետագայում նաև պե- սական) գործիչ Ժորժ Կլեմանտոյի տեսաբանով նա հրատարա- կեց «Հայկական ջարդերը» ֆրանսերեն գրքույի: Կոտորածներից գոն գարծած և ավանասես հայերի նամակներից ու այլ փաստաթղ- րիկից կազմված այդ ժողովածուն լայն արարածում գտավ, ազդե- ցություն գործեց: Մեծ արծածանք գտավ նաև մեկ տարի անց նրա քաղաքանությունը լույս տեսած «Չեյրան» գիրքը (ֆրանսերեն)՝ նվիր- ված 1895 թ. Չեյրանի հայտնի ապստամբությանը: Նույն թվականի (1897) մարտի 9-ին Փարիզի քննարկակ պրաններից մեկում Չուպան- յանը հանդես եկավ իր առաշին բանախոսությամբ՝ «Հայաստանը, իր պատմությունը, իր գրականությունը, իր դերը Արևելքի մեջ» թեմա- յով: Անատոլ Ֆրանսը, որ պատվավոր նախագահն էր այդ հանդի- սության, հայ բանախոսին ներկայացնելով իր հայրենակիցներից՝ ա- տան է հետևյալը. «Հայ մըն է որ ձեզի իր երկրին վրա պիտի խառի ... Գ. Արշակ Չուպանյան մեզի պիտի ծանոթացնե գրականությունն այն երկրին գոր իր դժբախտություններն միայն կը ճանճանք: Պիտի արագե մեզի հայ մտածումը դարերն ընթացքին մեջ, և պիտի ըսել ընե մերը դյուզագնական ու մերը ողբալին ճայր ժողովրդի մը որ այսբան դարե ի վեր իր հայրենիքին այրիսած կը տես, կը տակ, կը հոսա»<sup>14</sup>: Բանախոսությունը հրատարակվեց ֆրանսերեն տառ- ձին գրքույիով (հայերեն օրինակը տեղ գտավ Լոնդոնի «Նոր կյանք» հանդեսի էջերում): Այն մեծ ընդունկություն գտավ Եվրոպայի մաս-

վորական շքանշաններ: Համակրական հողմածները հրապարակելին Յրանսիայի գրեթե բոլոր նշանավոր հանդեսները: Իսկ բանվառայի ապագանը և նրա ժողովրդի գրական հայտնությունը կիսգնունելով ողջունեցին մտավոր Յրանսիայի անվանի գեներալը ժամ ժողրևը, Մա. Մալարմեն, Ժ. Ռոսենդալը, Պ. Ալգանը, Յ. Գոթեն, Լ. Տիեդորը և արիչներ: Նրանցից շատերը առաջին անգամ էին լսում հայ գրականության և մշակույթի մասին:

Չոպանյանը հայ գրականության համամարդկային և գեղարվեստական արժեքները Յրանսիայի ընթերցողներին պարզաբար ներկայացնում էր նաև հողվածներով և բրոնիզներով: Նույն 1896-1897 թվականներից էլ նա ձևաճանաչելով եղավ հայ էին ու նոր գրականության Յրանսերեն հասարակի ժողովածուների կազմմանը:

Արշակ Չոպանյանի հետագա ամբողջ գործունեությունը այնու մեկ և բարձրագույն նպատակի կրթագործուն է: Հայ գրականության բազմահատոր ժողովածուներ է կազմում և հրատարակում նա, քի բաժնատոմսով եվրոպական թեմերում, միջնադարյան հայ մշակույթի արժեքներն է լայնի թերում, քի ժամանակակից հեղինակներին ներկայացնում, խմբագրում, քի գիտական ուսումնասիրություններ հրատարակում, իր աննշանակալի մասնակցությունն է ընդունում Յրանսահայ գաղթյալի հոգևոր-մշակութային կյանքի կազմակերպմանը, քի մտքում արվեստի համընդհանուր գեղեցկությունների մասին, միշտ և ամենուրեք նրան մտածողուն է հայ ժողովրդի արդար դասի պաշտպանության անհրաժեշտությունը, նրա ազգային, բարոյական և հոգևոր վերածնության խնդիրը:

Այդ մասնագրությունների ձևուն էր նաև «Անսիխ» ազգային, գրական - գեղարվեստական հանդեսը:

Չոպանյանի հրապարակախոսության մեջ իրենց արտացոլում են գտել ժամանակի առաջ քաշած գրեթե բոլոր կարևոր խնդիրները, դրոճք այս կամ այն չափով առնչվել են հայ կյանքին: Օրջնեվով ու համակողմանի վերլուծություններով էլ հրապարակախոսը արձագանքելի գրանց, արձագանքել է գարնանակի հեռուողականությունը, հրատարակվել է հայկական դուրս ներկայացնող մի նոր գիրք՝ Չոպանյանն առաջին գնահատադներին է եղել, հայ գաղթյունների ազգային-քաղաքական կյանքում փոխվություններն են տակի ունեցել՝ Չոպանյանն արտասահմանում առաջինն է արձագանքել, կերպական մամուլում լայն է տեսել հայոց ժողովրդի անհնազանդ մի հողված՝ հայ հրապարակախոսը նույն կերպական մամուլում առաջին պատաս-

խանդներին է եղել: 1900-ին գամարվել խաղաղության միջազգային համաժողով՝ հայ մամուլում Չոպանյանը հանդես եկավ «Հայկական խնդիրը և Լա-Հեի խաղաղության համաժողովը» ծավառան կողմանով: 1902-ին տակի ունեցել կերպարայական համագումարը Չոպանյանը գրեց «Օսմանցի ազատականներու համաժողովը» ուշագրավ բրոնիզ: Նույն թվականներին հայ մամուլի Լեկոն հարց բարձրացվելից նկատյան և գաշնակցական կուսակազմությունների համասուղ գործակցության Չոպանյանը բուն ոգևորությանը պաշտպանելից այլ տեսակներ իր շատ արժեքավոր «Մոտրյան խնդիր» հողվածաշարով, և այսպես շարունակ է ուսուճագրական պատերազմի ու 1905-ի հեղափոխության, և երկրորդ հեղաշրջանում և Առաջին համաշխարհային պատերազմի, Մեծ եղևեհի, Հայաստանի Հանրապետության ու այլևայլ հարցերում:

1908-ին Ա. Չոպանյանը չափավորվելից Պոլսու, ինչպես ինքն է ասում, որն համակություն և վատանություն չունեցավու նույն թվականի հողիսին Բորքիայում հաստատված սանճանադական կարգի նկատման և Փարիզը նկատելով լավագույն միջավայրը իր ազգային և գրական-մշակութային գործունեության համար: 1908-ի աշնանը միայն կարճ ժամանակով նա եղավ Պոլսում ու Տրապիզոնում: Տեղի հակահայկական մերժողոր վերջնականապես նրան հանգում է իր որոշման իրավապետյան մեջ: «Այդ մեկ ամսվան միջոցին ուր նա մնացի, «Պեշկերաշ» ուր իր բնակի, բուրք անդրող երիտասարդ Հույն մը բունելով ռուսիկանատուն տարավ ու նա ռուսիկանության աչքին տակ կարևոր լրատր ըրավ ... Իրիկան մը որ Ատոմ Յարանյանին առնը իյոր էի, մեզի թվին քի հետևելով սր խնդունության պիտի ըլլար չիցնել Պոլսու, վասն զի մոլեանող մանկականները մտադիր էին ցարդ փորձել: Ատոմ և նա մտան իսյանը Պոլսու: Փոկ էին խանդանդը, Մրանդուի վողոցները գրեթե ամայի էին, սուկավարիվ անցողներուն դեմերը՝ մտայ ու արտանազին, կան անճկուս: ... Տալար տակի չունեցավ, քայց անոր շունը կը տիկեր քաղաքին մեջ, անոր ունի կնեղուն, համառ, դարանակալ կը արտեր մերժողուն մեջ: ... Կովկասն ու ողջակի Փարիսը դարձա, ուր սրա ու իմ հասկցած ձևով մեր ազգին համար աշխատանքը շարունակելու վրին ըսն երբևր որոշած էի Պոլսու անցուցած մեկ ամիսնս հետս»<sup>15</sup>: Չոպանյանը գայտալու էլիչում, որ Պոլսի հայ բնիկերից նկատ էին «հուրիսական» քրքաշունը ուսումնավորներ: Այդ օրերի ազդեցությանը նա գրեց «Գեղոն ի պատիվ հայ իզվին» նշանավոր արձակ



ըրբվածը և ողորակեց Թեոֆիլի «Անճամ ասրեղոյցին» (1909): «Գեղոր» շատ շուտով դարձավ ժամանակի ամենաախրված բանասերծրություններից մեկը, անցավ դասագրքերի մեջ, արտասանվեց հայ և օտար ընթերցում:

Պոպից այնուհետև Չոպանյանը ողորակում է Կովկաս կարողեկանական քննարկություններին մասնակցելու համար: Լինելով Էջմիածնում, Երևանում, Աշտարակում, մահ Բարսիլում և Թլիփլիսում մտակից ծանոթանում է արևելահայության կյանքին, Գևորգ Բաշինչալյանի քննանկեան սեղանի շուրջ հանդիպումներ և գրույցներ ունենում Հովհաննես Թումանյանի, Վազարան Աղայանի, Լամիտասի, Ավետիք Իսահակյանի, Վրդանես Փափազյանի և այլոց հետ: Այդ հանդիպումները, ինտրիկ, մեծ չափով օգնեցին նրան սովորել լավ ճանաչելու արևելահայ կյանքը, նշարկային և գրականությունը:

1910-ականների սկզբին Չոպանյանը արտոնյալ պայմաններով հրավիրվում է աշխատակցելու «Մշակին»: Այստեղ մինչև աստիճանակի վերջը նրա առարագությունը հրատարակվում են բազմաթիվ հրատարակատեսական հոդվածներ ու քրոնիկներ, գրականագիտական հյուրեր՝ «Նշարագությունը», «Ապագա», «Լուծագոյն ցավը», «Հայկական մարտիրոսությունը լողելու ժողովին մեջ», «Գեղայի լույսը», «Մեծ հանգրվան մեջ», «Հայր անգարտակի է» և այլն: Գրանցում էլիտոլ արամարամությունը սկզբունքային կողմնորոշում է դեպի Ռուսաստանը՝ մի կողմից, մյուս կողմից էլ՝ ժողովրդի սպագայի նկատմամբ բռնում ու անվերապահ հավատքը, մի բան, որ շատ որոշակի երևում է նաև հենց վերջի վրա՝ հողվածները վերնագրերից:

Հոկտեմբերյան եղբայրության հարցում Ա. Չոպանյանը միանգամից չէ, որ կողմնորոշվեց: Նա չէր համակերպվում Բրեստ-Լիտվսկում կերված պայմանագրի և դրանով իսկ կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի հեռաքշման փաստի հետ: Այս րև ինչու՝ Փարիզի «Արամնունը» անսպերթի էջերում (որ խմբագրվել է նաև նրա կողմից՝ 1917-1918 թթ. ) հանդես եկավ այդ իրողությունը քննադատող հողվածներով:

Ա. Չոպանյանը սկիզբորտեսայ այն մտավորականներից էր, որ որոշ ատասանումներից հետո ընդունեց խորհրդային կարգերի հաստատման իրողությունը Հայաստանում՝ նորաստեղծ Հայաստանը նկատելով հանգրվան Հայ ժողովրդի քաղաքական պայքարի վերջնական իրագործման ճանապարհին, միաժամանակ միակ իրական իմրը հայ Սփյուռքի գոյությունը համար:

Շուրջ երեք ասանամյակ նա անսպառ ետանդով Սփյուռքին և ներկայացրել Հայաստանի անտեսական, հողեր-մշակութային կյանքի նվաճումները, գործում մասնակցություն ունեցել հայ գաղարկանության հոծ գանգվածները հայրենիք փոխադրելու գործում, առիններ շարունակ գլխավորելով Կրասնահայ գողների փութայան վաղուրյան ճանապարհությունը, լինելով Սփյուռքի ատրբեր ընկերությունների ու կազմակերպությունների անդամ՝ մեծ դեր է կատարել Հայաստանի հետ նրանց կապերը ամրապնդելու հարցում: Այս իմաստով փաստորեն Չոպանյանը ամենամեծ հարգանք ու ժողովրդականությունը փայտող մտավորական գործիչն էր Սփյուռքում: Հետագրքիչ է, որ հաճախ նա բանավատության էր հրավիրվում այս կամ այն գաղութ՝ ուղղակի սրտասպնդելու տեղի հարցալույսը: Եվ Ա. մերկրախի, Եղիպատի ու Եղիտուայի հայ գաղութայիններում նրա բանախոսություններում մշտապես առաջին տեղ էր հատկացվում Լուրդիդայանի Հայաստանի իրականությունը:

Տասնամյակների տրեմյան ու անճնվեր աշխատանքով ստեղծված նրա ժառանգություն մեջ այսօր հատակորեն գծմղվում է ինքնատիպ բանաստեղծի, արձակագրի, դրամատուրգի, խորագրուց ու բարձրանաչակ ըննադատի, ետանդուն խմբագրի ու հասարակական գործիչ, քաղցմանիչ, բանտերի, արվեստագետի և քաղցմարթի այլ շնորհներով օժտված մեծ մտավորականի կերպոր:

Իր գեղարվեստական արձանը և չափածան Արչակ Չոպանյանը ստեղծել է ինճնականում գրական գործունեության առաջին մեկերկու ասանամյակներից (1890-1900 -ականներ): Գրական հետապ գործունեության ընթացքում նա հաճախ է անորոշարձեղ այդ գրվածքներին՝ վերադրատարակելով դրանք ասանին ժողովածուներով. «Տղու հողմներ» (Փարիզ, 1923), «Գեները» (Փարիզ, 1924, 1929), «Պատակերներ». երկերու ամբողջական ժողովածու» (Փարիզ, 1940), «Ելանք և երգ. երկերու ամբողջական ժողովածու» (Եմիղ՝ Արխարքի նամակ-առաչարանով (Փարիզ, 1945), «Բանասերծրություններ» (Պիլև Էփանի առաչարանով, Փարիզ, 1949): 1952-ին գրում է «Հրաչքը» բաղկագրությունը ինճը արարվածով (Բեյրութ) և այլն:

Որքան էլ խաղորեն է Չոպանյանը դատում իր գրվածքների մասին, այսուհանդերձ, համոզված է, որ դրանք իր համար որոշակի և հաստատուն տեղ են ապահովում նաև գրականության պատմության նոր փուլում: Մի առիթով նա այդ մասին գրում է. «Եր կարծես սակայն րև ինչ, որ արտադրած են իրր գրու գրական գործ մնայուն որոշ

անը մը արդեն իսկ սպառնալից է ինձի հայ մասնագրության ժամանակակից շրջանին մեջ»։ Այդ իսկ պատճառով էլ Չոպանյանը կարևոր է համարել իր կողմից «իբր գուտ արվեստի գործ պատուդրված» էջերը վերահրատարակելու գործը սեփական ձեռքով «կարգավորված և իրենց վերջնական ձևով հաստատելու մեջ ամփոփված»<sup>16</sup>։

**Բանաստեղծ** Չոպանյանը պատկանում է 1890-1900-ականների գրական առաջնիկ իշխման այն սերունդին (Ինարյա, Մալեզյան, Հարությունյան, Մեծարենց), որն իր ստեղծագործությամբ արևմտահայ բանաստեղծության մեջ պայմանավորեց գեղարվեստական մասնագրության նոր տիպի ձևավորումն ու զարգացումը։ Այս շրջանության մեջ առաջնության իրավունքը վերապահվում է Արշակ Չոպանյանին։ «Դեշիկաշչյանի և Ալիշանի տոմաստիկական սականդրներից հետո նրա սրվական նոր իցերը էր բերում բանաստեղծություն, հաղթահարում իրականության գեղարվեստական յուրացման երևակայական, պարբերիկ աշխարհայեցողությունը, բանաստեղծական խոսքը ազատագրում տոմաստիկոնի կրճատատ պերճանքներից, ժողովրդային-խոսակցական կենդանի լեզվի քանաստեղծական կիրարկմանը հրամարվում զարարտական ձևերի»<sup>17</sup>։ Չոպանյանն առօրեական, անպաճույճ, անտերևեր գեղեցկությունների բանաստեղծ է։ «Մեր նոր բանաստեղծության պատմությունը, շքեղությունը ոչ ոքի այնքան բան կը պարսից որքան Արշակ Չոպանյանին»<sup>18</sup>։

Հայ կյանքի արյունոտ իրադարձությունները նոր շեշանը ավելացրին նրա պոեզիային։ Մյուսանորիցի հետ նա առաջիններից էր, որ հնչեցրեց արևմտահայ հայրենասիրական նոր բանաստեղծության առաջին նվագները։ «Օյրը (Մայր Հայաստանին)» (1898), «Տևոթի», «Տրչ հարության» (1909), «Հայրենական դյուցազնեղություն» (1915), «Արիվիշում» (1917) բանաստեղծությունները մեր հայրենասիրական պոեզիայի ուշագրավ էջերից են։

Գրականագետ Ալոյսիմիր Կիրառյանի բնութագրմամբ՝ Չոպանյանի ստեղծագործությունը մնում է 1890-ական թվականների առաջին կեսի բանաստեղծական որոնումների ամենարժեքը արտահայտությունը և 20-րդ դարավերջի բանաստեղծական բուն տեղաշարժերի կազմի ու նախապատմությունը<sup>19</sup>։

Չոպանյան **արձակագիրը** իր ստեղծագործությունների համար հիմնական նյութ է բերելով քնչազուրկ խավերի կյանքը։ Նրա հերոսը

իրականության դասը փորձությունների առջև հայտնված մարդն է, ինդուն ու ռոմանտիկ, մութագևանք, կույր, «փողոցի աղյսիկ», շքեղիկը, արտառը, որը, մահամորձ, գինձողը և այլն։ Հենց այս անուններով էլ վերնագրվում են հեղինակի շատ պատմվածքներ, նովելներ ու պատկերներ։ Ա. Չոպանյանի արձակի գեղարվեստական ամենամեծ արժանիքներից մեկը կերպավորման հուղերանական խորությունն է, «խեղճ մարդերու» դրամատիկ ապրումների, նրանց երազների ու ակնկալիքների, հույսերի, ցավերի ու ողբերգության, նրանց ներաշխարհի ներքին-հուղերանական գեղությունը։ «Պատահական չէ, որ արձակի առաջնգրված Չոպանյանը նախնորում է գեղարվեստական պատկերի ժանրը, որն ինչու որքան հուղիվհանկների, կյանքի բնորոշ պատկերի ու բնության տեսարանների, դրության նկարագրություն-խոսի է՝ հազվադեպ բանաստեղծական պատկերավոր մասնագրության ձևերով։ Չոպանյանը դարձավ այդ ժանրի սկզբնավորող մեկնաբան։ Այդ մտայն ինքն էլ ուշագրավ ստղեր է բողկ «Պատկերներ» համահասարակ ժողովածուի առաջաբանում. «Ինձի կը բլի որ իմ սկզբնավորության շրջանիս գրված այդ էջերը իմ լավագույն արտադրություններս են։ ... Այս շարակերներով կը կարծես թե գրական նոր սեռ մըն է որ ստեղծամ են մեր մեջ»<sup>20</sup>։

Արշակ Չոպանյանի ստեղծագործությունները բարգձմանի են ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, իտալերեն, հունգարերեն, ռումիներեն և այլ լեզուներով՝ ըստ արմատային գնահատվելով նաև օտար գրողների ու մտավորականների կողմից՝ Ա. Զրանս, Ա. Գոլե, Ֆր. Ափառադ, Գ. Ալան, Մ. Մալարն, Գ. Մառե, Գ. Ժիլոտ, Յու. Ալե-ստրակսի և ուրիշներ։ Ընդ Արևոսարքը բավ ծանոթ էր քերթվածների ֆրանսերեն բարգձմանություններին և անկեղծ ոգևորությանը է գնահատում դրանք. «Չիր քերթվածները հաճախով կարդալի. գրում է նա հայ բանաստեղծները - Գոյր այլազան, կրակա, հզոր, քաղցր, ահագնեղի բնարեղծակ էր և Մայր Հայաստանին նվիրված ձեր քերթվածները բարձր ու ողբերգական վեհություն մ'ունին։ Գոյր ի մեն բանաստեղծ եր»<sup>21</sup>։ Եվ սուր՝ «Չեր գործը զգայնության ու երևակայության է համակ կազմված, սիրվիլ իմ բանաստեղծ, և ձեր երկերը ձեր մեջ կը շեշ. ... Չկա ձեր գեղին վերարկող բան մը գոր դոր յուրացումը ըլլար, այնպես որ մ'ը մը ձեր ծայրին մեջ կը յսնք արտըջ ժողովուրդ մը որ կը խոսի, կը սիրի, կը առաջալի, կ'ոգևորի, առանց սակայն կորիք մեռնելու»<sup>22</sup>։ «Կյուրությունները կրճատ Զրանսյան կամ Խաչիայանի փոխ առված ըլլալ, մասամբ և արաստայ-

առյուծը հայկական են»<sup>23</sup> (Պիեռ Բիստ): «... Բանաստեղծ մը, խորեկ, պերճախոս ու ազգասեր՝ հողի և բնության բանաստեղծ մը»<sup>24</sup> (Ալեքոս Կոլև):

Այսուհանդերձ, Ա. Չոպանյանի գրական ժառանգության լավագույն և ծանրակշիռ բաժինը **րճնադատությունն է**:

Չոպանյանի գրականագիտական հայացքների ձևավորումն ու զարգացումը նկատելիորեն կապվում է Արևմուտքում ազդեցության մեծ դերակրող նվաճած կուլտուր-պատմական գեղագիտական դպրոցի հետ: Հետևելով դպրոցի ուսմունքին՝ հայ րճնադատը պաշտպանում էր գրական երկը իրեն շրջապատում և ծնունդ տվող հասարակական-պատմական միջավայրի գործունեիքով և հասկացել «գեղային խորակերի» ու ավանդների ազդեցությանը բացատրելու սկզբունքը: Դպրոցի կիմնադիր և տեսաբան Իպոլիտ Տեհի գեղագիտական համակարգում երիտասարդ Չոպանյանին ամենից առաջ գրավում էր նրա մեթոդաբանության գիտախնայուն և վերլուծական խորությունը: «Քննադատությունն այլևս գնահատում մը չէ պայմանադրական գեղեցկագիտության մը և իմաստասիրության մը համեմատ. վերլուծություն մըն է կիմա, - գրում է Չոպանյանը 1893-ին Տեհին նվիրված իր հոդվածում: - ... Քննադատությունը գիտական աշխատության մը բայնությունը կտան»<sup>25</sup>:

Անշուշտ, կողմնորոշումը դեպի կուլտուր-պատմական գրականագիտական դպրոցը սուկ գեղագիտական նախապիտրայամբ՝ չէր թեզադրվում և մեծ չափով պայմանավորված էր հայրենական մշակույթի զարգացման յուրահավերթյուններով, հայ կյանքի կարիքներով: Այս խնամալով առավել աական է մեկ այլ հանգամանք. ի՞նչ սկզբունքային հարցերում է հայ րճնագիտի գեղագիտությունը հետևում կուլտուր - պատմական դպրոցի ավանդների:

Ի ապրքերություն պատմական ուսմունքի, որ ամենտեմ էր գրականության ու գեղարվեստի հսկայաբաժ ազդեցությունը հասարակական կյանքի, ժողովրդի հոգեբանության ու զգալիաբարստության վրա, Չոպանյանը հասարակականորեն կախով ի մեթործում դեր էր վերապահում և գրականությանը, և րճնադատությանը քնդիաներտպես: Հետո: Չոպանյանը թե՛ավ էլ անուշադրության չէր մատնում գրականության՝ իրեն իրականության արտադրման ու գեղարվեստական մտածողության ինքնուրույն թե՛զագվախի յուրահավերթյունները (մի թան, որ հաստով չէր կուլտուր-պատմական դպրոցին): Ավելին: Հայ րճնագիտի գեղագիտության մեջ առաջնա-

ինն անդ ունի գեղարվեստականության սկզբունքը: Եվ ապա: Երկի վկարծությունը ներարկելով ի սկզբանե սահմանված կանոնների ու օրենսգրքի պայմանավորվածության՝ Տեհը դրանց հետևում չէր տեսնում ակախի, սակզմագործող անհատին: Լավագույն դեպքում ուշադրության էր արժանանում գրողի սոցիալական, հասարակական տիպը, բայց ոչ կրքեր գեղարվեստական անհատական ինքնուրույնությունը: Լավ է նկատել դամիսայի րճնագիտա, նույն դպրոցի հետևող Գեորգ Բարանդը. «Հետևողական տեղիզը կհանգեցնի գրականության պատմության համակարգմանը՝ առանց հեղինակների»<sup>26</sup>: Միջոյեռ Չոպանյանի րճնագիտական աշխատանքներում հաառով նշանակությանը են արժարծող գրական դասախոսություն ու գեղարվեստական անհատականության, ազդեցությունների ու ինքնուրույնության, գրող-րճնագիտա հարաբերության այսպես կոչված խաղվածքներին խոդիկաթը: Սա Չոպանյանի րճնադատության ամենարժող կողմերից մեկն է: «Թե՛ն գործի մը ծնունդի աարկնում մեջ թե՛ավ հաշվի չէ դրած արտադրող անձին անհատական խաղվածքը, - նկատում է հայ րճնագիտը. - իր սխառնով անկախի է թագաարկ ժամանակակից արվեստին արտադրություններն շտնեթը»<sup>27</sup>: Եվ ապա՝ «Թագաթե՛ակ չեն օրեքները դրանց վրա կը ինքնվին գեղեցկագիտությունները. ոչինչ: Թե՛նն՝ ճշգրիտ գիտությանց կուռ անհեղինարենեն. ներթալա են ժամանակի, միջավայրի և անհատականության ազդեցության»<sup>28</sup>:

Արևմտաիայ գրականության մեջ 1890-ական թվականների սկզբներին նախորդ տասնամյակներում սկիզբ առած իրապաշտ շարժումը, ունենալով արգասավոր շարունակություն, արկներ էր արում նոր ու ինքնատիպ դրսևորումների համար: Եվ ունեցավ այդ դրսևորումները: «80-ականներին՝ իրապաշտ մտայնությունից տարբերվում է մի նոր հոսանք, մի նոր սերունդ, որ հետև անվանվեց արվեստագետ կամ գեղարպաշտ սերունդ: Նորագույն գեղագիտական այդ միտքը գրական երևույթի րճնության ու գեղարվեստական գործունեության մակարդակներում առաջադրում էր դրույթներ, որոնք առանձին և շատ կարևոր հարցերում գայիտ էին լրացնելու նախորդ տասնամյակի հասարակական օգտակարության սահմանախիտ րճնանունները: Իրականության ճշգրիտ արտադրման ու գրականության ազգային-հասարակական օգտակարության սկզբունքներին, որոնք «80-ականներին» ամենաանախկանչական գիծն էին, գուգանեված էր արվեստի ճշմարտացիության ու գեղարվեստակա-

նորյան համապատասխան չափանիշների պահանջը: Նոր սերնդի տեսական-քննադատական ձևակերպումներում ու կոնկրետ գնահատումներում գրական առաջնորդի անտանկառիցի էին դիտարկվում գեղագիտական կարգի այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կյանքի ու արվեստի համապատասխանության, գեղարվեստական ձևի և առհասարակ գեղարվեստականության չափանիշների, սահեղագործական անհատականության հարցերը, գրականության փիլիսոփայական խորքն ու բարձր գեղարվեստականությունը՝ փոխանակ նեոտրալականության ու լացանախյա երապարակախոսականության: Իրեն դիրքեր, որոնք վերաբերում են բացառապես գրականության արվեստագիտական ընդլայնման ոլորտին և տակավին ըստ ամենայնի չլին յուրաքանչև նախորդ սերնդի կողմից: «80-ականները» գազավառարական առաջնորդը՝ Արփիաթ Արփիաթյանը, սասնամայակներ հետո արդեն նոր դարի սկզբներին, այսպես էր բնութագրում իր սերնդի գործունեությունը և նորագյույների մտաբեր. «Հինիս, այդ ժամանակվա վեպերը կամ վիպակները քննած առանձինս, անոնց ոճն ու գեղարվեստն իտալացիահնչությունը նկատառության կ'անենք, բայց սասնանիճը բանն առաքի առաջ, երբ վերջ կոպվազն էր, քննադատները ավելի անոր գաղափարներով, բարոյականությունը կամ անբարոյականությունը կ'ըզբաղեին ըսել իր գրականությունը: Շտո՞ւ վերջն ալ, որ արվեստագետ մը չէ, իր ուշադրությունը նյութին կը փոխեր ...: 'Ան բանն իր առաքի սրբապետը է մինչև որ «նորագույններն» Արշակ Չոպանյան Խբիթիքը հայ քննադատության համար նոր փորձարար մը համարի»<sup>29</sup>:

Այսպիսով, 1890-1900-ականներին որոշակիորեն փոխվեցին գեղարվեստին ներկայացվող պահանջներն ու գրական երկի գնահատման չափանիշները: Մականջ որոնումների իր ճանապարհին նորագույնների այդ սերունդը աշուշտ չէր շրջանցում տեսլախա «80-ականների» գեղագիտական փորձը: Ընդհանրապես, առաջին հերթին հենվում էր հենց այդ փորձի վրա, արդարացիորեն գնահատում նրա նշանակությունը: Ինքը՝ Չոպանյանը, որին վիճակված էր դառնալ նոր շարժման մտավոր կազմակերպիչն ու առաջնորդը, ասորքեր առիթներով խոստովանում է, որ իր գեղագիտական հետաքրքրությունները դեպի գեղապաշտ արվեստի ուղին կործանողչեւն գործում վճռական դեր է կատարել Աբլետի ուղին - «Մյասիս» - «Հայրենիք»՝ ի գրական խմբակը: «Արևեկ-Մարտի»-ի այդ խումբին շնորհիվ է դարձյալ, որ եւ մղվեցա հեռանալ ռոմանթիզմն (գոր, սակայն ամբողջա-

պես երբք չեն լրած և զոն են ասոր համար, որովհետև անոր մեջ հավիտենական ու բարձր գեղեցկության աղբյուրներ կան) ու ձգուցա դեպ ի իրապաշտ, ավիթ լայն բանձնով մը՝ դեպ ի կենդանի, ողբակի, ամձնական գրականությունը, դեպ ի արդիական ուճի, գոր զուտ գրական մարզին մեջ ինձի ճանչուցոց նաև ու նույն իսկ ավելի լայն կերպով ... Նեղիա Տեփիցիապաշտան »<sup>30</sup>: Բայց և հենց նման գնահատումներում էլ շատ հստակ է այն իրողությունը, որ Ա. Չոպանյանը (նաև նորագույն սերնդի մյուս ներկայացուցիչները) «80-ականները» իրապաշտ արվեստի նվաճումները նախորդ սերնդի («ինն դարդի») կանոնիկ վարդապետության հարձակումներին պաշտպանում էր արևմտահայ գրականության 90-ականների բարձրակետից՝ այդպիսի մտայնմամբ բնօգնելով նույն «80-ականները» գեղագիտության սկզբնական շրջանի որոշ միակողմանիությունները: Հենց այդ գիրքից էր նա իր քննադատական հայացքի առաջ անում Ա. Արփիաթյանի գեղագիտության գաղափարաբանական կամ օգտապաշտ ուղղվածությունը: Բնյա է, հակադրվելով օգտապաշտ մտածողության միակողմանիությանը՝ երիտասարդ Չոպանյանի գրական փորձը սկզբնական շրջանում չկարողացավ անհրաժեշտ կշռադրի մեջ դեկ գեղագիտական մտքի նորագույն որոնումների բանձնառնք. ստոր արվեց «Արվեստը՝ արվեստի համար» անտրայան սասնձին դրույրների, եղան ծայրահեղ բնութագրումներ (ինչպես Արփիաթյանի հացումը. «... Ինչ որ իր պակսի իրեն, -գրում է Չոպանյանը 1892-ին, - գեղեցկագիտական զգացումը, արվեստագետի իռլին է»<sup>31</sup>): Բայց դա որոնման ճանապարհի արտասխայություն էր: Երիտասարդ քննադատի գալույն, ուշադրի և վերջումը հայտնող արևմտահայ մտավոր կյանքի անհանգիստ մրճողորսում նշարյուն էր բավական արագ կերպարանավորություն, «մտքի արտադրությանց համար սեր, անհագորդ ախորձակ մը գեղեցիկ բաներ լսելու և տեսնելու, ձգուցո մը դեպի ինչ որ բարձր է: Այս բաները կ'սկսեմ ի հայտ գալ, թեև տակավին սարսում ու մասնական մեր նոր սերունդին մեջ, այն երիտասարդության, որ երեկ կավ վարձարանի սենն որսա և անոր մասնավանը, որ դեռ գրասեղաններու վրա կը հսակի, - ամենքն ալ արդի լրագրության ու արդի գրականության չերն ազդեցության ասալ»<sup>32</sup>: Իր գրական գործունեությունն ու ջանքերը Չոպանյանը հենց սկզբից էլ մտաչափում էր այդ սերնդի գեղեցկագիտական հետաքրքրություններին: Նույն 1892-ին «Արևելքի» Էջերում նրա սոված սահմանումը՝ «Արև հայացքն ու հիացումը չենք զրսնար ամեն

քանի որ գեղեցիկ է»<sup>33</sup>, արտահայտում էր նոր սերնդի քնդահանող արձանագրությունը և մի յուրօրինակ նշանաբանի իրավունք ստացավ:

Արշակ Չոպանյանը քաչատեղյակ էր գրական տարբեր ուղղություններին ու հոսանքներին, շատ խորն էր ընթրնում դրանց նշանակությունն ու իմաստը: Եվրոպական նորագույն գրական ուղղություններին նրա ծանոթության մասին շատ խոստում է ու հետաքրքրական ժամանակակից՝ Եփրատգաղիխ խոսքը՝ գրված 1910-ին. «Նա միայն մի մարդ են ճանաչում հայ մամուլի դեկավարների մեջ, որ ի մտառ ուսումնասիրել է և սերմորված, և խնայախնայված, և «տեխնական», և ուրիշ շատ եզրույթական ուղղություններ: Այդ մարդը երև կանոնար, կարող էր հայ գրականությունը հարստացնել մի նորակալ աշխատությամբ այդ ուղղությունների մասին: Այդ մարդը Արշակ Չոպանյանն է, որ, Եվրոպայի սրտում, ունեցել է և ունի բոլոր հարմարությունները, և որ գլխավորն է, ստացվում ու ճաշակ գրականության և գեղարվեստական երևույթները հասկանալու և զգալու»<sup>34</sup>:

Չոպանյանի համոզմամբ կարևորն այս կամ այն ուղղությանը պատկանելը չէ: Ժամանակի ճաշակն ու ըմբռնումները, աշխարհայացքը, «գեղեցկագիտությունը», անշուշտ, մեծ կարևորություն ունեն գրողի համար, բայց Լակսեր տաղանդն է, հանճարի ուժը և անհատական խանձովածի բնածին ինքնատիպությունը: «Հասն աս «նոր հոսանքների» կրման հիմնով, ստացանդի գործը չի հիմնար ... Իսկական քննադատությունը կը գեմատես թե Թուրքենեխն իբր ազդեցավոր **ճնայաս** և թե Մերթիբեր իբր ստաղանավոր խորհրդեղանյական, իբրաբն տարբեր, բայց հավասարապես մեծ ազդեցողներ»<sup>35</sup>: Եվ ապա՝ «Նորերու ստրուց գործը դասականի տեղ իրապաշտ կը վիլը չէ, խնդիր տեսնելու, զգալու, խորհելու եղանակին վրա է մերք կրնողոնքին այն եղանակը, որ ամենն կենդանի ու կաշտատ է»<sup>36</sup>: Մա սուկ տեսական որոյք չէր, այլ հանգամանորեն մշակված մի ծրագիր, որ իրացման էր դրված նպատակային ու բանական գործունեության:

Այսպիսով, 90-ականների սկզբներին արձանաձայ գրական քննադատության ինքնորոշումը՝ իբրև գործունեության իր յուրահատուկ սկզբունքներն ու խնդիրները հաստատող քննազավտի, վավերացված փաստ էր: Ե՛վ նախ, յուրացնելով կալուստ-պատմական ուսմաննրի դրական ավանդները և «80-ականների» գեղագիտության վտործը, արձանաձայ գրաքննադատության այդ ինքնորոշումը Չո-

պանյանը մղում էր գիտական քննության ու խոր վերլուծական գնահատման ուղիք, նոր չափանիշներ ստաչադրում գրական նյութի վերլուծությանը: Այս իմաստով Չոպանյանի քննադատական հայացքների վերաբերյալ մեր կարծիքով միանգամայն իրավացի է այն պնդումը, թե նա «սկսած է մեր քննադատությունը ... սկսելով առաջին յուրջ հետաքրքրությունները արվեստի կեներու շուրջ»<sup>37</sup>, և թե Չոպանյանն «առաջին անգամն ըլլալով գրական որոշ դիմագծով և արվեստի որոշ ըմբռնումներու վրա հիմնված երկարաշունչ աշխատանք մըն է որ կ'սկսի: **Գրական քննադատության դպրոց** մըն է, որ կ'սկսի իրնով»<sup>38</sup>:

Արշակ Չոպանյանի քննադատական մերտդին հատուկ է յայն համադրականությունը: Հայ գրականության երևույթները նա դիտարկում է համաշխարհային գրականության ամենաբյուրեղանոմ արժեքադրման չափանիշ քննուկնելով համաշխարհային արվեստի գեղարվեստական զարգացման մակարդակը: Այդ դիտարկումները հիմնվում են հայ և համաշխարհային գրականությունների պատմության և գրականության անտության խնդիրների փայտն իմացության վրա:

Քննադատության մեջ Չոպանյանի նախասիրած ժանրը դիմանկարն է: Սերն, քնդանուր գծերով քննադատար շատ հստակ ու դիպուկ է քննարկում գրողի ստեղծագործական աշխարհը, նրա ստղանդի ամենաբնորոշ հայտանշաններով, գրական գուգանիշի փորձով տալիս գրողի ստեղծագործության ազգային ու համամարդկային արժեքը:

Չոպանյանի քննադատական հայացքը քնդգրկում է պատմական վիթխարի մի ժամանակահատված՝ սկսած ժողովրդական անգիր բանաստեղծությունից, միջնադարյան քնարերգությունից մինչև Խ. Աբովյան, Գ. Կոչյան, Ղ. Ալիշան, Մ. Պեշիկաշյան, Բաժժիկ, մինչև նորագույն հեղինակներ՝ Վարդ ժան, Սիամանթո, Թերեյան, Իսահակյան, Թոմասյան, Տերյան, Սեմաբնեց, մինչև խորհրդային և սփյուռքային գրականություն՝ Չարենց, Նորինց, Եփրեզ, Կ. Ջաբրյան, Հաննուր, Վ. Թարսկի և ուրիշներ: Հայ նոր գրականության մեջ հաճվել թե կարելի է գանել որևէ նշանավոր դեմք, որին կամ որի ստեղծագործությանը Չոպանյանն անդրադարձած չլինի: Իսկ համաշխարհային գրականության պատմության աստանձին շքշաններին կամ հեղինակավոր ներկայացուցիչներին նվիրված նրա քննադատականներն իրենց վերլուծական մակարդակով ոչնչով չեն զիջում

կերպով համարվող բնադասերի կողմից նայն արժեքներին արված գնահատականներին: Հանձնվելու համար բավական է կարգալի դրանցից բերուզ մի բանիսը՝ «Հյուսիս գրականությունները», «Արևոտը Հյուզո», «Հայերի Հայենի», «Յերդրիկ Մարթար», «Էմիլ Զոլա», «Գերմար Լագար», «Ժողկ-Մարիա սոր Հերնանդես», «Էմիլ Արիստո» և այլն: Արվեստագիտական բարձր մակարդակով են գրված նաև արվեստի տարբեր ճյուղերի վերաբերող նրա բազմաթիվ հոդվածները:

Չոպանյանն այն բացառիկներից է, որ գրողի հաճախ առաջին խալ փորձերում նկատել է իտալական ազանդի հայտնությունը, իսկ խոստով նրա գրչագանման ուղին: Իր գրական խորհուրդներում ու ղիտություններով նա օգնել է երբ սերնդի գրողներին: Ուրեմ Չոպանյանը իր նամակներից մեկում Չոպանյանին գրում է. «Շատ բան պարտական եմ Ձեզի: Առաջին բաշարիտությունը Ձեզին լսած եմ իմ գրական սեղանիտությունս մնչ է Ձեր գնահատումը բարեբար եղած է ինձի»: Իսկ «Յաշգալայա» ժողովածուի կրասարակության առիթով ավելագնում է. «Չեզնկ կ'աղատի բնադասություն մը անոր մասին, որովհետև, ինչպես գիտեր, Ձեր գրական ու գեղարվեստական բնադասությունն գառ ես ուրիշ ոչ մեկ հեղինակություն կը ճանչնամ ներկա յովանդակ հայ գրականության մեջ, ստասիայ կն առակիսայ: Ձեր խոսքն է, որ կշիս ունի ինձի համար, որպէս կրան օգուվիլ միշտ»<sup>37</sup>: Տրեկյանը «անհամբեր» աղատում Իր իր բանասեղծությունների առաջին ժողովածուի («Հոգեր») «խոստագված բնադասականին» (ՄԳՆ-323): Միանանքոն ուզում էր մեծ բնադասի «կարծիքի առնել» իր բանասեղծության մասին (ՄԳՆ-286): Չոպանյանի «դատաստանին մեջ» Վարոժմանը տեսնում էր ժամանակի «գեղարվեստական մտավորակամության դատաստանին խոսացումը»<sup>38</sup>: 1947-ին Չոպանյանի առաջարկով յույս տեսով Մարի Արմանյանի «Գողգորայի շուշաններ» թրքվածների ժողովածուն: Այլ մասին պիտարսիսայ բանաստեղծուկին իր կիշողություններում գրում է. «Եր կարծեմ, որ իր հայրական սիրող սրտին կը պարսիմ այն ներբողները, որով Ռուսգիւլս կը ուշուներ իմ արարում կերպոս այս առաջին ժողվարարը»<sup>39</sup>: Եվ վերջապես, Մ. Զարիֆյանին, Համաստեղին, Ե. Չարենցին նվիրված նրա հոդվածները հեղինակների գրական գործերի առաջին յուրք է ամենարարձր գնահատմաններից են: Միջուրանայա բնադասիսայ անպիս ոգևորում էր Ե. Չարենցի խորապես ազգային ու «բնարեղականորեն հեղավոխու-

կան» կերպարը: «Չարենց մեծագույն դեմքերն մեկն է մեր ազգային բանաստեղծության ու կերպարային թերթուն է Խորհրդային Հայաստանին», - սա է Չոպանյանի համարումը<sup>40</sup>: Հետևող Միլոտրից Չոպանյանը ոչոտնում է նաև Հովհաննես Շիրազի մտարը հայ բանաստեղծություն: Լավ է նկատել Նիկոլ Աղբալյանը. «Չոպանյան՝ Կորյունը իր ճիարենն կը ճանչնա, քն ինչ տեսակ առյուծ պիտի ըլլա սա»<sup>41</sup>: Մտնեծագործության մեջ որակաւոր, արժեքավորը նկատելու և գնահատելու սեղբուրը Չոպանյանի բնադասական մերկայի բնորը կողմերից մեկն է: Նրա համոզմամբ բնադասար բոլոր դեպքերում համակիր վերաբերմունք պետք է անենա գրողի, ստեղծագործողի նկատմամբ և պետք է շանա բնունել և բացատրել գրական գործի մեկրին տրամաբանությունը, ուրայն հոգևորանությունը, նկարագրին ու իմաստը: Ահա քն ինչու Չոպանյանը հակված է պաշտպանելու այն կարծիքը, որ «բնադասությունը արտիսա մքն է իտալպես, և ոչ քն գիտություն»<sup>42</sup>:

Չոպանյանը արվեստագետ խոսեմածի բնադաս-գրականագետ է՝ բանաստեղծական ներշնչումով, հարուստ կրակալարյանը: Սա, թերև, ամնատալան-հագրեսական այն կինքն է, որտեղ ներդաշնակ միությանը կոտավում են բանաստեղծի, արձակագրի, կրակարակալանի, բնադասի ինքնուրույն նկարագրերը: Նրա կրակարակալանի ինտրը իտիսա տրամաբանական է, փաստարկված, բայց նաև՝ պատկերավոր, գեղարվեստական: «Ես միշտ եղած եմ բանաստեղծ և կրակարակալից միանգամայն», - գրում է Չոպանյանը իր հատորներից մեկի առաջարանում<sup>43</sup>: Բնարագրական է նաև Հ. Օշականի կարծիքը. «Հետև անմիջապես որ այլ գետնի վրա (նկատի ունի կրակարակալանությունը) -Յու. Ա.) անոր փաստակը իրը ծակալ չի տկարանար ոչ Երիսի, ոչ Մամուրյանի, ոչ ալ Արփիսի արյուններուն առչել, իր ետին ձգվով ճյուս ընկերները առթումին: ... Չոպանյանի կրակարակալական գործին արթիլ սա հաստատունը այլպես կը պաշտպանվի մանականդ որակով: Անկիսա երբի չէ մտացած գրակար իր մեջ երբ կը քարի: Ռս այս ճշողմով փաստակ ալ կը ստանա առանձին նկարագրի»<sup>44</sup>:

Ուրույն հետարքրություն է ներկայանում Չոպանյանի **բանսիրությունը** Հայոց կին ուղղության և միջնարդյան մասննագրություն Լեյբի հակարձան, կրակարակալան և ուսումնասիրման գործում Չոպանյանը փաստորեն գուտ գնական, բանասիրական ալ խոստանը չէ, որ կատարում էր: Նրան ամենից առաջ հետարքրում



էր այդ Լեւրի գեղագիտական կողմը, դրանց գրական-գեղարվեստական նշանակությունը: «... Անոր մեջ տիրապետող գեղեցկագիտական ձգտումն է, - գրում է Չուպանյանը՝ նկատի ունենալով իր քանդակարվեստական գործը. - ... բանասիրական հարցերի վրա խստած առնեն իսկ, հաճախ՝ գեղեցկագիտական տեսակետն է, որ գտնո՞ր կը նկատեն ...»<sup>47</sup>: Եվ ապա՝ «Ես բանասեր չեմ, գրականության մարդ եմ»<sup>48</sup>: Այս առումով «գեղեցկագիտական» որոշակի սկզբունքների վրա էինձեղված Չուպանյանի բանասիրական աշխատանքը առանձնահատուկ է 1890-1900-ականների հայ բանասիրության մեջ: Հավանաբար հենց այս հանգամանքը նկատի ունեն արևմտահայ գրականության քննադատը, երբ գրում էր. «Չուպանյան ինպիսիքներու վերածնունդ մեջ կարկառուն շնորհներ երևան չըբաղ, բայց իրով ավելին: Այդ բնագիծներուն տակ քարքարած հոգին էր բակց եր նետաց մեր վայելումին: Հոս է որ կը տարբերին բանասերն ու արվեստագետը»<sup>49</sup>: Անասարակտեղի էր սակայն, որ նրա կրթման է հրատարակած հայ միջնադարյան արեգիսի ժողովածուները, հեղինակած հոդվածներն ու ուսումնասիրությունները ունեին նաև գիտական ամենաբարձր արժանիքներ: Խոսքը նաև «Նստասկան Բուչակի դիվանը» (1902), «Նստաշ Վովնարան աշուրը և Վովնարան Վովնարայան նկարիչը» (1910), «Հայ Լեւր» (1912), «Հատընտիր Լեւր քույակյան տաղաշարներ» (1926), «Հայրեններու բուրասանը» (1940) հատորների մասին է:

Գեղարվեստական ու գիտական բացառիկ նշանակություն ունեցած նաև Չուպանյանի կողմած հայ գրականության ֆրանսերեն ժողովածուները՝ «Հայ էին ու նոր բանաստեղծներ» (1902), «Հայ ժողովրդական երգեր» (1903), «Հայ աշուղներ» (1906) «Լարբերի շալտտանի» (1918, 1923, 1929): Դրանք մեր գրականությունը դուրս բերեցին միջազգային նոր ասպարեզ՝ արժանանալով ամենաբարձր գնահատության թե՛ մեզանք և թե՛ արաստեղծներ<sup>50</sup>: Իրենց հերթին այդ ժողովածուները էինք դարձան նոր կատարների ու նոր քարգծանությունների: Գեա 1916-ին Լևոն է՝ «Հայոց գրականության հայցերը» մեծածավալ հոդվածում, ուշադրություն հրավիրելով այս խնդրի վրա, իրավացիորեն նկատում է. «Եվ երբ վաղը մի օրիչ օտարագլխի կանոնա մտանայ հայ արտին ու գզգզմունքին, նա էլ պիտի գնա նախ և առաջ որոնելու Չուպանյանին»<sup>51</sup>:

Եվ այսպես, Արշակ Չուպանյանի բանասիրական ու քարգծանական գործունեությունը զուգահեռն ու շարունակությունն էր նրա

հասարակական շահագրգռությունների և գրականագիտական մտմունքների ու լիցքերի: Իսկ խմբագրական գործը՝ այն ասպարեզը, որ ամբողջ լիարյանը դրսևորվում են նրա տաղանդի բոլոր կողմերը, և որ գործնական իրագրման են դրվում նրա հասարակական ու գեղագիտական ծրագրերը:

մում էր հեղափոխական պայքարի քաղաքներին, Չոպանյանն ա-

առաջարկում էր ավելի շրջահայաց գործունեություն, «երկայն ամոր ներքին աշխատություն»՝ ազգային համախմբման գաղափարներով<sup>84</sup>։ Այս մտայնությանը Լ Չոպանյանը առաջարկում էր «Նոր կյանքի» էջերում ավելի մեծ տեղ տալ համապատասխան ուսումնասիրությունների, հասակագես ընդլայնել հանդեսի գրական-գեղարվեստական բաժինը։ Ավելին, Չոպանյանը Արփիարյանին է դիմել առաջարկությամբ՝ «Նոր կյանքը» դարձնել գրական հրատարակության, «գրական անկախ օրվան մը»<sup>85</sup>։

«Նոր կյանքի» խմբագրությունը, բնական է, մտադրոյառն չունի փոխելու իր ծրագիրը։ Համատարևն մերժվում է նաև Չոպանյանի առաջարկը՝ Ե. Օտյանի, Վ. Սվաճյանի և իր անունից ծանուցում տալու, որ հանդեսին աշխատակցելու հանդերձ իրեն կողմնակից չեն նրա դավանած հեշտկան-հեղափոխական դիրքորոշմանը։ Այնուամենայնիվ, Չոպանյանը շարունակել է իր աշխատակցությունը «Նոր կյանքին»։ «Կես *Անահիտը* իմենկելու որոշումը աված չլլալով,- հետո բացատրում է Չոպանյանը .- Կ'ողովի տեղ մը ունենալ ազգային գործերու վրա իմ մասնելու եղանակս հայտնելու համար՝ սպասելով լավագույնին...» (1901, քիվ 2, էջ 42)։

Այդ «զավագույնը» երկար սպասել չուվեց։ 1898թ. հուլիսին հայ մամուլի էջերում Չոպանյանը հրատարակեց «Անահիտ» ազգային, գրական և գեղարվեստական հանդեսի հրատարակության ազդը։ Նրանում շարադրվում էին ապագա հանդեսի ծրագիրն ու բովանդակությունը, ձևակերպվում հրատարակության նպատակը։

Հայտնի է, թե 1890-ականների սրճատնայն գրական-գեղարվեստական ընթացքի կազմակերպման գործում որքան սկզբունքային նշանակություն ունին 1895-ին Պուտում Չոպանյանի խմբագրած «Շաղիկի» հանդեսի գեղագիտական դրույթները։ (Խոսքը գեղաբանական շարժման սկզբնավորման մասին է)։ Բայց և հայտնի է, որ դրանք, քստ Լույսյան, մնացին անկատար։ Նոր շարժումը չհասավ գեղարվեստական ամբողջական յուրացման, իսկ երևույթի տեսակներ-բնճաղատակվան ընդհանրացումը մնաց ձևավորման ստանդանդներում։ Չեմոսրկելով նոր հանդեսի հրատարակությունը՝ Չոպանյանը նպատակ ուներ շարունակել Պուլսի «Հայրենիքի», «Մասիսի» և անշուշտ «Շաղիկի» գրական-ծրագրային ավանդները, նոր ու ազատ միջավայրում վերանելի 90-ականների ազգային-գրական ընթացքը։ Անհոդակի հրատարակության մեջ սավում էր. «Այնուրյն ծրագիրը, ավելի լայն սահմաններով, իրագործելու համար է որ այսօր կը ձևե-

նարկեն «Անահիտը» հրատարակելու, առողքված մամուլանդ այն մասնամար թե Պարզիկն՝ այս տիեզերական կեդրոնն՝ մեկնած գրական բազմակողմանի հրատարակություն մը կրնա տեսակ մը միջնորդ հանդիսանալ լեզուպական բարարակցության ու մեր ժողովուրդին միջև, և միանգամայն՝ աշխարհի չորս կողմը ջրված հայերուն մեջ քարոզական կապ մը ձևացնել»։ Նույն մտնեցմամբ էլ սահմանվում էր հանդեսի ծրագրային կարևորագույն դրույթը՝ նպատակ հայոց ազգային գրականության առաջընթացին, ճշգտել «մասնավորապես ազգային գրակնությունը զարգացնելու գառ հայ տարրերով»։ Հանդեսի ընդհանուր ուղղության մասին հայտարարության մեջ ավելացվում էր. «Ընկ թաղարական գործունեությունն զերծ, ուն կուսակցությունն անկախ, անճնական խնդիրներու բացարձակապես անմասչելի, «Անահիտ» սլիսի ըլլա գուտ մասավորական հրատարակություն մը»<sup>86</sup>։

Սա ինքրիկ չէր նշանակում, թե հանդեսում տեղ չպետ է ունենային հատարակական և ազգային-թաղարական կյանքի հարցերը։ Ընդունակառելի , լուս հայապարտության, «Անահիտը» իր գործունեության մեջ պիտի համատեղեր գրական բնույթը հատարակական-թաղարական ուղղության ու բովանդակության հետ։ Եվ դա գրական պարբերականի համար միանգամայն բնական է ու օրինալավ։ Նախ, որ գրականությունն էլ հասարակական արասցումն ձևելից մեկն է և նրանից դուրս ներկայացվել ու բնարարվել չի կարող։ Եվ ապա՝ լույս ընձայնելով այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ծայրահեղ սրությանը ջրված էր ժողովուրդի թաղարական բախակի հարցը, երբ ազգային առաջնությունը ամեն ինչ օրգան անհրաժեշտ պարտ ուներ խոսելու ժողովուրդին՝ հայությանը, նրա ներկայի ու գալիքի մասին, անշուշտ, «Անահիտը» նույնպես՝ իրեն *ազգային* հրատարակություն, էլ էր կարող անմասն մնալ այն կյանքին տեղավոր թաղարական կարևոր հարցերի բնությունից։ Բացի այդ, կա հարցի նաև մյուս կողմը։ Գրական խնդիրների և ազգային-թաղարական հարցերի վերլուծություն-համակցումը մի պարբերականի ներսում հեշտ խնդիր չէ, քանի որ այդ միասնությունը ներառում է իրականության արասցումն նպատակներով ու խնդիրներով, ձևելով ու մերդներով իրարից որոշակիորեն ապրեր կողմերի յուրահատկությունների հարաբերակցումը նրանց փոխադարձ կապի բացահայտման պայմաններում միասնական սկզբունքներով ու մտնեցմամբ։ Ահա այս հարցի հայտը լուծման դեպքում է, որ գրական պարբերակա-

ըն կարող է գտնել իր տեղը դիպե՞ղ գրական, այնպես էլ հասարակական-քաղաքական պայքերական հրատարակությունների շարքում և կատարել այն դերը, որին կոչված է:

«Անահիտը» խոստանում էր դառնալ այդպիսի հրատարակություն: Հանդեսի ընդհանուր ուղղության մասին շարունակելով իր խոսքը՝ Չուպանյանը գրում է. «Աննե տեսակ խնդիրներ, նույն իսկ ազգային և քաղաքական հարցերը, որոնց բաժին մը պիտի հատկացվի, նկատողության պիտի առնվին այս հանդեսին մեջ՝ գրականի անկողմնակալ քննական ոգով, և երբեք գործիչի, ազանդավորի կրքոտ ու նպատակավոր ձգվածուններով»:

Հանդեսի ուղղության ու ծրագրի վրա շատ որոշակի ազդեցություն ունեցավ խմբագրի ազգային ժողովրդավարականությունը՝ հանդեսի հասարակական դիրքորոշման մեջ պայմանավորելով համապատասխան ուղղվածություն: Այդ հիմքի վրա «Անահիտը» մշակեց հասարակական կայուն և հստակ հայեցակարգ, որը հետևողականորեն պաշտպանեց իր գործունեությամբ: Հիմնադրումից մեկ տասնամյակ անց հանդեսի իր քերթքողներին հիշեցնում էր առաջին աարեշրջանում ազվածը. «Անահիտ» ունի իր որոշ ուղղությունը որ կը հայտնվի իր անօրենքին ստորագրությունը կողո գրությանց մեջ, բայց և կը հյուրընկալե գրվածքներ տարբեր ուղղությամբ, երբ անոնց հեղինակը ունի անկեղծություն ու տաղանք» ( 1909, թիվ 1-2, սևև սպիտակաբերրը):

Ոգեկոչելով հայոց հեքսանս աստվածուհուն Անահիտին, հանդեսը նպատակ ուներ մոտացրուսան միջից արքեսցնել նախնայց հեքսանս ոգին, յուսի ու կենսականության ստյույրը: «Անահիտ» կոչելի հանդեսը, մեր հինավուրց և հավիտենական աստվածուհին անուումով, որպեսզի Ոսկեծին, Անարատը, բարությանց Բաշխիլը, հայ ցեղին հոգին պատկերող մայրական Դիզանույլը՝ այս ազգային-գրական ձևնաբեր իր յուսավոր բեղերով հովանավորե և գայն գեղեցկությամբ ու կենդանությամբ պայծառացնե:

Այս դիրքերից էլ սամանվում էր հանդեսի բովանդակությունը. «Անահիտ» պիտի պարտնակե՝ 1, Ոստունասիրություններ հայ ժողովրդին պատմության, գրականության, գեղարվեստին ու լեզվին վրա, և անտարյուններ անոր ներկա բարոյական ու նյութական կացության մասին. 2, Ոստունասիրություններ գեղարվեստական, գիտական և քննիչական ընդհանուր խնդիրներ վրա. 3, Թարգմանություններ օտար լին ու նոր մատենագրության ամեննե կարևոր

հրաշակերաններուն. 4, Անպեր, վիպակներ և բանաստեղծություններ ազգային կամ առնաստրակ արևելյան կյանքի. 5, Ոստունավոր և արձակ գրություններ՝ գրական ամեն տես. 6, Հրատարակություն և ուստունասիրություն հին ու նոր հայ ժողովրդական բանաստեղծությանց, ավանդության և հեքիաբներու»:

Հայտը քննունելության դեպքում Ա. Չուպանյանը նպատակ ուներ հեռագիտես քննարակել հանդեսի գեղարվեստական բաժինը՝ հրատարակելով արվեստի երկերի վերաստություններ, հատկապես հայոց միջնադարյան կերպարվեստի նմուշներ ու դրանց վերաբերյալ ուստունասիրություններ<sup>27</sup>:

«Անահիտ» հանդեսի առաջին համարը լույս տեսավ 1898թ. նոյեմբերին: Այն բացվում էր «Գարագալու» ընդարձակ խմբագրականով: Հողվածը, որի հեղինակը Ա. Չուպանյանն էր, նոր լույս քննալուող հանդեսի կողմից մի յուրօրինակ հրատարակատեսական ուղիով էր հայտնաբեր: Չուպանյան չի դիմում քննունված նպատակին. կետ առ կետ չի մանրամասնում հանդեսի ուղղությունն ու բովանդակությունը: Նա առաջադրում է հայ մտավոր և հասարակական կյանքի կառուցման ընդհանուր ծրագիր՝ դրանով էլ պարզում հանդեսի դիրքորոշումը հայկական իրականությանը հուզող խնդիրների նկատմամբ:

Ենի ինչպիսին էր արևմտասիայց կացությունը 19-րդ դարի վերջին, հայտնի է, ցարը, հպավանք, սով, տարազություն, ժողովրդի քակտիկ նկատմամբ անհանգիստ առգնալու, հուսալքում, ստեղծված իրավիճակի հետ անգամ վերջնականորեն հաշտվելու արանստություններ և այլն: Բայց անես, հայ կյանքի խոր ու համաժավալ վերլուծությամբ «Անահիտի» խմբագիրը բացում է մեկ այլ իրականություն: Ընդունուր անարքերության մրնդողբում, մոլորի ու արյան դեմ ծխացող ավերակների միջից նա փնարում է, վեր հանում նոր կյանքի հազիվ նշմարվող շողարմակունները, նշույններ «սունենե փերկարար յուխեն», ամենուրեք անսունում է հայ կյանքի արքնացունն ու «մտակերտուց». վերակերտանանում է մշակութային կյանքը, վերակազմվում են դպրոցը, մամուլը, բարարները, գրականությունը: Նույնակ երկրում, որ հազիվ են մարել իրդիները, տեսանելի է «անսահման ճից նը ինքնապատկանություն, տնդեղյան ձգուում մը զարգացման, բարձրացման» (1898, թիվ 1, էջ 3):

Շատերի համար այս լավատեսությունը անսովոր էր, անգամ «փրականությունից հեռու» (ԱԶԳ-3693): Մակայն վերջիններս չլին ընդունում, որ դա արույն կենսափոխադարձության արտահայտու-

յուն էր և բոլորովին էլ միտում չուներ «ինքնապատիր լավատեսութեամբ» գունագարդել հայ կյանքի մտայը: Իրականությունը ներկայացնել անաչառ կերպով, իր ամբողջ ճշմարտության մեջ, դատաւարական թերություններն ու պակասները, գոգոշանալ անհիմն պատահանքներին, բայց այս ամենից առաջ և այս ամենից ավելի՝ լավատես հայացքով խորամանկ լինել երևույթների խորքը, հայտնաբերել ծանրագույն կացության մեջ հայտնված ժողովրդի ուժի, կենսականության, հավատքի ու ազնվության ապացույցները, «ի վերև հանել ինչ որ կա առաջ ու վե՛ն մեր ժողովուրդին հոգվույն մեջ», հույս և կամք ներշնչել նրան ավելի առաջ գնալու,՝ «սա էր այդ աշխարհայեցողության կենսական երկարը, որ գալիս էր հայ ժողովրդի կենսավիճակախոյանությունն և իր հիմքում առաջադաս ազգային-քաղաքական բովանդակություն ուներ: Բոլոր դեպքերում Չոպանյանը անկեղծ էր: Նրա լավատես հայացքը ոգևորիչ էր և հուսադրող: «Մե օրերուն տնոր լավատեսությունը, անոր խանոցը անհրաժեշտ էին» (Հ. Օշական):

«Գրագլուխ» խմբագրականի շարունակությունն ու լրացումը եղան «Հայգիրք» (1898, թիվ 1), «Գիտակից չանքեր» (1899, թիվ 4), «Անահիտի դերը» (1899, թիվ 12), «Հայ էջեր» (1900, թիվ 12), «Գերազույն ուժը» (1909-1910, թիվ 9-10) և այլ ծրագրային հոդվածներ, ուրուցում հակիրճ ձևակերպումներ էին արժույթ հանդեսի տարբեր բաժինների (հասարակական-քաղաքական կյանքի, գրականության և արվեստի) ծրագրային դրույթներին: (Դրանց մեծը կանոցարայա՝ կարծի համապատասխան բաժինների նյութերը բնեկիս):

Այսպիսով, «Անահիտի» հանդեսի նպատակն էր հուշակոծում նպատակն հայ ազգի զարգացմանն ու զորացմանը, ընդլայնել հայոց մեջ հայրենասիրական գգազգումն ու «գեղարվեստասիրական ձգտումը»՝ այդ բոլորը ինտեստավորելով հայ ժողովրդի արդար դատի պաշտպանության անհրաժեշտությանը և ազգային-քաղաքական ինքնորոշման գաղափարներով:

Այդ նպատակին պետք է ժառայելին նաև «Հրատարակությունը Անահիտի» և «Մտանձադարան Անահիտի» գրքային հրատարակությունների շարքերը՝ համապատասխանաբար հայ և օտար գրականություններին:

Ծրագիրն ընդարձակ էր: «...Ձայն ձնանարկելու հանդգնություն ունեցա՝ խտտովանում է Չոպանյանը, միմիայն անոր անհրաժեշտությանը համոզումնե տիրակառուրնե մղվա՛» (1899, թիվ 12, էջ

389): Այն իրագործելու համար, ինչպես գիտենք, աշխատակցություն էին հրավիրվել ճանաչված հայագետներ, գրողներ ու արվեստագետներ՝ Ն. Աղոնց, Ն. Մառ, Ա.Այն, Յ. Մարքիբ, Հ. Պատարյան, Ա. Շիրվանզադե, Ա. Ծատուրյան, Լ. Բաշալյան, Թվկատիցցի, Ե. Օտյան, Վրք. Փավակյան, Ս. Եսայան, Վ. Թերեյան, Ավ. Խառակյան, Խետո նաև՝ Միամանր, Գ. Վարժման, Ռ. Ջարսարյան, Երովան, Ա. Հարությունյան, Օ. Չիֆթի-Մարաֆ, Գ. Գեմիճյան, Գ. Բաշինջաղյան, Կոմիսաս, Թ. Թորամանյան և ուրիշներ:

«Անահիտը» ինքն սկզբից էլ լայն ընդունակություն գտավ: Նրա հիմնադրումը, ծրագիրն ու նպատակադրումները ողջունեցին և արևմտահայ, և՛ արևելահայ գրողները: Նկատվեց, որ հանդեսը «սլիփ գալ լրացնի հայ մտուռնի մեջ եղած պակասը» (ԱՉԾ-7475, Վրք. Փավակյան), որ այն ունի «երկար ժամանակի և վեր արտասանության մեջ լուրջ հանդեսի մը... պետքին գոհացում ապու հատկախննրը» (ԱՉԾ-7047, Թ. Ազատյան), և որ նրա ծրագիրը «միանգամայն ժամանակակից է, համապատասխան մեր գրականության այժմյան շահերին»<sup>88</sup> (Ա. Շիրվանզադե): «Նրե **Անահիտը** աշխատի և հաջողի կտառայի իր ծրագիրը, ավելացնում է Շիրվանզադեի,՝ նա այնպիսի ժառայություն կենտուցանի հայ գրականությանը, որպիսին չի մտաուցել արտասահմանյան թերթերից և ոչ միեր»<sup>89</sup>: «Անահիտ»-ին հայտարարությունը առած են: Պատվի, և հաջողություն,՝ Չոպանյանին է ողջունում Բաշալյանը: Շատ գեղեցիկ ծրագիր մըն է, և ասարակույս չունի, որ պիտի հաջողիս: Ազգս՝ «Բեղմնավոր գործի մը ձեռք գալիքի, որուն մեջ նորեն պիտի կրնաս ապ լիովի մեր ազգին, ինչ որ թե՛ն կ'սպասե, նորեն գալով գրավելով անոց, որ բոլոց էր և որ բաց կը մնար» (ԱԳՆ-146,151):

Այսպիսով, «Անահիտի» հրատարակությանը արժույթ էր բացառիկ կարևոր նշանակություն, նրա կիմնադրումը՝ դիմում երևույթ արևմտահայ իրավաբանության մեջ:

Չափազանցության ակնհայտ բաժին կար, ինչպիսի, ժամանակակիցների ոգևորված այն բնութագրումներում, որոնցում «Անահիտը» դիմում էր «Նվրոպայի միակ լուրջ հանդեսը» (ԱՉԾ-2311) (խոսքը հայերեն պարբերականների մասին է), ներառվում, որ այն պետք է դառնա «հայ գրականության միակ փողովոդուն փառքը» (ԱՉԾ-366), կամ էլ՝ նկատելով, թե «մեր» հայերս չունենր ոչ գրականություն կիրոպական մարով և ոչ մանավանդ հրատարակատեսություն»<sup>90</sup>, դրանց սկզբնավորումը կապում էին «Անահիտի» անվան

Շճարարությունն այն է, որ «Անսիտը» ոչ թե պիտի սկզբնավորեր կամ միտում ուներ սկզբնավորելու հայ երապարակախոսությունը՝ բառի եկրպակական իմաստով (այս մարզում հայ միտքը արդեն ակնառու բարձրության էր հասել), այլ նպատակ ուներ շարունակել ու հարստացնել հայ լրագրության մեջ ստեղծված հարուստ ավանդույթները, իր անուրանալի վաստակը բերել հայ մշակույթի ու գրականության զարգացմանը:

Ա. Չոպանյանի հողվածներում հայ պարբերական մամուլի մասին արտահայտած կարծիքները համառոտ են, արխիվային ձեռագրերում արված նշումները՝ հաստիկնեմ: Քայց և այնպես, հայցի շուրջ դրանք պարզում են որոշակի տեսակետ, քառ որի մեզանում Ռոսկանյանը, Նազարյանը և Նարանդյանն են եկրպակական տիպի երապարակախոսության սկզբնավորողները, իսկ այդպիսի երապարակախոսության իմաստը բացատրվում է հետևյալ կերպ. «...Հրապարակագրությունը, բառին եկրպակական իմաստով, այսինքն հանրային հարցերու, ինչպես և գրական, բարոյական, իմաստասիրական խնդիրներու քննությունը որոշ աշխարհայեցողության մը տեսակետեն նկատված անպատ, հեռադական անկախ ուղղությամբ մը պայծառորեն պարզված» (1903, թիվ 6-7, էջ 86): Հրապարակախոսական նույն ոգին Չոպանյանը տեսնում է նաև Ա. Արքիպյանի «Արևիկի» և «Հայրենիքի» էջերում: Ահա, մրա խմբագրած «Անսիտը» ողջգրեց այդ երապարակախոսության անպատ, անկողմնակալ սերնդատական ոգին, ազգի բնորոշումները բացահայտել, բարենորոգումի ու վերածննան միջոցները ուղենշող առաջադիմական պարբերականի օրինակը:

«Անսիտը» նկատվորեն կրում է նաև զարբերի շրջանի (50-60-ականներ) հայ երապարակագրության ազգային-լուսավորական գաղափարաբանության դրոշմը: Իսկ ճյուղի մասուցման և խմբագրական արվեստի առումով հանդեսը լայնորեն օգտագործեց իր շրջանի եկրպակական պարբերականների, հասկապես գրական հանդեսի փորձն ու ավանդույթները:

Ազդեցությունների հարցում «Անսիտը» չէր կարող շրջանցել Մտավիայի «Հյուսիսափայլի», որի լրագրական փորձը բոլորովին էլ չէր մոռացվել ու այս դեպքում շատ էր ախպահան, և որի մասին հիացմունքով է խոսում Չոպանյանը: «Անսիտի» խմբագրին «Հյուսիսափայլը» հետաքրքրել է ոչ միայն իր սկզբունքային քաղաքակա-

նությունը և ոչ միայն իրեն «Հայոց առաջին «եկրպակական» ամսաբերք», այլև մի պարբերական, որ երապարակվելով հայրենիքից հեռու, բայց մշակույթի ու քաղաքակրթության մեծ կենտրոններից մեկում, հասել է այնպիսի բարձրության, հայ հասարակական մտքի ու գրականության սապարեզում կատարել այնպիսի դեր, որ նույն շրջանում չէին կարող կատարել հայրենիքում լույս տեսնող բերերն ու հանգեմները: Գործելով դրամ «Հյուսիսափայլը», սակայն, կարողացավ ձեռք բերել համընդհանուր ճանաչում, դարձավ համազգային պարբերական: Եվ քնդիանրայեն իրազմացի իր քնդիանրայենին հակադրվող Արշակ Չոպանյանը, պատմական ճակատագրի քերտումով հայրենիքից դուրս, եկրպակական կենտրոններում Փարիզում, Վիեննայում, Մոսկվայում, Վեներական և այլուր ստեղծված հայ մտավորական կենտրոնները պատմական այս կամ այն ժամանակահատվածում կարողացել են ավելի օգտակար լինել ժողովրդին «հայրենիքի հայության», քան մի շարք ձեռնարկներ, որ նույն ժամանակ կազմակերպվել են Սերբում, բայց՝ «կապարենրու տակ»: «Միայ է մտածել-ինչպես էլ րենն օմանք-թն մայր-հայրենիքին դուրս կատարված այս ցանքերը կորված ուժեր են: Նախ այդ ամենը, ուղղակի կամ անուղղակի կերպով, կը փոխանցվի հայրենիքի հայության...: Հետո, ապա երկրի կե, բարձրագույն քաղաքակրթությանց ամենիչական ազդեցությամբ կանոնավորապես կազմակերպված գործունություն մը տեսակ մը նախափորձ է, որ վաղը կարելի պիտի դարձնեն հասում ու գիտակից կատուցումը ազգային հավաքական կյանքին՝ նույն իսկ հայրենի երկրին մեջ, երբ պայմանները ներեն ար այդ բազրը վիճակվի մեկը» (1899, թիվ 4, էջ 131):

«Անսիտը» արտասահմանում երատարակվող այն քաղաքիկ հայ պարբերականներից մեկն էր, որ չնայած բողոքական գրաքննության արգելքներին՝ առաջին իսկ համարից մտաք գործեց էրկիր, իր աշխատակիցներն ու գործակալներն ունեցավ Պոլսում, Մակեդոնայում, Իգմիթում և Արևմտյան Հայաստանի գավառներում: Հանդեսը լայն տարածում գտավ նաև Արևելյան Հայաստանում և Ռուսաստանի մի շարք քաղաքներում<sup>95</sup>: Առաստաղով «Անսիտի» կարևորագույն նպատակներից մեկն էր ինչպես աշխարհագրորեն, այնպես էլ գաղափարական ներգործությամբ դուրս գալ Ֆրանսիայի համայնքի շրջանակներից, արտահայտելով քնդիանուր հայության արտանորությունները՝ դառնալ հայկական հոմազգային պարբերական:

Վե՛ր ինքնուպես, Ի տարբերություն կուսակցական-հեղափոխա-

կան քերթերի՝ «Անահիտ» անկախ հրատարակություն էր, ազգային-ժողովրդավարական ուղղությամբ, գրական-գեղարվեստական առանձնացնող նկարագրով:

Անս այս առանձնահատկություններով էր պայմանավորված «Անահիտ» հանդեսի լայն ընդունկությունը հայ մտավորականների շրջանում:

1906-1907 թվականներից «Անահիտը» ավելի հասկանելից գրական-գեղարվեստական բովանդակությամբ, յույս տեսնելով միացյալ համարներով՝ ստացավ յուրօրինակ գրական ժողովածուների տեսք: Հանդեսի 1908թ. 1-4 միացյալ համարի ազդու մտք մասին արձանագրվեց. «Անահիտը» երկու երեք տարիս ի վեր ավելի գրական հավաքածուներու տարեկան շարք մըն է բան իսկական անտարբեր մը» (1908, թիվ 1-4, անհ ախաղոսարկոր): Իսկ դրա օրգանական շարունակությունը եղավ այն, որ 1909-ից «Անահիտը» հրատարակվեց երկամսյա հանդեսի ձևով: «Հաճախ երևալը մեծ նշանակություն չունի, կարևորը՝ ազդող, նոր ճանփաներ բացող, մեր գրականության սահմանները լայնցնող, մեր ազգության էինունքն անբասկող օրջառ մը թլլան է. այդպես եղած է կարծեմ *Անահիտը* և այդպես ալ պիտի թլլա այտուեստ» (ԱՉՆ-97):

## II. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ - ԲԱԿԱԲԱԿԱՆ ԿՅՅՆՔԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՀԱՆԳԵՍԻ ԷԶԵՐՈՒՄ<sup>1</sup>

Քննելով ժամանակաշրջանի հայ ազգային-քաղաքական կյանքի հարցերն ամենալայն հետազոտման նյութ էին դառնում ժամանակի պարբերական մամուլի էջերում: Հիմնական մտահոգությունն արևմտահայ ազգային ազատագրության խնդիրն էր: Առաջնային և ընդողջ հասկանիչը, որով «Անահիտը» ազգային-քաղաքական դիրքորոշումը հենց սկզբից էլ ամենաճանաչ էր ժամանակի մյուս պարբերականներից, այն է, որ հանդեսը ծանրանում էր ոչ այնքան արևմտահայության վիճակի, նայոց ուղերգական իրականության վրա, որքան րենադատական անհատ մտահցմամբ բացելով մեր պատմության հանգույցները, քննելով «Կայրական հարցի» պատմությունը, օրյեկտիվորեն գնահատելով ներկայի քաղաքական կացությունը՝ դրանք ծառայեցնում էր հայ ժողովրդի ազգային-քաղաքական նպատակադրումներին, փորձում առաջադրել որոշակի ծրագիր, ցույց առաջ ազատագրության հնարավոր ուղիները:

### 2.1 ԹՈՒՐԲԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՅԱԿԱԿԱՆ ԲԱԿԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ

«Անահիտը» հաճախ էր անդրադառնում արևմտահայության ոչ հետադր անցյալի կացությանը: Խոսքը 19-րդ դարի առաջին տասնամյակներից մինչև 70-ականներն ընկած ժամանակաշրջանի մասին է: Հանդեսը իշխեցնում էր այն դժուրակ պայմանները, որում ապրում էր արևմտահայ գյուղացիությունը: Դա կացություն էր սարսուկների: Կ. Պոլսում, Իզմիրում և մի քանի այլ կենտրոններում հայ ազգային երևելիներին՝ «աղա»ներին մատուցած հատուկ շնորհներով Բ.

դուր ինտուն էր ճարպիկ քաղաքականության. ձգտում էր անբը-  
պետ ստեղծել նրանց և հասարակ ժողովրդի միջև, իրար հակադրել  
հասարակական աստրեր խավերի շահերը: Իսկ հայերին շնորհված  
գաղափարական ազատությունը «երկն անդին» չէր անցնում,  
«թուրքին գարշապար միշտ անոր գլխում վրա էր» (1899, թիվ 3, էջ  
88): Սահմանադրություններով (1839, 1856, 1876) ստատորեն շնոր-  
հված կյանքի, գոյքի, ինչքի ապահովության, հավասարության ու ա-  
զատության խտանմանը բառացիորեն մնում էին թղթի վրա:

Հայոց համար իսկական պատուհաս էին բարդ ու չերթկ իր-  
ատկախները, որոնք ոչ մի ասիք բաց չէին բոլորում բազանցու, կո-  
ղապելու կամ ինսուլտիոյանը: «Անսիտը» ուշադրություն էր հրավի-  
րում այն փաստի վրա, որ մանծեղական տարրերի մեծամասնաբ-  
յունն ապահովում համար կառավարությունը չերթկ ու բյուր գաղ-  
թականներ էր բերում ու լքնում Հայաստան: Իսկ դրանք, գրկված ա-  
մենատարրական կենսապայմաններից, ապրում էին քալանի ու կո-  
ղապտի հաշվին: «Էյուրեկում ամեն ազատություն կը արվեր որ-  
դուստի հայերը հարստահարեն առավել քան երբեք սանձարձակ»  
(1899, թիվ 3, էջ 94):

Թուրքիայի լծի տակ ապրող արևմտահայության վիճակը հաս-  
տատված էր կամայականության ու անարդարության վրա տակա-  
վին մինչև 1878 թվականը: Ներկայացնելով այդ կացությունը հան-  
դեսը հերքում էր քաղաքական որդշ շրջաններում լայնորեն տարած-  
ված այն մտայնությունը, թե արևմտահայության նկատմամբ հայա-  
մանցներն ու հարստահարությունները սկսվել են 1878-ից՝ Սան-  
Ստեֆանոյից ու Բեռլինի կոնգրեսից հետո, երբ «Հայկական հարցը»  
դուրս ինքվից միջազգային ասպարեք:

1890-1900-ականներին արևմտահայության կացությունը միա-  
բարական ոչինչ չուներ: Քննելով այդ վիճակը՝ «Անսիտը» գտնում  
էր, որ այն ոչնչով չէր փոխվել: Ավելին: Նախկին հայաժամանկերին ու  
հարստահարումներին այժմ տվելայել էր չարդը, խաղաղ ու անգն  
այն ինսուլտության կողորսոք: Մուրասն Համիդը բարձրական  
Արևմտարի լուռ համաձայնությանը խտասացված բարենորոգում-  
ներն սկսեց գործադրել իր մեթոդներով, բյուրերից զսպելու փոխարեն  
պաշտոնապես զինեց նրանց, համիդի կռված հեծելազորները կազ-  
մելով՝ «դիմեց ակնի կարող միջոցի՝ հայոց մեծամասնությունը ջնջե-  
լու համար չարդի հրամանը ստավ» (1906, թիվ 3-5, էջ 55):

Արևմտյան Հայաստանում չարդիքը հաշտություն էին մեկը մյու-

սին: Այդ փաստը ցավով ու գայրյոյրով է արձանագրում «Անսի-  
տը». «Տխոր լուրեր կը շարունակեն հասնել Վանն ու Բաղեշն, եր-  
կու քաղաքներում ալ գյուղերն շաւորը պայտնի և բոցերու մեջ են  
նորեն...: Թուրք կառավարությունը ոչինչ կը փորձ հանդարտեցնելու  
համար զբզոված տարրերը» (1899, թիվ 3, էջ 110): Բիլիխում բյուր  
իրտակները «Մերքը հեղափոխականը փնտրելու պատրվակով կը  
չարդեն, կ'արնեն, Ս.Աղբերկի փանրը կը քաննեն, վանահայրը  
կտականեն»: Թուրք ջարդարների համար բախտավոր դասակար  
մի միջոց էր ուրիշ ազգերի դասարանները քանդելը, սպրությունները  
սղծելը:

«Անսիտը» իր ընթերցողներին իրազեկ էր պատեմ նաև եվրո-  
պական մամուլի էջերում (կամ գրքերում) հայկական հարցի արձար-  
ծումներին, արևմտահայության վիճակի գնահատմանը, որոնք էին-  
նակական հրատարակված էին «Օտարին կարծիքը» ընդհանուր  
խորագրով:

1900-ը գերմանական կիտապաշտոնական «Շբանկիթուրեր  
Տայրեմզ» թերթի էջերում գերմանացի Վալդեմար Բեկլը հրատարա-  
կեց «Անից մինչև Տրապիզոն հայկական արշավանքները» հոդվա-  
քը: Բեկլը ճանապարհորդել էր Հայաստանում, եղել էր Սասունում,  
Մուշում, Բիլիխում, Վանում և այլու, սկանաստես եղել բայր-բոլա-  
կան հրտակախմերի բարբարոսություններին, հայ գավառներում  
բռնկված ապստամբություններին: Նկարագրելով արևմտահայու-  
թյան ծանր վիճակը՝ գերմանացի հոդվածագիրը, ինքն իրեն հավասե-  
րով, փորձում էր հայկական աղետներն պատասխանաբարությունը  
հետացնել թուրքական կառավարությունից: Բեկլը մի կողմից նկա-  
սում էր, որ «առձիկ կառավարությունը մտրեմ անգամ չի անցնում  
այսպիսի «նչին» բաների համար իր զաշնակիցները, բրդերը պատ-  
ծելով՝ նոցա առասն ստեղծ» (Տեխիթը Բեկլ և նրա նմանները առատո-  
րեն վարձատրվում էին շրանշաններով և «ուրիշ տեսակ սիդո հա-  
վատիք վայելու...»), մյուս կողմից էլ դատադրություններ էր անում  
առնկական կառավարության անգորության, բրդերի գլխավորներին  
զսպելու նրա անկարողության մասին: «Երկրում ոչ թե տանի կառա-  
վարությունն է կառավարողը,- հայտարարում էր նա,- այլ բրդերի  
գլխավորները...» (1900, թիվ 4-5, էջ 113-114): Այսպիսով, գոհացում  
էր արվում գերմանական պաշտոնական շրջաններում իշխող արա-  
մադրություններին:

Արշակ Չոպանյանը «Բաց նամակ Տր. Պեյրին» գրությունը

պարզ ու որոշակի փաստարկներով հերքեց այս ճախող դատադրությունները: Նամակի ֆրանսերեն բնագիրը ուղարկվեց «Ֆրանկ-Ֆուրեր Յայրունգ» խմբագրության, իսկ հայերեն օրինակը Բեկի հովվածի հետ հրատարակվեց «Անահիտ»:

Եվ հանդիսների սովորությունը երկրում, և՛ ջարդերի ծավալումը, և՛ տիրող անիշխանականությունը Չոպանյանը հայտարարում է մեկ և նույն արդյունքը բոլոր կառավարության գործունեության. «Ան է որ ջարդերն պատմության հիմունքներն մին է», - եզրակացնում է «Անահիտը» (1906, թիվ 3-5, էջ 52):

Վ. Բեկին հրած նամակում Ա. Չոպանյանը չէր մտանում հիշեցնելու և այն կարևոր հանգամանքը, որ Թուրքիայում սուրբանը ոչ միայն երկրի «աշխարհական պետ» է, այլև հուզեր առաջնորդը խալիֆը<sup>2</sup>: Իսկ այդպիսի մի երկրում խոսք չի կարող լինել հպատակ այլապա՛վան ժողովուրդների հավատարմության մասին. «Մահմադական օրենքը, որ այդ կայսրության մեջ էր տիրել, շրջափոխ այս հավատարությունը», պա՛ս! «...բայց կը կարծե՛ր որ բուրբերը կարենան կամ ուզեն այս էական բարենորոգումը գործադրել: Ես կը տարակուսեմ, քանի որ երիտասարդ բուրբերն անգամ այս արժատակետ փափոխության անհրաժեշտությունը երբեք չեն ճանչնար» (նույն տեղում):

## 2.2 ՀԱՅ-ԵՐԻՏԹՈՒՐԱԿԱՆ ԱՆՈՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1890-ականների շեմին գործունեության հրատարակյալ իշած երիտարքական խմբակներն ու կազմակերպությունները, որոնք մեծամասնաբար բուրբ-մահմեդական մանրաբուժական սարքեր էին, սուրբանի կառավարությանից դժգոհ պաշտոնյաներ ու գինվորականներ,<sup>4</sup> ամեն կերպ (հատկապես 1895-96թթ. հետո) համագործակցության ուղիներ էին փնտրում հայ թաղաքական կուսակցությունների ու հայ մաավորականների հետ: Երիտարքերի մասվորական առաջնորդը՝ Փարիզի «Մշակեր» թերթի խմբագիր Աննոյ Ռիզան, այցելություններ էր ապիս ժն՛ «Ղրղաշակի» խմբագրության, Չոպանյանի միջնորդությամբ հանդիպում Արփիար Արփիարյանին, Փարիզի «Կաթի վորներ»-ում գրույցներ ունենում հենչակյան գործիչների՝ Մազահ-Գուլյանի և այլոց հետ: Հանդիպումները, գրույցներն ու վեճերը հասցորդում էին մեկը մյուսին: Հայ-երիտարք-

ական անդությունները, այդ հանդիպումներն ու գրույցները, անշուշտ, արձագանք էին գտնում հայ մամուլի էջերում՝ «Ղրղաշակ», «Նոր գար», «Նոր կյանք», «Հայրենի», «Շավիղ», «Հնչակ» և այլ պարբերականներում: «Անահիտ» հանդես ուշագրավ ճյուղ է անփութում երիտարքական շարժման սկզբնավորման հանգամանքների, շարժման Լուրյան և Կեսապնոյան նպատակների, գաղափարախոսության և այլ հարցերի վերաբերյալ:

Ի՞նչն է սակայն ամենախտկանը: «Անահիտը» անդրադառնում է հայ-երիտարք հարաբերությունների այսպես կոչված *հակահայկական* կողմերին, բազմապատմ այդ հարաբերությունների *հայավնաս* Լուրյանը: Հանդեսի ամբողջը մուսկից ճանաչում էր երիտարքական շարժման պարագույններին՝ Աննոյ Ռիզանի, Մուրադ պեյին, Մազահեղդիին և այլոց, ծանոթ էր նրանց խմբագրած պարբերականների («Սիլվան», «Մշակեր», «Մերագո») թաղաքական ուղղությանն ու ոգուն, կոստում էր նրանց հեռում գնացող թաղաքական ծրագրերն և հենց սկզբից էլ ամիսնաստ ու վտանգավոր էր համարում որևէ յուրջ համագործակցություն երիտարքերի հետ:

«Անահիտ» հանդեսը մեկ առ մեկ արձանագրում էր հայ-երիտարքական անդությունների, հանդիպումների ու համաժողովների արդյունքները, ցույց առնալ, որ դրանք թառ Լուրյան դրական պիչն չեն խոստանում հայկական խնդրի լուծման համար: Հենություն էին դրվում երիտարքական շարժման բոլոր հիմնական կողմերը: Այսպես, իրավացիորեն նկատելով, որ երիտարքերի գերազանց թաղձանքն է միդիտայան սահմանադրության վերահաստատումը՝ «Անահիտը» փորձում էր բացահայտել այդ սահմանադրության իսկական Լուրյանը, ցույց առալ, բե իրականում ինչ էր այն իրենից ներկայացնում և ինչի էր կոչված: Հանդեսի «Սահմանադրություն Թուրքիայում մեջ» (1900, թիվ 4-5), «Ժամանակակից Հայաստանի Առաքյալը...» (1907, թիվ 1-2), «Օսմանյան սահմանադրությունն ու հայերը» (1908, թիվ 5-12) հոդվածներում և ուսումնասիրություններում արվում էր 1876թ. բուրբական սահմանադրության շատ կողմերով պատանական ճշգրիտ գնահատությունը: Պաշտպանվում էր այն տեսակետը, որ սահմանադրությունը բուրբական կառավարության խորամանկ խաղերից մեկն է, որի բուն նպատակը բուրբական հարցի կանխմանն է, արտաքին միջամտության արգելումը: Սահմանադրությունը Թուրքիոյ ձեռքին կոպավ այն փաստը, «որում կորելով մերձեցին եվրոպական միջամտությունը բարենորոգումներու խնդրու մեջ»:



Այս եզրով Սահմանադրություն կոչված քաղաքական կառավարչության առաջին արարվածը» (1900, թիվ 4-5, էջ 126):

Ուշագրավ է, որ երիտարքերի կողմից սահմանադրության վերանաստատումը 1908-ին դարձյալ, իբրև արարչին պատճառ, եկրպակական միջամտությունը կանխելու ակնհայտ ճգառումը ունե՞ր: Հայոց համար 1876-ի սահմանադրությունը ի գործ դրվեց Վանի ստակալի ջարդերով, որը «գործալուրտյունն էր Պոլսո մեջ կազմված ծրագրի մը» (1907, թիվ 1-2, էջ 9-10):

Երիտարքերի ազդակներին, քե իրենք ունեն սահմանադրություն, քե սուրբան Համիդն է, որ այն չի գործադրում, և քե կայսրության ամենաշողությունների «միակ մեղավորը և պատասխանատու» սուրբան Համիդն է (տե՛ս 1900, թիվ 4-5, էջ 124), «Անահիտը» պատասխանում էր. «Հրեշային թեմիթին հեռիսնալը Սուրբան Համիդը չէ: Համիդն առաջ, որիչ սուրբաններ ջարդած են Հուլյները, Արեւացիները, Քիսուցիները, Տյուրքիները, ջարդը քրքրական մեղսու մքն է...» (նույն տեղում, թիվ 9-11, էջ 235): Զգուշացվում էր, որ միայն սուրբանի խորամանկ, մեհամուղ, կապակծուտ անձի դեմ ուղղված այդ աղաղակը ծառայում է երիտարքերի իշխանական ձգտումներին: Անվասիլի դուա ապագայոյը. Համիդը երիտարքերի կատաղի քննադատորյանն էր արժանանում այն բանի համար, որ իբրև քե վճռական միջոցների չէր դիմում մյուս ազգերի անջատուական ձգտումները գազելու, որ «ողորմելի միապետը» իր գոյության մասին միայն մտածելով՝ Թուրքիայի «ամենն գեղեցիկ ճանաչմունքը բոլլ կուտա ու լիւն» (1901, թիվ 1, էջ 5): «Օսմանցի ազատականները» հիմնովին մերժում էին բուրջական լի աակ հեծող ժողովուրդների ինքնորոշումն յուրաքանչյուր փորձ, հայերի համար մասնավոր բարենորոգումների ամեն մի ծրագիր: Տարիներ շարունակ նրանք հայերին երավիրեցին անասկեղելու Թուրքիայի ընդհանուր բարենորոգման գործին, բայց նրեք չուգեցին ընդունել հայոց պահանջների օրինավորությունը: Երիտասարդ բուրբերը փայտիայում էին մեկ միասնական պետության՝ «Օսմանյան տերության» ստեղծման երազանքը, չէին ճանաչում մյուս ազգերի իրավունքները: Ինքը՝ Ռիզա պեյը, որի կյանքն ու գործունեությունը անսկզկն 90-ականներին «գեներ տեսակ մը դրոշակ դարձուցին բոլոր ազատական բուրբերուն», Չոպանյանի ( նաև՝ Ս. Սապահ-Գույանի, Մ. Վարսեղյանի և այլոց ) բնորոշմամբ մոլեռանդ բուրբ ազգայնական էր, և երագում էր, որ Թուրքիան «իբ բոլոր գեղերովը, միակ ազգի մը, «օսմանյան ազգին» մեջ

միացած» կառավարություն ունենար ( տե՛ս նույն տեղում, թիվ 1, էջ 22-23):

Արտաքին միջամտության հարգում «օսմանցի ազատականները» միասնական չէին: Նրանց մի մասը Մապակեղիմի և Խանայի Քեմալ պեյի գլխավորությամբ ընդունում էին կայսրության ներքին գործերին մեծ տերությունների միջամտության անհրաժեշտությունը: Մինչդեռ ռիզալականները, որոնք մեծամասնություն էին կազմում, այդ միջամտության կատաղի ակառակարկներն էին:

Եկրպական և բուրբ մամուլում («Քուրիեր Էտրոփին», «Մաքեմ», «Թերագզ» և այլն) Մապակեղիմի իրատարակած հողվածները քաղվածարար հատվածներ սպագրելով «Անահիտում» Չոպանյանը սպացուցում էր, որ երիտարքության այդ երկու խմբակներն էլ իրենց բացահայտ հակահայկական դիրքորոշմամբ որևէ կապված չեն ներշնչում, որ միևնույն Մապակեղիմը «կալվ ինքն ալ կիցնել՝ թիչ մը ավելի ճարպկությամբ՝ հին հուսած եղանակը թիգանրեմ» «Հայերը փորձառնամոլություն մքն են՝ Տանկատասանի բուրբ նահանգներուն մեջ, որեմն միմիայն Հայոց համար մասնավոր բարենորոգումներ անկարելի են» (1906, թիվ 3-5, էջ 70):

«Անահիտը» շեշտում էր երիտարքը շարժման մեկ այլ բնորոշ գեծը: Համիդը սրանց կողմից պակասարկվում էր նաև կրոնական չերմեանդության պակասի համար: Երիտասարդ բուրբերին չէր գուհացնում «անմիտա ու անկապակից» այն վարչակարգը, որ իմնված էր ոչ մասնեղական օրենքների վրա: Եվ այսպես, կրոնական սովեանդությունը նույնպե՛ս երիտարքերը ոչնչով չէին զիջում իրենց նախորդներին: «Երիտասարդ բուրբերը» այնքան մոլեռանդ են, որքան «վիւն-եքը», - եզրակացնում էր «Անահիտը» (1906, թիվ 3-5, էջ 69):

Ի՞նչ ուղի էր մտնո հայերին: Սերձեցմամբ, համերաշխ գործակցությամբ գնալ «օսմանցի ազատականներու» հետ, իրենց հայտարարել՝ «զավակները միևնույն հողին, գոր կը մշակեն ու կը առասպեն միևնույն տառապանքը», եղբայրության ձե՛ր մեկնել երիտարքերին, ինչպես քաղազվում էր հայ քաղաքական որոշ շրջաններում, քե՛ վերջնականապես հրամարվլ այդ մտքից:

«Անահիտ» հանդեսի եզրակացությունն անկն էր. «Երբայ անճանատուր ըլլալով այսպիսի զանգվածի մը, մենք մեր ձեռքով չվանք մեր վիճո անցուցած կ'ըլլանք» (նույն տեղում, էջ 70): Այս առիթըր գովել են 1906-ին:

Նույն կարծիքին էին հայ մասավոր-քաղաքական կյանքի խո-

բազմաց ու հեռանա առաջնորդները<sup>6</sup>։ Սակայն հայ բարոյական առանձին ղեկավար գործիչների համար այդ գլուխացումներն ու հարդորները հնչեցին իրեն ճայն բարբառա հանապատի։ Նրանք անխուհեմ համագործակցության գնացին երիտորդների հետ, 1907թ. Փարիզում գումարվեց օսմանյան քնդդիմադիր ասորերի համաժողովը։

Աղշակ Չոպանյանը գարնանայի մի ներքնառնությունը նախագահում էր հայ-երիտորդական համագործակցության դարձ հեռանքները, արևմտահայությանը սպանացող վերակուս աղետը։ «Այն օրը որ... քրթական արդի բեմին ասորայի ու սահմանագրություն մը հաստատվի, ժեռն-ժուրդերը ոչ մեկ ազգի գոյություն պիտի քնդդռնին Տաճկաստանի մեջ բացի օսմանյան ազգին, ու նույն իսկ հայ արյունով հաստատված այդ սահմանագրությունը պիտի կրք գեներ գործածեն «հայկական դատը» վերջնական սպանելու համար։ Կոթրկարասնին մեջ՝ հայ պատգամավորներու բողոքը կամ պայքարը՝ ոչ մեկ արյունը կրնա ապ» (1908, թիվ 1-4, էջ 46)։ Փարիզի վերջին Քոնկրետի մեջ սպանվեցավ, կամ գեղ սպանման ճարտան մեջ դրվեցավ... հայկական դատը» (նույն տեղում, էջ 44)։

1908թ. սահմանագրության վերահաստատումը մեծ ոգևորություն առաջ բերեց նաև հայկական շրջաններում։ «Անսխիտում» այն արժանացավ գոսպ ու գզույզ գնահատության։ Հիշեցվում էր, որ հայերը նույն ոգևորությամբ ողջունեցին սահմանադրության հաստատումը նաև 1876-ին, մինչդեռ շատ շուտով դրան հայտրդեց մի վարչակարգ՝ ավելի քունականական, ավելի կարծնաբար։

Երիտասարդ բուրքերի բաղիբը, ինչպես միշտ, խորամանկ էին, բողոսեր, երկիմյի։ 1909թ. գարնանը կազմակերպվեց Ազանայի ցարդը։ Երիտարքական գրիչներն ու պարսուխյաները գործի անցան։ Եվրոպական և բուրք պաշտոնական մամուլը ինդիվիդուալ-վածներով՝ «անդրք» հայի ու բուրքի մեջ բաժանելու և «անդրք» իրենց բաժինը հակասահմանադրական՝ համիդյան ուժերին վերագրելու ուղղությամբ։

Գուպերի առիթով Չոպանյանը «Անսխիտում» տպագրեց «Վրչապը» հրատարակախոսական քրոնիկը։ Գրվածքի վերնագիրը նկատի ուներ սուրբան Համիդին, սակայն նրա քննադատական պարբեր ուղղվում էր երիտարքերի դեմ։ Չարքերի անմիջական կազմակերպիչներն ու իրավաբաններն էին հայտարարում ինքն երիտարքերը։ Նրանց ամբողջ գործունեությունը, իրավագիտրեն նկատում է Չոպանյանը, առայնդորդում էր ինքն այդ նպատակին։ Աստ-

կամ չէր կարող լինել, որ «օսմանցի պատասխանները» որդեգրում էին սուրբանի հայայնից բարոյականությունը, դատուն նրա գործի շարունակողները։

2.3 ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՍԿՐՈՒԹՅԱՆ ՈՒՊՆԵՐԻ ՀԱՐՅԸ, ԱՐՏԱԼԻՆ ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱՍԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Բարոյական անկախության նվաճումն «Անսխիտը» հայտարարում էր հայ ժողովրդի գերագույն նպատակը։ Անկախության ուղիների ընկալման հարցում հանդես ուներ վերջնականապես մշակած բարոյական ուղեգիծ, որի կիսնական ստանդարտ սպագրային-ազատագրական զինված պայքարն էր։

Հանդեր հանգամանակն անդրադառնում է իր առաջադրած բարոյական ուղեգծի բաղադրիչներին։

Անձեց այսպե կոչ էր արվում հույր ղեկ սեփական ուժերի վրա. «Ազգ մը ... միշտ իր հույրն էն առայ իր վրա դնելու է։ Այս ճշարտությունը վեճ իսկ չի վերցնեք» (1906, թիվ 3-5, էջ 81)։

Ազատագրության ուժերի խկական արյունը էին դիվանդ ֆիդայական շարժումները, բրդերի ու բուրքերի դեմ «արյունոտ մշուշի մեջ» մարտող ստամոցի, մշեցի, վերջունցի քայքայի կերտական պայքարը։ Սերոբը և Արևմտյան Հայաստանի ազատագրության համար պայքարի կամ մյուս հայ մարտիկները, Չոպանյանի խարբրով, «ուրիշ բան չկն կրնար ներշնչել բայց երև հարգանք և կիցանո» (1901, թիվ 9, էջ 240)։

Սակայն հայկական ազատագրական այդ շարժումները որքան էլ ազնիվ ձգտումներով ստղծված, որքան էլ կերտական ու ինքնամտաց, այնուամենայնիվ անկազմակերպ էին, տարբային, ատարամբական խմբերը գործում էին անպատ-անպատ, ստանց որչափակի ծրագրի։ Չկար համագային ճակատ, որը չէր կարող չանհանգրատացնել մանավանդ 1895-1896թթ. հայկական աղետներից, Չեյրու-նում, Սասունում քունկված ապստամբությունների անհաջող կրից կեսու, որը անհրաժեշտություն էր դնում վերագնահատել ուժերը։ «Անսխիտը» ճշարտում է իր դիրքորոշումը. ուշադրությունը սեռեկով ինքնապաշտպանությունը՝ միամամանակ մշակել գործունեության հոսակ ու որոշակի ծրագիր, «կենտրոնացնել և սահմանագծել հայկական շարժումը»։ Բարոզվում էր է Հայաստանի նահանգներից մե-

կում (այն է՝ Կիլիկիայում)<sup>7</sup> ապստամբություն կազմակերպելու գաղափարը:

Հանդեսը դիմում էր հայ ժողովրդի պատմությանը, այնտեղ պեղում ոչ միայն ժողովրդի ստեղծագործական հանճարն արտահայտող մատուրներ, այլև վեր հանում ազգային-հերոսական ավանդները՝ ներկա սերնդին ազգային անկախ գաղափարներով դաստիարակելու համար: «Անսահիտ» էջերում շարադրվում է հայ մախարաբական աների՝ Բզնունյաց, Ռչաունյաց, Արծրունյաց, Մամիկոնյաց և այլոց պատմությունը, պատմաաշխարհագրական մանրամասն տեղեկություններով ներկայացվում են հայկական երբեմնի վաճառաշահ թաղարքերը՝ Վանը, Արմավիրը, Արասաշատը, ԿՊլինը, Արճունը և այլն: 1905-ին հանդեսը տպագրեց Մ. Մելանյանի «Կարգանց շրջանը» ուսումնասիրությունը: Այն կրում է «Պատմական մի կտակ» խոսանք տերմինը: Ավարայրի ճակատամարտի, Վարդանի և նրա զինակիցների հերոսական մահատուրյան իշխեցումը կամ Ավարայրից հետո ի մեկ նպատակ կա՞մ հայ ժողովրդի՝ Եղիշի խոսքերով արված նկարագրությունները բնավ էլ ինքնանպատակ էին: Մերոնդներին էր կոչակվում Վարդան Մամիկոնյանի սխրամբը՝ զեռակցված մահ ազգի վերկայան համար:

«Անսահիտը» պաշտպանում էր թուրքիայի բոլոր ճնշված ժողովուրդների միանական պայքարի գաղափարը: Հանդեսն իր համակրանքն էր հայտնում արամեացիների, արաբների, սելջուկների, բուլղարների պատառակված շարժումներին, շեշտում այդ ժողովուրդների միասնության գաղափարը: 1899-ը. առաջին համարներից սկսած հանդեսը պարբերաբար հոդվածներ է հրատարակում «Սեր դրագիները» րնդհանուր խորագրով:

Այլուհանդերձ, արևմտահայության ազատագրության հարցերում հանդիպ գվաճակն էր համարում մեծ տեղությունների կամ դրանցից որևէ մեկի աջակցությունը, ուստի և քաշալերում էր բոլոր այն ջանքերը, որ ուղղվում էին այդ նպատակին, լինե՞ր դա հայկական կոտորածները, մեր ժողովրդի պատմությունն ու գրականությունը աշխարհին ներկայացնող հրատարակություն, հասարակական կարծիքի կազմակերպում թե կատակարություններին ուղղված դիմում, համաժողովներում ու խորհրդարաններում արված հարցապնդում, եվրոպական բններում կարդացված բանախոսություն և այլն: Բայց «Անսահիտը» չի ստիճանափակվում այն միջամտության անհրաժեշտությունը միայն պարզելով: Նա դնում է երկրորդ հարցը. էլ-

րոպան մտածում ու գործում է միմիայն անտեսական ու քաղաքական շահերից կենթով, վարձում է շնորհներ ստանալ թուրքիայից՝ դիրքերը Մերձավոր արևելքում ամրապնդելու համար, ուստի որևէ յուրք միջամտություն չպիտի է տարակն ճրանքի: «Որքան ալ վիթխարի երեշտություններ պատահին Մեծ Հայաստանի մեջ, Անգլիան, Յիսսմիլան կամ Գերմանիան և ոչ իսկ մատերիցն պիտի չարժեն միջամտելու համար...» (1899, թիվ 1-2, էջ 46): Ինչ որ կարող են անել այդ երկրները, ջարդերը արգելել է, դրանցից այս կողմ ճրանք չեն կարող անցնել և դիտավորություն էլ չունեն անցնելու. «Յնորք է ... վճռական ճիգ մը հուսալ Արևմտյան Եվրոպայեն» (1906, թիվ 3-5, էջ 75):

Ռուսական տերության վերաբերմամբ «Անսահիտ» դիրքորոշումը փորքի՞նչ այլ է: Ռուսաստանը նույնպես գործում է քառ իր շահերի այս միտքը շատ որոշակի է հանդիսանում տպագրված քաղաքական տեսություններում ու հոդվածներում (տե՛ս 1899, թիվ 1-2, էջ 46, 1900, թիվ 3, էջ 25 և այլն), սակայն, քառ հանդեսի, պատմական որոշակի շրջաններում այդ շահերը ինչ-ինչ ուղիներում համընկնում են հայոց ազգային-քաղաքական շահերին, և դա է, որ պետք է հաշվի առնել ու կարողանալ դիվանագիտորեն օգտագործել: Այս հարցի առիվ հանդեսում բերված փաստարկներն անշուշտ կարելի է վիճարկել, կարելի է չհամաձայնել նաև այս կամ այն ժամանակաշրջանում Ռուսաստանի հայախմբապետ քաղաքականության վերաբերյալ հանդեսի անվերապա հավաստիացումներին, բայց դժվար է միանշանակ կերպով մերժել արտաքին միջամտության հարցում հանդեսի ընդհանուր քաղաքական զիճե՞ն արտահայտող այն միտքը, թե հայ ժողովրդի «սպազային վճռումին մեջ» Ռուսաստանը կոչված է կարևոր դեր կատարելու:

Պաշտոնական Եվրոպայի կողքին «Անսահիտը» տեսնում էր ժողովրդական մտքի, մարդասիրական ձգտումների Եվրոպան: Հանդեսի համար բուն Եվրոպան նրա «ներքին մասն» էր, «մտածող ու գգուցող մասը, սիրուն ու ուղիղը»: Եվ հանդեսի խմբագրի դիմումներն ու ներկա ուղղված էին առաջին եերքին այդ Եվրոպային, նրա սրտին ու մարքին<sup>8</sup>:

Արևմտահայության ազգային ազատագրության ուղիներն ընկալման այս արձամարմությունը է «Անսահիտը» վերլուծում «Հայկական հարցի» պատմությունը<sup>9</sup>, քննում հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը:

III. ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԸՆԹԱՅՔԸ ԵՎ  
«ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԳԵՍՐ

3.1 ՀՈԳԵՎՈՐ-ԳՐԱԿԱՆ ՄԹՆՈՒՈՐՏԸ ԵՎ  
«ԱՆԱՀԻՏ» ԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Դարերի սահմանազժու, ի հակակշի ազգային աղետների, շատ բուն ու ինքնաբերական կերպով ժայռ առած հոգևոր շարժումը հայ կյանքի ամենաբնորոշ կողմերից մեկն է: Նյութական կեցության հիմքերից վերջնականապես զրկված, բաղաբարկան անկախությունը կորցրած ժողովրդի համար փրկության ուղի էր մնում հոգևոր կյանքը, իսկ հոգևորի պահպանության խնդիրը կենսական մտահոգություն ժամանակի բոլոր առաջադեմ գրողների ու արվեստագետների գաղափարական առաջադրություններում: «Ժողովուրդ մը ղչին կորսրնցուցած է երբ վառ պահած է իր հոգին: Հոգևուն ուժին հավելումը ինքնին պիտի բերն նյութական վերականգնումը»,- երև «Անահիտ» այս ձևակերպումը (1898, թիվ I, էջ 5) դարավերջին հնչյուն էր որպես պատմության փորձով ստուգված և ժողովրդի էությունից բխող գոյության պայքարի սկզբունք, ապա հետո արդեն, շատ շուտով այդ սկզբունքը պիտի իմաստավորվեր նոր բովանդակությամբ, դասնաբ խորիմաստ տեսությամբ, գոյության նորոգյա փիլիսոփայությամբ: Այդ նոր շարժումը, որ ընդգրկեց հոգևոր կյանքի բոլոր ապարիզները՝ սկսած գրականությունից, արվեստից մինչև հայագիտության և հայրենագիտության բոլոր քննազավառները, հենց սկզբից էլ իր հիմքում խորապես հասարակական էր, ազգային ինքնություն, ազգային գոյության պահպանությունը՝ նրա հիմնական սենյակետը: Ինչպես Ա. Չոպանյանը, այնպես էլ նրա շատ նշանավոր ժամանակակիցներ՝ Կոմիտաս, Ավ. Իսախանյան, Հովհ. թումանյան, Դ. Վառլուհան, Վ. Տերյան և ուրիշներ, հայկական ազգայնությունն ու հայ-

րենասիրության լավագույն դրսևորումը համարում էին նաև աչակցությունը հայ զբաղվածության ու զեղարվեստի զարգացմանը: Ինքը՝ Չոպանյանը, «Անահիտ» հանդեսի էջերում այսպես է բնորոշում գրականության և զեղարվեստի ազգապահպան նշանակությունը. «Գրականությունը, զեղարվեստը՝ ազգի մը պատվը, ամենարական գեղեցիկ, մեծուղի, անփայտի ու փայտի աղբյուրը և նույն իսկ կյանքի հիմունքը, ինքնապահպանության ամենն ապահով միջոցն են: Կարելի է թել թել ազգ մը իսկապես գոյություն ունի այն ատեն միայն երբ նրան կը բերն ինքնահասակ զեղարվեստ մը, գրականություն մը» (1909-1910, թիվ 11-12, էջ 24):

Գարսակերի հայ գրականության ու արվեստի հասարակական բացառիկ նշանակությունը մեկնող այսպիսի օրինակները բազմաթիվ են: Սակայն խնդիրն այնտեղ այլ է: Դժվար չէ նկատել, որ Չոպանյանը ընդգծում է *ինքնահասակ* գրականության ու զեղարվեստի ազգապահպան նշանակությունը: Եվ առ բոլորովին էլ պատահական չէր: Ազգային ինքնության գաղափարը ժամանակի զբաղված-զեղարվեստական ընթացքի բուն և մեծիմաստ խորհուրդն էր: Մասուպետն ինդիկ էր դրվում հոգևոր կյանքի բոլոր ստպարիզներում հայտնաբերել, բացահայտել և ստեղծագործորեն կերպավորել հայ ոգուն ու նկարագրին յուրահասակ դրսևորումները, ազգային-հոգևոր կերպավորի ուղույն գծերը:

Ինքնություն միասուն չէր հայ գրականության, հայ զեղարվեստի համար: Այն ինչպես հայ մշակույթի, այնպես էլ ամեն մի ժողովրդի ճշմարիտ արվեստի գոյության ու զարգացման կարևոր պայմանն է բոլոր ժամանակների համար, յուրաքանչյուր պատմաշրջանում: Սակայն դարերի սահմանազժուում հայ ժողովրդի քաղաքական ծանր կյանքի, պատմական ճակատագրի քեղտրոսներով ազգային ինքնության գաղափարը սասանում էր ժայռանկոթուն կարևոր նշանակություն: Հաղաբարկիք ժողովուրդների շարքում ինքնություն գոյություն հաստատելու, համաշխարհային քաղաքակրթության մեջ իր տեղը բացահայտելու և, առեստարակ, ազգային գալիք հեռանկարների տեսուկյունից սա բերես ժամանակի ամենից խորունկ ու ճշմարիտ կռահում էր: Յուրաքանչյուր ազգ, Իրնիկական յուրաքանչյուր միավոր դիտվում էր ընդհանուր մարդկության մեկ սանդուկը, «ամբողջ մարդկություն... մեկ օղակը», և այդ օղակում նա պետք է ներկայանար ինքնահասակ արժեքներով: «Հայ գրականության մը տիպարով ներկայանալ միջազգային մտավորականություն հան-

դեպ»<sup>1</sup>,- սա էր բանձեր:

Հասկանշական է, որ արդեն տասական բվականներին, որվազելով Հոգևոր Հայաստանի խորհմաստ տեսազիծ<sup>2</sup> ազգային կյանքի կազմակերպման գործում Վահան Տեղյանը շեշտում էր ժողովրդի ազգային-գեղարվեստական նկարագիրը բացող, ինքնությունը հաստատող արժեքների ստեղծումը: «Լեր մտաավոր նպատակն է, -գրում է նա,- կուստրական մի ժողովուրդ լինել, այսինքն գարգացնել մեր բոլոր ստեղծագործ մտքեր, այլ խոսքով արտահայտել մեզ կյանքում, այսինքն մտնել կուստրական մարդկության գերադասանքը ոչ իր խոսք գավակ, կամ ծույլ ու խավար մի ստորել, ծուլել մեր կյանքը համամարդկային կյանքին, պահպանելով մեր հոգեկան առանձնատեսակ գծերն ու գայները: Այլ խոսքով՝ մտնելով մեր ինքնատիպ կուլտուրան, մեր ստեղծագործական բաժինը համար մարդկության ստեղծագործության մեջ»<sup>3</sup>:

Ուշագրավ է դարձյալ, որ դարակրիին ազգային դասական ինքնության և ինքնատիպի բացահայտումը դառնում է Կոմիտասի (կրաժամության ասպարեզում) և Թորոս Թորամանյանի (ճարտարապետության բնագավառում) կյանքի ու գործունեության առանցքազիծը:

Ազգային ինքնության գաղափարը բոլորովին էլ չէր նշանակում ներանձնացում սեփականի, գոտ ազգայինի շրջանակներում, ինչպես բխում է առաջին հայացքից: Գա, ինչ խոսք, կարգադասներ գրականության բովանդակությունը, կզրկել նրան մեծ արվեստի հետ համեմատելու կարևորագույն հնարավորությունը: Այն չէր կարող իրագործել նաև իր հասարակական առաքելությունը: Հետևաբար հայ գեղագիտական միտքը մի կողմից փորձում էր ազգայինի մեջ հայտնաբերել համամարդկային գաղափարատիպեր ու զգացումներ, ազգայինը դիտում դեպի համամարդկայինը առաջնորդող ուղի, մյուս կողմից էլ ձգտում էր բնդրայնել ազգային մշակույթի զարգացման սահմանները, «յուրացնել Եվրոպայի ժամանակակից կուլտուրան» (Վ. Տեղյան), հայ միտքը դուրս բերել «Գեպի սեծ կյանքը» (Հովհ. Թումանյանի հոգվածներից մեկի վերնագիրն է):

Զենվող ժամանակաշրջանի հայ գրականությունը գաղափարական ու գեղարվեստական նույն միասնականությունը է հատկանշվում ինչպես արտասահմանում և Երկրում ծավալված գրական շարժումների (րևև բնձատիկ որոշ ատարբերվումներով), այնպես էլ արևմտահայ և արևելահայ գրական հատվածների տեսանկյունից:

«Գարակրի գրական շարժումը համագային երևույթ էր, հայտարեբում էր բնդհանոր եզրեր հայ գրականության երկու հատվածներում հավասարապես»<sup>4</sup>:

Գրական-գեղարվեստական ընթացքը հատկանշող ազգային ինքնության միտումը գրականության մեջ հայտարեբվեց ազգային ոգուն ու նկարագրին հարգալաղ դրսերումներով, գրականությունը ժողովրդին ու հողին մտուցեցնելու կենսական մտահոգությանը, այսպես կոչված գրականության, հայրենացմանը: Այս երևույթը իր արտահայտությունը գտավ ինչպես տեսական մտքի առույններում ու գրական բանավեճերում, այնպես էլ գեղարվեստական գործունեության մեջ՝ սկսած 90-ականներից՝ «գալառային գրականություն» շարժումից մինչև մեխանիկաներն ու «Նավասարդ» (իկարիկ, ինչ-ինչ հասկանիչներին ընդգծմամբ և յուրահատկություններով):

Գրականության ազգային ինքնությունություն այս միտումը գաղափարական ու գեղարվեստական ուղույն առարձրեցնում է լուծում ժողովրդայնության լուծիլը: Անեկից առաջ խորանում և ընդգծվում է այն գաղափարը, որ գրականությունը ժողովրդի ինքնություն կյանքի, ազգային անկախ սգու գեղարվեստական արտահայտությունն է, Չոպանյանի բնդրումսը՝ «Բարձրագույն արտահայտություն ցեղին հողվույն»:

Հայ գրականության ու արվեստի զարգացման այս ուղիներում է, որ պետք է գնահատել «Անահիտ» հանդեսի գրական և գեղարվեստական գործունեությունը:

«Անահիտ» գրական հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է. ընդգրկում է գրականության պատմության ու տեսության ամենարգեզնական հարցեր: Գրականության պատմությանը հանդեսը մտուցնում է արդիական չափանիշներով, իսկ ժամանակակից արվեստի խնդիրները հստատաում գրականության պատմությանը: Անցյալի գեղարվեստական գործունեության վերծն ու նրա բնձայատական համակարգումը հանդեսը ծառայեցնում է ազգային գրականության հեռանկարներին:

Ի՞նչ ուղղություն և ի՞նչ բովանդակություն է ստեղծում «Անահիտը» հայ գրականության համար:

Նախ՝ դրվում է ազգային ակունքների և հայ գրականության դասական արժեքների յուրացման խնդիրը: Հայ գրականությունը, ըստ հանդեսի, ամենից առաջ և ամենից ավելի իր երակներում պիտի կրի «ցեղային նորք», «տոնային դրոշմը, տեղային-ցեղական համ ու հո-

ար՝ որ ճշմարիտ կենդանի գրականությանց հինը կը կազմէ»: Այն առավել գորոշյա՞մք ու խորքով պիտի կազվի իր հեռավոր ու նվիրական արժանեքին, կենսական լիքերը պիտի ստանա ժողովրդի դարավոր պատմությունից և ներկա կերտական մարտունակից: Այս հինի վրա հանդերս պաշտպանում և զարգացնում է գրականության ազգային բնույթի հարցը: Ըստ որում, հանդերս չի սահմանափակվում հարցի արտաքին ու անմիջական ընկալման տիրույթն և քննադրում է գնահատման լայն հայացք: Դա ամենից առաջ իրականության և գրականության կապի ճիշտ բնորոշումն էր այն իրենական չափանիշների առաջադրմամբ, քի գրականությունը ինչ խորությամբ է արձագանքում հայ կյանքի կարևորագույն խնդիրներին, ժողովրդի երգահանքներին և հասկալան ինչ: չափով է արտահայտում հայկական հոգեբանության յուրահատկությունները: Հարցը դրվում էր հասակ վերջին հաշվով ի՞նչ: սակ է *հայկական ոգի, հայկական հոգեբանություն...*: «Այս բարդ այնքան կրկնված է, այնքան տեղայն որ իմաստը դասարկված կը քվի. ամեննե մեծ դժվարություններն մին է որոշակի ճանաչել և սահմանել քի ինչ է «հայկական ոգի»-ն: Արևեստագետը իր գործին կեար հասած է արդեն, երբ կը հասնի այս ծանոթության» (1911, թիվ 5-6, էջ 126): Հայկական հոգեբանությունը բնավ էլ անորոշ ու անզո մի բան չէ, որ չգիտես որսևոյց մտար է գործում գրականություն, անզոս դառնում նրա կենսունակ երակը: Դա ժողովրդի կենսությունն է, որ պատմական սկիզբ ունի, որ գալիս է դարերի կենսավորմից, մշտապես նորոգվում ու հարստանում, «այն հոգեբանությունը, որը պատմության և արդիականության, ազգայնության ու համամարդկայնության հրաշալի ձուլվածքն է» և սնվում է պատմության ու կյանքի երակներեց<sup>4</sup>: «Հայկական ոգին՝ Արդարության ողբերգական սերն է» (նույն տեղում):

«Անահիտ» հանդեսն քստ Լուրյան կնում էր ազգային հոգեբանության այս բնորոշմից՝ առանձնացնելով «հայ հոգիին մեջ» պատմականորեն ձևավորված գծեր ու հատկանիշներ: Հատկանիշներ, «տրոքը նույն իսկ պիտակներն են հոն», ինչպես՝ «Պաշտոն ամեն բանի որ պարզ է և անտերեր. անսահման չկրոնություն, անկեղծություն բնշուրյուն՝ գորովի մեջ», ըլլա գորով մայրական, Լորայրական կամ տարբակվան,- բուն սեր՝ հավատել քրիստոսներության բերած մեծ տխրությանը՝ բնության գունալուր ու առույց ճնխություններուն, կյանքի առողջ արբեցություններուն. գոհարեության հակում ամեն բանի մեջ. գուրգուրակին խանդաղատանը՝ ուն. ցավով չարարվա-

ծին համար. նախախորյուն՝ խաղաղ, բարի, արգավանդ, աշխատությունով ու սիրով ստգորուն կյանքի մը ...» (1902, թիվ 9, էջ 197):

Գրականության ազգային բնույթի հիմնական հատկանիշ է համարվում ազգային հոգեբանության գեղագիտական վերաբեղումը: Ազգային ոճավորումը, ամենիկ միջավայրի ստեղծումը, ազգագրական մանրամասներին ու ժողովրդական քստ ու քսնի օգտագործումը անհրաժիշտ պայմաններ են ազգային մշակույթի ստեղծման ճանապարհին, քայց բնավ էլ ոչ քավաքար: «Շատեր *ազգային ոգի* տված կը համարին իրենց վեպին, երբ տեսարանը Հայաստանի մեջ է, երբ դուրսագնեը Միքիսն են ու Առշակն, երբ միջավայրը միայն բշկատություն կը ներկայացնեն: Անշուշտ արևելյան շքանակը մեծ հրատար մ'ունի, քայց պետք էլ շվտրկ *տեղական գույնը տեղական ոգիի հետ*» (1911, թիվ 5-6, էջ 126):

Հայ հոգեբանությունը, հայ արվեստը, քստ «Անահիտ», պետք է ստեղծի ոչ միայն գեղեցկությունը, այլև նրա *հայկական տիպարը*, ոչ միայն ոգի պիտի ներկշնչի քանդակին, այլև *հայկական ոգի* (տե՛ս նույն տեղում):

«Անահիտ» առաջնորդվում էր այն ճշմարտությամբ, որ ժողովուրդների հոգևոր պատմության մեջ առկա ժողովրդի սերն ու դերը բնորոշվում է նրա ինքնություն արվածքով, իսկ այդպիսի արվեստի ուղին անցնում է ազգային միջով, ազգային խորացմամբ, սեփական ժողովրդի բնավորության հատկանիշների բնոգծումներով գնալով դեպի հասարակական բնիսմանբացումներ, դեպի համամարդկային երազի և մտածման հայտնությունը: «Յեղական ընթիկ նկարագրով հարուստ գրակոմեդիա քստմասպատկումն է որ մեր գրականության պիտի առ ինքնագույն, անկախ, անհատարոշ գրականության մը գորոշյա՞մք, օտարներուն՝ մեր գրականությունը գլխավորապես առավ է որ հարզդին ու հետապրքական պիտի դառնա...» (1905, թիվ 10-11, էջ 203):

Դա խորապես համազգային է միաժամանակ համամարդկային արվեստի, *ճնիկ մեջ՝ ազգային և մտածմամբ՝ երրօրական* գրականության ստեղծման ու զարգացման ուղին է: Այս մտածեմամբ ավելի կոնկրետ ու որոշակի իմաստ ու անասում «Գեղային նոք», «Առնեղուրդ», «Գեղին ոգի», «Գեղայիշուն», «Սուրբական ոգի» և նման մյուս բնորոշումները, որ լայնորեն օգտագործում է «Անահիտը», և որ բնավ էլ կենց այնպես բնարված արտահայտություններ էլին: Իսկ որտե՞ղ պետք է վերադառնա այդ ազգայինը, «Գեղին ոգին», սեփական ոճն ու

արվեստի ուրույն որակը... Այս հարցում «Անահիտը» հայ արվեստագետների հայացքն ուղղում է դեպի անցյալի հուզեր արժեքները, դեպի ժողովրդական բանավեսում ու միջնադարի պոեզիան:

«Անահիտ» հանդեսը հեռուստայական պաշտպանում է ժողովուրդների գեղարվեստական ավանդույթների փոխազդեցության և փոխներգործության կարևորագույն դրույքը, հայ գրականության առաջընթացի հիմնական գործոն է համարում եվրոպական ու համաշխարհային գրականության փորձի քննադատական յուրացումը:

Ազգային ավանդների հիմքի վրա և ազդեցությունների ստեղծագործական յուրացմամբ, ըստ հանդեսի, հայ գրականությունը պետք է ձգտի արվեստի հնարավոր կատարելության ու գեղարվեստական առավելագույն խտացման: Այս մտնեցմամբ որվագծվում էր «Անահիտի» սովազա հարգախոսությունների շքանակը, որում մեծ տեղ պիտի արվեր մաս գեղարվեստական կառուցվածքի, ձևի, ոճի, լեզվի, գրական ճաշակի և, ընդհանրապես, գրականության գեղարվեստականության խնդիրներին: Հանդեսն առաջադրում է «գեղեցկագիտական գրականության» ուշադրավ տեսությունը, որի ճակատային սկզբունքը արվեստի ու գաղափարի, գեղեցիկի և օգտակարի միասնության հարցն է:

«Անահիտի» գեղագիտական համակարգում յուրահատուկ տեղ ունի գեղեցիկի գաղափարը: Ամենից առաջ այն քննարկում է իր ուղղակի և անմիջական նշանակությամբ՝ իրևի իրևի և երևույթների յուրահատուկ արժեք, որ «էսթետիկական հանճայ» է պատճառում, յուստարակում ճաշակ, ազնվացնում հուզի, դրամով իսկ ձևը սերունդ օգտակարության հատկանիշներ: Բնության մեջ և արվեստում գեղեցիկը տարբեր է, որանով որ բնությունը տարբերվում է արվեստից, արվեստը սպիտակ է բնությանն ու թև նույնական պատկերը, գեղեցիկն ու տգեղը «խառնիխառն, հաստեղծող ու բարդ գանգվածներով», այլ ներկայացնում է բնության ընդհանրագլուխ «ամբողջությունն ու պարզությունը», նրա «էսթետիկական անարք» (1899, թիվ 11, էջ 333): Արվեստում գեղեցիկը ենթադրում է գեղարվեստական ձևի, ոճի նրբություն, արտահայտության կատարելություն: Մի բան, որ անհրաժեշտ նախապայման է արվեստի մեծ գործեր ստեղծելու համար, մանավանդ քանաստեղծության մեջ. «Բանաստեղծությունը պիտի ամեն բանն առաջ անկողծ ըլլա և ինքնաբերիչ, ու Օգտակարին չզոհե երբեք Գեղեցիկը, որովհետև Գեղեցիկը ինքնին շատ բարձր ասակն օգտակարություն մըն է» (1902, թիվ 3, էջ 48): Նույն

դիրքերից էր լուծվում գրականության ձևի ու բովանդակության հարաբերության հարցը: Գրականության մեջ, նկատում է «Անահիտը», ձևի կատարելությունը պետք է համապատասխանի բովանդակության հարստությանը, արվեստը պետք է ներդաշնակի գաղափարին, և գաղափարը՝ արվեստին: Միայն այս դեպքում խոսք կարող է լինել իսկական գրականության, իսկական պոեզիայի մասին. «...Գեղեցկագիտական գրականությունը այն է որ գաղափար ու ձև, հավասարապես հասուն ու խնամված, ներդաշնակորեն՝ զիստ կը գրկեն, ... որ գաղափարը այնքան հարստու է որքան ձևը...» (1899, թիվ 11, էջ 326):

Հարցի այսպիսի դրվածքը, բնականորաբ, բացատրում էր «Անահիտը» «գեղեցկագիտական գրականության» տեսությունը պարտադրով «Արվեստը արվեստի համար» սահմանումները:

Ընդհանուր ազգային գրականության գարգացման համար հանդեսը կարևոր նախադրյալ էր նկատում մաս արևմտահայ և արևելահայ հասովածների գրականությունների մերժեցումը: Հողվածներից մեկում Ա. Չոպանյանը ամփոփում է «Անահիտի» գրական-մթազրային դրույթները, պարզում միտումների գաղափարական հիմքը. «Մեր հին գրականությունը - ինչպես է ժողովրդական բանաստեղծությունը - իր ամբողջությամբ ճանչցել, անոր մեջ որոշել ամեն ինչ որ ինքնություն է և ուժեղ, ուսումնասիրել գայն և տոգորվիլ այդ «մերք» եղող տարրով, ջանալ որ մեր վաղվան գրականությունը՝ մասածմամբ հետզհետև ավելի եվրոպական ըլլալով հանդերձ՝ իր ձևին մեջ հետզհետև ավելի ազգային կնիք, գեղական համ ու հոտ ունենա, աշխատել է ու միայն մեր գրականության զորացման ու ճոխացման, այլև, հաստատելով մեր ստախոր ու գեղեցկագիտական ինքնօրինությունը, *ճպաստվ է հարջոմանը մեր ազգային դատին*» (1905, թիվ 10-11, էջ 203, ինդգծումը մերն է. - Յու. Ա.):

Սա հանդեսի յուրօրինակ գաղափարական կտակն էր ժամանակակիցներին ու սերունդներին:

### 3.2 ԱԶԳԱՅԻՆ ԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԳԱՍՍԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Հայոց անցյալի գրական ժառանգության գնահատումներում «Անահիտն» առաջնորդվում էր այն համոզմամբ, որ հայ ժողովուրդը, նույնիսկ նրա մատուր դասը ամբողջությամբ և ինչպես որ հարկն է

չի ճանաչում իր գրականորեն, հին գրականությունը նրան ներկայանում է հետադր մշակչի միջոցի իրակ կրոնական ու ժամանակագրական, ահգամ միօրինակ ու ձանձորալի, «գրական տեսակետով ներպատկան հրաշակերտներու հետ ոչ միև թաղդատություն վերցնող էչ մ'իակ չպարտակող» (նույն տեղում, էջ 200):

Երևոյի հիննական պատճառները հանդերև հատկացնում էր հետևյալ հանգամանքներին. նախ՝ յուններ հայ գրականության անբնական ու թույլ պատճառ, ապա՝ հայոց մասնագրության գեղարվեստական բարձրորժի էջերի մի տավար մասը տակալին մնում է ձեռագիր մատյաններում ու ժողովածուներում՝ մուսագրության ու անհայտության մեջ: Հայ գրականության սպասախորները դարելով եղել են հոգեբաններն ու եկեղեցականներն, և նրանց հրեապարկաված գրքերի մեծ մասը կրոնական ու ժամանակագրական բրնոյի են: Դրանք առավելապես շարտղված են գրոց թվով, հետևաբար և՛ անհասկանալի ժողովրդական լայն զանգվածներին: Խորեմագին, Լատիվիրոցին, Լամբրոնագին, Նարեկագին և մյուս գրաբարելեզու հեղինակները իրենց իսկական մեծությունը հայ մարդուն գրելու անճանոր են, «գրաբար զիպգող փորրաթիվ հայեր միայն մտան ճանջած և փայտված են անոնց գործերը» (1898, թիվ 1, էջ 9):

Եվ հետո՝ անցյալի հայ մասնագրության էջերը բնգնված և գնահատվել են իրենց բանասիրական կամ ազգայական, լավագույն դեպքում՝ գրական-պատմական նշանակությամբ: Մինչդեռ դրանց բանաստեղծական արժեքը խորթում, գրական-գրականագիտական բանցմամբ գրելի էի բացահայտված, «մեր հին քերություն այդ նշխարներուն «գրական» նշանակությունը դեռ չէ բնորոշված, չէ արժեցուցված ինչպես որ պատշաճ է և հարկավոր. մեր արդի գրական շարժումին մեջ անոնք յունին իրենց տեղը գոր կրնային ունենալ, չեն ներգործած ազդեցությունը գոր կոչվան են ներգործելու՝ երբոր ճանջցվին ու ասարձվին իրի ամեն բանն առայ «գրական էջեր» (1900, թիվ 3, էջ 72):

«Անախոր» խնդիր Լո դնում հրատարակել հայկական գաղութայինների և հայրենի երկրի մասնագրություններում պակեղով անճանոր ձեռագրերը, աշխարհաբարի բարգմանել գրաբար մասնագրության կարևոր էջեր, հայամարերկ գուտ գրական արժեքները:

Ձեռագրերի հրատարակություն ու գրաբար էջերի բարգմանության գործում կարևոր դեր է հեղինակություն վերադրելով Վինենայի ու Վենետիկի Միփաբայան մխարանություններին հանդես իր հեր-

քին ծրագրում էր պարբերաբար յուս ընձայլ հին ձեռագրերից ընդորինակված նմուշներ, գրաբար մասնագրությունից հասավձնելու անբողջական գործերի բարգմանություններ:

Այս մտնեցմամբ «Անախոր» ծրագրային դրայրներում առանձնանում և ընգծվում է երկու հիննական միասուն: Առային *ինքնանաչաղություն* միջոցով արյան ու կտորածի այլ օրերին հավատ ներշնչել ժողովրդին իր ուժերի նկատմամբ, դավիհաև, քստ հանդեսի, ոչինչ այնքան չի գորագնում ազգի սերն ու համարունը իր մասին, հետևաբար և նրա ինքնազանապատությունը, որքան առայ ու համոված հիացումն ու սերը իր բաղարակրթական «եղեցկազնական» ձիրքերի նկատմամբ (տե՛ս 1903, թիվ 10-11, էջ 201): Երկրորդ՝ հայ գրականության պայտես կոչված գեղեցկագիտական արժեքավորմամբ արդի հայ գրականությունն ու գեղարվեստը հարբուսացնել հայադղումն ու ինքնահատուկ այն տարրերով, որոնցով այնքան հարբուս է մեր անցյալի գրական ժառանգությունը:

19-րդ դարավերջին և նոր դարի սկզբերին հայ պարբերականներից մի քանիսը իրենց հրատարակությունները նշանավորեցին հայ ժողովրդի բանավետի և գրականության ամենաբարգմանական հարցերի մեկնություններով. նոր տաղերի ու նոր բնագրերի յուս ընձայնամբ: Այդ պարբերականներից առանձնանում են «Բազմավայր», «Հանդես անօրյան», «Արարատը» (Էյմիսիմին, 1868-1919), «Բանասերը» (Փարիզ, 1899-1907), «Ազգագրական հանդեսը» (Շուշի, 1896, Թիֆլիս, 1897-1916) և «Անախոր»: Առային երկր՝ հայալեռական հրատարակություններ, հայերը՝ բանասիրական եռանայու (1909-ից՝ անօրյան, ապա՝ կրկին եռանայու), «Ազգագրական հանդեսը»՝ գաղթյալ բանասիրական հրատարակություն, «Անախոր»՝ ազգային-գրական հանդես: Տարբեր ուղղություն և ժողովրդ ունեցող այս պարբերականներում բանավետաև և ինն մասնագրության հարցերը արարել պատասխան ու մտնեցում են ձուտ, լուսաբանվում ու գնահատվում արարել տեսանկյուններից: Բացառությամբ «Անախորի»՝ մյուս հանդեսներում հարցի ուսումնասիրությունը տեսնափակվում է բացառապես գիտական, պատմաբանասիրական, ազգագրական հարցախորությունների շրջանակներում: Դրանք կան պատվերների գործերի բնական ծանրակշիւ հետազոտություններ են (ինչպես՝ «Արարատում»), գնանգած ղրքերի մեկնություններ, «ձեռագրական արագություններ» («Բանասիրում»), կամ հեղինակային հարցի և ժամանակագրության բանասիրական ճշգրտումներ



(«Հանդես անսօրայում»), բանասիրական-ազգագրական հեռագրություններ («Ազգագրական հանդեսում») և այլն:

Այլ է «Անահիտ» հանդեսի մտայնորդը: «Անահիտը» հայոց բանասիրական արվեստը և ինք մտահանգությունը բնմոռ ու գնահատում է դարասկզբի արևմտահայ իրականության առաջադրած հարցերի և ազգային գրականության հեռանկարների տեսանկյունից, բնորոշում դրանք և պատմաճանաչողական, և՛ գեղարվեստական արժեքը: Հանդեսը չի խորանում բանասիրական մանրամասների մեջ, չի ցանոմ հասկանալի պարզվել այս կամ այն բնագրի գրության բովանդակը, երբևէն նաև՝ հեղինակի հարցը: Դա նրա համար առաջնություն խնդիր չէ: Իսկ բանասիրական արժեքների հավաքումն ու յույնբնույթի հանդերձ վերապահում էր բանասիրական և ազգագրական բնույթի հրատարակություններին: Մյուս կողմից՝ խրախուսում ու պաշտպանում էր սրանց գործունեությունը՝ դարձյալ ազգային գրականության տեսանկյունից: Այսպես, օրինակ՝ գնահատելով Բ. Լայսյանի «Ազգագրական հանդեսի» դերը բանասիրական նոր էջերի հայանարժեքում և գիտական ուսումնասիրման գործում՝ «Անահիտը» դա նույնքան կարևոր էր համարում նաև ժամանակակից հայ գրականությունը «ազգային դրոշմով» հարստացնելու իմաստով: Ժողովրդական մի երգ, հեքիաթ կամ ավանդություն, ըստ հանդեսի, ավելին արժե, քան շինականի առօրյա կյանքի ու կենցաղի առանձնալատողությամբ մանրամասն նկարագրությունները: Ժողովրդական երգը ժողովրդի կյանքի ու հոգեբանության բնօրինակն էր, ու հավասարակն նկարագրիր և, «գոյուրի հոգու» մտքը ու ինքնահաստիկ արտահայտությունը: Եվ այս իմաստով «գրականության մեջ ինչ գյույն է, իր երգերով, իր ավանդություններով, իր *բնական* բանաստեղծությամբ, առանց անոր, գրականությունը արվեստականորեն արտահղավճ, նման կ'լլա ծովի վրա ծածմնող լույսերում, որոնց արձագող հողի մեջ չի մտնել, և որոնք անհնաժամ ու խախտաւ հրապույր մը ունին միայն» (1899, թիվ 5-6, էջ 181):

Մրվանձայանցի, Խրիմյանի, Տևկանցի, Ծանրկյանցի և այլոց կողմից ձեռնարկված բանասիրական գործը, ըստ հանդեսի, ծառայել է բացառապես ազգագրական և գրուցարանական, գիտական-բանասիրական աշխատությունների, մինչդեռ ժողովրդական խոսքի հարուստ զանադարձում պահվող դյուցազներգությունները, հեքիաթներն ու քայլադերը նյութի ու մտահղացման իրական աղբյուր կարող են դառնալ գեղարվեստական նոր երկերի ստեղծման համար:

Միայն բն անհրաժեշտ է գրական նրբակրկիտ աշխատանք, պետք է «զամոնը հանել իրենց նախնական միայնա մերկուրներն, դուրս ցատկեցնել անոցն ներքին նշանակությունն ու խորհորդը, բարձրացնել գանձոն մինչև գիտակից ու հավանական բանաստեղծությունը: Եվ այդ ճանրով միայն պիտի մտնենք մտահանգություն մը որ *մերձ* ըլլա իրոր, որ իր ուղույն երանգովը ճանչցվի համաշխարհային արտաղբյուրանց մեջ» (1898, թիվ 1, էջ 29):

«Անահիտի» ծրագրային կարևոր իրազեկումներից մեկը այդպիսի էջերի հրատարակությունն է: Առաջին լայն համարից սկսած «Հայ-գիրք» ընդհանուր խորագրով հանդեսը հրատարակում է բանաստեղծ Վահրամ Սվաճյանի գրական չափածո մշակումները: Գլխունցում Սվաճյանը ձգտում է հարազատ մտապես մտալ բանասիրական նյութի, պատկանել ժողովրդական ոգու և մասնաղբյուրյան յուրահատուկ գծերը: Մի բան, որ ընդհանուր առմամբ նրան հայտնվում է: «Անահիտի» խմբագրին ամենից առաջ գրավել է Սվաճյանի մշակումների հենց այդ կողմը: Եվ շարքի խորագրի քննարկությունը («Հայ-գիրք») պատահական չէր: Բանասիրական նյութի քննարկության և ժողովրդական տարերքի գգազողությանը անկասկած հետաքրքրական էջեր են «Նարեկացին», «Մուշ քաղաքի մտքը», «Վարձակը», «Ասավաճառիկուն լուսանքը», «Առ Անահիտ», «Առ Սուրբ Սովիտ» բանաստեղծությունները: Սակայն Սվաճյանը համայն չի կարողանում դուրս գալ նյութի շրջանակներից, վերստեղծել, նորոգել այն նոր մասնամտնելով ու ձևելով, գնալ դեպի գեղարվեստական (այն սրբահարսացումների: «Մրկիկ», «Հոգեզուլ», «Մովազուլ» և մի քանի այլ էջերում նա ուղղակի աուրք է տալիս ժողովրդական պարզուկ ու միամիտ երևակայությանը: Նրա քերթվածներում դժվար է առանձնացնել յուրից հայտնված գեղարվեստական գործեր: Այս իմաստով անհամոզիչ է բժում հանդեսի՝ Սվաճյանին ավճալ բարձր գնահատուկներ որպես «հայոց արվեստ գրագետների մեկը» (1898, թիվ 1, էջ 45): Մի բան, սակայն, ակնհայտ է. «Անահիտի» «Հայ-գիրք» բանաստեղծությունների շարքը նոր հունի մեջ էր դնում արևմտահայ գրականության մեջ բանասիրական արժեքների գեղարվեստական մշակման գործը, չափածո ձևի մեջ շարունակում նախորդների և ժամանակակիցների (Մրվանձայանց, Խրիմյան, Թևկանցի, Զարդարյան, Մշո Գեղամ և այլք) գրական ձեռնարկումները:

Հայ ինքն և միջնադարյան գրականության հարցերը բնմեկիս «Անահիտում» անդրադարձում է անցյալի մասնագրություն հանրակրկի

մուտագված, բայց և նշանակալից երևույթների ու խնդիրներից, միջնադարյան բանաստեղծության հեղինակավոր դերերին՝ Գ. Նարեկացուն, Հովհ. Պլուզ Երզնկացուն, Ֆրիկին, Կ. Երզնկացուն, Ա. Սյունեցուն, Ե. Քեռնյարձյանին և այլոց: Հանդիս գրական-գեղարվեստական համակարգում ուրվագծվում է մի շատ՝ հետաքրքրական և կարևոր երևույթ, ուշադրով գեղագիտական հայացք: Հին գրականության ուղի ընթացքի հանդերձ նկատում է որպես հասարակական միջավայրի, ժողովրդի հոգեբանության և ազգային կամոնիկայի արտահայտության օրինալուրի բնադրություններով զարգացող գրական գործընթաց, որի գեղարվեստական համաձույլ արժանքում մի կողմից խորանում է աշխարհիկ գազազմների, իրական կյանքի պատկերումը, մյուս կողմից էլ ընդգծվում է ազգային քնավորության մեջ ձևավորված գծերի, բուն հայկական գեղեցկագիտության հոսքը գրականության: Իրենց հեթրին ազգային-հայրենասիրական գաղափարաբանության և հայկական խառնվածքի հայանությունները գրական-պատմական ընթացքի զարգացման անսակալից դիմում են իրեն աշխարհիկ ոգու գեղարվեստական դրսևորումներ:

Աշխարհիկ բանաստեղծության բուն սկզբնավորությունը «Անահիտ» համարում է 13-րդ դարի վերջը և 14-ի սկիզբը՝ իրեն ժամանակակից-ինանադիրներ թվելով Հովհ. Պլուզին, Ֆրիկին և Կ. Երզնկացուն: Բանասիրական նյութի սլակար, աղբյուրի անդերևույթները, ինտրել, հնարավորություն էլին առիթ ժամանակագրական առումով ճշգրտորեն որոշելու Հովհաննես Պլուզ բերրույի տեղը 13-14-րդ դարերի չափանոյում: Մինչև վերջերս էլ 13-րդ դարի հայ բանաստեղծությունը բազմում էր ոչ թե նրա, այլ Ֆրիկի ստեղծագործությամբ: Այս հարցի գիտական-բանասիրական վերջնական լուծումը ավելց Արևնուռիի Մարտյանը՝

Ա. Չուպանյանը հավկած էր ժամանակագրական առումով ընդունելու Հովհ. Երզնկացու առաջնությունը: Իր կազմած «Հայ աշուցներ» Ֆրանսերեն ժողովածուում՝ նա Հովհաննես Երզնկացուն դնում է Ֆրիկից և Կ. Երզնկացուց առաջ, թեև, ինչպես հետագայում խնամովանում է, «առանց որևէ ապակոտրույան» (1906, թիվ 6-7, էջ 103): Նույն ժողովածուում, սակայն, Պլուզին հայտնդում է Կ. Երզնկացիին: «Անահիտ» 1906 թ. 6-7 համարում ապագրված «Հովհաննես Երզնկացի» դիմանկար-ակնարկում («Գեներք» համատարադրով) Պլուզին, Ֆրիկին և Քուչակին վերադրվող խրատական սաղիների իմաստի և ձևի նմանությունը Չուպանյանը բացատրում է ոչ միայն ժո-

ղովրդական սամների, առագվածքների օգտագործմամբ: Նա ներառում է, որ դրանք «է ն առաջ» խմբագրվի են մեկ անձի կողմից: Ո՛վ է այդ անձը՝ Քուչակը, Պլուզը, թե՛ Ֆրիկը. «... ավելի քան հավանական է որ Պլուզ և Ֆրիկ ավելի էին են քան Քուչակը. կը մնա գիտնալ որևեմ թե այդ երկուքեն՝ որ ժամանակակից են ո՞րն է բուն հեղինակը այդ սաղիներում»: Նվ ապա՝ «Հավանակազայն է Պլուզ» (նույն տեղում, էջ 138): Հովհ. Երզնկացուն Չուպանյանը համարում է 13-րդ դարի երկրորդ կեսի հեղինակ (ծնվ. մոտ. 1250թ.):

«Հովհաննես Երզնկացի» գրական ակնարկը ( որ բանաստեղծին նվիրված միակ գրվածքն է «Անահիտում»), ինտրել, միտում չունեք ճշակույթ քննվող հարցը, ոչ էլ մասնավանդ վերլուծելու հեղինակի ստեղծագործական վաստակը: Այն ամենաբնականոր ուրվագծումներով «Անահիտ» ընթերցողին է ներկայացնում Հովհ. Պլուզ վարդապետ Երզնկացու՝ հայ հին գրականության ամենաառաջնակարգ դերերից մեկի կյանքն ու գործը: Իսկ այդ գործը բավականին հարուստ է իմաստասիրական ու մեկնողական ինքնագիր, քարգմանական Լյեր, ճանք, շարահաններ, վանական կյանքի կամոնագրություններ, սաղեր և այլն:

«Անահիտ» համոզմամբ իր բերրույական Լյերով Պլուզը «ապստավվոր տեղ ունի» հայ տոնիկ բանաստեղծության մեջ, «իսկ իրը հնուտ գրագետ առաջինն է իր ժամանակին և մին մեծավայրենքին Հայոց ամբողջ ինք գրականության» (նույն տեղում, էջ 137):

Աշխարհիկ բանաստեղծության զարգացման գործում վճռական դեր էր վերապակվում Կոստանդին Երզնկացուն: Այս մտազգայնը հանդերձ հիմնավորում է Կ. Երզնկացու տաղերի գաղափարական և գեղարվեստական բնույթը՝ առանձնահատկությունների մեկնությամբ: Այն շատ կողմերով հասակաչում է «Անահիտ» գրական քաղաքականությունը ընդհանրապես և ինք գրականության նկատմամբ նրա վերաբերմունքը՝ հատկապես:

Հանդերձ վերլուծության սկզբում է ընդունում ա ո ս ց ի ն ՝ **գրականության ժողովրդայնությունը**, որը սովալ դեպքում ժողովրդի հավաքական նկարագրի, ազգային քնավորության յուրահատուկ գծերի գեղարվեստական բարձրարվեստ կերտվածքում և գրականության բովանդակության աշխարհականացման, ժողովրդին հասկանալի լեզվով և ժողովրդին հազող բաներից գրելու իրողությունն է: Նախ՝ հավանական է համարվում, որ աշուղական լեզուն գրական լեզվի բարձրացնելու առաջին ձևաներկողը Կ. Երզնկացին է: Եվ

ի՛նչն է հատկանշական: Հանդես փորձում է այս միտքը հաստատել որ միայն այն իրողությունը, որ Երզնկացիին «տանկական լեզով գրած է իր բոլոր բերթվածները ( բաց ի մեկ հատեն...»), այլև նրանով, որ Կոստանդինը, ավելի քան Լուի. Պյոզզե և Ֆրիկը, մոտ է կանգնած ժողովրդին, ավելի լավ է ճանաչում նրա կյանքն ու հետաքրքրությունները և ավելի խորն է ընկալում ժողովրդի հոգեբանությունը: «Կոստանդին ամենևն թիչ հմուտը՝ երեքեն, ամենևն մտախիղճ ժողովրդին, ամենևն ավելի կաշվածն ըլլալու էր ժողովրդին լեզուն ու բանաստեղծական ճաշակը դասականացնել փորձելը» ( նույն տեղում, էջ 103): Նախորդ դարերում Երզնկացուց և Հնդրիալուց էլ առաջ ստեղծագործող «աշխարհական աշուղներին» մասին «Անսահիտում» ուղղակի ասվում է, որ դրանք «ժողովրդին զգացումները կ'երգեին ժողովրդին հասկանալի լեզով»:

Այսպե՛ս դիտվում է, որ Երզնկացու պոեզիան իր ակունքներով մեծապես կապվում է հայ ժողովրդական բանավիճակին: Վե՛րք որ Կոստանդին լավ գիտցած ըլլալու է, Հալոց ժողովրդական բանաստեղծությունն է. այդ վանականը մին եղած է առաջիններեն, երև ոչ առաջինը, որ գրեթե վաղ իշած ու ժողովրդին հոգին արձակելու ծայրին ակամօ է դրած... Կոստանդին Երզնկացիի բանաստեղծությունը քարավիճակ է, այդ մասին արարակույս չկա, «ժողովրդական» գեղեցկագիտության ներգործությունը» (նույն տեղում, էջ 102-103, 104):

Այստեղ արդեն որոշարկվում է վերլուծության երկրորդ գեղեցկագիտական սկզբունքը՝ **գրական դաստիարակությունը**: Երզնկացին, անշուշտ, օգտվել է հայ ժողովրդական բանաստեղծությունից, հասկապես սիրո երգերից, կարդացել է հայ կելեղեցական բանաստեղծության «զվա՛վոր էջերը»: Բացի այդ, Չոպանյանը հիշեցնում է Երզնկացու սիրերգերից մեկի վերջին բառաառոթ.

Նորաբք մի կան հես մեզ սիրով,  
Աշխարհի բան ուզեն գրով,  
Նայ ես վասն այն հայտնի ծայնով  
Միրու բաներս սացի հովով...

և այսպե՛ս բացատրում, որ «մայտնի ծայնով» նշանակում է «ծանրք երգանակով», ոճով, տաղաչափությամբ: Որքե՛նն եղել է աշուղական հայտնի դպրոց, գրական հոսանք, ուղղություն: Այնպիսի որ Երզնկացին շարունակում է իր անմիջական նախորդների ավանդները, բա-

նկանմանի խնդրանքով «աշխարհի բան» հորինում գրով (ան՛ս նույն տեղում, էջ 104):

Երզնկացին ծանր էր նաև պարսկական և արաբական բանաստեղծությունը, որի ազդեցությունը, սակայն, ըստ Չոպանյանի՝ ձևական-առաջապահական նմանությունից այն կոմը չի անցնում և այն էլ միայն «Հաննամանի ծայնով» գրված «Բանք հաղագս անցավոր մեծություն» քերթվածում: Եվ երև Երզնկացու տաղերում միատիկ բախմուտ իմաստասիրության զուգորդումը հելլենական գեղեցկագիտությանը կամ դրա արտահայտությունը գվարք բնաբերությունները բնորոշ էր ընդհանրապես վերածննդի գրականությանը, սպա **ինքնարտի պարզությունն ու անկեղծությունը** գալու հայկական բնավորության ու խառնվածքի արաստալայություններ էին: Կ. Երզնկացու տաղերը համեմատելով Պետրարկայի, Դանթեի, Ֆլորյուսու, Վիլյոնի ստեղծագործությունների հետ՝ «Անսահիտը», հայ բանաստեղծի մեջ առանձնացնում և շեշտում է այս հատկանիշը:

Հանդեսի նույն փաստարկումներում առաջ է նդվում մեկ այլ, նույնքան ուշագրավ միտք. Կոստանդին Երզնկացու չափածոն միանգամայն ինքնուրույն, հայկական երևույթ է: Այն ինքնուրույնաբար ծագել է հայ հողի վրա, սնվել հայկական բանաստեղծության ավանդներով:

Եվ, վերջապես, երբ որ սկզբունքը՝ **բանաստեղծի անհատականությունը**: Կ. Երզնկացու բանաստեղծությունը մարդկային հոգու ծանր ու տատալալից երկունքի արգետիք է, մյուսմասնակ՝ բանաստեղծ խառնվածքի հայտնություն և հոգու շնորհ: Նրան հավասել և չարսխտել են «նախանձոտները» («Ո՛մանք չար են հետ ինձ, և նախանձով են իմ վերայ...») Այդ տատալանքը ճունն է ավել մի քանի գողտրիկ էջերի: Այստեղ արդեն Չոպանյանին հետաքրքրում է բանաստեղծի **թիփը, հոգեկան դիմագիծը**: Կ. Երզնկացին, ըստ Չոպանյանի, ունի «երկշչչյալ խառնվածք մը» և անպարման՝ տաղանդ: Վերք իսկ կ'ըսե զայդ... այլ է աշխատիցն և այլ է շնորհն ի հոգվոյն»: «Հու «Հոգին» երբորդություն երբորդ անձն է, մեկնում է Չոպանյանը, բայց բաճակը շատ ավելի բայն նշանակություն մը ունի և ճշմարիտ է բոլոր դարերում և բոլոր արտասիրներում համար... կարողավ, ուսումնասիրելով, հմտություն անբարեբով՝ մայր բանաստեղծ չ'ըլլար, երև չունի շնորհքը Հոգվոյն, այսինքն բնածին հանճարը»: «... Կոստանդին ուներ բնածին հանճար» (նույն տեղում, էջ 102):

«Անսփառ» նույն մտնեցմամբ են արժեքավորվել նաև մյուս հեղինակների ստեղծագործությունները. Խորհրդային ժամանակաշրջանի մեջ քննարկվում էր ազգային-հայրենասիրական գագսման վառ դրսև-վորումը, Նարեկյան «Մասայանում» և սաղկերում՝ քննի հայրական ոգին, Պլուզի քաղաքակերտում՝ յուր ու հստակ մտածումը, Ֆրիկի չավանդում՝ աշխարհայեցողության լայնությունը, բուրբական ոգու մեծությունը, Քուչակի հայրեններում՝ պարզությունն ու անկեղծությունը («անկեղծ» շեշտը... որ «սայկական» շեշտն է), Մյունեցու «Աղանգարքում» բանաստեղծական երևակայությունը և այլն:

Հին գրականության արժեքները «Անսփառ» վաստորեն քննվում ու գնահատվում են գեղեցիկապես այն նույն սկզբունքներով, ինչպես որ հանդեսի էջերում վերլուծվում ու գնահատվում են «Արարածանի, Մյամանբոյի, Թերևյանի և մյուս ժամանակակից հեղինակների ստեղծագործությունները: Մա քառ Լուրյան *ճոր հայացք* էր անցյալի գրական ժառանգության գնահատման հարցում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ հանդեսի նովլածները այն արձագանք էին գտնում գրական շրջաններում, խրատխուսում և առայնդուրում միջնադարյան հայ բանաստեղծության ուսումնասիրությունը:

Այսպես, Ֆրիկի անձնավորության ու գործի նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ հասկապես «Անսփառ» 1905թ. 1-ին համարում ապագրված «Կայծ մը» հոդվածից ետև: Մինչ այդ Ֆրիկի մասին արդեն գրվել էր և պարբերական մամուլում, և առանձին ժողովածուներում: Գրքեր, սակայն, բանասիրական ծանոթագրություններ էին, համառոտ ակնկարություններ հեղինակին ձեռագրերի մասին: «Անսփառ» էջերում «Գանգատ» բանաստեղծության վերլուծությունը Ա. Չուպանյանը մեկնում է Ֆրիկի աշխարհայեցողության բնորոշ կողմերը, բանաստեղծական արվեստի առանձնահատկությունները, պարզում բոլորող, համարձակ, բայց և առատալոլ ու անհունորեն դժբախտ բանաստեղծի գեղարվեստական հարուստ ապրկերը: Ֆրիկը հայանագործվում է նորովի, դրվում միջնադարյան հայ գրականության մեծերի կողքին: Եվ անշուշտ խզող էր «Շիրակի» քննադատը (Արիիխարյանը) փորձում իր քննրդողների համոզվել, թե Չուպանյանի «ճոր գրքերը *Ֆրիկի* չարդարացներ», թե՛ «Ֆրիկի գանգատը... գորկ է ուն առժեր և շահեկանությունն, ու քնավ արժանի իր մտացումի փոսն դրսա հանվող»:

«Բազմավախը», 1866 թվականին խոսելով Հովի. Երզնկացու և Կ. Կեչտեցու մասին, մեկ-երկու նախադասությամբ անդրադարձել

էր Կ. Երզնկացուն: Հանդեսի հաջորդ համարներում ապագրվել էին նրա լեբրվածներից չորսը՝ «Ըմանը հսղագու անցավոր մեծություն», «Մեր և առավաս», «Ըմանը հսղագու արդարության» և «Գարուն» (վերջինյա վերնագիրը հետագայում Չուպանյանն է ավելացրել): Նույն տարիքը վերահրատարակվեցին «Անսփառ» 1905 թ. 5-րդ համարում հետևյալ մեկնարանությամբ. «Մեր բոլոր գրական հավաքածուներում մեջ,- որոնք այ՛րբան անսովեաներով պակասավոր են,- ինչպես և աչողական մեր էին գրականության մասին ուսումնասիրությանց մեջ, Կոտանդին Երզնկացիի անունը չի ինչված երբևր իրի կարևոր տնուն մը: Այդ չորս կտորները, գոր կը վերասպեն այսօր *Անսփառ* մեջ, պիտի կարդալե՞ն ինչպես անսով էջեր: ...Երզնկացիի մեր գրակնությունը մեջ իր որչա՛ և յուսավաճառ- տեղ ունի, անոր «Գիրքը» պետ է ունենանը» (1905, թիվ 5, էջ 93, 98):

1905-ի վերջերին Միխայելյան միաբանության հեղինակագու բանասեր Մ. Պոտուրյանի ջանքերով հրատարակվեց Կ. Երզնկացու «Գիրքը»: Պոտուրյանը, իր խել յատասխանությամբ, ոչ միայն Երզնկացու, այլև քննիհանրապես «Մեր միջին դարու բանաստեղծներու ուսումնասիրությանը» (իր խոսքերն են) հիմնավորապես սկսել է գրավվել Չուպանյանի խոսքերով<sup>1</sup>: Բանասերին մեծապես ոգևորել է Առաքել Մյունեցու «Աղանգարքի» երրորդ հրատարակության (որի խմբագիրն ու հրատարակիչը ինքն էր) առիթով «Անսփառում» ապագրված հոդված-գրայտագրությանը: Գրքի նախորդ երկու հրատարակություններից (1721, 1799) բավական ժամանակ էր անցել, դրանք մնացել էին անարձագանք: Նոր մեկնությունը անհրաժեշտ էր դարձանել այդ «մտացումը»: «Անսփառ» «Գրական քյունիկը» ծառայեց այդ նպատակին: Ա. Մյունեցու գործը առային անգամ վերածվեց իրի գեղարվեստական ստեղծագործություն: Հեղինակը «ախավորապես անհավասար» էջերում «Անսփառ» քննադատը առանձնացնում է այն հասկածները, տողերն ու պատկերները, որոնցում ամբողջ լիությանը դրսևորվում էր վիպերակ բանաստեղծի յուրօրինակի առարկը: «Առաքել Մյունեցու», կարող ենք քյունիկում,- մեր միջնադարյան գրականության առաջնակարգ դեմքերն են մին է... Այդ մտայ, դաժան, բարբարոս, անճաշակ, միասին ու խառնաչվոր բանաստեղծի մեջ համեմարի յուր կը փայլի մերը, անձնն բանկագիրն յույսերուն, և որ շատ խճախաղաչ էլ մեր էին գրականության մեջ» (1908, թիվ 1-4, էջ 1, 10):

Նախապես Քուչակի մասին էր գրվել «Անսփառում»

հովիվներ, ուսումնասիրություններ, գրախոսականներ, կարծիքներ, դիտողություններ և այլն: Հանդեսում ապագրվել է նաև Չոպանյանի հրատարակած «Էռչակի Դիվանը» գրքի առաջարան-ուսումնասիրությունը: Հայտնի է, որ հայ գրատեր հասարակությունը առաջին անգամ այդ գրքով ճանաչեց ու գնահատեց Էռչակի պոեզիան, և մեզ գաճում դրանով հանրածանոթ դարձան բուշակյան հայրենները: «Անահիտում» ապագրած հոդվածներում Չոպանյանը քննադատի նրբազգաց ու խոր դատում մեկ անգամ եւ հավաստում է Էռչակի բանաստեղծության մեծ արժեքը, միջնադարյան հայ գրականության մեջ նրան հատկացնելու «այն տեղը, ամենարժարժր-որում իրավունք ունի... իր եկե թաղդառվելու արժանի ունենալով միայն Գ. Նարեկացին» (1902, թիվ 6, էջ 118-119):

«Անահիտ» հանդեսին մեծ չափով հետաքրքրել է հայ էին գրականության թեմատիկ-ժանրային կառուցվածքի և բազմազանության հարցը: Հանդեսն անկեղծ ցավով է արձանագրում, որ մեզանում զգալի է ինաստատիսթանը, դյուզգվածական ու բանագործական (սյուժեասային բանաստեղծություններ, առաջապիված փոպակներ և այլն) բնույթի էջերի պակասը: Եվ միաժամանակ ավելացնում է, որ անհնայն հավանականությամբ այդպիսի պիտի գտնվեն: Այս նկատառումով էլ հանդեսը երևան է հանում 17-րդ դարի հեղինակ Չարսիա Մարգար Խոճենց Երևանցու «Ասրղ և Սոխակ» ավանդակներ (աշխարհաբար թարգմանությամբ) և «Ճարձանի Ամանի» վերաբերվածը (հայերեն-ֆրանսերեն):

1900թ. 12-րդ համարից «Հայ էջեր» համատիպոդով «Անահիտ» հրատարակում է միջնադարյան հայ սատրեղանների երգերը: Դրանք ընդօրինակված կեն Վենետիկի և Վիեննայի Միֆրարյան վանքերի գրադարաններից, Փարիզի Ազգային մատենադարանի և էջմիածնի վանքի ձեռագրերից: Բանաստեղծությունների մի մասը պատկանում են մեզ ծանոթ հեղինակներին՝ Գ. Նարեկացուն, Հովհաննես և Կոստանդին Երզնկացիներին, Ն. Էռչակին, Ա. Սյունցուն, Ե. Քեռայրյանին, նաև Սրիկ Կոստանդին, Ա. Բաղիշեցուն, Անտոն Դավրիեն, Հովի. Բելլուրանցուն և այլոց: Տաղերի մյուս մասը կրում է առդասացի միայն անունը, ինչպես, օրինակ՝ «Տաղ Հովհաննեսի Վասն սիրո», «Տաղ Հովհաննեսին ասացյալ», «Երգ Չարսիայի» և այլն: Երբեք խորի ստղերը, որոնք համեմատաբար թիչ թիվ են կազմում, ընդհանրապես հեղինակի անուն չեն կրում: Դրանցից ամենայն հավանականությամբ միայն երկուսն են ժողովրդական

անունն երգեր՝ «Տաղ խաչի ասա» և «Ողբ ի վերս մակկանց»:

«Հայ էջեր» ավտոդոված շարքի նյութերը աչքի են ընկնում թեմատիկ-ժանրային բազմազանությամբ: Դրանք սիրո, որսխորյան, պանդխտության երգեր են, միախիլական թեքվածներ, մակնառ ու հանդերձյալ կյանքի պատկերներ, քաղախոսական ոտանավորներ, պատմական ողբեր ու վիպական պատմություններ: Բոլորն էլ հայ մտքի ու հայ զգայնության արտահայտություններ են, «նայկական բանաստեղծության էջեր»:

«Հայ էջերի» հիմնական արձանագրությունը լուսավոր ու պաշտազգացնում է: Դա մերք մարդկային ներաշխարհի, հոգու երկվայրյան փիլիսոփայական խոսել է (ինչպես Հովհաննես Պլուզի տաղիկներում), մերք գարնան ու լույս-առավոտի «Մեծ ավետի» (Կ. Երզնկացի), Մտավածածնի անսուպական գեղեցկության տարփողում, որ խորի մեջ կանացի հրավայրների երկրպագումն է, մերք Հովհաննեսի և Թլուզյանցու գլխք սիրերգության համ բուշակյան պարզ ու խորունկ, անասանհանրեն անկեղծ սեր, «ժողկյեն լույս» հիացում, մերք էլ «սիրական» ցրի գուր, որ է՝ «նազով ճեմական», «մանեման» քայլով սեր-կինն է, և՛ կյանքի աղյուղը, և՛ բնույթյան զարդը:

Այլ ցուր քարերս պատերեց արքման...

Չայնից եմ փափար տեսույդ կու բաղձամ.

Էու անուշ խոսիցդ սրտիկս է դոճման,

Դու ճեմես ճոճաս ի նազ սիգակտան,

Ես կարտու մնամ ի բո տեսություն:

( Ե. Քեռայրյան, «Ի վերս ցրո» )

«Անահիտ» էջերում սիրո, բնության և որսխորյան այս դրվաստումը արդյունք էր որդակի գեղարվարական դիրքորոշման: Այդ մասին ավելի քան սպառել է Չոպանյանի բացատրությունը. «... մեր խեղճ ժողովուրդը, իր սուգին ու անվերությանը մեջ, անուննապես պետք ունի մարտը, կազարդել, նորոգել նվազներու» (1899, թիվ 12, էջ 369):

Այսպիսով, միջնադարյան հայ գրականության հարցերը քննության ղեկով գեղարվարական նոր մեկնակետից՝ նորահայտ արժեքների հիմքի վրա «Անահիտ» մերժում էր անցյալի բնագրաների կողմից ապված և գրական որոշ շրջաններում շարունակաբար կրկնվող այն կարծիքը, թե մեր էին մասնագործությունը մինչև 13-րդ դարի

Վերջը «տեսանի պահեալ գրկուշունը կենդանորին» և ապա՝ «մնալ վայրենացեալ մինչև ցակիբն 18-րդ դարս», քն հայ գրականության զարգացումը ի սկզբանս տասնյոթնորակ է միայն դրացի ժողովուրդների ավելի բարձր գրականության ազդեցություններով<sup>19</sup>։ «Հայ գրականության պատմության մեջ... հայտարարում է «Անահիտը», այսուհետև մենք պիտի ջնջենք այն առերթը որով մինչև ցարդ մեր հին գրականությունը կրճատվաւ Լեւոն միօրինակ ու տխուր հավարածու մը նկատելով մեր նախնիքը դատապարտած ենք, երբ Պարսիկները Հախրզն ունին ու Մասսոյին ու Քիւսիւքը, մենք՝ պիտի կարենանք հպարտությամբ ըսել՝ Հուշակն ունինք» (1902, թիվ 6, էջ 121)։

Ժամանակի նորագույն սերունդն «Անահիտը» խորհուրդ էր կարողանում օգտվել միջնադարյան բանաստեղծական մշակույթի հարուստ զանազարանից, յուրացնել հին մտածելագրության բնուստիկ, ժանրային, գեղարվեստական պատկերավորման տառձանախոսությունները, արդի գրականությունը նորոգել հայ առնչիկ բանաստեղծության ավանդներով։

Նոր ժամանակներում հայոց մտավոր-գրական կյանքի սկզբնավորումը «Անահիտը» կապում է Մխիթարյանների անվան հետ։ Նրանց գործունեությանը հանդիպ հաճախ է անդրադարձել ինչպես տասնձին տասնմեասիրություններով (Ա. Չոպանյան, «Անեռնիկի Մխիթարյանները», 1899, թիվ 12, «Մխիթարի գործեր», 1901, թիվ 8, «Անեռնայի Մխիթարյանները», 1902, թիվ 8, «Մխիթար», 1901, թիվ 10-11), այնպես էլ տարբեր առիթներով արտահայտված գնահատական խոսքով։ Առեստարակ, արևմտահայ միտքը մի տեսակ ժառանգորդի իրավունքով էր վերաբերվում Մխիթարյաններին, իրեն համարում նրանց մտավոր-գրական վախճանցունների անմիջական շարունակողը։ Որ Մխիթարյանների «Լույսյան հիմունքը» կազմում է կրճատվալ խորքը, հասկանալի է։ Բայց և ակնհայտ է նաև այն, որ վերջիններս իրականացրել են լուսավորական-մշակութային վիթխարի աշխատանքը։ «Անահիտը» ծանրանում է Մխիթարյանների գործունեության այս կողմի վրա՝ նրանում առանձնացնելով երեք հիմնական ուղղություն. 1. Անցյալի գերիցություններով ու հիշատակներով վերականգնել հայ կյանքը, հայությանը ծանորացնել իր անցյալի պատմությանն ու գրականությանը։ 2. Հայոց մեջ տարածել եվրոպական բաղադրարվեստի տարրերը, հայ միտքը անմիջականորեն հաղորդակցության մեջ դնել Արևմտարի մշակույթի հետ։ Փորձել հայ մատենագրությունը և լեզուն զարգացնել կառայալ ձևի մեջ։ 3. Հայ

ժողովրդի պատմությունն ու մշակույթը ծանոթացնել եվրոպային։

Երկը բնագավառներում էլ Մխիթարյանների ծառայությունները, քառ հանդեսի, ահազին են, անգնահատելի։ Մակայն Մխիթարյան սան ճշմարիտ վառքի աղաղոտը պետ է փնտրել երկրորդի մեջ, այսինքն՝ հայ կյանքի եվրոպականացման գործում. «Մխիթար և իր հայտնորեն ամենեն մեծ ստատըր եղած են արդի Հայության «եկրուպացումին» (1901, թիվ 8, էջ 173)։

«Անահիտը» բարձր է գնահատում Մխիթարյան հայտնի գործիչների ու նրանց աշակերտների (Չամչյան, Բագրատունի, Ավգիսյան, Հյուրմուղյան, Ինճիրյան, Ս. Պարոնյան, Այսնյան, Պեշկերաշյան, Հեքիմյան, Թեղզյան և այլք) պատմագրական, բանասիրական, հայերենագիտական ու գրական վաստակը։ Իսկ վերոհիշյալ լավագույն արտահայտությունը նա սեսնում է՝ Վ. Ալիշանի գործունեության մեջ, նրան համարում բոլոր Մխիթարյանների՝ իր նախորդների ու ժամանակակիցների հայրենասիրական ջանքերը միավորող խաչը անհատականությանը։

Մխիթարյանների գրական-մշակութային գործունեությունը, վերջին հաշվով, կորված էր բուն հայկական կյանքից ու հայ իրականությունից։ Միշտ ձգտելով դեպի հինը և եվրոպական դասական մշակույթը՝ նրանք մասամբ շրջանցեցին ժամանակակից հայ կյանքը։ Բացի այդ, նրանց ամբողջ գործունեությունը որոշակիորեն կտում էր պահպանողական հայեցողության կնիքը։ «Իրենց ամբողջ գործունեությանը մեջ... կարգում են «Անահիտում»... Մխիթարյանը, հսկատակ իրենց ոգին, ճաշակի, ձգտումներու ընդարձակության և ազատության, «վաթուր», «պրոցի», «գրքի» ազդեցությունը կը պահեին։ Արթուրապետ «վանականներ» էին, մեծ մասամբ Պոսեն, հայրենի երկրին անձամբ անձամբ, Հայաստանն ու հայ ժողովուրդը գրերու մեջնեւ անտեղ, և ժողովրդական կյանքին անջատ։ Իրենց աշխատությունը գրասենյակի աշխատություն մըն է, ուղեղի արտադրություն մը» (1899, թիվ 12, էջ 363)։

Իրավամբ նկատելով, որ Խ.Արվուկյանը «առաջին հարվածով ճշմարիտ հայ գրականությունը հիմնեց ու իրականացուց», «Անահիտը», սակայն, շրջանցում էր նրա անմիջական նախորդների՝ Մ. Նուրիադյանի, Հ. Ալամդարյանի, Մ. Բարսեղյանի և մյուսների ավանդները, նկատում, որ Արվուկյանը անմիջականորեն շարունակում և լրացնում է Մխիթար Ներսեսյանի գործը։ Երբ Մխիթար արքան «առաջին բարր դրավ», հիմնեց իր միտքունությունը, ընդհանուր բնույթ-

յունից հանձն հայոցյանը, ձեռնարկեց հայոց եկրոպականացման գործը, ապա Արովյանը նախ լրագրեց այն պակասը, կարևոր սրահը, որ բողկ էին Միսիսթրայանները, և ապա ավելի քննադատկ ձևի մեջ զարգացրեց նրանք լուսավորական ծրագրերը: Միսիսթրայանց ոգով ու ձևով արվեստական գրականության փոխարեն Արովյանը ստեղծեց «գուտ բնիկ հայկական գրականություն մը»: «Արովյան ժողովրդին ձայնը եղավ, ուղեց լույսը ամառի խոնարհ խաղկերուն մեջ, որոնք դեռ հեռու մնացած էին դասական բարձր գրականութենն՝ սակավարժիվ զարգացյալ դասակարգի մը միայն մտաշելի, Արովյան ժողովրդին, ամբողջ ժողովրդին խոսեցավ, ժողովրդին լեզվովը, ժողովրդին վրա» (1898, թիվ 2, էջ 50-51):

Արովյանին նվիրված երկու քննադատկ ուսումնասիրություններուն («Խաչատուր Արովյան», 1898, թիվ 2, «Արովյանին հարյուրամյակին առթիվ», 1906, թիվ 1-2) Ա. Չոպանյանը համակողմանի քննադատը «Անահիտի» ընթերցողներին է ներկայացնում մեծ մտավորականի անձն ու ստեղծագործությունը, նրա՝ գրագիտի, փյախասանի, քառերեսգրի, մանկավարժի, գործչի ու հայրենասերի հարուստ ու բազմակողմանի վաստակը: Հաստիկ նախանձամխնդրությամբ քննադատն անդրադառնում է նորարարական այն խիզախումներին, որ իր ստեղծագործական հանճարով իրականացրել էր Արովյանը հայոց գեղարվեստական մտանդություն և մտավոր-գրական կյանքի ամենատարբեր ասպարեզներուն: Շեշտվում էր հատկապես այն հանգամանքը, որ նրա ստեղծագործություններուն գեղեցկական պարզությունն ու անկեղծությունը գեղարվեստական մեծ վարպետությամբ են զուգորդվում եկրոպական արվեստի դասեղավ ու ազդեցություններով կրթված ճաշակի ու մտաման հետ: Չոպանյանի հոդվածների առիթով այս միտքը շատ դիպուկ է ձևակերպում Գ. Կարսումանը. «Եթե Չեզ հավասար չափով կը սիրեն Արովյանը, իր զարգացիկ *հայոցյուն* է՝ կրթված ու եկրոպականացած կենդանացող ոգիի մը շարքը»:

«Անահիտի» հաստիկ ուշադրությունը Խ. Արովյանին անձի ու ստեղծագործության նկատմամբ, ինտրիկ, պատասխան երևույթ չէր: Եվ պատասխան չէր նաև, որ Արովյանին նվիրված առաջին ուսումնասիրությունը՝ որպես հարազատական, սուպրապոզի հանդեպի հենց երկրորդ համարում, գրողի լուսնակարի հետ միասին: Այդ հոդվածը ծրագրային նշանակություն ուներ «Անահիտի» համար: Խ. Արովյանի կյանքն ու գործը հանդես ընկալում էր որպես մարի ու ոգու

խոսկական խիզախում, «հայ հանճարի բարձրության և հայ արտի գեղեցկություն» խորհրդանշիչ, խանդի, հավատքի ու հանճարի կենդանի հիշատակ, որ պետք է ժողովրդականացվի և իրբի օրինակ ներկայացվի սերունդներին: «Պետք է ապրածը այդ գործը, և կյանքն այդ անոր հեղինակին, որ նույնչափ գեղեցիկ է: Այդ մեծ Անճովրդին, այդ անմահ Անահիտային դեմքը պետք է ընտանի գարձնել քնդիանոր հայոցյան: Այն կինտուն որոնք մայր պետի ըլլան՝ գեղեցիկ պատկերներ կը զուցենև, որպեսզի նորածինը՝ գեղեցկության ցուրնի տակ գեղեցիկ ծնի: Իր մեծ մարտոցը դեմքը պետք է միշտ ներկա ըլլա ազգի մը աչքին, որպեսզի նոր սերունդները, անոնց ճանաչչումից տակ, ցեղին շնորհը անկարտաս պահեն: Ու ինչ գիտեր աղվիկ գեղեցիկ ու գեղեցկացնող դեմքը բան այս լույսգեցնական գեղարվելիք որ ամբողջ կյանքին մեջ գաղափարի մը սիրտն մաշեցավ, և որ, հայրենի երկրին ձեռքն առաք առաք ժայրքս, շղթաներեն դեռ կասկապում ճեղքները արյունով շաղախված հողին մեջը խրեց ու անձվ, այդ ցավի ու կրոնիկ հողովը, կանգնեց իր անմտառանի հիշատակարանը» (1898, թիվ 2, էջ 62):

Հայ դասական արվեստի բարձր ավանդների պահպանման ու հարստացման հիմնական մտահոգությամբ են տոգորված նաև հայ նոր գրականության մյուս ներկայացուցիչներին՝ Ա. Բազումաունուն, Ղ. Ալիշանին, Պ. Պողոսյանին, Մ. Պիշիկբաշչյանին, Թ. Թերզյանին և այլոց նվիրված հոդվածները: Դրանցում նկատելի է ուշադրավ մի սկզբունք, որ իր հերթին բեղադրվում էր լուսավորյալ գրական ավանդույթների ժառանգման միտումներով. հանդերձ վերջումն ու գահահասում է այդ հեղինակների արվեստի ընդհանուր-քննադատական կողմերը, ստանճնացնում է և քնդգծում այն, ինչը նրանց վաստակի լավագույն մասն է՝ Ա. Բազումաունու դասական ոճը, Ղ. Ալիշանի հայրենասիրական պարսոսն ու արվեստագետ գրայնությունը (վերջինս՝ հատկապես գրաբար քերթվածներում), Պ. Պողոսյանի ժողովրդագիտությունը, Մ. Պիշիկբաշչյանի ուսգնորական-հայրենասիրական առերթը, Թ. Թերզյանի նուրբ քննադատությունն ու հիվանդ խոսքը, յանատեղծական արվեստը և այլն:

Հայ նոր գրականության դասականների ստեղծագործություններին «Անահիտ» ընտարն ու հրատարակում է այն գրվածքները, որոնք այս կամ այն պարտառով անճանախ լին մնացել (կամ քիչ լին ձանթ) ընթերցող լայն շրջաններին. Խաչատուր Արովյանի «Ջանգի» հայրենասիրական խորհրդածությունը («Արքի» հավելվածը,

1906, թիվ 2), Մկրտիչ Պեշիկբաշյանի «Ընդդեմ կուսին» քերթվածը (գրաքար և աշխարհաքար, 1902, թիվ 3), Առնոկ Ալիշանի «Հարսնեղբ...» (աշխարհաքար թարգմանությամբ, 1907, թիվ 12), Հակոբ Պառնոյանի «Ժամ քանաստեղծություն» (1904, թիվ 2), «Չորս վարագույնով կատակերգություն մը» (1901, թիվ 4-5) երգիծական էջերը, Բաֆառ «Խառավուշ» (արևմտասիայերեւոյ, 1901, թիվ 8) և այլն: Դրանք կան յույս էին տեսել պարբերական մատույի էջերում և հեղինակների հասարակների մեջ չէին գտնովվել, կան էլ գրաքար լեզվի և «ձևի խրթնության պատճառով» (ինչպես՝ «Հարսնեղբ» և «Կուսին քնար») անտաչելի էին մնալու ընթացողի:

19-րդ դարի կեսերի արևմտահայոց մտավոր կյանքի տարեգրության մեջ առանձնանում է գրական գործիչների ու գրագետների մի խումբ, որը բնականորեն գեղարվեստական նշանակալից արժեքներ, սակայն խոշոր դեր կատարեց գրական-հասարակական մտքի կազմակերպման իմաստով: Այդ սերնդի ներկայացուցիչներից են Մա. Ռսկանյանը, Խ. Մխարչյանը, Հ. Սվաճյանը, Գ. Օսայանը, Օ. Խոճասարյանը և այլք: Գրողներ և իրավաբանական գիտնոր, որոնք «Անահիտի» վկայությամբ գրեթե անձամբ էին կան անուններով էին միայն հայտնի նոր սերնդին, քանի որ նրանց գրվածքները ստեղծված էին մատույի էջերում և ուսուցիչ անձնակազմի էին ընթացող լայն գտնեղվածներին: «Անահիտը» անհրաժեշտ էր նկատում կենսագրական ուսումնասիրություններով և գրային հրատարակություններով ժողովրդականացնել այդ գրագետների գործը՝ կարևորելով այն ոչ միայն ներկա սերնդի ինքնաճանաչողության տեսակետից, այլև ընդհանրապես հայ գրականության ամբողջական պատմության ստեղծման առումով: Հանդես այն կարծիքին էր, որ ապագա սերունդներին պետք է ապա հայ գրականության լիակատար և համակարգված պատմությունը:

Այդ պակասը որոշ չափով լրացնելու համար Ա. Չոպանյանը մտադրվում է հասուկ հողիվածաշրջով ի յույս հանել հիշյալ գրագետներից մի քանիսի մոտագված դեմքերը: Ծրագրային հողիվածներից սակայն յույս տեսավ միայն մեկը՝ «Հարություն Սվաճյան» ուսումնասիրությունը («Ինքնի» խորագրի նախ, 1903, թիվ 6-7,8):

Նույն նպատակով Չոպանյանը իր հանդեսում հրատարակում է Խաչատուր Մխարչյանի «Մովսիս» վիպակը (1904), «Բազմուտ» հողիվածաշարը (1903) և Խոթեն Նարայնի անտիպ տաղերի շարքը (հիմնականում սիրո քննադատ գրված երկու տասնյակից ավելի քերթված-

ներ):

«Անահիտի» գնահատումներում այս հեղինակների գործունեության դերն ու նշանակությունը չափազանցնելու միտումներ կարելի է գտնել, կարելի է մերժել այս կամ այն բնութագրումը, սակայն ինքնին ուշագրավ է այն փաստը, որ հանդիսը սկզբունքային դիրքերից խնդիր էր դնում արևմտահայոց մտավորական այդ սերնդի գրական ու իրավաբանականացման գործունեությունը վերագնահատելու, այն հիմնավոր կերպով ուսումնասիրելու և ժողովրդականացնելու:

Եվ այսպես, նորագույն սերնդի գրական դաստիարակության խնդիրը «Անահիտ» հանդիսը չէր սահմանափակում միայն անցյալի հայրենական մշակույթի իմաստության և յուրացման շրջանակներում: Հանդեսի ընթացմանը, ժամանակակից հայ գտողը կրթված **գրականային** կազմակերպվելու համար հավասար չափով պետք է ուսումնասիրի և կին, և նոր հեղինակների գործը, որպեսզի նրա ստեղծագործությունը մի կողմից պահպանի ազգային ավանդական ոգին, քննի հայկական ժամանակակից, մյուս կողմից՝ ունենա գրական այն ճաշակը, այն դասական կատարելությունը, որ կարող է ապա նոր ժամանակների հայ և համաշխարհային գրականությունների հետ շփումը:

### 3.3 ՀԱՄԱԵՆՈՒԿՆԵՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Ինչ ժամանակաշրջանի և ինչ ժողովրդի գրականության էլ որ դիմում է «Անահիտը», կննում է մի քննիմանք սկզբունքից: Ինչ կողմնորոշ է ապա գրականությունը կապվում հայ կյանքի հետ, ինչպիսիք է ժառանգում հայոց գրականության հետևակներին: Ուրի խոսքով, դիմելով մյուս ժողովուրդների գրականություններին, նրանց գեղարվեստական փորձին՝ «Անահիտը» ձգտում էր մի կողմից արձագանքել հայ իրականությունը հուզող խնդիրներին, ժողովրդի ազգային և քաղաքական ձգտումներին, մյուս կողմից էլ՝ «գեղեցկագրական գրականության» անտության մեկնակալից լուծել դարակարգի հայ գրականության առջև ծառայած գեղարվեստական կարգի կարևոր խնդիրներ: Թարգմանվող երկի ընտրության հարցում հանդիսն աշխատում էր համարել այս երկու կողմերը: «Անահիտի» քարզմանակառ քաղաքականությանն առավելապես հասուկ է երկրորդը՝ **գեղարվեստական մեկնակալից**: Եվ սա քաջատրվում է ոչ միայն հա-



մաշխարհային գեղարվեստական փորձով ազգային գրականությունը մշտապես հարստացնելու հանրահայտ դրույթի պաշտպանությամբ, այն նրանով, որ դարասկզբի հայ գրականության ներգծման, ինքնուրույն բանաստեղծության ձևավորման համար այդ փորձի յուրացումը հանդեպ ուղղակի անհրաժեշտություն էր համարում: Տասնամյակների պատմական հետազոտությունից անդրադառնալով դասակարգի գրականությանը՝ Թերչյանի և մյուսների ստեղծագործությանը, Չուպանյանը այս մտեցումը հետևյալ կերպ է բացատրում. «Հայ ինն բանաստեղծությունը (որում կարգ մը կարևոր բաժինները դեռ անձամբ այ կը մնային 30-40 տարի առաջ)», չէր կրնար իրմով միայն՝ առաջնորդել մեր նոր սերունդներու ստալագրավոր ներկայացուցիչները՝ արդիական հայ բանաստեղծություն մը ստեղծելու համար»:<sup>12</sup>

Գրական ազդեցությունների ու առնչությունների հարցը բնավ չէր ընդունվում իրրև միազիծ մեքենայական երևույթ, այլ դիտվում էր ստեղծագործական ընթացք, որի բարդ խաչաձևումներում ի հայտ են գալիս ժողովուրդների հոգևոր կենսագրության ոչ միայն ընդլսանալույունները, այլև յուրահասկությունները, մի ընթացք, որ օգնում է տվյալ ազգային գրականությանը բացահայտելու իր ներքին հնարավորությունները, որքանով որ ազդեցությունը գործում է պատմության սեփական փորձի և մշակույթի սեփական տվանդույթների հիմքի վրա:

Ամեն մի ժողովրդի գրականություն (ինչպես և ամեն մի գրողի ստեղծագործություն), ըստ հանդիսի, մյուսների վրա ներգործում է իր առավել ուժեղ, ինչև յուրահատուկ կողմերով, այն անհնով, ինչն ավելի է ընդգծում նրա ինքնուրույնը: Այստեղից էլ բարգձմանության առաջադրվող պահանջը. գեղարվեստական բարգձմանության մեջ պետք է կարողանալ որսալ այդ ինքնությունը, այդ հիմնականը և չափ այն վերադարձնել տվյալ գրողի աշխարհայացքին ու մտածողությանը յուրահատուկ գծերով: Բնագրի ոգուն հարստալատ մնալով այս սկզբունքը հիմքից մեքծում է բառային կամ, Չուպանյանի խոսքերով, «տառական բարգձմանությունը»: Թարգմանական գործը դիտվում է որպես ստեղծագործական գործընթաց, որը իմաստով նայելիս ավելի բարդ ու դժվարին, քան ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը: «Գրական գլուխ-գործոցի մը իսկապես հասող բարգձմանությունը ամենն ղովար ու հազվագյուտ բաներն են ինչ է

յուր գրականությանց մեջ» (1908, թիվ 1-4, էջ 10): Թարգմանիչը պետք է կարողանա նկատել այն հատկանիշները, որ կորցնում է բնագիրը ուրիշ լեզվի փոխարկվելուց, և աշխատի լրացնել դրանք, «կողբալովին տեղը լցնեն, որպեսզի բնագիրը իր նոր լեզվին մեջ՝ իր ինքնուրույն կյանքը և օժի պահպանե. փոփոխություններ, հավիտուններ պետք է ընել ուրեմն, և ատուրք անհրաժեշտ են՝ «նույն իսկ հավատարմության տեսակետով» (1903, թիվ 12, էջ 217):

Թերչև հարկ չկա ստվացնելու, որ «Անսահիթը» նախապատվություն էր տալիս բնագրային բարգձմանություններին և «սուտղրակի միջոցին» էր դիմում միայն այն դեպքում, երբ հարկ էր լինում «երկու շարյաց փարպագայունք ընտրել»: Հանդեսում ապագաված բարգձմանական գեղարվեստական էջերը, թիչ բացառություններով, բնագրային բարգձմանություններ են:

«Անսահիթ» առաջադրում էր համաշխարհային գրականության ավանդույթների յուրացման որոշակի կարգ և հասցրականություն: Նախ՝ պետք է ծանոթանալ ինն հունական ու հունմեական գրականության կարևոր էջերին, ապա՝ ճանաչել Արևելքի ժողովուրդների գրական կրաչակերտները, հետո՝ ստեղծագործարար յուրացնել եվրոպական ժամանակակից մշակույթը՝ իր դրական և հատկանշական դրսևորումներում:

«Հեյլեն բաղարակրությունը և հայ միտքը» հոդվածում (1908, թիվ 5-12) Ա. Չուպանյանը մի ամբողջ ծրագիր է շարադրում հունստեղծական գրականությանը հայ ընթերցողին ծանոթացնելու, նրա գեղարվեստական փորձը յուրացնելու ուղղությամբ: Նա մանրամասնորեն բննում է հեյլենական մշակույթի հետ հայ մտքի ունեցած կապերի ու հարաբերությունների պատմությունը՝ սկսած Արչակունքների տիրապետությունից մինչև նոր ժամանակներ, մինչև Այսիսարյանները ու նրանց աշակերտները Չամչյան, Բագրատունի, Պշեղի-բաշյան, Գազիկյան, Թերզյան, Պերպեթյան և Քրիշչևեր, հանգում այն տեսակետին, որ հեյլենական ոգին ու ճաշակը հայ մտանճակգիրների գրական դասախարակության վրա քավարար չափով չեն ներգործել, և որ ոսկեդարյան ու միջիարկյան շրջաններից դուրս հայ միտքը թիչ է հարողարակվել հեյլեն աշխարհին: «Անսահիթի» խմբագիրն շատ է ոգևորում Հ. Գազիկյանի ծրագիրը՝ «Ողիսականը» բարգձմանելու կապակցությամբ: «Ողիսականից» հետո նա զանկություն է հայտնում աշխարհարար բարգձմանված անճնը «Իլիականը», ինչպես նաև Մախլուքի, Էսքիլիսի, Էվրիպիլոսի ուրբեգությունները և է-

իլ որիչ գրքեր: 1911-ին Ղազիկյանի բարձրագույն դասնական «Կիսկանք»: «Անահիտ» բրոնխիտներից մեկում այս ձեռնարկումը բնութագրվում է որպես «բավական մը աշխարհագրի պատմության մեջ»:

Ո՞րն է հիլըն գրականության ու մշակույթի նկատմամբ «Անահիտ» այսպիսի վերաբերմունքի պատճառը:

Հանդեսը դրսևով հայ գեղարվեստական միտքը կողմնորոշում էր դեպի հունական արվեստի գեղարվեստական կատարելությունն ու նրբությունը, գաղափարական հարուստ բովանդակությունը: «Հելլենը քաղաքակրթությունը, գրում է հանդեսը, մարդկային ազգին ամենն հրաշագեղ, ամենն կատարյալ շքանն է: ...Կարելի է քսել որ սեւ արվեստագետ կամ գրագետ՝ կատարելության վրա գաղափար կազմելու համար պարտավոր է հելլեն քաղաքակրթությունը ճանչնալ...: Այն ազգերը որ ավելի խորապես ճանչցած են ընդգրկած են հելլեն օգին ու ճաշակը, ավելի նուրբ է անբերի գործեր են արտադրած քան որիչները» (1908, թիվ 5-12, էջ 49-50):

Հայ գրականության զարգացման բնագրը հենց սկզբից էլ ունեցել է արևմտյան կողմնորոշում, հետևել նեոպլատոնական գրականության առաջընթացի օրինաչափություններին: Տեղի է ունեցել պատմության ամենահետադարձական երևույթներից մեկը: Ապրելով Արևելքի ժողովուրդների հետ կողք կողքի, հասարակական և քաղաքական անմիջական հարաբերության մեջ մտնելով նրանց հետ՝ հայ ժողովուրդը զարմանալի մի հետևողականությունը ձգտել է դեպի Արևմուտքի քաղաքակրթությունը: Արևելքի հետ հայ կյանքը կապվում է իր սկիզբներով, իր գոյություն արձանագրելով, ծագումով, պատմությամբ, Արևմուտքի հետ՝ դեպի բարձրագույն քաղաքակրթությունն ունեցած ձգտումներով, ինքնուրույն գոյության պահպանության հեռանկարներով: Այս հանգամանքն էլ, քան «Անահիտի», պայմանավորել է Արևմուտքի և Արևելքի նկատմամբ հայոց գրական-հասարակական մտքի աարբերակված և յուրահատուկ վերաբերմունքը: Երև արևմտյան կողմնորոշումն ունեցել է ծրագրավորված, նպատակային, հավաքական բնույթ, սակայն արևելյանը անդի է ունեցել րոնակաճան ունն ձևով, «անգիտակցաբար, ճակատագրակամարբար»՝ իրեն արդյունք է հետևանք հայ ժողովուրդի պատմական կյանքի: Եվ սահա «Անահիտի», առաջնորդվելով այս մտածմամբ, հայկական արվեստի յուրահատկությունները, մեր գրականության ինքնուրույն գծերն ու գույները, բուն «հայկական գեղեցկագիտության էիմոները» փնտրում

է Արևմուտքի և Արևելքի գրական խաչաձևումներում, ազգային մշակույթի հեռանկարների տեսանկյունից կարևորում այդ երկու քաղաքակրթության տարրերի գույանախումբը: «Մեր մտավոր արտադրությունները, կարգում ենք Չուպանյանի «Արևելքը և հայ միտքը» հոդվածում,՝ պետք է որ միշտ ունենան այն գեղեցիկ բարդությունը, այն Արևմուտքի և Արևելքի ճարպիկ ու ինքնատիպ խառնուրդը գոր կը գտնենք մեր հին ճարտարապետության մեջ...: Առավ մեր արտադրությունները ոչ միայն չեն դադարը ազգային գույն պահպանել, այլև ընդհակառակն ավելի ճուխ, ավելի ընդհարձակ և ավելի ուժեղ ինքնուրույնություն մը կ'ունենան» (1908, թիվ 8, էջ 172): Եվ սակայն «Մեր Արևելքի ենք վերջապակ, և իրավումք՝ չունենք Արևելքը քաղաքակրթական արժանավոր» (1902, թիվ, էջ 170, 172): Կոնցիք էր դրվում մեր մտավոր-բարձրագույնական գործունեության մեջ մեծ անդ հասակցեցել Արևելքի գրականությունները հայերին ծանոթացնելուն, ուսումնասիրել Արևելքի պատմության այն դրվագները, որոնք այս կամ այն կերպ անցված են հայ ժողովուրդի պատմության հետ: «Անահիտը» դիտում է ճանաչված հայ արևելագետներին՝ Մ. Մասեխյանին, Հ. Թիլլյաթյանին, Մ. Մարտաշյանին, Գ. Փառնակին (Գ. Ֆեարյան), և այլոց՝ իրենց ջանքերը միացնելու այդ շահեկան գործին: 1902-ից հանդեսն սկսում է թարգմանությունների նոր շարք: «Պարսիկ գրականություն», «Արևելյան գրականություն», «Պարսիկ բանաստեղծություն», «Օսմանյան բանաստեղծություն» և այլ համապատասխան լատի այստեղ տպագրվում են Խայամի, Հաֆիզի, Սաադիի բազմաթիվ բառակերտներ ու պատմականներ, Ֆիրդուսու «Կահնամեից» մի հատված («Արտաշիք Բարական»), առակներ, բառակերտներ և բանաստեղծական հատվածներ պարսիկ խորհրդապաշտ ընթրողներից (Մաուլան, Արաատահի, Ալվել, Աստարի, Էսֆերեզդի և որիչներ), սիրո և իմաստասիրական էջեր ներդրական դարձողի յուր բանաստեղծներից և այլն<sup>13</sup>:

19-րդ դարի վերջերին էվրոպայում աճեց հետաքրքրություն Արևելքի գրականությունների ու մշակույթի նկատմամբ: Թարգմանվում էին Հաֆիզի, Սաադիի, Ֆիրդուսու, Ռուդարիի և այլոց գործերը, առանձին գրքերով հրատարակվում էին օսմանյան, արաբ և հնդկ բանաստեղծության ծավալաբար, կազմակերպված բանաստեղծություններ ու գրույցներ, բազմում էին Արևելքի ժողովուրդների արվեստի ցուցահանդեսներ: Լոնդոնում, օրինակ, ստեղծվում է խայամասերենի գրական ընկերություն, Ֆրանսիայում Խայամի բառակերտի Ա.

Նիկոլայի կողմից իրականացված թարգմանություններից հետո քանաստեղծի քառյակների նոր զիբրն է հրատարակում ֆրանսիացի արևելագետ Շառլ Կրոնը: Ավստրիացի պարսկագետ Ռոզենցվայդը կազմում է հրատարակում է պարսիկ մեծագույն միտոսի բանաստեղծ Ջելալեդդին Ռոմիի դիվանը և այլն:

Արևելյի քաղաքակրթության նկատմամբ այս վերաբերմունքը չափեր է քայքայել միայն Արևմտաբլիզի դեպի այն ժողովուրդների մշակութային ժառանգությունն ունեցած հեռաքրթորությունը, որնք առանձնահամու են իրենց հոգևոր կենսագրության և արվեստի յուրահատկություններով, բարբերով ու կենցաղով, գրականության անձանոր գեղեցկություններով: Այստեղ ավելի ճիշտ կլիներ խոսել ոչ այնքան առանձնագումների, տարբերությունների, որքան այն ընդհանրությունների մասին, որ իր համար եվրոպական նորագույն գեղարվեստական միտքը հայանարերում էր Արևելյի մշակույթի մեջ:

Արևելյի գրականությունների հարցում «Անահիտ» դիրքորոշումը կարելի է քայքայել նաև այս ընդհանուր հեռաքրթորության էվոլյուցիոն չնոտանալով հատկապես, որ Հին արևելյի քաղաքակրթության մեջ հանդեսը նշանակում էր խիտ ժամանակակից զգացումներ հայտը ներկա գրական սերնդի համար: Ինչ խոսք, իայնամի քանաստեղծական աշխարհընկալման հետ հոգեկան խոլորակ կապը միանգամայն հասուն էր նաև հայ քանաստեղծի հոգևոր նկարագրին: Դեռ ավելին: Տագնապի, մարտնչման ու պայքարի այդ օրերին պարսիկ քանաստեղծի՝ մահվան ներկայություն սուր գաղափարությունը՝ «մահվան տեսիլքը», նրա քառյակների «ամենեն հատկանշական հանգամանքը» կազմող «հավիտ բողբոջի, ապաստարդի ոգին», դառը, կրքոտ ու սաստկահետք ընդվզումը, երգիծանքը «չարամիտ, անգործ» երկերի դեմ միանգամայն հոգեհարազատ էին արևմտահայ իրականության զգացողությունը: Պարսիկ քանաստեղծի ստեղծագործության ամենամեծ արժանիքը Արևելյի գրականության գիտակ Գ. Փառնակը ստեղծանում էր իննց այդ «խիտ հառաջացյալ և մերօրյա (incórnec) կյանքի ինսաստափորությունը...»: Խոչանի քառյակների փիլիսոփայական խորքն ու հարուստ գաղափարայնությունը պահպանելու և այն առավել ճշգրտությամբ ժամանակակիցներին հասրդելու նպատակով էլ հայ քանաստեղծը դիմում է քառյակների ազատ թարգմանությանը և այդ մտոնցումը քայքայում հետևյալ կերպ. «...միշտ կը մնա պետքը ճշգրիտ առական անայայլ թարգմանությունը ճանցնալու բուն խորիող-քանաստեղծը՝ Պարսկաստանի»:

(1904, թիվ 3, էջ 62):

Հայ ընթերցողի համար նույնքան հարազատ ու սրտամոտ էին ենչում նաև Մառալիի՝ խոր ժողովրդականությունը ու լավատեսությունը ներշնչված պատմվածքներն ու թերթվածները, Հաֆիզի՝ սիրո, վայելքի ու գեղեցկության բնաբերությունը, վերածննդի շրջանի պարսիկ ու քուրք քանաստեղծների խորքողապաշտ մտորումները կյանքի ու մահվան հակասության ամենովածների, ժողովուրդների թախտի ու ճակատագրի, աշխարհի անճանհանելիության, մարդու ու մարդկայնության և այլ հարցերի շուրջ:

Արևելյի գրականությունների գեղարվեստական յուրացման հարցում «Անահիտ» խմբագրի այս ճնոնարկումները հեռաքրթորությունների նոր դուռ էին քայքայում արևմտահայ ընթերցողի համար: «Չեմ կրնար, այս առթիվ, ծածկել իմ ամենամեծ ուրախությունս, իր հիացմունքն է հայտնում Հ. Թիլլայանը, -տեսնելով թե մեր գրագիտաց դասուն մեջ գտնվեր է վերջապես մեկը որ այսպիսի գագսեր է կարևորությունը մեր արևելյաց աշխարհի և գրականության անհասարակ և պարսկականին ի մասնավոր» (1906, թիվ 1-2, էջ 20):

Արևմտաքր «Անահիտ» հանդեսի ընթրնամար սուկ աշխարհագրական ընդհանրություն չէ: Այդ հասկացության միջոցով հանդեսը արտահայտում էր անուստարակ ժամանակակից թարծրագույն քաղաքակրթության գաղափարը: Արևմտաբլիզի գրականությունը բնորոշումն էլ նկատի չունեն միայն արևմտահայկական արվեստը, այլ ընդհանրապես եվրոպական ժողովուրդների, ճմանապես՝ Հյուսիսի և ամերիկյան գրականությունները:

Եվրոպական գրականություններից «Անահիտ» ինարկե ավելի մոտ էր կանգնած ֆրանսիականին, սակայն հանդիսակի նյուրեր է տպագրել նաև անգլո-գերման, իտալական, ռուսական, ինսական և այլ գրականություններից:

Ինչով է հատկանշվում «Անահիտ» վերաբերմունքը եվրոպական գրականությունների նկատմամբ: Ի՞նչ սկզբունքներով է առաջնորդվում հանդեսը:

«Անահիտ» հավասար չափով անդրադարձել է եվրոպական գրականության ու դասականներին, ժամանակակից հեղինակներին: Հանդեսի էջերում թարգմանաբար տպագրվել են ինչպես Շեքսպիրի, Մեդվանտեի, Տաստայի, Ֆլորերի, Պուշկինի և Միցկևիչի ստեղծագործություններից, այնպես էլ գրվածքներ Ա. Չիխովից, Թ. Գորիինց, Շ. Բոդլերից, Ժ. Մարիա դը Լերելիայից, Գ. Լապրյե,

Ժ. Ռոսենպարից, Է. Վերհարնց, Ա. Նեգրից, Վ. Ալանորից, Բարաուշից և ուրիշներից: Նույն հոգաձուրյանը ու հաջողությամբ այստեղ վերադավի և գնահատվել են մի կողմից Սերվանտեսի «Դոն Կիշոտան» ու Շեքսպիրի «Համլետը», Գյոթիի «Հերման և Դորոթեան» ու Զյոբերի «Հերովդան», բնագոյապես հողվածներով տրվել են Ա. Պուշկինի, Ա. Միսկիևի, Է. Զուլայի գրական դիմանկարները, մյուս կողմից էլ արժեքավորվել են Ժոզե Մարիա դը Հերեդայի, Ֆրեդրիկ Միստրալի, Հուրիբորի և այլոց ստեղծագործությունները, արձակ ու չափածո էջերը:

Երկու դեպքում էլ «Անսիխի» վերաբերմունքը որոշակի է: Դիմելով համաշխարհային գրականության մեծերի Շեքսպիրի, Սերվանտեսի, Գյոթիի և մյուսների ստեղծագործությանը՝ «Անսիխը» որանք իբրև գեղարվեստական վարպետության չափանիշ և ուղեցույց օրինակ է պարզում հայ գրողներին: «Մերն պետք է մեզի վարպետ անենք ամեն այն մարտեր, որանք մեծ ու կատարյալ եղած են, առանց ժամանակի, ցեղի ու երկրի խաղաղան, հույն Սափոկլեսը և իտալացի Տանքրեո, գերման Լեոթեն և ֆրանսացի Յոպերը, անգլիացի Շեքսպիրը և օտա Թուրկենեթը» (1899, թիվ 11, էջ 329):

Մյուս դեպքում, անդրադառնալով Արևմտաքի ժամանակակից և նորագույն գրականությանը, հանդես էր հայ գրականության գաղափարները մեկ դեպի եվրոպական նորագույն արվեստի գաղափարներ ուղիղ, հայ գեղագիտական միտքն անմիջական կապի ու հարողակցության մեջ դնել եվրոպականին հետ: «Անսիխի» գրական քաղաքականության յուրահատուկ գիծն այստեղ այն է, որ նա դիմում է Արևմտաքի գրական քննադատի տարրեր կողմերին, ամենատարրեր գեղարվեստական ուղղություններին ու հոսանքներին: Գրական աղանդավորներ ենք սկզբից էլ վարդապետ քննադատի հանդեպի գրական այսպիսի քաղաքականության բուն իմաստն ու նշանակությունը: «Անսիխը» հեղափոխ «սակտիկոնական ամսագիր»<sup>14</sup>, իսկ նրա խմբագիրը՝ «մոդեռն հայ»<sup>15</sup>:

Ինչպե՞ս էր հանդես լուծում այդ խնդիրը:

«Անսիխան» առաջնորդվում էր իր խմբագրի բնագոյատեղական սկզբունքով՝ գրական յուրաքանչյուր երևույթի մեջ փնտրել, հայանաբերել ու գնահատել դրակամը, մնայունը, այն, ինչը սովյալ երևույթի ամենաբնորոշ, էական, հատկանշական կողմն է, նրա լավագույն նվաճումը:

Այսպես, հանդես էր իրազեմանական գրականության բաժնում

գլխի սեղ և հատկացրել պատճառայան կոչված ֆրանսիական դպրոցի և խորհրդապաշտ գրողների և բանաստեղծների ստեղծագործություններին: Պատճառականների հավասարակշռված գեղագիտությունը իմնվում էր դասական արվեստի և ամոճակական բանաստեղծության ավանդների շատ յուրօրինակ խաչաձևումների վրա: Այդ դպրոցի քերթողները յուրաքանչյուր դասական արվեստի հատակությունը, կարգը, ներդաշնակությունն ու կանոնիկ նկարագիրը և մերժեցին իրականության ներպակայական-գայաական արտացոլումն ու ամոճակիկ ներշնչանքը, հոգեկան հուզումն ու ձևի անհրաժեշտ արտահայտությունները: Պատճառականները վարդապետ խոստովի ակնհայտ ծայրահեղություններից, առաջ ավելցիկ ձևապաշտական-նորարարական սկզբունքներից: Գեղարվեստականությունը հեղափոխ իբրև ստեղծագործության իմնական չափանիշ, նոր, սկիզբ ու ստանձան, գեղեցիկը՝ արվեստի միակ նպատակամետ, քարճոր անն անտեսյակ օգտակալություններից: «Երբ առարկան օգտակար է, անոճ էր դպրոցի իմնադիրներից թ: Գյոթին, նա դադարում է գեղեցիկ լինելուց»: Արվեստը չի ծառայում «բացարձակապես ոչնչի»<sup>16</sup>:

«Արարող արվեստի» այս փիլիսոփայությունը ավելի շեշտվեց դպրոցի թույլ հետևորդների ստեղծագործություններում: «Պատճառայանները ամոճարիկներնու հողկալարը կը ներկայացնեն, նկատում է «Անսիխի» բնագոյապես, հողկվարը մը որ ձևիկ ծայրահեղության ու նորություն հողը միայն մնացած էր՝ նույն լույլ կայսրահեղության տարված, մինչ շունչը որ անհրաժեշտ է ամեն բանաստեղծության, հողկեան մեծ հողուրը առանց դուռն ուն, գրական գործ՝ որան այ սկյուն մտով ըլլա իրիցված՝ անկեղծու է, կը պատկերեն» (1903, թիվ 11, էջ 194): Սակայն այս էական ստանձանականության հետ պատճառականները ոճեկեան մեծ մի ծառայություն: Նրանք ֆրանսիական բանաստեղծությունը հարտացրին գեղարվեստական կարգի նոր հնարավորություններով ու կարելայություններով, քերթեցին ձևի, ոճի, ոլիմի, տողի կատարյալ արտահայտության զգացողությունը: «Անսիխը» հանդեսը գնահատում է պատճառայան դպրոցի ենք այս նվաճումը: Սի բան, որ լուծին համապատասխանում էր հայ գրականության գաղափարական հարցում հանդեսի գեղագիտական դիրքորոշանքը: Հայ գրողը պատճառայան բանաստեղծության մեջ կարող էր գտնել քարճարվեստ քերթություն լավագույն օրինակներ:

Ինչո՞ւ է «Անսիխին» գրաված խորհրդապաշտ բանաստեղծ-

ների Շ. Բողոբի, Ստ. Մկաբյանի, Է. Արքարքի, Պ. Վեդենի, Ժ. Ռոտենպարի, Ժ. Մորեսի և այլոց ստեղծագործությունները, որոնցից պարբերաբար նմուշներ էին տպագրվում հանդեսում: Հայասնի և, որ այդ ուղղության լավագույն ներկայացուցիչները գրականությանը նորոգեցին ձևի, տաղաչափության, բանաստեղծական կառուցվածքի նորություններով, արտահայտչական եղանակի նոր հայտնագործումներով և այլն: Որ «Անահիտը» իր դավանած գրականության տեսակետից չէր կարող անտարբեր մնալ այս խոշորագույն նկատմամբ, ինքնին հասկանալի է: Բայց առավել հետաքրքրական է մեկ այլ հանգամանք: «Անահիտը» հատուկ ուշադրություն էր իրավիրում րովանդակային այն բազմազան փոխակերպումների վրա, որ բանաստեղծական պատկերի համակարգում բերում էին խորերգապաշտ հեղինակները:

Ուշագրավ են «Անահիտ» հանդեսի դիտողությունները քննաչաշտական (նատարախիվ) դպրոցի վերաբերյալ: Այստեղ հանդեսին հետաքրքրում է իրականությունը գիտական-փորձարարական մեթոդով ուսումնասիրելու և այն հավասարմորեն պրակտիկ մեջ փոխադրելու ճիգը, կյանքը ճշմարտացիորեն պատկերելու ճգումը: Այս մտեցմամբ «Անահիտը» հետաքրքիր տեսակետ է պարզում գրականության այսպես կոչված գիտականության, որ է՝ ճշմարտացիության մասին: «Մեծագույն գրագետներն անոնք են, - գրում է հանդեսը, - որոնք Արվիտը կը նկատեն ոչ թե մտքի գրոտանք մը, երևակայության խաղ մը, այլ գործ մը այնքան լուրջ ու ծանր որքան գիտունին գործը, խորքին մեջ նույն, իրեն նպատակ ունենալով կյանքի խորհուրդները մեկնել, բնության հետ մրցիլ» (1903, թիվ 10-11, էջ 215): «Անահիտն» ինքրեկ տանձնագրում է իրականության գիտական և գեղարվեստական արտացոլման եղանակների յուրահատկությունները և քննաչաշտական դպրոցի ամենամեծ սահմանափակությունն էլ համարում է հենց այն, որ վերջինս անտեսում էր այդ յուրահատկությունները՝ ձգտելով կյանքի երևույթները արտահայտել առանց բյուրեղացման, «առանց խաշուրացման... առանց որևէ փոփոխման կամ ընտրության»: Բնագրաչաշտերը ծաշայնություն հասցրին իրականության պաշտամունքը: Որտեղ ստեղծագործություններ մեծ մասամբ եղան իրականության «ընդօրինակություններ»:

Այն հանգամանքը, որ «Անահիտը» հավիված էր գնահատելու եվրոպական գրականության նորագույն դպրոցները սկզբնավորողների

հատկապես դրական նվաճումներն ու հատկանշական կողմերը, պայմանավորում էր դրանց նկատմամբ հանդեսի դիրքորոշման մեկ այլ յուրահատկությունը. «Անահիտը» բացառապես դիմում է այդ դպրոցների առավել տաղանդավոր ներկայացուցիչների ստեղծագործություններին: Պատահական չէ, որ հատուկ ուսումնասիրություններ նվիրվեցին Ա. Վինյի («Յբասնիակն ոգին», 1905, թիվ 12, «Էլտան», 1905, թիվ 7-8), Է. Ջոլայի («Գեներե. Էմիլ Ջոլա», 1902, թիվ 10-11), Ժ. Հերեդիայի («Շոգե-Մարիա սը Հերետիա», 1906, թիվ 8-9) և Պ. Լազարի («Գեներե. Պերնար Լազար», 1903, թիվ 11) գրական ժառանգությունների գնահատմանը, հեղինակներ, որոնք ներկայացրեցին կամ համապատասխանաբար Յբասնիական ումանտիգմի, նատուրալիզմի, պառնասյան դպրոցի և խորերգապաշտության լավագույն գրական ավանդույթները:

Նույնն է վկայում նաև ոչ միայն այս հեղինակների քննադատությունը, որոնցից «Անահիտը» նյութեր էր առանձնացնում տպագրության համար (Բողոբ, Վեդեն, Արքարք, Լ. Է. Զոնր դը Լիլ, Լեպարդի, Միստրալ, Վինյի, Նեպոլի և այլք), այլև հենց նյութերի քննադատումը: Այսպես, օրինակ՝ Թեոֆիլ Գորիի «Արվիտադ» քերականը պատմության ուղղության, իսկ Շառլ Բողոբի «Օրինություն» և «Չկնկույթ» բանաստեղծությունները խորերգապաշտական ծրագրային հիմնադրույթների գեղարվեստական յուրօրինակ շարադրումներ էին: Կամ Էմիլ Արքարի «Մըք» քննարկակ բանաստեղծության մեջ տեսնում ենք խորերգապաշտ դպրոցի գաղափարական կաշկանդումներից ազատագրված և ժողովուրդներին ու «արբազան ապագային» փաձայնորեն խոսող մարտիկ քերականը:

«Անահիտ» հանդեսն առաջնորդվում է այն ճշմարտությամբ, որ տաղանդավոր գրողը, արվեստագետը չի սահմանափակվում այս կամ այն դպրոցի կաշկանդող շրջանակներին և հարթահարկով դրանք՝ ստեղծում է մեծ արվեստի գործեր. «...հաճաքը միշտ կ'արձակել իր գեղեցկությունը, միշտ հզոր ու հանկուցիչ՝ ինչ ալ ըլլա արտաքին ձևը. դպրոցի վեճերը, շրջաններն անցնելուն, կը մոռցվին, Բայց Ռոսին մը, Շենի մը, Հյուլի մը, Վինյի մը, Լամարքի մը, Պուլտրի մը, Լ. Է. Զոնր սը Լիլ մը, Հերետիա մը և Արլեն մը, հավիտեմուական արձնչացման արժանի կը մնան» (1906, թիվ 8-9, էջ 148):

Այս կամ այն կերպ «Անահիտ» հանդեսն անդրադարձել է նաև դարասկզբի գրական մյուս ուղղություններին ու հուսանքներին, սակայն նրա հետաքրքրությունների կենտրոնում մշտապես եղել է դա-

ասկան արվեստը կամ, այսպես կոչված, դասական իրապաշտությունը: Չնույնացնելով այն հին կամ ավանդականի հետ հանդես այդ արվեստի յուրահատկություններն էր համարում կյանքի ճշմարտացի արտացոլումը, կարգը, սրբազրության մեջ խորությունը, գեղարվեստական կատարելությունը, իզգացման, շարադրության և ոճի արձանարանականությունը, ախպակնացման բարձր կարողությունները և այլն: «Շշմարիտ դասականները խորապես և բարձրորեն իրարապաշտ են առավել կամ նվագ խորիզոնշունական բողին ասը» (նույն աեղում, էջ 147):

Իրապաշտ գրականության հարցում բնորոշ է «Անսիտի» վերաբերմունքը նուս գրականության նկատմամբ: Հայտնի է, որ դեռ 1880-90-ականներին, մտավոր գարրոնի պայծանճերում, արևմտահայ գրական սերունդը «Արևելի», «Հայրենի», և «Մասիս» էջերում հետևողական ու ծրագրային աշխատանք է սկսում հայ գեղարվեստական միտքը Հյուսիսի գրականությունների, այդ թվում նաև, նուս գրականության նկատմաներով հարստացնելու: Արդեն դարսակգրին արևմտահայ մամուլի էջերում («Մասիկ», «Բազմավեպ», «Չայն հայրենյաց», «Իրշակ» և այլն) ավելի հաճախ ենք հանդիպում Լեոնտնտովի և Պուշկինի, Գոգոլի և Տուրգենևի, Չեխովի, Գորկու, Տոլստոյի, Նոյստնի գրվածքների հայերեն թարգմանություններին: Եվ սա բոլորովին էլ պատահական չէր: Նույն հեղինակների գործերը լայնորեն թարգմանվում էին արևելահայ մամուլում: («Նոր դարի» միայն 1900-1902թթ. համայնելոնում թարգմանվել և տպագրվել է Չեխովի ավելի քան վարսուն պատմվածք):

Ուս գրականության նկատմամբ հետաքրքրությունը մեծ էր նաև Արևմայան Եվրոպայում: Նույն 1890-1900-ականներին եվրոպական ու մոսխ և առաջ ֆրանսիական գրականության մեջ ճանաչվում հեղինակություններ էին Տուրգենևը, Տոլստոյը, Չեխովը, Գոստատկին, Գոգոլը և Գորկին:

Ուս գրականության նկատմամբ արևելահայ մտքի հետաքրքրությունը, սակայն, ուներ նաև ուրիշ և տվելի հիմնավոր պատճառներ: 80-90-ականներից օրակարգի հարց էր դարձել արևմտահայ և արևելահայ հատվածների մերձեցման անհրաժեշտությունը: Գաղտնի չէր, որ արևելահայ մտավոր-գրական կյանքը շատ որոշակիորեն իր վրա կրում էր ռուսական իրականությունը ու գեղարվեստական մտքի ազդեցությունները: Ուսումնասիրելով նուս գրականությունը և գեղարվեստը՝ արևմտահայերը ձգտում էին մտակից ճանաչել արևե-

լանայոց կյանքը, բնրոնել եղբայր հատվածի գրականության այն յուրահատկությունները, որոնք ճնշվածի և ճնշվողվում էին ռուսական մշակույթի ազդեցությամբ: Գեռ 80-ականներին «Մասիս» գրում էր. «Անհրաժեշտ է... ուսումնասիրել ռուսական ոգին. ռուսական գրականությունը, օրերները և կտավարական ուղղությունը, որպեսզի կարելի ըլլա գիտնալ թե ինչ ազդեցության ներքև կը գարգանան Արարատ-Մովկայան հայերը»<sup>17</sup>: Շուրջ քառորդ դար հետո հաստատելով այս մտքը՝ Ա. Արքիպյանը ավելցանում է. «Իսկի Արևմտյան Հայերուս համար ալ ժամանակն է որ հետամսինք Ռուսիան ուսումնասիրել և զայն ամբողջապես ճանչնալ: Ռուսիո Հայերը ուղղակի ռուսական ազդեցության ենթարկված են»<sup>18</sup>:

Ընտո, նուսական իրականությունը իր համառուսական ժողովրդավարական շարժումներով, նուս գրականությունը իր բնորոշ հասկանիչներով (հարցադրումների հանրաժողովական լայնությունն ու խորությունը, կյանքի հետ սերտ կապը, ընկերային-բարոյական ուր պարզիմեայությունը), հասարակ մարդու ներաշխարհի իրապաշտական արտացոլումը և այլն) ոչ միայն հոգեհարազատ էին, այլև շատ կրթիչելով նոր ու անձանոր աշխարհի էին քացում արևմտահայ ընթերցողի առջև, խորապես ընդայնում հայ արվեստագետի հետաքրքրությունների շքանակը: Եվ պատահական չէ, որ արևմտահայ գրական միտքը ձգտում էր հատկապես դեպի ռուսական իրապաշտ դպրոցի ավանդույթները:

«Անսիտը» նույնպես կողմնորշվեց դեպի ռուսական իրապաշտ գրականությունը առաջարկելով այդ գրականության նկատմաները գիտակից-ստեղծագործական կերպով յուրացնելու պահանջը, դեպի մեծ արվեստի այն ուղին, որ ձգվում է Պուշկինից մինչև Չեխով, մինչև Գոստատկի ու Գորկի: Հանդեպի կողմնորոշումը հիմնվում է գրական այդ մեծությունների ազատից ու արվեստի ճշմարտացի և խոր գնահատման վրա, մեծություններ, որոնցից, ինչպես հավսատում է Չուպանյանը, շատ քան ունեն տվորելու բոլոր իսկապաշտ առաջանցիքը:

Տարբեր առիթներով «Անսիտը» բարձր է գնահատում Պուշկինի, Գոգոլի, Գոստատկու, Տուրգենևի և Չեխովի գրական ժառանգությունները: Ըստ դրան, «Անսիտի» համարներում տպագրվում են Պուշկինի «Գյուղ», «Անչար», «Գիտն» բանաստեղծություններն ու «Չեխովի «Շենիվոլ տիկինը» պատմվածքի հայերեն առաջին թարգմանությունը («Շան հեռի կինը», թարգմ. Ա. Կապարյան), իսկ 1905-ի 6-

րդ համարում՝ Լ. Տորգինևի «Համլեր և Տոն Քիչոթ» հանրամատչող «Շերտայիի և Սերվանտեսի համաձուլ գործերի ստեղծման 300-ամյակի կապակցությամբ և այլն:

«Անահիտ» հանդեսը առաջին հայ պարբերականներից մեկն էր, որի էջերում տպագրվեց Մ. Գորկու ընդարձակ մամուլը կովկասյան դեպքերի մասին:

Ռուս գրականությունը հայ ընթերցողին ծանոթացնելու և նրա բարձր հատկությունները արժեքավորելու գործում, ըստ «Անահիտի», մեծ դեր ուներ կատարելու արևելահայ մտաույր, հասկապես «Մտրճ հանդեսը՝ իրև յուրք գրական նրաստարկություն... Ապշե-ցույցը բան մըն է որ դեռ Կովկասյան հայ մամուլին մեջ յուրք, մանրամասնյալ ուսումնասիրություններ չեն նրաստարկված Տառայելե-սիի, Թուրկենեիի, Կոկոլի, Լեյնոնրովի, Թուրայի, Կորքիի պես գյուղներու վրա» (1904, թիվ 9-10, էջ 137):

Միասնամանակ «Անահիտը» մեծ կարևորություն էր տալիս փոխադարձաբար՝ հայ գրականությունը ռուս մտավորականությանը ծանոթացնելուն: Այդ գործում հանդեսն անչափ բարձր է գնահատում հանրամատչող հայագետ Յոս. Վանդոլսկու հայասիրական գործունեությունը, իսկ Ջանշյանը «Անահիտի» ընթերցողներին է ներկայացվում իրև երախտիի արժանի մեկն այն հայ մտավորականներից, որոնք առանձնահատուկ հոգածությամբ են հայոց անցյալն ու ներկան, նրա քաղաքակրթական բարձր արժեքները ներկայացնում ռուս ժողովրդին:

Արշակ Չոպանյանը չգիտեր ռուսերեն և, ինչպես ինքն է խոստովանում, ռուս գրականությունը բնագրով կարդալու բարբախտությունը չի ունեցել: Սակայն ֆրանսերեն քարգծանությունների միջոցով նա լավագույնս ծանոթ էր ռուս գրականությանը: Իսկ ամենից կարևորը՝ նրբանկատ հայ արվեստագետը գգում էր, հասկանում և գնահատում ռուս ժողովրդի մշակութային հարստությունները, նրա մեծերի գրականությունը: «Ռուս թեթև ևս կը հասկնամ ռուս ժողովուրդին խանդուս, գաղափարապաշտ, մարդասեր հոգին... կը հասկնամ ռուս գիտությունը, գեղարվեստը, կը հասկնամ ռուս ազատագրական շարժման բոլոր հանգույցն ու հոյակապ ճիգերը, բոլոր այն ներառողասելի հերոսները գոր սոված է ռուս ապրիք՝ ազատությանը հռոպին համար»: Եվ վերջապես, «ռուս» թեթև ևս կը հասկնամ... Կուկոլը, Տառայելսարին, Թուրկենեիք, Թուխույը, Կորքիը, որոնք մտավորական բարերարներ են ամբողջ մարդկության համար...» (1906,

թիվ 3-6, էջ 83):

Շիշու է, «Անահիտ» հանդեսի գեղարվեստական քարգծանությունների ռուս գրականության բաժինը հարուստ է: <sup>12</sup> Եվ հայ-ռուս գրական կապերի անբաղկոնման խարցում հանդեսի ծառայությունները պետք է գնահատուկ ոչ այբրան և ոչ գլխավորապես այս տեսակետից: «Անահիտի» դերը կարևորվում է դեպի ռուսական առաջավոր գրականությունն ու մշակույթն ունեցած ճիշտ և հստակ դիրքորոշումը, հանդեսի ծրագրային այն առաջադրույթների դերով ու նշանակությամբ, որոնք արժանատի գրական նոր սերնդի ստեղծագործական հետաքրքրությունները ուղղում էին դեպի ռուսական իրապաշտ արվեստի ավանդները:

Հյուսիսի ու կելովակական գրականությունների նկատմամբ իր վարած քաղաքակրթությամբ «Անահիտ» հանդեսը հաստատում է այն գաղափարը, որ հայ գրականության բերացրը ոչ միայն կորված չէ համաշխարհային գրական բերացրից, այլև կելովակական գրական հոսանքների քաղաքացունները մեր գրականության մեջ պատմականորեն օրինաչափ, բնականոն երևույթի արտահայտություններ էին՝ քելված ազգային կյանքի և գրականության ազգային ճանապարհի ուղիներում:

«Անահիտի» նրատարակության բերացրը համընկնում է այն ժամանակաշրջանի հետ, երբ սկզբնավորվեցին ու զարգացան արևմտահայ նորագույն հայրենասիրական բանաստեղծության վաղնորոյցները: Բայց այն միշտ չէ, որ ուներ արվեստի մտահոգությունը: Մի բան, որ Գ. Վարսմանը կարևոր պատկառ էր համարում ընդհանրապես հայոց հայրենասիրական գրականության համար. «Ջարձմանակ է, որ մեր մեջ հայրենասիրական երկերը (նվազ քաղաքությանը) գեղարվեստական արժեքն անցառ հոգացված են» (ԳԱՄ-126):

1895-ի «Ճաղիկի» էջերում խոսելով Հյուսիսի գրականությունների հետ հայ գրականության անընդունելի մասին՝ Չոպանյանը նկատում է, թե վերջիններին ազդեցությամբ «մեր մտածելու և գրելու եղանակին մեջ, իմաստասիրելու ձգտումը սլիսի-մանն, գոր շունիքը դեռ» <sup>20</sup>: Ապա մի քանի տարի անց («Անահիտի» շրջանում) հստակ ցեղեկանություններով «իմաստասիրական, քնկերաբանական, դուրսնորական և բանագործական» էջեր է փնտրում հայոց ինքն գրականության մեջ: Իսկ արվեստի երկու-երկու տարամայակ հետո Փարիզի «Ապագա» օրաթերթում դարձյալ սլիսի արձանագրվել. «Ուրիշ սլա-

կա սը. իմաստասիրական, գիտական, իրավաբանական և քննարկա-  
բանական գրականության արթատությունն է մեր մեջ»<sup>21</sup>: Դարաս-  
կզիի արևմտահայ գրականության մեջ այս պակասը ավելի էր  
ընդգծվում մեզ հայտնի միակզմանիության ու կենտրոնացման  
պատճառով:

Այսպիսով, խիստ անհրաժեշտություն էր գզգզվում զեղարվե-  
տական գրականությունը հարստացնել քննարային բողոքի շեշ-  
տերով, հասարակական, փիլիսոփայական ու գիտական հարցադ-  
րումների բազմազանությունը, ստեղծել բարձր արվեստի հայրենա-  
սիրական պոեզիա՝ զարգացնելով Միանամբոյի, Վարդանի, Սևա-  
կի հայրենաշուք: Բանաստեղծության ձևերի բուժումները:

Միս թե ինչու «Անահիտ» այնքան ուշադրությամբ էր գննում է-  
մի Չոլայի «գիտական մերտը», բացատրում Բերնար Լագրան աշ-  
խարհայացքը «քննարկական հարցերու մեջ», արձագանքում ամերիկե-  
յան գրող և փիլիսոփա Էմբրոջի ծննդավայր հարչուրայակին, սպազ-  
րում նրա իմաստասիրական խորիցածություններից, ուշադիր  
վերլուծում Ալբերդ դը Վինյի փիլիսոփայական չափանոցն, հիանում  
խորտող և փիլիսոփա Աբեևրի բանաստեղծությամբ, միաժամանակ  
գնահատում Ադա Նեգրիի և Հոլիթրիի «Յոցիսական լրիկան»,  
ոգևորվում Մոխեպրնի, Լեոպոլդի, Քարտուշիի, Միտրալի,  
Միցիլեի հայրենասիրական հիմներով ու ներդրողներով, Գեղեցիկի և  
Հեղեթականի սկզբունքներն առաջադրող Հերտիայի զեղարվեստա-  
րեն անբերի գրականությամբ և այլն:

Ա. դը Վինյի ֆրանսիական նոր գրականության ամենաի-  
տարբերական դեմքերից մեկն է: Նրա ստեղծագործությունը (հաս-  
կապես «Չերքորթն» դրաման) շատ բարձր է գնահատվել ժամանա-  
կակիցների, այդ թվում նաև Բեկիստի կողմից: Վինյին հուշակվել է  
19-րդ դարի մեծագույն բանաստեղծը<sup>22</sup>: Նրա ստեղծագործության  
հիմնական առանցքը մարդու անհատական ու հասարակական ա-  
զատության խնդիրն է, նրա հասարակական դերի ու կոչման հարցը:  
Դրանից էլ սազմանալ հանձնելով անհատականության ճա-  
կատագրի հանդեպ այս անկասար աշխարհում («Չերքորթն») և  
գրությունը՝ արի նկատմամբ («Էլան»): Գաղափարական այս գծե-  
րով ու ձևերի խառնությամբ էր պայմանավորված անչափ մեծ հե-  
տարբերությունը գրողի ստեղծագործության նկատմամբ 19-րդ դարի  
վերջին և 20-րդ դարասկզբին:

«Անահիտում» բարգմանաբար սպագորվեցին Վինյի ստեղծա-

գործություններից երեքը՝ «Չերքորթն» դրաման, «Փարիզ» և «Էլան»  
պոեմները: Հեղինակին նվիրված իր ուսումնասիրության մեջ Չո-  
պանյանը գրում է . «Վինյի... վերաբորգած է ֆրանսական բանաս-  
տեղծությունը ոչ միայն ձևին մեջ, այլև ոգևորման մեջ. վեհությունը և  
բարձրությունը փիլիսոփայական ձգտումներն զոր Վինյի երգած է  
այդ նույնպես կտորներում մեջ, իրեն առաջ անձանոր էր ֆրանսա-  
կան բնաբին ու իրեն հավասար շատ քիչ է ունեցած նույն խոյ իրեն  
հետա եղող ամենաշրջող բանաստեղծներու գործին մեջ» (1905, թիվ 7-  
8, էջ 142):

Որ բարգմանվող երկի քննության հարցում «Անահիտը» իբրև  
կանոն գուզակցում է նրա երկու կողմերը՝ ազգային ու զեղարվեստա-  
կան (այսինքն՝ մի կողմից ժամանակակիցների խորնկ ստակա  
ազգային կենտրոն կուզող խնդիրների շուրջ, մյուս կողմից էլ՝ այն ծա-  
ռայեցնում հեռադակաևորեն մշակված զեղարվեստական իր ծրագրե-  
րին), կարելի է ցույց տալ նաև իրևոզ մի քանի բարգմանությունների  
օրինակներով: Այսպես, «Անահիտի» 1-4 միացյալ համարում  
տպագրվեց Տ. Տաստի «Ազտաագրված Երտադն» պոեմից մի  
հատված՝ չորրորդ երգը: «Պոեմի նյութը՝ բուրբ բունակալության դեմ  
կեղտակաևան տերությունների զինված պայքարի ու Երտադնի ա-  
զատագրության պատմությունը և այս իմոքի վրա ծավալվող հակա-  
միտությունը չարի ու բարու, գաղափարի ու կրքի միջև ( հենց այդ  
բախտուն է ներկայացվում չորրորդ երգում), հասկանալի է, հայ քն-  
թերցողի համար այդիական ճշմարտություն ունեթ: Բայց արդար  
չպե՛տք է համամայնել այն մարի հետ, որ բարգմանությունը նսա-  
սալն ուներ նաև հայ գրողին ներկայացնել «Իփականի» պոետիկայի  
(որի հեռաուության է ստեղծված Տաստի երկը) ստեղծագործու-  
կան յուրացման մի նմուշ՝ իրականացված խաղաղական վերածննդի  
այդ մեծ բանաստեղծի կողմից:

Կամ Էսքիլեսի «Պարոսիկները» «Անահիտի» խմբագրին հե-  
տարբերել է ոչ միայն ձևի յուրախասկություններով, կրտ ու պատկե-  
րալոր ոճով, ներշնչման բնականությամբ, ոչ միայն իբրև դասական  
ոտրերգության լավագույն օրինակ, այլև նյութով և գաղափարական  
ինքնատիպ նույնացմամբ. հեղինակը պարտված հակառակորդի՝ պար-  
սիկների շուրթերով է պանձացնում իր ժողովրդի քայտությունը: Ստեղ-  
ծագործության «պարտք» միայնատական քոնակալ ոգու հակադ-  
րությունն է հեղինակի սպառ ու համարակարական ոգու հետ:

Իբրև պատմաստական դպրոցի հեռաուր՝ Հերտիան բժակնողիք



էր ձևի, արվեստի նկատմամբ: Եվ կարծել, թե բանաստեղծի ամբողջ ճիգը ի գործ էր դրվում զուտ գեղեցիկ ձևեր ստեղծելու նպատակին, կամ առավել եւ, թե «Անահիտը» բերրվածների մի ամբողջ շարք է հրատարակում «Լեռնդաշի»՝ առաջնորդվելով միայն այս մտածմամբ, ինքրիկ սխալ է: Ժողե Մաքիս դը Լեռնդաշի բանաստեղծությունները անբերի ձևի հետ նույնքան հարուստ են կյանքով՝ «վափուկ, ներքին ներայծ կյանքով մը»: Կասարեղության ձգտող մարդկային հոգու հավիճակական արտոնները՝ դարերի միջոց, պատմական դրամատիկ դրաժշկաններում,- տես «Լեռնդաշի» հնչյունների ինքնակազմ գաղափարը: Բանաստեղծը երգում է նախնիների՝ ազատության ու գեղեցկության համար գոռված «վաղջնական ռազմիկների» փառքը, առաջադրում Գեղեցիկի և Լեռնասկանի սկզբունքները.

*Դեպ ի Փոկիտը մեծամուն ու մեկաններն դրոնց վերն  
Մայրուս Գյուրվը կը զրգրվի փայլակներով միշտ պրտակված,  
Վաղրնչական ռազմիկները երբոր դրժուխը ի իջնեկն,  
Հունաստանը կը պաշարեր անոնց պատկերն աստվածային:  
... Եվ սակայն եւ այդ փառավոր ճակատագիրն երգեցի՝  
Կրեան տակ ինչպէս ինչպէս նախասայրերը ի ինային,  
Երիտասարդ, և ողբագմած՝ դրոջագնեղներն ու կոյսերն:*

(«Նաղարկավորություն», 1998, թիվ 8-9, էջ 220):

«Անահիտ» բարգմանական գեղարվեստական գրականությունը աչքի է ընկնում նաև ժանրերի ու ժանրային ձևերի բազմազանությանը՝ պատմական բատերգություն (Շեքսպիրի «Անտոնիոս և Կլեոպատրա»), հոգեբանական դրամա («Լինյիի» «Չեքքոբրն»), էպիկական պոեմ (Տաստյի «Երուսաղեմ ազատայա»), քնարական պոեմ («Լինյիի» «Էլուս», «Փարիզ»), «այլարժանական հերիա» («Ազարի «Ողջակեզը», «Ալկետոդը»), վիպակ, պատմական, սկիզբի, արձակ քերթված, բանաստեղծական ժանրի տարբեր ձևեր՝ հնչակ, ներդոլ, էինմ, ոռոգը, փիլիսոփայական քառյակ և այլն: «Անահիտը» տալիս է նաև բանաստեղծական շարքերի գեղեցիկ և տիպական օրինակներ (ինչպես՝ Թ. Գոբլիի «Կորովներու կարտը», Ժ. Լեռնդաշի «Հուշախորձքը» և այլն): Ուշագրավ է, որ շարքերով ստեղծագործելու ձևը դարձավգրին տիրապետող դարձավ արժանախա բանաստեղծության մեջ: Ըստ Եռյան ժանրերի այս բարգմանությունը

հանդես էր իրականացնում է հասուկ նկատառումներով՝ կապված ժամանակի արժեքաչափ գրականության ժանրային կազմի յուրահատկությունների հետ, որտեղ առաջնային տեղ էր զբաղում շախմատ և մասնավորապես քնարերգությունը:

Հայոց ազգային կյանքի ու ազգային գրականության տեսանկյունից էր «Անահիտ» խմբագիրը ճակերպում իր ելույթ-գնահատումները գրական այն հանդիսություններում, որոնց հրավիրվում էր մասնակցելու ֆրանսիացի մտավորականների կողմից: Այդ գնահատումները բարգմանվում և տպագրվում էին «Անահիտում»:

Հայ գրականագիտության մեջ դիվանի իրադրություն է, որ Իզմիլի բարգմանական դպրոցից հետո արժանախա իրականության մեջ բարգմանական աշխատանքի նոր որակ և հարստություն են բերել Ա. Չոպուչյանը, Մխիթը, Ե. Գուրյանը և ուրիշներ: 19-րդ դարի երկրորդ կեսին Իզմիլում լայնորեն ծավալված բարգմանական շարժումը ժամանակի քննադատությամբ կնքում էր ազգային գարրոնի և հայ կյանքի վերափոխման լուսավորական ծրագրերից, ձգտում և հարստացում առ փոփոխի քննքնադատության պահանջներին, գեղարվեստական բարգմանությունները փորձում գործնականորեն ծառայեցնել հասարակության ընկերային, տնտեսական, բարոյական շահերին, «օգտակար և ախորժակին բերել անեմոն»: Համեմատաբար թիչ էր հնարարյուն բարգմանվող երկի արժեքն ու նշանակությունը գրական ընթացքի կազմակերպման տեսակետից: Այս մտնեցումն էլ պայմանավորում էր բարգմանվող երկերի բնույթը Ա. Գյումաշի «Երեք հրազանակիրը», «Ջետո տարի ետք», Ժյուլ Մանի «Առիթրավայր կզգին», Վ. Սկոտի «Դավանոն», Ի. Բ. Մարկի «Անտրիի մը երգեցները», Վ. Հյուգոյի «Երկաթե կրկնները» և այլն: Ուշագուրդն էր կենտրոնում վեպն էր: «Է. Նորեն բարգմանություն, նորեն վեպ, միշտ վեպ և երբեք հեղինակություն մը, այս ի՞նչ մտքի սով է,- «Դավանոնի» բարգմանության առիթով իր անկեղծ դժգոհությունն է հայտնում Մ. Մամուրյանի «բարևկաններին» մեկը»<sup>23</sup>: Հատկաճակ է, որ կյանքի լայն ընդգրկումներ ունեցող վեպի ժանրը ավելի էր համարադասախանում ժամանակի հասարակինչնական մտախոգություններին: Ինքը՝ Մ. Մամուրյանը, որի բարգմանական գործերը սովոր թիվ են կազմում «Արևելյան մամուլի» էջերում, այն կարծիքի էր, որ «Տակավան ազնվապետական գրականության ժամանակակից հարստությունը և ընթացակարգը և ինչ առաջին հերթին պետք է հոգ տանել ժողովրդական ստորին խավերի գեղարվեստական պահանջմունքներն ու ընթերցանա-

րայրյունը բավարարելու<sup>24</sup>։ Ա Արփիայումն էլ իմնականում այս տեսանկյունից է զննատուր Իգմիրի քարզմանական դպրոցի գործը։ Իգմիրյան քարզմանությունները մեծ գրքի տվին ընթերցասիրության։ ...Այդ գիրքերը հավշտակեցին ժողովարդին միտքը, հոգը ու տևական ազդեցություն մը ունեցան։ Կ. Պոլսո օրագրական մամուլն ալ օրինակ առավ Իգմիրեն<sup>25</sup>։

Հիմնականում կրթական ու հասարակական մղումներ ունեցող հայտը մեկ-երկու տասնամյակների արևմտահայ քարզմանական գրականությունը։ Այս հանգամանքն է, հավանաբար, առիթավել ղեկավարահան Հ. Օշականին 1870-1890-ականների «գարգձմանությանը նկարագիրը» անվանելու «դպրոցական»։ Բայց ահա Չոպանյանի քարզմանությունները, բննադատի համոզմամբ, նոր հետաքրքրություններ ու նոր հորիզոններ են բացում արևմտահայ գրական մրտությունում, դասում մեր ճաշակի ու տեսակետների ազնվացման կարևոր ազդակներ։ «Օտար և ի մասնավորի ֆրանսական բանի մը անխառն ու մեծ գութ-գործոցներու հայացումը նշանակալից իրություն է մեր մեջ, մանավանդ Իգմիրյան արևմտացուցեն վերջ երբ քարզմանությունները այլապես պղտոր, չլսելու համար գծում նպատակներն կը մեկնեն։ Անշուշտ գաղտնիք չէ որ ոգին կը փոխադրե թափառական հրեան կամ երբ հրացանակիրները։ Ու Չիլինիկիայանի թշվառները համադրում մըն է երկու ոգիներու։ Տարբան տարի ետք այդ մտայնորենն բնորոշ գործեր որոք էջա, Չորջյրքն, Պարսիկներ կ'անվանվին, ելիչուր համար կարևորագույնները միայն ճաշակի վաղվախան... այլ մանավանդ գաղանակներու, տեսակետներու ազնվացման։ « ... Անահիտ» բանն է ավելի տարիները, սարքերաբար, ոչ, անշուշտ, հաստատ ծրագրով մը, մեր գրականության պիտի բնծայարեին նոր ու կորովի գործը։ Կրնանք ստանց անտեղության հայաբարսի որ Չոպանյանին քարզմանությունները բան մը փոխած են մեր իրավարակին ժամ։ ...Չոպանյան այս բոլոր շարժումին սկզբնական գաղանակն է»<sup>26</sup>։

«Անահիտ» հանդեսի մեծագույն արժանիքներից մեկն այն է, որ մեզ իր աշխատակից-քարզմանիչների (Ա. Չոպանյան, Գ. Ֆեարբյան, Հ. Թիրյայրյան, Ա. Ղազվիլյան, Ա. Շառարյան, Մ. Մատենյան, Մ. Մարտոտյան, Մ. Մկյան, Գ. Անոնյան, Ա. Ղազարյան և ուրիշներ) փաներն ուղղում էր շատ հստակ նպատակադրման՝ կենտրոն հայ իրականության ու հայ գրականության պահանջներից։ Կարելի է ասել, որ ժամանակի պարբերական հրատարակություններից և ոչ

մեկի էջերում այնքան գործնականորեն, այնքան նպատակային ու հետևողական կերպով չի արժարժվել հայոց ազգային գրականության զարգացման հարցը՝ դիպված եվրոպական և համաշխարհային գրականության տեսանկյունից, որքան «Անահիտ» հանդեսի էջերում։ Այն պնդումը, թե հանդեսի քարզմանական քաղաքականությունը ասպնջողովում էր «ոչ անշուշտ հաստատ ծրագրով մը», երևույթների ոչ միշտ քնկալման ու գնահատման արտահայտություն է։

«Անահիտ» նպատակն արևմտահայ քարզմանական գրական նոր դպրոցի ստեղծմանը, որի համար ստապանյան էր գեղադատական պահանջը։

34 ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՈՒՄԱԿՆ  
ՃՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՈՒՎՈՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Հայ գրականության զարգացման ուղիների շուրջ «Անահիտ» հանդեսի ծրագրային նպատակներն ու մտահոգությունները սույլ են ընկալարային առաջադրությունը չին։ Դրանց ստեղծագործական արտահայտությունն ու գործնական իրացումը «Անահիտը» սեռում էր ժամանակի գեղարվեստական գործունեության մեջ, իր տեսական դրույթները համախո հաստատում կոնկրետ ճյուղերով, ստեղծագործական այն նվաճումներով, որ արդեն դարձակորին ձեռք էր բերել հայ գեղարվեստական միտքը։ «Անահիտի» էջերում, շնորհիվ նրա խնրարի սկզբունքային ու հետևողական քաղաքականության, արտացոլվեց ընթացիկ գրական կյանքը իր բոլոր նշանակալից ու հասկանալի կողմով։ Հանդեսի շուրջն են համախառնում գրողներ ու արվեստագետներ (Ա. Շիրվանզադե, Ավ. Խսեհակյան, Վրբ. Փափաջյան, Լ. Բաշալյան, Բ. Օսյան, Թղվառակից, Ռ. Չարդարյան, Զ. Հովհաննիսյան, Միսանյր, Գ. Վարժաժան, Վ. Թեբեյան և ուրիշներ), որոնք իրենց ստեղծագործությունը կապված էին հայ կյանքի հետ, յուրացնում ու նորովի էին օգտագործում հայ ստեղծի բնատեղծության ու հայրենական մշակույթի ավանդները, իրենց արվեստում ներդաշնակորին զուգակցում եվրոպական միտքն ու հայկական ոգին, ազգային ու համամարդկայինը։ Այդ եղիմանկներն ունեին արվեստի մտահոգությունը, հետամտն էին ձևական-նմանատեղաչափական արտահայտության կատարելության։ Նրանք ավելին բարձրարվեստ երկերի ստեղծման յավագույն օրինակներ։

Ինչ խոսք, հանդեսի աշխատակիցները նույն աշխարհայացքի կամ նախախորհրդանքների տեր գրողներ չէին, ոչ էլ հավասար էր նրանց տաղանդի չափը, կամ՝ նույնաժև ստեղծագործությունը: Սակայն նրանց բոլորի համախմբում էր մի նպատակ. կյանքը հարգապատրեմ արասցուլող, կյանքի հետ կապված կենսունակ գրականության մշակումն ու զարգացումը՝ հայության վերածնության գաղափարներով: Ինքնին հասկանալի է, որ խոսքը հանդեսում ապագրված բոլոր նյութերի մասին չէ: Վիճելի կարող է համարվել օրինակ, հանդեսի առաջին մի քանի համարների որոշ նյութերի ընտրությունը: Բայց որ «Անահիտ» խմբագրի դիվերջուշունը ազգային գրականության հարցում հենց սկզբից էլ շատ հստակ էր ու սկզբունքային, կասկած չի հարուցում: Եվ միանգամայն իրավացի էր Առն Բաշայանը, երբ հանդեսի առաջին համարի (որտեղ ապագրվել է մաս նրա «Յեղին Չայր» նորավեր) գրական բովանդակության մասին Չոպանյանին գրում էր. «Թերևս ինն կը ստատես ավելի ընդարձակ գնահատում մը ամբողջ թերթի: Ասելիս չեմ երկար գործ մը պիտի քլար: Բա՛ն մը մինակ ուշադրությունս գրավեց: Դիտելի, որ դու՛ն միայն, այնքան magistral ու ազնիվ հոգով լեցուն, խմբագրականիդ մեջ, ու ես, ին՝ խեղճ նորավերջովս, *արդի ժաման* մտախոզությունը ունինք: ...Իմ արդի սևեռում գաղափարիս քաղաղանամը, գարնանքով առաա ուրիշներուն *Հեռավորությունը: Անահիտը գրական է*, քայց՝ *ազգային* շնն կարծեր, քե մյուս աշխատակիցներդ *կամովին* որած ըլլան առիկա, այլ *ինքնարտայայտ* ես ալ շատ մը նորավերջներ ունին միջազգային ոգիով, քայց երբի մտքս չանգուցի անուգմն մեկը դրելի թեզի, զիսմայով քա ալ մտախոզություններդ նույնությունը խնիններուս հետ»: (ԱԳՆ. 151):

Հասարակական դերի խոր գիտակցությունը դարակզրի հայ գրականությունը (արձակը, չափածոն և քանոթությունը հավասարապես) ոչ միայն առիա էր հայության կյանքի ուրիշզգական պատկերները, արևմտահայ աղետալի իրականությունը, ոչ միայն արտագրում էր ջարդերի ու մտնիվան սարսափները, սովի, գաղթը, պանդիտությունը, ազգային ու ընկերային ճնշման մյուս կողմերը, այլև որոնում էր փրկության և ազատ կյանքի ուղիներ, հնչեցնում բողոքի ու պայքարի երգը, մի խոսքով՝ ծառայում ժամանակի ազգային և հասարակական գաղափարներին: Ժողովրդի գոյության, հատկապես արևմտահայության քաղաքական քայտի հարցը դառնում էր գրականության հիմնական աամցքը, խորագուն մտախոզությունը,

նպատակն ու կակետը:

Այս տեսակետից ԽՆՆ է ամենից հստականշական «Անահիտ» հանդեսի զեղարվեստական էջերի համար: Դրանցում զերիշխող արմատությունը պայքարի ու հերոսացման կոչն է, հույսի, արիության, մարտման, գալիքի լավատեսական ոգին, որ հանդեսի պաշտման պահանջարկագույն սկզբունքն էր առեսասարակ, և որը այդ շրջանում այնքան անհրաժեշտ էր հայ ժողովրդին: Իր զեղարվեստական էջերով «Անահիտը» ժամանակակիցներին էր բերում տոկալու և տեսլու կամք, դիմադրող ուժ, ազատասիրության մեծ տնչչ, հայրենասիրություն, բողոքում *հերոսական-հայրենասիրական ոգին*: Այսպես: Արևմտահայ քանատեղծության ընդհանուր լուրյաան մրնորոտում Աթամանթոն և Վարուժանը հզոր արտերթով երգեցին հայկական ողբերգությունը, հայ ժողովրդի սառապանքն ու ցավը, քայց և նույնվիսի ուժով նրանք սարիտղեցին հույսն ու հերոսացումը, ստեղծեցին գալիքի պայծառ տեսիլը: Միշտ է, «Անահիտում» Աթամանթոնը արագրված ստեղծագործությունները («Հանգստի իրիկուն», «Հոգևկարքի իրիկուն», «Անտելոցի համախանք», «Մահերգ», «Հոգմորյուն» բերրվածները, «Քարիկյան նորեր» վերաաաությանը արձակ էջերը) առավելապես առասպանքի ու վշտի զեղարվեստական արձագանքներ են, արհավիրքի հոգեբանական ապրումի ծայրահեղություն շիկացած պատկերներ՝ անգամ «հանդարտ հոգևկարքի» սարսեցուցիչ տեսիլներով, սակայն զովքար չէ նկատել, որ հենց այդպիսի պատկերներով քանատեղծը մյուսում է քարքարու ոգին, մարդկային-քարայական բարձր արժեքները կործանող ուժը: Բանաստեղծի հոգում հայրենական ցավից քայլ առ քայլ լսաաուն է ազնիվ ցաաունը.

Ո՛վ զիտե, հովերը է՛րք, է՛րք պիտի դայրին,

Ու մինչև էրք ազաղակները պիտի շարունակվին  
Լքված անատոններուն,

Հեռավոր ճամփաներն անդին:

...Ու մինչև է՛րք նայվածքները պիտի շարունակվին  
Լքված հիվանդներուն,

Հեռավորադար արդեն մուսած աստղերն անդին:

Ու այս քաղթը, այս անհուն

Հոգևկարքները ամբողջովին,

Ու ցավերը տրամած անասուններուն,  
Դանդաղորեն, դանդաղորեն, իմ ներսիդն կը փոխադրվին:

(«Հոգեկոտորի իրիկան», 1899, թիվ 12, էջ 371-372):

Միամանրոյի այս բանաստեղծությունները ամփոփվեցին «Հոգեվարրի և հույսի քահեր» հատորում (1907): Գրքի երասարակորյան առիթով «Անահիտում» տպագրված գրախոսականում անդրադարձնալով այն քերականներին, որոնցում Միամանրոն հանդես էր գալիս իրիկ ողբասաց բանաստեղծ, Չոպանյանն իրափասգիրքին նկատում է. «Քայքայ անոր որ Յարճանայանի ամբողջ գործը չեն ճանչնար, այդ կտորներն պետք չէ ներառելն, քի այդ բանաստեղծը ներկային ցավը ողբալու կամ անցյալին նիշտասկներուն քաղցրորյան ոգւումովն արտասովելու մեջ համեցող մըն է. իր երգին հիմքը՝ տարբերումն է պայքարին, ճկն է վերսիմն, ավետումն է անհրաժեշտ հաղթանակին» (1907, թիվ 3-5, էջ 90): Ընթերցողներին համոզելու համար Չոպանյանը ընդարձակ մեքերություններ է անում բանաստեղծի ռազմերգական-հայրենասիրական էջերից, ավելացնում, որ չնայած «Հոգեվարրի և հույսի քահեր» գրքով Միամանրոն մեզ է ներկայանում որպես բնորոշակ ( ի տարբերություն նավարդ երկու՝ «Գյուլգազներն» և «Հայտնողներն» գրքերի, որոնք «երևան հասած էին ճշմարիտ դյուցազներգակ բանաստեղծ մըք»), սակայն այս դեպքում դարձյալ «դյուցազնական ռազմերգը չ'ոչանար որոտալու, իո՞ն ալ, կազմելով միշտ գերազանց երգ ար բնորոշ»: Եւ այն ոգով է շնչում Միամանրոյի նաև «Դյուցազներն» գիրքը (1902): Ընդգծելու համար գրքի գաղափարական այս միավածը՝ Չոպանյանը նրանում զետեղված բանաստեղծությունները վերլուծում է այն սկզբներին համեմատ, որ պայմանավորում է գրքի կառուցվածքային-ծրագրային նպատակը: Մարճարեղեն հույսի հակայսուև ոտսիլիքաների և երգողի հետ նա անցնում է հերոսացումի նվիրական ուղին՝ «Հույսի ճանախաներից», «Հանգրվանից» մինչև Արդարության, Եղբայրության, Լույսի վաղորդայնը, այն վաղորդայնը, որ հանգրվան էր ու սկիզբ նոր մարտամենքի, նոր ոգորումների համար: Միամանրոն ստեղծում է իր ժողովրդի հավերժական ճանապարհի երգը:

Յավի ու հանույթի, ստապաների ու հավանի, այդուհետ իրականության ու երազի, բարբարոս ուժի և զեղեցկության հակադրության պատկերներով են ստեղծվում Դ. Վարուժանի քերթողական էջերը:

«Չարդը» պոեմը տպագրվեց նախ «Անահիտում», ապա առանձին գրքով: Մտքի մեջ հյուսվում է «սև կրամանը», մզկիքների քակերում եղվվում են մահակներն ու կացինները, փակվում են դեռպանական դռները: Ապա... «Կատարածի փողը տխուր կը հրչնի...»: Նահատակություն, հալածվող ու անպաշտպան Հայրենիներ, «մահվանը լեցված» նալվածները: Բայց սնա քարոյի վայրագ ու արտոնցուցիչ այս մղճախանչում՝ անհական ցատուժի, ազատության պայքարի ու գեղեցկույան: Բանաստեղծը տեսնում է նոր արշավախոսներ, պանծնում նոր ճնվող հերոսին, նշանում ասպետներ «նոր որդիներն ստեղծիլ» և «Հարց նմերին (Լույսունքու տպագրած)», որոնց սնազնացող քայլերից պիտի սարսի բնորոշյանը, Աստված: Եվ մեր նահասակներն անգամ պիտի կենդանանան ու անհանրը

Պիտի սպասեն վարդաեղեղ գալուստին  
Արշալույսի մ'Արշալույսի մը՝ որուն  
(Հավատացելիք իճճ, Մալքոնր)  
Ես ոտնածայնը կ'անեն...

(1907, թիվ 10-12, էջ 181):

Առանձին էջերում Վարուժանը ստեղծում է նաև այդ հերոսների կերպարները՝ «Առևանգվել», «Արմենուիներ»:

Բայցի հիշված գործերից՝ «Անահիտում» Վարուժանից տպագրվել են նաև «Հայ քիչկը», «Կարմիր հողը», «Ավաջարտոսիին», «Չքննյալ ես դու ի կանայս», «Մեր կոտնկը», «Առային մեղքը», «Աղբյուրը յայտին», «Անևտիլի», «Հրաշքին սուրյուրը», «Յեղսկան ուղին» («Հայրենիքի ուղին»), «Առում աստվածներուն» բանաստեղծությունները:

Եվ Վարուժանի, և Միամանրոյի չափածոն բնորոշվում է խոր մարդասիրությանը, ժողովուրդների ու մարդու ապագայի մտանդություններով: Այդ չափածոյում, Միամանրոյի խոսքերով, *պայքարի վճիռ և ապրելու անսահման սեր կա՞*՝:

Այս խոսքերը իրի բնական կարող են ծառայել «Անահիտի» գեղարվեստական էջերի և ընդհանրապես 20-րդ դարասկզբի հայ գրականության համար:

Դեպի պայքարը, ռազմերգական-հայրենասիրական գրականությանն ունեցած «Անահիտի» դիրքորոշումը բացասորելու իմաստով բնորոշ է նրա վերաբերմունքը այն հեղինակների նկատմամբ, որոնց ստեղծագործություններում դա իմանական որակ չ'էր կազմում:

Այսպես, Վահան Թեբեյանի քերթվածների առաջին ժողովածուն՝ «Նոզերը» (1901), մասայանն է առավելագույն անհատական ապրումների ու տազնապների, սիրո ու բնության պառանկական երգացների: Մակայն գիրքն ավարտվում է մի վերջաբանով, որը, ինչպես նկատում է Չոպանյանը, արդեն նշմարել է տալիս նոր որոնումների հայտնությունը, պատանկական փուլի ավարտը և «անցքը առնական մտածումներու շեփարտմին»: Այս ճգառնը բնական է դիտվում այնպիսի բանաստեղծի համար, որ «կը պատկանի ծայրահեղ դժբախտություններով մը բեռնավոր ազգի մը» (1902, թիվ 3, էջ 48):

«Անահիտի» սկզբնական շրջանի համարներում (մինչև 1901-1902 թվականները) Թեբեյանից Վահան Տիրանյան և Սուրեն Տիրանյան ծածկանուններով տպագրված ստեղծագործությունների մեջ գերիշխողը անհատական ապրումներն են, լուս ցավերի ու անդամայի կորուստների, սիրո, մահվան ու բնության նվագների՝ նորը գգայնություններով բնորոշված, թեև նկատվող ազդեցություններով: Ինչպես «Իրիկուն», «Հլիշտավրը», «Տառն», «Երկու ոգի», «Առ Վերլեն», «Անտառին մեջ» արձակ ու չափածո քերթվածները: Բայց ասա 1902-ից հետո տպագրվածներում անհատական ցավը նկատելիորեն տեղի է տալիս հայրենական ցավին: Ստեղծվում է տխուր պատմությունը վայրենի ու անմարդկային հարածներների ( «Տեսարանը. Բանտի վերտույններ», պատկեր), արքանում է կոտորածների տեսիլը («Ֆարսուկը», պատկեր), բանաստեղծը տանջվում է հայագառ գյուղի վրա կախված արյունա իրիկանմանու վերտույնից («Վայրեն հակումը»): Ծովում է անասլարեն ու անդինայրդի ցավը, և իբրև ինչու արձագանք՝ խիզախության ու յողորմ կյուր սեղանդներին («Չավակա»):

Մի շարք բանաստեղծություններում էլ Թեբեյանը ողբակի պայքարի երգվեր է կարողում՝ նիշեցնելով նախնիների փառքը, ստեղծելով ինքնագոծ քաջերի տեսիլային պատկերներ ( «Կորոքը», «Առաքալով», «Գերեզմանը», «Մոտայց անասալին գեղորնը», «Չոն», «Գունն ես արքա...» և այլն):

Գծվար չէ նկատել, որ Արտաշես Հարությունյանի բանաստեղծություններից հանդես բերում է ոչ միայն այն էջերը, որոնցում ծավալվում է գյուղաշխարհի, բնության ու սիրո, անճնական կյանքի երգացներով ապրող բանաստեղծի երևակայությունը («Երևոզակ տունը», «Օրս», «Որբան գգաստ»), այլև այնպիսի, որոնցում գոյում ես իր ժողովրդի բախտի ու ճակատագրի համար հեղինակի տազնապը

(«Սիրուս անբավ սուգերով», «Արյունու իրիկուն», նաև՝ «Արվագիծներ»): Հարությունյանի չափածոյում յողորմ շեշտերը հաստ, կորուկ, քնդվող չեն (բնատիրոջ մեջ ապրող բանաստեղծն այլ կերպ չէր կարող): Մակայն նկատելի է անբուր արտոնջը, սասապների ցավը, որ վարակել է հենց իր մեղմության մեջ, «անկարելի արցունքներում» և «անճնուր սուգերում».

Սիրուս անբավ սուգերով է բեռնավոր, Այն հեզմունք դեռ պետք է որ ես ծախմ, Անկարելի արցունքներում պետք է որ ես փայլայան հեշտին ցավը մտերիմ:

(«Սիրուս անբավ սուգերով...», 1909, թիվ 5-6, էջ 107):

«Արյունու իրիկունը», որ անասլարույս հեղինակի լավագույն քերթվածներից մեկն է, գեղեցիկ բնանկարն է գյուղական մայրամուտի, քայց՝ արյունու ու ավերված գյուղի:

Շատ բնորոշ է, որ իտալական արդի բանաստեղծության դերերից մեկի՝ հայագգի Վիգորիս Ալգանուրի չափածոյում Չոպանյանը փնտրում է այնպիսի էջեր («Առսինն տակ», «Իրիկուն», «Ընդ գարուն» և այլն), որոնցում բանաստեղծը «մասաք, բնագրարար, հալու պե՛ կան գեր կարծես Հայոց համար՝ գգասք ե՛» (1904, թիվ 12, էջ 173): Եվ ապա, «յնայս Ալգանուրը «այ Տառնապարք» ստեղծվին չի երգել իր քերթվածներում, սակայն «մեզի կը բլի թե յողորմ, քնդվզման, հուսաստ ու համա պայքարի էջերուն մեջ հայ արյունն է որ մեծագույն կ'երգե» (1903, թիվ 2-3, էջ 25):

Հույսի, արիության, հերանական պայքարի ու մարաման հոգեբանության պատկերներն տեսելնայի առանձին հետաքրքրություն են ներկայառնում նաև Ալեքսանդր Շատուրյանի՝ նոր գարունների սիրով ապրելու, հուսաստ և գործելու բանաստեղծական կյուր («Չմրան երգ»), Չարի, Բոնության և Բիրտ ուժի դեռ լեռնացող Անրոխի պանծացման շարանյանական տալերքը («Անրոխը»), Երվանդ Օսյանի պատկերների ու պատմվածքների («Հայ գաղթականությունը», «Հաշտարունը») հայրենասիրական ու ազատասիրական շեշտերը, Լևոն Բաշայանի («Ցեղին ծայրը») և իշկատիցու («Արև տար, մահ խրկե») հոգևոր մարաման փիլիսոփայությունը և այլն:

Այո՛, «Անահիտի» աշխատակից գրողներն ու բանաստեղծները աշխարհայացքային տարբեր դիրքերից են բնուն հայ կյանքի

խնդիրները, տարբեր լուծումներ առաջադրում ազգային գոյության հնարավորություններին: Մի դեպքում դա բուն պայքարի կոչ է, մյուս դեպքում՝ խաղաղ աշխատանքի երավեր, հաշտողուն սուր, գրկ է բառ երրորդության խորագույն փիլիսոփայություն: Սակայն բոլոր դեպքերում առկա է լավատեսական ոգին, գալիքի վախճանը:

Կյանքի մշակական նորոգման հավանու ու բավաստությունը հայ ժողովրդին ուղեկցել են նրա պատմական կյանքի անգամ ամենադառը փորձությունների շրջանում, դարձել բնավորության գիծ, հոգևորություն: Հայերը «մշտն պահած են ինչ որ խելությունն է կյանքին, հույսը-հույսը՝ լավագույն ազգային մը, արդարության վաղորդայններում» (1907, գրվ 1-2, էջ 24): Տվյալ դեպքում «Անսիրտի» գեղարվեստական գրավանդության մեջ այդ ոգու արհասպետը իրավունք է առնիս խոսելու ժողովրդի հոգևորության և գեղարվեստության այն կապի մասին, որ խորապես բնքնել է հանդեսը և արտահայտել իր գեղարվեստական էությունը: Այդ ստեղծագործությունների ուշադիր վերլուծությունը պարզում է «ազգական ու հոռեղեն արժեքների» այսպիսի «առերեսման» (Պ. Սևակ) նաև հետաքրքրական այլ նրբերանգներ ու առումներ:

Այսպես, Միամանրյի չափածոյում ամսանման բախիվ կա: Կա վշտի ցավ է ստեղծության կոչ: Թ՛վում է առաջապանքից ծնված վրեժի զգացումը սպառնում է այլևս ոչ մի սահման չճանաչել: Բայց սեսա, հենց «Դյուցազներեն»-ում «Հարթմակեն հետս» նոր բացվող արալայանների դիմաց հանում է Երագողի կերպարը: Նա թեղում է գրություն ու ներման արամադություններ, ինչպեսզում է, որ իրենք եղբայրության և ազատության զինվորներ են, սուր են վերցնում ստիպողաբար և իրենց «մայրերում գիրկը ժամանելի առաջ» քաղության շրի սրբագործող աղիքների մեջ մարդու իրենց «այդուհու դաստակները»: Հաղթանակից հետո նրանք սրերի պեսո շունեն: Հեղինակն ստեղծում է ընդհանրական կերպար, որ խորհրդանշում է հայկական լայնատես հայրենասիրությունը, հայոց մարդասեր հոգին:

Բարբաբառ ուժի և ստեղծագործ ոգու հակադրությունը և այս կերպի վրա խաղաղ աշխատանքի ու ստեղծման փաստարևումը՝ որպես հայ մարդու էությունը խորհրդանշող սկզբունք, Վարուժանի չափածոյի հասկանալիան կողմերից մնակ է, որ հոգևորական շատ մտքը մանրամասնելով է արտահայտվել, օրինակ, «Յեղական ոգիին», «Ջարդը» և «Արննուտիին» գրվածքներում:

Թեև գեղարվեստական առումով քույր, քայք դարձյալ ազգային

բնավորության գծերն են մարմնավորում Մինաս Չերազի «Օհան Բեկ» և «Տանկուտի» պատմավածքների համանուն հերոսները. հայ մշակի արժանապատվությունը բարձր պահելու համար Բեկը հպարտորեն ընդունում է մահվան դատավճիղը, իսկ Տանկուտին կյանքի գնով փրկում է քույրը նեղեղիին, որ հոգ ու մոխիր էր դարձել իր հայրենի տունը:

Միամանրյի և Վարուժանի հայրենասիրական բանաստեղծության ուժը ներգործում էր, հզոր, ազդեցիկ: Այդ բանաստեղծության հետևողներն էին և նրա օրինակով ստեղծագործում էին շատերը: Լևոն Էտանյանի, Հ. Սերաստացու, Ա. Տատուրյանի և Մ. Մալախյանի հայրենասիրական էլեբր այլի են ընկնում անմիջական սպորտի ու ներշնչման ուժով: Այս հեղինակները խորապես մտախոչ էին հայ կյանքի խնդիրներով, գիտակցում էին բանաստեղծի իրենց կոչումը, սակայն գեղարվեստական այն ընդհանրացումների չկարողացան հասնել: Բոլոր դեպքերում «Անսիրտի» մտտեցումը որոշ է. այդ բանաստեղծների քերթվածքներից հանդես բերում են ներկայացնում է հայության կյանքի պատկերները: Ի հակադրություն աղետների իրականության՝ այդ գրողները դիմում էին հայ ժողովրդի անցյալին, գյուղաշտարիի հովիերզական պատկերներին, նամանակի թափանցումներով վերստեղծում հայկական կյանքի գեղեցկությունները, այն «փրկանությունը», որ սովի էր ներդաշնակում ժողովրդի ոգուն ու երագանքներին, ինչպես՝ Հրանտ Վարդապետյանի «Մորթիքի աղիքը», «Հարսիք» և «Կանաչ կտրակ» քերթվածքները, Պարույր Ժակոնյանով հեղինակի «Գարունի եղբ» արձակ բանաստեղծությունը:

Բնեղող ժամանակաշրջանի հայ գրականության հիմնական բնասերներից մեկը մարդու և հասարակության փոխադարձություններից է, մարդու խնդիրը: Ներկայացնել մարդուն իր հոգևոր ամբողջությամբ, պատկերել նրան կյանքի ամենաբազմազան հարսերությունների մեջ, աշխարհի, մշակապրի հետ, ընկերային ու հոգևորական ամենաբարձր ամշտություններով, այսպիսին էր գրավեստության առաջադրվող պահանջը: Իսկ դրա նպատակը՝ վեհացնել ու բարձրացնել մարդուն, նրան բերել իր գոյության մարդկայնորեն ճշմարիտ, իրական էությունը:

Բնական է «Անսիրտի» էլեբրում տարբար գեղարվեստական գործերում հեղինակները այսպիսի մտտեցումներով են դիմում այս խնդրի գեղարվեստական արժարժանքներին: Այսպես, Ե. Օտյանը

(«Գործի մարդիկ», «Մտտայ Լեռին», «Քարի դահիճը») գնում է դեպի սոցիալական խորացումների գեղագիտությունը, իր բնագիտության պարբերազանց մարդկային բնական էությունը խաթարող հասարակական բարքերի դեմ: Ինտրիկս չպետք է մոռանանք Օտյանի ինչպև գրավածքներում հոգեգնական շատ նուրբ շերտերը: Ինչպես, օրինակ՝ «Քարի դահիճը» պատմվածքում մի բանի նախադասությամբ ներկայացվող դահիճի կերպարը, որ ըստ էության *հակամարդ* տիպ է, մարդ, որն իրեն «բարի դահիճ» է համարում, որովհետև «հաճությամբ» չէ, որ մարդկանց կախում է, որովհետև ինչպես ինքն է ասում՝ «Լենին անգամ, - և այս քառասուներկուրորդ անգամն է, - մարդ կախում օրո՛ կերպար չեմ կրեմար ուտել» (1899, թիվ 7, էջ 216): Երուխանի («Համրին վրեժը», «Հուտուրքը»), Ջ. Նրայանի («Կարծրի շահաբքը», «Մահը», «Անճանապատի տարքները», «Յաշմարք»), Ա. Չոպանյանի («Կույրեր», «Պոպոկի գեղջուկին պատահարը») գործերը կառուցված են երևույթի հեղինակական գնմարդու հիմքով:

Բարդարական նյութի հիման վրա հոգեբանական ուշագրավ գուգահեռներ է գծում Ա. Շիրվանզադեն («Երոճանվածը») շոշափելով նաև հայրենիքի հանդեպ պարտքի զգացման, մարդու կուճան ու դեքի հարցեր: Ա. Չոպանյանը հենց այս կետում է ճանաչում («Դեներք Շիրվանզադե») Շիրվանզադեի տաղանդի հիմնական հասակախշենքից մեկը՝ կերպարի ստարկայական, անաչառ հոգեբանական վերլուծության բարձր կարողությունը: «Հոգեբան դիտող՝ ամեն բանն առաջ», - նրա մտայն գրում է բնատարա և ապա «Երոճանվածի» առիթով ավելացնում, որ Շիրվանզադեն ոչ թե իբրև գրագիր գործի, այլ իբրև գրագետ, «փրք հոգեբան-գեղարվեստագետ» սյուսի նկարեր մեր ազգային-հեղափոխական կյանքի ճգնաժամը»: Ինչը և իրավասագվել է գեղարվեստական մեծ վարպետությամբ (1909, թիվ 7-8, էջ 146, 148):

Մեծ բազարի արտաքին շրեղությունների, Նորո Դամի՝ Վսիկի ու Կեղեցկության ապև Սիամսոնոն բացում է քաղաքի իրական ու մտայն պատկերը՝ «Խեղճության քաղաքը», «Գիշերային Բարիզը» («Փարիզյան բոճիկ»):

Իրականության մեջ մարդու անկատարության զգացողությունը բերում էր նաև հեռացման, հասարակությունից օտարման, մեհակության, այլ եզերքներում հանգստություն ոլունելու արամադություններ: Եվ եթե առավել տաղանդավոր բանաստեղծները կարողացան հարստահարել բնեայի բնճեսած դժվարությունները՝ սանդղելով

գեղարվեստական մտածողության նոր որակ, ապա երկրորդական, երրորդական հեղինակներն ընկան հուշետետության գիրկը, սուրբ ավելին անհույս ու անամոր բայնժին, ճշուշտ ու երեքային բանաստեղծությանը այս հիմքի վրա մեծ չափով օգտվելով եկրպական նորագույն արվեստի փորձից:

Հասարակությունից հեռանալու խտեսկյանական արամադությունները («Ժամ ուղին», «Ջանգլի») հայտարարում են աշխարհի զգացման մի նոր աստիճան. բանաստեղծն իր անդր ոտքեր է հայանում աշխարհի կարգ ու սարքի դեմ: Նա մարգարե է, որ իր հուգում կրում է ողջ տիեզերքը, այրվում է մարդկությանց ցավելով: Բայց սեսա մարդու քաղաքական նկարագրի դեմիոքանական որոնումները («Նա», «Մեղրլան-Նապոլեոն») ին են « մեծ լուրսայն» մեջ մտացման ու մեհակության դատապարտվածի սագուայներով:

Վահան Մալեզյանն իր երեչջումները փնտրում է բնության ու սիրո թաժմայից երագների մեհության մեջ («Մախափիկ», «Հնկող կանքերը», «Գեճ բնագրներ», «Մեկնումներ», «Փայտեր», «Չերքեր» և այլն), և դրանում է նա ստեսում բանաստեղծի բուն կույունը<sup>28</sup>: «Անահիտում» ապագրված նրա մի շարք բերքվածների մեջ, սակայն, դժվար չէ նկատել մարդու ճակատագրի համար անհանգիստ բանաստեղծի կեցվածքը: Ավելին: Բանաստեղծը փորձում է խղարան, թե ոչ աներածելա իմությունը ու տաղանդով, այդ կյանքի փիլիսոփայության մեջ: Նա ոչ միայն իր կարելցյանքն է հայանում «Եր ինկածներու» հանդեպ, այլև նրանց դժբախտ ճակատագրի «հանցանքը» վերագրում է ընկերության անարարք և բիրտ օրենքների («Ձուներ», «Մարտակետներ»):

Արշակ Չապանյանի Տերվիչ ծածկանունով բանաստեղծությունները («Մեկնում», «Յալգերգ», «Յուրը», «Ջանգլուրը», «Հնչյակ», «Նամուս» և այլն) համակված են անհույս արամարությունք: Բանաստեղծը մերժում է այն իրականությունը, որտեղ ստան ու կեղծիքն են իշխում, որտեղ ուժի իրավունքով Չարն է միշտ հաղորեն կանգրում: Մարդ երագում է «մեկնի, մեկնի հավերժորեն» («Ջանգլուրը»), մերթ էլ՝ ժառանգում բիրտ ուժի, սիրող օրենքների դեմ, իսկ աշխարհի նկող մանկանը պատգամում է նոր կյանքի խորհուրդը, որ խրեմուրդն է գրության ու սիրո («Նամուս»):

1890-1900-ականներին ազգային վիշտ, դառը կորստաներ ու ապստարյան ուղիների անողջությունը ավելի էին խառնում գրական ստագրեք իշնող արևնատայն բանաստեղծական այն սերնդի

ստեղծագործության մեջ, որ ոչ մի ճանապարհ չէր տեսնում իրականության մոճավանքից դուրս գալու համար: Ստեղծվում է կյանքի ու մայրության երգը, մարդասպաց վիաստության, աննշան պարունմների և տրստամ երգերի «պոեզիան»: Բանաստեղծը երայրաբար ողջունում է ասրիներ շարունակ մարդկանցից հեռու, ապանճնության մեջ ապրող «մենավորին», հուսահատված վշտերի ծանրությունից և ուժ չգտնելով դարձր հաղթահարելու՝ տրվում է վերահաս արեւի մոճավանքին (Վ. Սվամյան, «Մենավորը», «Ժամանակ», «Օձակույթ», «Արևու մուտք», «Ազգափ», «Անճրևու օր», «Ունիպեղ» և այլն), ապավինում անենափրկիչ մահվանը ( Ոսկի Ա. Չարչյան, «Աստղը»), կամ ողբգրի անորոշ ու արքաամ տեսիլքներից (Խոսրով, «Մտքի խառնարանն»): Այսպիսի էջերը «Անսպիտում» քիչ քիչ են կազմում և հրատարակվել են հիմնականում հանդեսի առաջին երկու-երեք ասրիների համարներում: Առաջափի, իրավացի են այն քննադատները, որոնց կատարողության «Անսպիտում» ապագրվել են նաև երկրորդական, երրորդական հեղինակներ: Բայց դա անխտասպիկ էր: Նախ՝ անխտասպիկ էր գրական այնպիսի մրճնություն, երբ այնքան խայտարեկան կերպով իրար էին հյուսվում գրական տարբեր ուղղություններն ու հոսանքները, երբ, Վարուճանի խոսքերով, հայ գրականության հրապարակի վրա «տարդի պե» ծախվել ու տակավին ծախվում էին բոլոր «eliche» գեղեկությունները (ԿՎՆ-127): Այսպե՛ս են այդ հեղինակները չափցին գեղարվեստական մեծարճք գործեր, սակայն կարևոր դեր կատարեցին՝ մի տեսակ ճախապարտաստելով մեծ առաջնգրների մտարք գրականություն, ստեղծեցին գրական մրճնություն, արտահայտեցին գրական որոշակի շրջաններին հաստիկ հոգեբանությունը, գեղարվեստական մտածողության ախպը: Եվ չի բացառվում, որ այդպիսի գրողների ստեղծագործությունները «Անսպիտում» ապագրվում էին հաստիկ միտումով՝ գրական կյանքի ընթացքը իր ամբողջական ու ամփոփ նկարագրով, իր բոլոր յուրահատուկ կողմերով ներկայացնելու դիտավորությամբ: «Անսպիտ» այդ էջերը ուշագրավ են գրապատմական տեսակետից:

Պախաս կարևոր դեր չի կատարել մեկ այլ հանգամանք: Տասնամյակներ հեռու, երբ Չոպանյանին նկատել էին առախ, որ սկսմակ հեղինակների նկատմամբ նրա բարյացակամ վերաբերմունքը երբեք են հասել է նաև չափազանցությունների, վերջինս պատասխանել է. «Պետք է, պետք է, անբերրի հողի մշակ կ'ուզեն դառնալ, բոլ

դանան»<sup>29</sup>: Եվ արդյո՞ք նույն մասնագործությունը չի առաջնորդում Չոպանյանը հեռ այն դեպքում, երբ իր հանդեսի էջերում ապագրում է նաև այն երկնակների գործերը, որոնք քե՛ն չունեն գրական մեծ ձիքեր, սակայն առգրված էին անկեղծ ճգնումներով, գանճվում էին կամ արհավիրքի երկրում, կամ հայրենի եզերքներից հեռու, պանդուխտ էին ու անհայրենիք և նրախ պետք էին գտնող բոքիկ հանճնելու իրենց սատապանքն ու ցավը, բախիճն ու կարողը, խտելու հայ ընթերցողի հետ, քեկուգ երբեմն անարվեստ, անպատմա խոսքով, քեկուգ մշուշում ու անորոշ արամագործությունով, բայց միշտ անկեղծ ու պարտոմ:

Բոլոր դեպքերում, դրասակգրի գրական բարդ մրճնություն «Անսպիտ» հանդեսը դիմեց դեպի բարճնարվեստ գրականության ուղին, դեպի ճշմարիտ արվեստի այն հայտնությունները, որ քերում էին Վարուճանը, Միամանրոն, թերեխյանը, Չարդարյանը, Նասայան և ուրիշներ: Թերևս որոշ վերապահությամբ պետք է ասել, քե՛ «Անսպիտում» իրենց գրական մուտքը սկսեցին հեռագայում արդեն դասական դարճած մի խումբ գրողներ՝ Միամանրու, Վարուճան, թերեխյան, Նասայան և այլը: Այդ դերն «Անսպիտ» կատարեց ժամանակի մի շարք պարբերականների հետ զուգահեռ:

Հանդեսում ապագրվել են Միամանրոյի առաջին բանաստեղծություններից մի բանից, Վարուճանի բանաստեղծական փորճերից «Հայ բոխչկը», «Առանգիչը», թերեխյանի հայերգության առաջին օրինակները, Չարդարյանի քնարական արճակի ճնուշները («Ճախարակին քեկրվածք», «Հերթաք») և այլն: Չասելի Նասայանը («Անսպիտում» ապագրած արճակ բանաստեղծությունները («Խարմիր պղպեղ», «Անճնասպակ տղաքներք», «Մախք», «Յուշմարք») խորիդահայ գրականագիտության մեջ (Ս. Արզումանյան) դիտվեցին դեպի մեծ գրականություն տանող ճանապարհի այն ճշմարտություն, որոնք «խորիդահայում էին շնորհաշույն արճակագրուտում մուտքը հայրենական մշակույթի սեմին ներս»<sup>30</sup>: «Անսպիտ» բացառիկ դեր կատարեց նոր սերնդի գեղագիտական դաստիարակության գործում ոչ միայն ընդհանուր գրական ընթացքի առնագրային խնդիրների ընթերման և արտահայտման իմաստով, այլև քննադատական վերլուծություններով ու գնահատումներով: Թերեխյանի, Միամանրոյի և Վարուճանի բանաստեղծական առաջին ժողովածուների առիթներով «Անսպիտում» Չոպանյանի հեղինակած՝ հողված-գրախտասկանները՝ «Աստան թերեխյան», «Հոգեր» (1902, քիվ 3), «Ատոմ Յար-



ճանյան, «Գլուցագրողներ» (1902, թիվ 3), «Հոգեվարքի և հոյսի ջահեր» (1907, թիվ 3-5), «Դանիել Աբուսուման, «Մարտուններ» (1906, թիվ 6-7) եղան ու մտնո են այն բանաստեղծների գրական ճանապարհի առաջին հիմնավոր ուղեցույց-գեոմետրիայի գրական ճանապարհի առաջին հիմնավոր ուղեցույց-գեոմետրիայի վերլուծության ծանոթ սկզբունքներով. գրական և հասարակական ի՞նչ միջավայրում է ձևավորվել ու զարգացել գրողի ստեղծողը, ինչպիսի՞ ինքնատիպ գծերով է այն հասկանալիում, ի՞նչ կողմերով է կապվում իր մայրաքաղաքների ու ժամանակակիցների հետ և ի՞նչ արժեքներ է վերահասցնում հեանդողներին, գաղափարական ու գեղարվեստական ի՞նչ լիցքերով է հարստացնում հայրենական և համազգային արվեստի ստանդարտը: Հատուկ խնամքով վերլուծվում են հեղինակների «*Թերթերի*» պատկերավորումները: Եվ երբ բնագրային առանձին դիտարկումներ կարելի է վիճարկել, ապա հիմնական գծերում դրանք դիպում է ճիշտ են բնորոշում երեսասարդ բանաստեղծների արվեստի առավելություններն ու բերությունները: Այդ է վկայում հենց իրենց՝ հեղինակների վերաբերմունքը դեպի բնագրային գեոմետրիան, որոնք հաճախ հիմք են ափել վերջիններիս կարևոր և դրական փոփոխություններ կատարելու իրենց գրվածքներում: «Դարիչյան նորերը» Չեր թատիկն պես, ափելի երկարացի ուրիշ մտեր արվածներով», հայտնում է Սիամանթոն (ԳՂՆ-286): Անտոյով Չոպանյանի խորհուրդներին՝ «Անհիատում» ապագրիլուց առաջ «Արմենոլի» պոեմի արձակ շարադրանքը Աբուսումանը վեր է ածել հանգավոր խոսքի, հիլիկ նաև առանձին արտահայտություններ, անճիշտ բացատրություններ: Փոփոխություններ են մտցվել նաև «Օրինդայ երգի կ'հանայս...» (որի վերնագիրն է դեպի Չոպանյանն ինքն է բնարկել՝ Աբուսումանի ինքնադրամը փոխելով «Հիլ» սխաղոթը, «Ջաղդը», «Հայ բիշկլը» և այլ գործերում: «Չեր դիտարկումներին սեպակ օգտակար են», խոստովանում է Աբուսումանը (ԳՂՆ-43) և ապա «Անահիտը» ստիպող ավելացնում է «Ավերդը է ըսել թե միակ հայ հանդեսն է, որում անհամերկ կապատեմ...» (ԳՂՆ-122):

Մա այն դեպքերից է, երբ, Չոպանյանի խոսքերով սասած, բնագրային «տունեն է», խառնվածքի և աշխարհայացքի «մոտոությունն» ունի գրողի հետ, երբ իր դիտարկումներն ուն հասնում է առավելագույնին՝ «հարաբերական ճշգրտությամբ տեսությանը»: Այս հանգամանքը նպաստում էր, որ նշված հեղինակները ափելի ստոր կապվելին հանդեսին և իրենց աշխատակցությունը ոչ միայն նոր հմայք ու նշա-

նակություն տային նրա գրական գործունեությանը, այլև սեփական արվեստի յուրահատկությունները մշակելին հենց «Անահիտին» աշխատակցելով: Ազգային գրականության զարգացման ճանապարհին նոր սերունդի համար «Անահիտը» եղավ գրական դաստիարակության յուրօրինակ դպրոց:

«Անահիտը» չափազանց զգայուն էր գրական այն երևույթների նկատմամբ, որոնք կոչված էին այս կամ այն կերպ հարստացնել գրականության բնատիպը, ժանրային, գաղափարական ու գեղարվեստական բնորոշումները: Այսպես, Երվանդ Օսյանի «Գործի մայրիկը»-ը արևմտահայ արձակի ուշագրավ երևույթներից է իբրև ժամանակակից հայ կյանքի իրական պատկերում, սոցիալական խոր բաժանցումներով հսկայան վեպ: Գրականագետ Ա. Մակարյանի դիտարկությամբ՝ արևմտահայ գրականության մեջ սա առաջին գեղարվեստական ստեղծագործությունն է, որտեղ ակնարկային կերպ հանդես եկող արդյունաբերական բուրժուականի մայրն<sup>31</sup>: Իր ստեղծարարիկ էջերը «Անահիտը» սիրով էր սրամաղթում այդ ծագված վեպի ապագությանը, որը սակայն մնում է անավարա:

Արևածուհի Շիրվանզադեի «Արծառվածք» մեր գրականության «առաջին քաղաքական դրաման է»<sup>32</sup>: Այն աչքի է ընկնում նաև կերպարների հոգեբանական ներքին խորության և կատարյալ արվեստի ներդրանքը համադրությամբ, որ հաճախ դիտվող երևույթ էր մեր քաղաքային պատմության մեջ: «Անահիտը» ապագրիլ «Արծառվածք» նրա վրա հրավիրելով բնորոշողների հատուկ ուշադրությունը:

«Արևածուհայ բանաստեղծության մեջ՝ Աբուսումանը նոր խոսք էր ասում նաև էպիկական մտածողության տեսակետից» (Կ. Գարբիլյան)<sup>33</sup>: Դրա լավագույն վկայությունն է «Արմենոլիին» պոեմը: Բանաստեղծի մտածողի հետ ընդունելով «Արմենոլիին»՝ «Անահիտի» խորագիրը ոգևորությամբ է արձագանքում հեղինակի՝ վիպերգների ստեղծող շարք գրելու մտադրությանը. «... ամբողջ ուժովս կը քաջակրեն Չեպ շարտակելու այս բուժունելու շարքը գրել գաղափարը գեղեցիկ է և Գոր շատ օժտված եր այդ ճուղին համար» (ԱՉՆ-92):

Օրինակները շատ են: Միայն ավելացնենք, որ նույն մտնեցմամբ «Անահիտը» երբեմն ապագրել է գործեր, որոնք լուրջ բնագրային առաջին չափանիշներին չեն ենթարկվում, սակայն ուշագրվում են իրենց նյութի ու հղացման և կնք գեղարվեստական ձևի յուրահատկությունների առումով: Ինչպես, օրինակ՝ Տ.Մ. Արշակի «Հավերժոր-

յուն» խոսիակիստափայական ընդարձակ բանաստեղծությունը, Գ. Արծրունու՝ ժամանակակից կյանքի բնմայլով «Ես բեզ մեզա» երեք գործողությամբ բառերգությունը (Վանի բարբառով), Տ. Վաղդակ-տի «Պատաստուկ» քնարավսիկական չափածո կտավը, Խոսրովի «Վանաստիբական խավովտորները» և այլն:

«Անահիտի» ծրագրի մասին խոսելիս դիտվեց, որ ազգային գրականության առաջընթացի գործում հանդեսն առանձնահատուկ նշանակություն էր ապին հայության երկու հատվածների հոգևոր մերձեցման խնդրին: Հարցը Ա. Չուպանյանին գրադրելի է տակա-վին «Ճաշիկի» հրատարակության շրջանում: Նա մտադիր էր հան-դեսում առանձին բաժին հատկացնել նաև արևելահայ եկեղեցական տեղագրություններին, նպատակ էրկու ճյուղերի՝ գրականու-թյունների փոխադարձ ծանոթացմանը: «Ճաշիկի» ծրագրային առաջ-նորոգի նախնական օրինակում կարող էմ ենք. «Իմ ցեղն փառխաթ է որ տուտահայ գրագեաներն որ աշխատակցեին այս հանդիսին, վերջ-ականապես ցնջելու համար այն ցավակի անջպւետը որ գնեզ ան-նոցնն կը գատն և հաստատելու համար կապ մը որ ապա ձուլում մը ըլլա երկու գրականությանց և երկու լեզուներուն ալ բերա» (ԱԶԽ-633):

Ինքագրի փավագը շիրագործվեց: «Ճաշիկում» չուպագլուխին արևելահայ գրողների գործեր: Ավելին: Երագրային այդ դրույրը առ-հասարակ տեղ չգտավ հանդիսի առաջնորդություն: Պատճառը, ամե-նայն հավանականությամբ, օսմանայն գրաբնությունն էր:

Փարիզում հրատարակվող նոր հանդեսը՝ «Անահիտը», խնդրի արձարծման ավելի իրական հնարավորություններ ուներ: Երկու հատվածների փոխադարձ մերձեցման հարցը դասնում է նրա գոր-ծունության կարևորագույն օգակներից մեկը: Հանդեսն այն սկսում է երկու գրականությունների առարկակիչ գծերի ձևակերպումներով: «Մարձը և տուտահայ արդի գրականությունը» (1899, թիվ 5-6), «Ռու-սասիայեր և քրեսասիայեր» (1899, թիվ 11), «Գերագույն ուժը» (1909-1910, թիվ 11-12) հոդվածներում էինմականում ճիշտ գնահատվեցին արևմտահայ և արևելահայ գրականությունների առանձնահատուկու-թյունները՝ իբրև պատմամասնաբանական ու գրական որոշակիորեն տարբեր պայմաններում ձևավորված մեկ համագաղային երևույթի առարկեր դրսևորումներ: «Անահիտը» իննվում էր 70-80-ականների արդեն ճանաչում գտած տեսակետների վրա և զարգացնում ան-կողմանակալ հայացք, դրանով մերժում այդ շրջանում երկուտեսեր յայ-

նորեն առարձված մակերեսային և պիտլ ընդունումները:

Երև «Ազատամարտ» շարքարթերի հովվածագլին իր միտքը ձևակերպում էր նրորեն՝ զարգացնում «աարթեր» ուղիներ գուշակի-լով հայ գրականության երկու հատվածների համար,<sup>34</sup> ապա «Հայ գրականություն» և «Հուսանք» պարբերականների բորակիցները դրանք հակադրում էին իրար. առաջինը (Զ. Արարատ) արևմտահայ գրականության մեջ «հավասարության եղբ մը» էր տեսնում մյուս հատվածի նեա,<sup>35</sup> երկրորդը (Ս. Պարթևյան) առանց այդայուրյան այդ մերձեցումը «անխտաստիկի չարիք», աղետ էր համարում արևմտահայ գրականության համար<sup>36</sup>: Այսպիսի կարծիքներ էին հայտնում ոչ միայն երկրպագուսան եեկեղեցականը (այդ բվում նաև՝ Հ. Բիկյանը, Ա. Անտոնյանը, Կ. Ստեփանյանը, «Բյուզանդիտնի»՝ «Ա.» ստորագրող հոդվածագիրը), այլև առավել հայտնի դեմերը: Իր «Ռուսասիայց գրականությունը» գրքում Լեոն պաշտպանում էր այն դրույրը, թե լեզվով, հոգեբանությամբ, խտանվածքով, բնավորությամբ ու մտամտողության եղանակով իրարից տարբերվող հայ ժողովրդի եր-կու հատվածների գրականությունները ներկայացնում են «գրական երկու հակադող ծայրեր»<sup>37</sup>:

Արևմտահայ և արևելահայ գրականություններին և ընդհանրա-պես հոգևոր մշակույթի էական տարբերությունները ձևացնող գծերը «Անահիտը» տեսնում էր մի քանի էինմական կետերում ընդգծելով, որ դրանք ներթափալես կարող են ընդհանրության վերածվել:

Տույց առավով գրականության երկու ճյուղերի էինմական հատ-կանիչները, առավելություններն ու «մասնավոր, իրական պա-կտաները», ուսումնասիրելով ու բացատրելով դրանք պայանակտերի արտաքին ազակները, համեմատելով ու երակացությունները հանգելով «Անահիտը» դրանք ծառայեցնում էր ազգային ընդհանուր էինմի վրա երկու գրականությունների մերձեցման կարևոր գործին: Երկու գրականություններից ոչ մեկն էլ լիակատար և մտացի գերա-զանց չէ, նկատում է հանդեսը, կեսեր են և իրենց ուղույն առավելու-թյուններն ու պակասներն ունեն. երկուսը միասին կազմում են հայ ժամանակակից գրականության ամբողջությունը: «...Այդ երկու տա-րբեր առավելություններով ճոխացած գրականությունները՝ զիար «բացցեկու» իրված են» (1909-1910, թիվ 11-12, էջ 247-248):

Այս փոխադարձ առնչություններում, ըստ «Անահիտի», արևելա-հայ հատվածի գրականությունը ներգործում դեր կարող է կատարել իր ազգային բնույթով, ժողովրդական ոգով ու հայեցի ներշնչմամբ,

իսկ արևմտահայ հասփածինը՝ ձեռք, արվեստով, բարձր գեղարվեստականությամբ: Ահա՛ թե՛ ինչու «Անահիտ» խմբագիրը մի կողմից այնքան մեծ նշանակություն էր տալիս արևմտահայ շրջաններում Արուսյանի *հայադրոշմ* գրականության ժողովրդայնացմանը («Արևմտահայ գրականությունը... պիտի ճոխանար ու հայաճար, եթե Արուսյան մեր մեջ ժողովրդական դաճար»), իրև օրինակ պարզում «Աղայանի «Խայ ներշնչման մը կնիքը» ցուցանող արձակ ու չափածու էջերը, հիանում Պողոտյանի կենսագիտությունը, նրա՛ գյուղաշխարհի պատկերները՝ զուտ հայկական դրոշմով», մյուս կողմից էլ մեծ ջանքեր գործադրում գեղեցիկի ու «բարձր արվեստի» դիրքերում կանգնած իր հանդեսի օրինակները արևելահայ բերնեցողին հասցնելու համար:

«Անահիտ» իր էջերը լայնորեն արձանադրում է արևելահայ եկզինակներին (Փավազյան, Շիրվանզադե, Իսահակյան, Շատուրյան, Գեներյան, Արամ Չարբ, Անուիյան, Վ Նալբանդյան, Վանցյան, Մ Նարթազյան, Բաշինջաղյան և ուրիշներ), հանդես գալիս նրանց վաստակի գնահատմամբ՝ «Խաչատուր Աբովյան», «Աբովյանի հայրերաճայկին առթիվ», «Պերճ Պողոտյան», «Շիրվանզադե», «Շիրվանզադեի «Եվգենե», «Կազարոս Ազայանց» և այլն, ինչպես նաև արձագանքում արևելահայ բնրացիկ գրական-գեղարվեստական կյանքի դեպքերին:

Ըստ հանդեսի՝ արևելահայ գրականության զարգացման բնրացի ուշադիր վերլուծությունը ցույց է տալիս նրա կողմնորոշումը դեպի բարձր արվեստի գրականությունը, դեպի գեղարվեստականության նոր չափանիշները: Արևելահայ ժամանակակից հեղինակների ստեղծագործություններում «Անահիտ» փորձում է զանել այդ կողմնորոշման ապացույցներ: Այս տեսակետից հանդեսի բննադատությունը առաջնակարգ տեղ է հասկանալի կրթաբնա Փավազյանին: Սակայն հանդեսը չի խուսափում ակնհայտ ծայրահեղությունից՝ անհամոզելի կերպով բացարձակացնելով Փավազյանին արված բնուրացումը: «Մովսիսի միակ հայ գրագիրը, որ առկաճան գեղեցկագիտական ձգտում մը ցուցցցում էր իր գրականությանը մեջ, Փավազյանն է...: Փավազյանի Անհազը, Ինճըր, Անճան, Մանրն ռուսահայ գրականության միակ էջերն են որ «արվեստ» կարելի է գտնել և ռոմանց մեջ գեղեցկագիտական ձգտումը ակններև կերպով առաջին տեղը կը ըուն...» (1899, թիվ 11, էջ 323):

Արևելահայ չափածուի նոր փուլի սկզբնավորությունը հանդեսն

իրավամբ կարգում է Հովհաննես Հովհաննիսյանի անվան հետ՝ իրև արևմտագետ քաճաստեղի: «Գեղեցկագիտական գգայնության մը ցույցը» «Անահիտը» տեսնում է նաև Գ. Գեներյանի և Ա. Չարբի թերթավճեքերում, միաժամանակ դրսեցում արձանագրում է ճեկ մեծ «պակասություններ»: «Անահիտ» միտումը շատ որոշ է ցուցադրում նաև Ո. Անուիյանի բանաստեղծության («Ճակի ափին խոովանալ կանգնած») տպագրության փաստը և այդ առիթով արված քաճատությունը, թե ոչ մի ներություն էլ չի բերում ռաճանավորը. «Քայց աղերը ստեղծ են, առաջադրությունը խճանված (ինչ որ հազվագյուտ երևույթ մըն է ռուսահայոց մեջ), և անբողջություն մեջ կա գզուրիկ գգայնություն մը...» (ԱՉՆ-70):

Արևելահայ գրականության (հատկապես առանճին գրողների) մասին իր ծանոթությունները խորացնելու համար սկզբնական շրջանում «Անահիտ» խմբագիրը, հավանաբար, դժվարությամբ է ձեռք բերել համազուտախան գրականություն: Չորի սակ եղած նյութի պակասն էր, որ նրան հնարավորություն չտվեց իրագործելու իր մտադրությունը՝ «ռուսահայ բանաստեղծներու ամենում մեկանց վրա բնուրճակ հողված մը գրել» (ԱՉՆ-59):

Արևմտահայ և արևելահայ հասփածների հողեր մերճեցման հարցի շուրջ մյուս գլխավոր սկզբները, որ պարզում է «Անահիտը», գրական արձեճանայեթինի և արևելահայերի փոխաբարբերության կամ հանդեսի հայտարարությամբ՝ «միացման կամ գեր տեսակ մը մերճեցման» խնդիրն է: (Այդ մասին կխոսիլի համապատասխան գլխում):

Ինչպես միշտ, «Անահիտ» գործունեությունը հետադական է նպատակային: Այդ են վկայում նաև «Հրատարակությունը *Անահիտի*» և «Մասնատարարան *Անահիտի*» գրքային հրատարակությունները, որոնք փաստորեն հանդեսի գրական քաղաքականությունը օրգանական շարունակությունն ու քրագումն էին: Խմբագրության կողմից այդ մասնաշարերով լույս բնճայվեցին Ա. Յրանսի «Էպիկուրի պարտեզը» (թարգմ. Ա. Չուպանյան, հասփածներ, 1901), Ա. դր Լինյիի «Քերթվածները» (թարգմ. Ա. Չուպանյան, 1901), Ասահակա Քուչակի Դիվանը» (Ա. Չուպանյանի առաջարան-ռաճանասիրության, 1902), «Օճար Խոյանսի քաճակները» (թարգմ. Գ. Փառնակ, 1903), Գ. Վարուճանի «Չարբը» (1908) և մի քանի այլ գրքեր: Նյութական դժվարությունների պատճառով, սակայն, Չուպանյանը կարողացավ բնուրճակ հրատարակությունների այդ շարքը: «Քա-

նի՝ հատր կա արեւն *Անահիտ*ն հանվելիք և զատ հրատարակելիք, անկեղծորեն արտնայում և նա 1907-ին Սիւսանքոյին գրած նամակում: - Պիտի կրնամ երբևէ իրականացնել այդ երգս» (ԱՇՆ-88):

«Անահիտ» հանդեսում հատուկ նկատառումով հայ գրականութեւնը չէրը ապագրվում էին մյուս ժողովուրդների գրականություններին կատարված բարձրագույնությունների հետ կողք կողքի, գրական տեսություններում և բնական ուսումնասիրություններում համադրվում հայ և օտար եղիմակների գործերը. Քուչակը Հաբրի, Գանբի, Շերապիի, նաև Հայնիի հետ, Նարեկացիի՝ Գրանսիական նորագույն պոեզիայի հայատնությունների, Կ. Նշեկցիացիի՝ Ռոմանի, Վիյոնի, Պետրարկայի, իսկ Վարդմանն ու Սիւսանքոյն՝ Հլույզի, Վերիարնի, Մետեղիզի և այսպէս շարունակ: Ճարգացվում էր այն տեսակետը, որ հայ գրականությունը, իր լավագույն օրինակներում, բովանդակությամբ և արվեստով, անկասկած, միջուկում կարող է գնալ համաշխարհային գրականության ամենամարտնչ արժեքների հետ: Իր դիտարկումները «Անահիտը» հիմնավորում էր նաև եվրոպական բնագիտության գնահատումներով, որոնք Չուպանյանը խմանքով բարձրանում ու հրատարակում էր «Հայ գրականությունը եվրոպայի մեջ», «Եվրոպական կարծիքը հայ բանաստեղծության մասին», «Եվրոպայի կարծիքը հայ գրականության մասին» և այլ խորագրերի տակ:

Այսպիսով «Անահիտը» դիմում էր գրական երևույթի ամենաբազմազան կապերի ու ազդեցությունների բնութայնը, ապագում ու վերլուծում, համեմատում ու համադրում՝ հավաստելու համար հայ գրականության ազգային բնույթն ու համամարդկային արժեքը, նրա առաջնության ուղիները:

Երբ ստույգ է, որ գրականության զարգացման գործում գրական պարբերական հրատարակության կատարած դերի, ունեցած նշանակության գնահատման համար չափանիշ է այն սկզբունքը, թե պարբերականը որքանով է ներդաշնակել ժամանակի գրական շարժմանը, գեղագիտական մտքի որոնումներին, ստեղծել է արդյոք գրական ուղղություն, ապա առանց վարանելու կարելի է ասել, որ բնկվող ժամանակաշրջանի արևմտահայ մասնույն Չուպանյանի «Անահիտը» տալիս է այդպիսի պարբերականի ըստ ամենայնի եզակի օրինակ: «Անահիտը» նոր շարժում չպիտանալուց: Մակայն հայտնի ազգային գրականության զարգացման ընթացքի տեսանկյունից

հանդեսում առաջադրված սկզբունքային առանձին դրույթներ (որոնք դիտարկվեցին) խոսում են գեղագիտական նոր ճաշակի ու նոր հայացքի ձևավորման ու զարգացման մասին: Իր նպատակային ու հետևողական բաղադրականությունը հանդեսը մեծ չափով նպաստեց հայ գեղարվեստական ու գրականագիտական մտքի զարգացմանը: «Անահիտը» ավելի խորացրեց ու ընդարձակեց գեղագալա շարժման տեսնանքը:

### 3.5 ԱԶԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՈՒՄՆԵՐՈՒՄ

Հայ իրականության մեջ գեղարվեստական հանդեսի տեսակն ունեցել է զարգացման հետաքրքրական և ուշագրավ ընթացք: Նրա առաջին օրինակները միայնով մասնագիտական ուղղության հրատարակություններ էին, լուսարևումն էին արվեստի կիմոնակումն մեկ բնագավառի՝ քաղաքի կամ երաժշտության հարցերը (ինչպես՝ Կ. Պոլսի «Մուսայք Մասայս», 1857, «Քննար Արևելյան», 1858, «Քննար հայկական», 1861-1863, «Երգաս», 1868, Զմյուռնիայի «Օսմանյան երաժշտություն», 1863 և այլն): Գարակիչիցի հրատարակված «Դեստրոբոգի «Արարս» (1887-1898) և Թիֆլիսի «Տարագ» (1890-1919) պատկերագրող հանդեսները նոր փուլ սկզբնավորեցին գեղարվեստական հանդեսի գծնազգացման առարկեզում: Գրանց գեղագնացեցին իրենց նախորդներին և հրատարակական տվանիկայով և հարցասիրությունների բազմազանությամբ, ընդգրկեցին արվեստի բոլոր բնագավառները: Մակայն այդ հանդեսներում իզուր պետ է փնտրել արվեստագիտական բնույթի յուրյ առանձնատիրություններ ու հետազոտություններ: «Արարս» և «Տարագը» հենու էին արվեստի իսկական մասնագիտական հրատարակությունը ներկայացնելու հանգամանքից:

Հայ մամուլում եղած արվեստագիտական հանդեսի պակասը ըստ լուրջան չլրացվեց նաև դարսակգրին լույս ընծայված «Գեղուրնի», «Ժամանակ» (Փարիզ, 1901), «Մուսուրն» (Փարիզ, 1904-1905), «Բանքեր գրականության և արվեստի» (Գետերբորգ, 1903-1904) գրական և գեղարվեստական նոր հրատարակություններով<sup>38</sup>: «Այդ շրջանում աշխարհի առբեր վայրերում հայերեն հրատարակվող մուս երեք տասնյակ քաղաքական, երաժշտական, կերպարվեստի ու պարսպվեստի հարցերին նվիրված գեղարվեստական պարբերա-

կանները... քստ էության չեն եղել արվեստի այսպիսի ընդհանրացումների... առեական, գիտական, պատմական հարցերի և գեղարվեստական պորթլանների ընթացումը գրավող հանդեպները»<sup>39</sup>։

1908-ին Յիվիտում կինոնախընթաց «Գեղարվեստ» հանդեսը մեզանում առաջին րոպե արվեստագիտական հրատարակությունը<sup>40</sup>։

«Անահիտ» հանդեսի հրատարակությունը հաջողվեց «Արար սին» և «Տարագին»։ 1898-ից «Արար սին» այլև յույս չտեսավ։ Հանդեսի վեցամսյա մեծադիր հատորներին «Անահիտ» խմբագիր լավ ծանոթ էր և բարձր էր գնահատում դրանց ոչ միայն գրական բովանդակությունը, հիվանդ հայերենը, այլև՝ «ոչլայնագրերն ճոխությունը»։ Հատկանշիչներ, որոնք հանդեսը հավասար էին դատում եկրոպական ամենագեղեցիկ հրատարակություններին։ Չուպանյանի կարծիքով՝ «Արար սին» հայոց գեղարվեստական ամենեն կատարյալ հրատարակությունն է՝ (1899, թիվ 5-6, էջ 180)։

Նկարագրություններով, պատկերներով հարստությամբ բեկ «Անահիտ» գիշում էր «Արար սին» (գիշում էր նաև «Գեղարվեստ» և «Բանբերին»), սակայն բնաստիկ-գաղափարական ընդգրկմամբ, գեղարվեստական քննադատի արվեստագիտական ընթացքի խորությամբ և արվեստի նորահայտ երևույթների վերլուծական գնահատմամբ «Անահիտ» նոր քայլ էր գեղարվեստական հանդեսի զարգացման ճանապարհին։ «Անահիտ» առաջին պարբերականն էր քերտ, որ հայ ընթերցողին գիտականորեն ներշնչեց ճաշակը գեղարվեստին»<sup>41</sup>։ «Անահիտում» գիտական-արվեստաբանական ընթացքն ևն դրվում հայ արվեստի պատմության առանձին հարցեր, բարդվում են ժամանակակից հայ գեղարվեստի նվաճումները, պատմական-արվեստաբանական հասուկ նյութի քաղցրամոլություններով ու եկրոպական կերպարվեստի գնահատումներով ուղիներ գծվում հայոց գեղարվեստական մարի համաշխարհային առնչությունների համար։ Ընթերցասեր հասարակայնությանն էին ծանոթացվում հայկական ինքնուրույն արվեստի եկրոպական գնահատումները։

Դեռևս 1898-ին Պոլսի «Հայրենիքում» տպագրած «Գեղարվեստ մեր մեջ» հոդվածում Չուպանյանը նկատել էր սույն, որ հայ գեղարվեստական միայն անհրաժեշտ ուղղություն չի դարձնում արվեստի հարցերին, որ մեր գրողները, ընդհանուր առմամբ, «արձակ գաղափար ունին գեղարվեստներու վրա», «բարձրները շատ սիլ կը հարգորեն Եվրոպայի գեղարվեստական շարժումը...»։ Եվ սակայն բացատրում է իր վերաբերմունքը՝ ընդգծելով արվեստի դաստիարակչա-

կան ու հասարակական նշանակությունը. «Ինչու՞ չենք խորհրդ հանրային մտավորական քարճազման, քարճերու ազգնագման և լավ նկարագրներու կազմակերպման համար հոգին կրող բաներ պետք են և թե հոգին մեծագույն կրթիչը գեղարվեստն է»<sup>42</sup>։

«Հայրենիք»-«Շաղիք» շրջանից հետո մինչև «Անահիտ» հրատարակությունը արևմտահայ մտնողը այս ուղղությամբ առանձնապես նշանակալից ձեռքբերումներ չունեցավ։ Ուստի և «Անահիտ» պետք համարում պիտի արձանագրվեր. «...գեղարվեստներում այնքան կարևոր տեղ մը արված չէ մեր դաստիարակության մեջ» (1898, թիվ 1, էջ 29)։

Նուստում անցյալի հայ գեղարվեստական արժեքներում հայկական ոճի, գծերի ու գույների հայտնաբերմանը, բնական է հանդեսը առանձնակի ուշադրությամբ պիտի վերաբերվեր այն հետազոտություններին, արվեստագիտական այն հայտնագործումներին, որ դարձակարին հայկական մանրանկարչության և զարգարվեստի, երաժշտության և ճարտարապետության մարբերում իրականացնում էին հայ արվեստի ու բանասիրության երախտավորներ Գարեգին Լևոնյանը, Գարեգին Հովսեփյանը, Թորոս Թորոսյանը, Կոմիտասը և ուրիշներ։

«Նայմյաջ գործը» հոդվածում ընդարձակ ծրագիր առաջադրելով անցյալի հայոց գեղարվեստական արժեքների ուսումնասիրման համար Չուպանյանը կարևոր է համարում հատկապես միջնադարյան հայ մանրանկարչության՝ «այդ հայկական արվեստի վերջին ծայր շահեկան բաժնին» ամբողջական և կինոնախ ուսումնասիրման անհրաժեշտությունը։ «Ի՞նչ սիրուն նյութ՝ գեղարվեստագետ բանասերներու համար, անչառակ մեր ձեռագիրներու մանրանկարչական արվեստի մեջ ինչ որ օտար ազդեցության արդյունք է, ու ցույց տալ ինչ որ հատուկ է հայ ոգու և ճաշակի» (1911, թիվ 3-4, էջ 54)։

«Անահիտ» 1911թ. համարներից մեկում տպագրվեց Գ. Հովսեփյանի «Համառու տեղեկություններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին» հոդվածը։ Սա ամբողջական ուսումնասիրություն չէ, ինչի մասին խոսում է նաև վերնագիրը։ Սակայն ուշագրավ այն է, որ միջնադարյան նկարազարդ մատյաններից («Արքայական ճաշոց», «Բազմայրի ալեխարան», «Ետայի Նշեցո ստովանաշուք», «Թարգմանաչ ալեխարան» և այլն) ընտրված մանրանկարների վերլուծությամբ և նյութի ընձեռած նկարագրություններին սահմաններում փորձ է արվում զարգացնել այն առևակետը (տարբեր

միջնադարյան արվեստի խոշոր գիտակներ Գ. Առնյանի, Վ. Մաստվի, Բրտսի և այլոց կարծիքներին)։ Քե հայկական մանրանկարչությունը սկզբնավորվել է ոչ թե հունական ու բյուզանդական, այլ Արևելքի քրիստոնեական նմանատիպ արվեստների ազդեցությամբ՝ հետագայում ձևոր բերել ինքնուրույն, գուտ հայկական գծեր ու հատկանիշներ։

Միջնադարյան հայ մանրանկարչական արվեստը օրգանապես զուգորդում է և Արևմտադի, և Արևելքի գեղարվեստական ավանդույթները։ Հովհեսփյանի ուսումնասիրությունը հետաքրքրական է այն տեսակետին, թե նա ինչպիսի՞ առձևություններ է դիտում հայկական մանրանկարչության և Արևելքի երկրների նմանատիպ արվեստների միջև, գուտ հայկական արվեստի ինչպիսի՞ յուրահատկություններ է տեսնում այդ մանրանկարչների ղեկավորման, պատկերագրման, յուսանցագրություն ու մոդիլագրություն մեջ։ Այսպես, օրինակ՝ «Ճարգճանճան ավետարանի» (1202) Մարտիրոս Ավետարանիչի պատկերագիրը բնութագրելիս Հովհեսփյանը նկատում է, որ պատուհանների կամարակապ ձևը է մանրանկարներում ավետարանիչների համար բնորոշված «ազնվականների *անսիլ* հագուստը» ոչ միայն հայ, այլև ատրապարտական արվեստներում հաճախ հանդիպող ձևեր են։ Իսկ ասե՛ք պատվանդանը գծագրողպատկերող հյուսվածքները հայկական պատկերագրության յուրահատկություններից են և հաճախ են կրկնվում հայ ճարտարապետական գաղափարների մեջ։

13-րդ դարի կիլիկյան հայ մանրանկարչական դպրոցի բացառիկ արժեքավոր նմուշներից է «Կեռան բագուհու ավետարանը»։ Կեռան նկարագրությանն ու արժեքավորմանն է նվիրված հմուտ քանատեր և ձեռագրագետ Ստորյ Եր-Մովսիսյանցի ուսումնասիրությունը՝ «Կեռան բագուհու ավետարանը», որ սպազմից «Անասիատում»՝ ավետարանից վերցված գեղեցիկ մի մանրանկարի հետ միասին։ Մ. Մովսիսյանցը երկար ապրիներ գրադրվում էր Հայաստանի և հայկական գաղթյալների գրադարաններում պահվող հայկական ձեռագրերի ուսումնասիրությանը ու գուցակագրումով։ Հայ մանրանկարչության ամենահարուստ հավաքածուն, նրա համդգմանը, պահվում է Երուսաղեմի օր-Հակոբյա վանքում, որտեղ էլ և նա ծանոթացել էր Կեռան բագուհու ավետարանին։ Գրքի իշխանակարաններում գրիչների բոլոր արձանագրությունները է մյուս գաղափարների համեմատական վերլուծությունը հետազոտողին բերում են այն հա-

մուզման, որ ավետարանը մտղիկ է միջնադարի մեծ նկարիչ և մասնող Թորոս Ռուպինը։

Միջնադարյան հայ նկարչության տարբեր հարցերի ( սառնճին նկարիչների ստեղծագործությունների, նկարչական արվեստի անխնիկայի և այլնի) լուսարանում են տալիս նաև Ա. Չուպանյանի «Հայոց եկեղեցական նկարչությունը» (1911, թիվ 3-4), Գ. Հովսեփյանի «Ա.Էջմիածնի տաճարի պատկերագրությունը Սյունու Կարաղիլոսի ժամանակ» (1911, թիվ 3-4) հոդվածները և միջնադարյան անհուն նկարիչ «Ասան նազալի» ձեռագիրը (1911, թիվ 5-6)։

Թորոս Թորամանյանի հայրենասեր գործը «Անասիտում» իբրև օրինակ է նշում հայ ճարտարապետության հուշարձաններն ու կոթողները ուսումնասիրելու ուղղությամբ։ «Անս մեծ արևեսու մը, գոր պ, Թորամանյան կը բանս և որ իրեն պետք է հեռանս որիչ Թորամանյաններ, վասն գլ գործը անսզին է, և մնկ երևի հոգալալ :Ս որ ան պիտի լրիլ կատարիլ» (1911, թիվ 3-4, էջ 54)։ Իր հերթին Թորամանյանը մանրամասն անդեկություններ էր տալիս Չուպանյանին իր ծրագրերի, կատարած աշխատանքների, հավաքած նյութերի մասին, սիրով համաձայնում աշխատակցել «Անասիտին» իր «նախնա լուսնան ձեզի անոր օգուտաա զանճարանին մեջ...»<sup>43</sup>։

Թորամանյանի գիտական աշխատանքներից «Անասիտում» սպազմով են երևույթ՝ «Հայ ճարտարապետության շրջանները» (1911, թիվ 1-2) և «Նորագույն կարծիքներ հայ ճարտարապետության մասին» (1911, թիվ 9-12)։ Գրանցում նորահայտ փաստերի հիմքի վրա հերքվում են հայկական արվեստի կրավորական քնույրի մասին եվրոպական գիտական գրավանդության հուշաված մակերեսային, կցկտոր, հակառակ դաստիարակությունը, հաստատվում է հայոց ճարտարապետության ինքնուրույն դիմագիծը, ճշտվում նրա տևոր միջազգային ճարտարապետության մեջ, ցույց են տրվում նրա «խանճաշխարհային արչավանքները» (Թորամանյանի խոսքն է)։

Թորոս Թորամանյանի աշխատանքը «Անասիտ» խմբագիրը համարում էր Կոմիտասի գործունեության գոգսիեղը՝ ճարտարապետության ասպարեզում. «Թորամանյան մը՝ ինչպես Կոմիտաս վարդապետ մը՝ որ հայ ցեղին հին գեղարվեստը կը վերակենդանացնեն և անոր մեջ Հայուն ցեղային ստեղծագործ բաժինը կ'որոշեն և կ'ապացուցանեն, այդ ազգության մեծագույն բարերարներուն կարգը դասելու արժանի են ...» (1911, թիվ 5-6, էջ 135)։

Չուպանյանը Կոմիտասի մտերին բարեկամ էր և գաղափարա-

կիրք ոչ միայն գրական-գեղարվեստական հարցերում, ծանր էր նրա բոլոր խանձավառություններին ու հույսերին, ղեկավարություններին ու դաժնություններին և իր բավարկույ սիրով ու կիսագուժու Զառու էր կարելիք անել մեծ պայքարի գործը դյուրացնելու համար: Բարեկամությունը սկսվեց Փարիզում, տեղեց երկար տարիներ՝ ընդհուպ մինչև Կոմիտասի եղեղական մահը:

1901-ին Բեռլինում իր ուսումնասիրությունն ավարտելուց հետո Կոմիտասը կարճ ժամանակով եկավ Փարիզ: Այցելեց Չոպանյանին: Պարզեց իր ստեղծագործական ծրագրերը: «Ես հայտնությունը կունենայի», կիշում է Չոպանյանը, «մեր ազգային մշակույթի համար նախախնամական ղեկ կտասրելու ստեղծանված նրաշալի ուժի մը, «Նոր Շնորհալի» մը... Աճողոջ աշխարհ կար այդ մարդուն մեջ, հանճարի և տառապանքի աշխարհ...»<sup>44</sup>:

«Անսիխոս» հունիս-հուլիս ամսիցիի համարը բացվում է «Կեներ» ընդհանուր խնամքով: Այդ խնամքի մասը Չոպանյանը ստորագրեց «Կոմիտաս Կարդապետ» հոդվածը, որը իր խկ խոստովանությունը իր երկև գրած ամենախաղաղալա հոդվածներից մեկն է: Հոդվածն ընդարձակ է, ընդամենը երեք-չորս էջ, սակայն, անտարակույս, Կոմիտասի գործի յուրք և ամենախաղաղն զնահասումներից մեկը: Կոմիտասը, Չոպանյանի ընդորշամբ, «սպասված, երգված մարդն» է:

«Անսիխոս» սպագրվեց Կոմիտասի «Հայ գեղչուկ երաժշտություն» ուսումնասիրությունը (1907, թիվ 3-5, թիվ 6-9): Հանդեսի քրոնիկներում արձանագրվեցին Կարդապետի կույրները Բեռլինում (1900), Փարիզում ու եվրոպական մյուս կենտրոններում: 1906-ին Փարիզի երաժշտական մեծ սրահներին մեկնում Կոմիտասի գլխավորությամբ արված նվագանոցերը ամենախաղաղ երեսուրդ եղավ հայ մշակույթի պատմության մեջ և հայտնություն էվրոպայի համար: Կոմիտասի կույրից առաջ Չոպանյանը բանաստեղծությամբ ֆրանսիացի երաժշտաներ հասարակայնությանը ներկայացրեց հայ տանիկ բանաստեղծությունն ու երաժշտությունը, հայկական պարագվեստը, ինչպես նաև Կոմիտասի՝ հայ երգահանի, երաժիշտ-բանահավարի, երգչի ու խմբավարի միանգամայն անգուզական տաղանդը:

Հայ երգի հարթանակները Կոմիտասն ու Չոպանյանը շարունակեցին նաև Լոզանում ու Փնտում՝ առաջինը եկեղեցական ու ժողովրդական երգերի իր փայլուն կատարումներով, երկուրդը՝ դրանց ճուր

ու բարձրարվեստ վերծրծությամբ: Չոպանյանի բանախոսությունը («Հայ երաժշտության ու բանաստեղծության մասին») և հայ ժողովրդի գեղարվեստական բարձր կարողությունները ներթողելով նրապական զնահասումները բարգճմանարար սպագրվեցին «Անսիխոս»:

Հանդեսում Կոմիտասի անվանը հանդիպում ենք նաև 1911-ին, երբ վերջինս տեղավորվել էր Պոլիս և ձևեմամուխ երկ երաժիշտ-մասնագետներ պարագաստելու գործին: «Անսիխոսը» խրախուսեց այդ ձևեմարկը և Պոլիս ու Իգվիլիի հայությունը կոչ արեց աչակեցկ Կարդապետի՝ նվիրական ձևեմարկն իրագործելու համար<sup>45</sup>:

1902-ին «Ռեքլիբուն» երաժշտական ամսագրում սպագրած հոդվածաշարում Զրանսիայի երիտասարդ արվեստարան, արևելագետ Պիեռ Օսթրին փորձում է համեմատական ինքվարանության ասմունքի կանոնների նեոտողությունը գտնել հնդկությունական ժողովուրդների երաժշտական մշակույթի նախախնամքը: Հոդվածաշարի առաջին մասը նվիրված էր հայկական եկեղեցական երաժշտությանը, որտեղ ընդհանրացումներ են արվում հայ երաժշտական արվեստի համաշխարհային անելությունների մասին: Պ. Օսթրին, իր խոսքերով, «երաժշտական ուսումնասիրությանց» ճանվարությունը էր կատարել Հայաստանում, երկու տարի հայերեն էր ուսանել Փարիզի արևելյան ինգունների վարժարանում, ունկնդրել Այնի դասախոսությունները, Ս. Պարունյանի մուս հայագիտության դասեր անել, կարդացել «Պարասուրգ», «Ժամագիրքը», Հ. Թաշյանի երաժշտության դասագիրքը, «Շարակամը»: Սի խոսքով, լավ ծանր էր հայ երաժշտական արվեստին: Զրանսիայի երաժշտական դասարանում կարողությունը բարգճմանում է հոդվածաշարի առաջին մասը և սպագրում «Անսիխոս» («Հայ եկեղեցկու երաժշտական դրությունը», 1901, 1903):

«Անսիխոս» խմբագրից ավելի շատ հուզել են արևմտահայ բարոնի պատմության, նշանավոր դերերի, ժամանակակից վիճակի ու գարգայցման խնդիրները: Բայց երաժարայի վրա դրանց վերաբերյալ յուրք ու ծանրակշիռ նեոտողություններ չկային կամ գրեթե կային, և Չոպանյանը դարձյալ դիմում է օտար արդյունքների, դրանցից տեղեկություններ բաղում արևմտահայ բարոնի պատմության մասին: Այսպես, Փարիզի «Ռվլյու էնցիկլոպեդիքտե» արվեստագիտական հանդեսի 1899-ը. դեկտեմբերի համարում բարոնի

պատմարան և արվեստագետ Աղոյի Տալաստն հրատարակեց ընդարձակ մի ուսումնասիրություն «Թրքական ժամանակակից բառերը» վերաբերյալ: «Անահիտի» նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբեր համարում համառոտ տեղեկություններ արվեցին այդ մասին, իսկ հետագա տարիների (1904, 1905) համարներում ուսումնասիրությունը տպագրվեց ամբողջությամբ: Այդ ուսումնասիրության մեջ ոչ միայն խառնվում է թուրքերի և եվրոպական ստանդերտներում ֆրանսիական առաջին կասակերգությունների, օտանոցն ժամանակակից բառերգության ու բառերական քննդատության մասին, այլև արժեքավոր տեղեկություններ են արվում յուրքական ժամանակակից բառերի սկզբնավորման և բնագրվածի գաղթագման գործում հայերի անհնալայն մասնակցության մասին: Ընդհանուր հայ դեռատանական խմբերի ու բառերի վարկանքի (Երանոսի և Վիդգինու Գարագալյաններ, Սիբանուշ, Անեմյան, Հեթիմյան, Ասադի, Մուսկյան, Ալոսյան, Թրյանգ, Չուխչյան և որչիշեր) գործունեությունը՝ ֆրանսիայի քառերկայնը հանգում է այն համոզման, որ «բոլոր ժամանակակից բառերին ծնունդը կատարվեցավ հայերու ձեռքով» (1904, թիվ 9-10, էջ 56): «Խնարս Ալոսյանի մասին Տալաստն գրում է. «Ալոսյան-Հայ որ-նանենն մեծը օսմանյան առամական դերասաններուն...: Իր շնորհիվ բուրբեր ճանցավ, ծախս-հարած, սիրած են Հերսպիլը դուռն աննոտանայի քարգմանն է և դաս» (1905, թիվ 1, էջ 23,24): Թուրքական երաժշտական բառերին կիմնադրման ու գոյության «ամբողջ փառք» ևերուցայի արվեստագետ հասկացումը է Տիգրան Չուխչյանին:

Ա. Տալաստն, սակայն, ոչինչ էլք առած բուն հայկական բառային ստեղծման մասին, որը նույն ժամանակ և նույնիսկ յուրքական բառերինց առաջ կիմնադրվեց: Չեն կիշվում Նաումի բառերի կիմնադրումից անմիջապես հետո այստեղի հայ դերասանների ուժերով Ս. Հեթիմյանի կազմակերպած ելույթները, Օսմանյան բառերին տնօրեն-կիմնադիր (և ոչ թե «վախճանոր») Վարդյանի դերասանական խմբի հայերեն ներկայացումները և այլն:

Այս և նման դիտությունները Չուխչյանը խմանքով արձանագրում է Տալաստյի հոդվածի ծանոթագրություններում:

Հայ բառերի պատմության առանձին դրվագների ու բնագրվածի գործիչների մասին են պատմում նաև հանդեսում տպագրված այլ հոդվածներ ու դիմակարգեր, որոնք ունեին ոչ միայն պատմական-ճանաչողական արժեք, օգտակար ու կարևոր էին ոչ միայն

անցյալի հայ բաղաբական ու հոգևոր կյանքի պատկերը վերստեղծելու, ազգային ինքնագիտակցությունը արթնացնելու իմաստով, այլև կոչված էին անմիջակալորեն ծառայելու ժամանակակից հայ արվեստի զարգացման խնդիրներին, հնոց գեղարվեստական փորձի օգտագործմանը՝ հայկական արվեստի նոր որակի ստեղծմանը: Մա արդեն իսկ «Անահիտի» ծրագրային կիմնադրույթներից մեկն էր:

1901թ. ապրիլ-մայիսի համարին «Անահիտը» բացում է նոր բաժին՝ «Արվեստի էջեր»: Այդ բնիկանուր խորագրի առկա բաղաբական կամ ինքնագրի հոդվածներ պիտի հրատարակվեին գեղարվեստի առանձին շրջանների, համաշխարհային արվեստի վարկանքի ու նրանց գործերի մասին: Գրանք պետք է ուղեկցվեին վորպագրներ-կարճերի ու լուսանկարների վերատպություններով: «Այս բաժինը որ «Անահիտի» ծրագրային գլխավոր կետերն մեկը կը կազմն և գոր շատ անբավական կերպով իրագործեցինք մինչև գարն. սավում է առաջարկողոցում. այստեղևս շարունակարար իր տեղը պիտի ունենայն այս թերթին մեջ» (1901, թիվ 4-5, էջ 120): Հանդես միտում ունեն ոչ թե շրջել պատկերներով կամ հրատարակել նկարների արտաքին վայրով գրավել ընթերցողներին, այլ օգնել նրանց այդ գործերի ներքին նշանակությունն ու արժեքը ընդունել, գիտակցարար նշանակողունցի յուրաքանչյուրի ուղույն գեղեցկությունը:

Ի. Տենի «Գեղարվեստի փիլիսոփայությունը» գրքից ընտրված «Հումական արձանագործությունը» հավաքած (1901, թիվ 4-5, 6-7, 8, 9) «Արվեստի էջեր» շարքում եղավ առաջին և ցայտք միակ ուսումնասիրությունը: Երազդիր փաստորեն յուրագործվեց: Հանդեսի եռշտրի մի քանի համարներում այդ խորագրի առկա ուղղակի գեղեցկված էին հայ, հունական, պարսիկ և ֆրանսիական արվեստի ստեղծագործություններ:

Համաշխարհային արվեստի գործերին հանդեսն անդրադարձել է նաև շարքից դուրս՝ առանձին հոդվածներով, ինչպես Առնադրո Գա Վինչիի «Ջոկոնդան» այնքան նրբորեն ու խոր վերլուծող գեղարվեստական բյուրիկը («Նորոտես», 1898, թիվ 1), ֆրանսիական նրազույն արվեստի ներկայացնող հոդված-գրախոսականը՝ Մասավորական կյանքին» ընդհանուր խորագրով (1898, թիվ 2, 1899, թիվ 8) և այլն:

Արդեն սակ է, որ «Անահիտն» իր ծրագրային խնդիրներից մեկն էր համարում նաև վերատպություններով ընթերցողներին ծանոթացնել ոչ միայն հայ և համաշխարհային կերպարվեստի բնույթը



երկերին, այն հայկական վաղեմի գաղղանկարչական արվեստի վերանորոգումը փորձել այսպես ձևերով: Դրա առաջին օրինակը տրվեց հանդեսի երեսօտարկության հայտարարությամբ, որ գաղղապատկերել էր է. Շահինը: Դժամանակի գաղղանկարներով են ձևավորվել նաև հանդեսի բոլոր համարների ամվանարկերը, միջնադարյան մանրանկարչությանը հատուկ բուսական ու կենդանական բնաներով են գծագրվել «Անահիտի» բազմաթիվ նյութեր ու զիտառուներ: Փարիզի ազգային մատենադարանի ժողովածուներից բնօրինակված «Հասն Բաղաշ» ձեռագիրը մեծաթիվ փաստաթուղթ է միջնադարյան նկարչական վարպետությանը գույների տապասան գաղղանիքները, ժամանակակից նկարիչներին ներկայացնելու իմաստով:

«Անահիտ» ակնդետ հետևում էր հայ գաղղապատկերի գեղարվեստական շարժմանը: Նրա ազգային բրոնիկների «Հայերն ի Ռուսիան», «Հայերն ի Չիբակո», «Հայերն ի Բաղիզ» բաժիններում կան առանձին հաղորդում-տեսարյուններում մեկնաբանվել ու ժողովրդականացվել են հայ երիտասարդ արվեստագետների սանդղազորությունները: Հանդեսը պարբերաբար խոսք է առել նկարիչներ Շահինի ու Մախախյանի, Բաշինջալյանի ու Թեղեմեզյանի, Ջարաբյանի, Հապանյանի, Բյուրբյանի, Երածիլյանի Շահնուրադյանի ու Ալանյանի, Բարայանի ու Ալեքսանյանի, դերասաններ Կյուլպենի, Մարտատյանի, Հովսեփյանի ու այլոց մասին, ուղեկից-պահապան դարձել նկրպական բեմերում ու երգչահանդեսներում, միջազգային ցուցահանդեսներում նրանց ունեցած մեծ հաջողություններին, դրվատել նրանց եռանդը: Հանդեսի էջերում հաճախ սեղ-սեղ նախադասությամբ բնորոշ խոսք է ստվել նորահայտ տաղանդների մասին, արվեստասեր հասարակայնության ուշադրությունը կրավիճել նրանց վրա: Այս տեսակետից շատ բնորոշ է Էդգար Շահինի օրհնակը:

Է. Շահինի մասին նկրպական մամուլում զրել են բազմաթիվ հոդվածներ: Գրել են Փարիզի և Արևմտաբի ամենամանազված գրադներն ու բնագրասերը, մշակույթի գործիչներն ու արվեստի տեսաբանները: Դրանցից Զուպանյանն առանձնացրել և «Անահիտում» ապագրել է Ռոմի Մարքոսի («Վակար Շահին», «Գագեթթ», 1900), Գարրիկի Մուրիկի («Հայ փորագրիչ մը», «Մուռլոլու...», 1902), Գյուստավ Մուրիկի («Վակար Շահին», «Վ.Արք Գեկորատիվ», 1905) անգլո-ֆրանսիական գեղարվեստական մեծ հանդեսներում հրատարակ-

ված հոդվածների բարգձմանությունները: Այդ հոդվածների հետ ծանոթությունը ցույց է տալիս, որ դրանց քննադատյունը պատասխան է: Հոդվածների հեղինակները Ռ. Մարքոս, Գ. Մուրիկ, Գ. Մուլիեն, Լեյտպական գեղարվեստական քննադատության ամենահեղինակավոր դերերից կին, միջնադարյան և ժամանակակից արվեստի խոշոր գիտակներ: Հետո, դրանցում Շահինի սանդղազորությունները գնահատվում են նկրպական կերպարվեստի զարգացման մակարդակում, համաշխարհային փորագրակարչական արվեստի մեջ բնորոշվում է հայ նկարչի տեղը՝ իբրև առաջնակարգ դերի: Եշմարիտ ու դիպուկ գնահատումներ են արվում նկարչի խորեղանությունը և զգայուն խառնվածքի, «ողորմելի կյանք» բարգձմանելու նրա ձգտումների, քարձի կարողության ու հազվագյուտ ներքնատեսության մասին (տե՛ս 1900, թիվ 4-5, էջ 111): Բայց և այնպես, «Անահիտում» (և ոչ միայն «Անահիտում») Շահինի սանդղազորության ամենից անբողակալն ու խոր վերլուծությունը ավել է իբրև Զուպանյանի Կոսթր «Մանգիլյան և Շահին» հոդվածի մասին է: Շահինը ընթացողին է ներկայացվում իր տաղանդի ամբողջ կրակոյտով ու ինքնատեղությամբ: Ի՛նչ միջավայրում, ինչպիսի՝ հեղինակների ազդեցությամբ է աճել ու զարգացել Շահին նկարիչը, ինչպիսի՝ նորերանգներ են հաղորդել նրա վրձնին ազգային խառնվածքի գծերը, կերպարների, ախարի, բնավորությունների արտացոլման ի՛նչ աշխարհ է իր համար քնտրել արվեստագետը: Ինքնատեղ մտացմամբ է Զուպանյանը բնծում այս հարցերը: Հավաստում է նկարչի՝ դեպի մշտական բազմազանությունն ու նոր հանգրվաններ ունեցած ձգտումը: «Շահին ամբողջ «սիր» մը ունի իր մտքին խոր պատասա, կյանքի պատկերներու բազմազանն ու քնարձակ շքան մը ամբողջ, որուն մեկ քանի առաջին հանգրվանները լոկ անցած էր դեռ... և հետզհետե պիտի ունենա ավելի լայն սահմանի մը մեջ, իր մասնավոր փիլիսոփայությունը, կյանքն ընթանելու անհասական ու խորունկ եղանակ մը, որ մասնավոր-դիտողի և համադրող-իրապաշտի այդ խառնվածքին մեջն» պիտի միշտ պահպանե մասածմի միությունը մը այս յազմածն, արտահայտության անբերուրդ հսկասակալությունը մեջ: Եվ ասոր համար է որ ունի չափազանցություն գործած չեն ըլլար՝ հավասարալով որ Շահին կոչված է մեծ արվեստագետներու կարգին մեջ տեղ մը զրավելու» (1900, թիվ 6-7-8, էջ 153-154):

«Անահիտ» այս գնահատումները, Շահինի սանդղազորական ձեռքբերումների ու նորանոր հաջողությունների մասին պարբերա-

բար արվող հաղորդումները մեծ դեր ունեցան ազգանդավոր հայ նկարչին հայրությանը ներկայացնելու, նրա գործը ժողովրդականացնելու իմաստով: Իսկ հանդեսի համարներում գեղեցիկամեծ Շախիբի գեղեցիկ «Յոթրանների» վերատպությունները ավելի են խորացնում ու գործնական դարձնում այդ ծանոթությունը:

Ընդհանրապես «Անահիտում» ինչպես արվեստի, այնպես էլ գրականության ու հոգևոր մշակույթի մյուս բնագավառների (ստանձին դեպքերում նաև հասարակական կյանքի) խնդիրների արծարծումները ներառում են նաև գեղարվեստական պատկերներ, հայ է համաշխարհային մշակույթի նշանավոր գործիչների, գրողների ու արվեստագետների լուսանկարներ՝ «Միսիրաբ», «Վ. Արվկյան», «Պերճ Պողոյանց», «Շիրվանզադե», «Ազանուր», «Տիկին Միրանույշ», «Գրիգոր Կյուրկենկ», «Նովոկի Շայրիի դերին մեջ», «Շոքոնտա», «Բյուզիս դը Շավան», «Փոլ Մունե» և այլն: Համաշխարհային արվեստի կերտվածքները («Ավրոդիտ», «Հերմես», «Արեմաս», «Աստղիկ», «Պարսկական արվեստ» և այլն) քննարկում էին Լուվրի, Փարիզի, Բեռլինի, Մյունխենի, Դրեզդենի, Լոնդոնի և այլ կենտրոնների թանգարաններից: Դրանք մեծ չափով նպաստում էին հանդեսում հրատարակված նյութերի հասարակական քննարկմանը<sup>46</sup>:

#### IV. ԱՐԵՎԱՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԸ ԵՎ «ԱՆԱՀԻՏԸ»

Պարբերական հրատարակությունը՝ իրրև լեզվաճանաչակերտայ, հակադիր-բազմակերպ ու տարաբնույթ կողմերի յուրօրինակ համակարգային ամբողջություն է, որ բնութագրվում է մի շարք բնորոշիկ հատկանշաններով. ժանրային բազմատարրությամբ պայմանավորված լեզվաճանաչակերտ հարուստ բազմազանությունը, խոսքի զգայական-արտահայտչական և քրատվական-արձանարանական տարրերի գույզարականությունը, քննրեցող լսարանի՝ իրրև լեզվական քնդիանրության, առանձնահատկությունները (լեզվաբանական տարրությունը, տարասեռությունը), լեզվական միջոցների գործառական և ինստատային կիրարկման յուրահատկությունները, հեղինակային ազգային դիրքորոշումը և այլն:

Կարևոր առանձնահատկություններից մեկն էլ պարբերական հրատարակության լեզվական համակարգի բազմաճ բնույթն է, գիտական, հրատարակատեսական, գրական-գեղարվեստական, պաշտոնական ոճերի համադիր գոյությունը մեկ պարբերականի մեջ՝ մեկի կամ մյուսի գերակշռությամբ: Մի կողմից, որ բնականաբար էի կարող անտեսվել հետագաուղի կողմից:

Իրրև կանոն, սակայն, նշված ոճերից ուշադրության կենտրոնում գործառվող հրատարակատեսական ոճն է, քանի որ այն ամենից ավելի է հատուկ պարբերական հրատարակությանը: Այդ իսկ պատճառով էլ որոշ հետազոտողներ առավել նպատակահարմար են գտնում պարբերականների լեզվաճոք գիտական քննության առեւտքա նրանցում գործառված լրագրային-հրատարակատեսական ժանրերի, երբեմն նաև մեկ ժանրի՝ գիտակրթական հոդվածի կամ տեսությունի՝ լեզվական յուրահատկությունների:

Հետագաման այս մեթոդը քեև գործնականում միանգամայն պարզեցված ու մատչելի հնարավորություններ է քննետում հարցի ու-

սումնախիճմանը, բայց ունի նկատելի սահմանափակություն. դժվարություններ են ստեղծվում պարբերականի լեզվաճանաչման նկարագրի համակողմանի ուսումնասիրման համար, երկրորդ պլան են մղվում նրա բնօրինակի գծերն ու հատկանիշները: (Գաղտնիք չէ, որ լրագրում կամ հանդեսում օգտագործվում են բառապաշարային, արտահայտչական, քերականական միջոցներ, լեզվաճանաչման արբեր միավորներ՝ անկախ ժանրային յուրահատկություններից):

Այս մեթոդը նվազ արդյունավետ է հատկապես, երբ նպատակ կա սովյալ պարբերականի լեզվաճանաչման կառուցվածք վերլուծել լեզվի պատմական զարգացման բնօրինակը խոսնապատկերի վրա, լեզվալեզան տարբեր մակարդակներում պատմականորեն կատարվող փոփոխությունների մեջ:

Կատարել ենք մտախառնում «Անահիթ» լեզուն և ոճը վերլուծել ու գնահատել հենց այդ տեսանկյունից՝ արտակ առդրոնավետ է թվացել վերլուծության այսպես կոչված համադրական եղանակը: Այս պարագային արդեն հանդեսի լեզվի բառապաշարային ու քերականական մակարդակները բնօրինակի են անցվում ավելի շրջանակի արևմտահայ գրական աշխարհագրի նորմերի ու ձևավորությունների համեմատությամբ և նույն ժամանակ լրագրային-իրապարտականության լեզվի ու ոճի (այսուհետև՝ իրատարակախոսական ոճ) սկզբունքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Առանձին դեպքերում փորձ է արվում նշված լեզվական մակարդակները համեմատության մեջ դնել ժամանակի արևմտահայ մյուս պարբերականների լեզվական համապատասխան ձևերի ու ոճական հատկանիշների հետ:

«Անահիթում» գործավոր ոճերից գլխավորապես խոսվելու է իրատարակախոսական ոճի մասին, որքանով որ մեզ ամենից սուս է հետաքրքրում է հանդեսի՝ իբրև պարբերական իրատարակության, հնարարանությունը այս անգամ դիտված լեզվական տեսանկյունից: Իսկ մյուս ոճերը բնվելու են այն չափով, ինչ չափով որ դրանք հասկանիչներ են ավելացնում նշված բնօրագրանքը: Խոսքն ամենից առաջ գրական-գեղարվեստական ոճի մասին է, որ լայնորեն գործառնում է «Անահիթը»՝ որպես գրական բնօրինակի իրատարակություն: (Բնականաբար, այս դեպքում մեր հետաքրքրությունից դուրս է հանդիսի աշխատակից-հեղինակների անհատական ոճերի ուսումնասիրությունը, առավել կա, որ դա մեկ համընդհանր ճյուղի սահմաններում իրականացվելիս խոսիք էլ չէ: Դրանք մասին խոսք կլինի

միայն հանդեսի լեզվաճանաչման բնօրինակը հարցերի կտակակցությամբ):

Արևմտահայ գրական աշխարհագրի նորմավորման ու վերջնական հարթմանակի ուղին համեմատաբար տևական ընթացք ունեցավ՝ թերևս էիննական պատճառներ ունենալով՝ և հասարակական-ազգային կյանքի աննպաստ պայմանները, և արևմտահայ իրականության մեջ խոր արմատներ ձգած գրարարի դժվարությամբ հաղաթուրով ազդեցությունները:

19-րդ դարի կեսերին արևմտահայ զարթոնքի սերնդի (Գ. Օսյան, Ն. Ռախիմյան, Օ. Խոնասարյան, Մ. Մամոնյան, Հ. Սվաճյան և ուրիշներ) ջանքերով լայն հունի մեջ դրվեց արևմտահայ գրական աշխարհագրի զարգացման գործը, մեծապես բնօրինակից նրա գործածություն շրջանակները, զգալի աշխատանք կատարվեց արևմտահայերենի քերականական իրողությունների գիտակցական նորմավորման ուղղությամբ: Հարունավոր գրատարարի պայմաններում նպատակային ու խիստ գործնական բնույթ ստացավ թուրքերենի ազդեցություններից, օտարամետ ձևախեղումներից լեզվի գտնան ու մաքրման մասնագրությունը<sup>2</sup>:

Արևմտահայ գրական լեզվի զարգացման այդ շրջանում (որ ձգվեց մինչև 80-ականներ) իբրև բարձրակետ տնեցավ Գ. Դարյանի գեղարվեստական խոսքն ու ժամանակի որոշ պարբերականների («Մասիս», «Նորոզ», «Բարձրավույ» և այլն) թրքարանություններից ազատագրված աշխարհագրը: Մակայն արևմտահայ գրական լեզվի մշակման ու քերականական ձևերի կայունացման, նրա վերջնական հաղթանակի հոգսը, գրատարարի իմացական ու լեզվական հաղթանակը դուրս են այդ սերնդի ջանքերից: Նշված տասնամյակների գրատարարության և իրատարակագրության մեջ իշխող գրական լեզուն զարարախոսական աշխարհագրն է կամ արևմտահայի խոսքով՝ «խառնակ խոսքերն»: Առավել կամ պակաս չափով այդ լեզվով էր ստեղծագործում ժամանակի գրողների ու իրատարակախոսների մեծագույն մասը: «Նույն իսկ Դարյանը, որ այն ժամանակի աշխարհագրային բանաստեղծ էր, իր ամենից ակտիվ բնարական տաղերի մեջ անգամ հաճախ գործ է ածում շատ գրարարական մի լեզու»<sup>3</sup>:

80-ականներ: Այս շրջանում խոսքի յուրման համար ստեղծված իրական մակարդակներն արդյունք են ոչ միայն գուտ լեզվական իրողությունների աստիճանական և բնականորեն զարգացման, այլև մեծ չափով պայմանավորված էին արտակերպական գործոններով:

Խոսքը արևմտահայ հասարակական գիտակցության ու գեղարվեստական մտածողության մեջ կատարվող վերափոխումների մասին է: Կյանքի բոլոր ոլորտներ թափափաղ իրապաշտ հայացքը քերականական նորմերի ճշգրտման ու միօրինակմանցման, լեզվի ժողովրդայնացման ու ազգային հատկանիշների ստուգման պահանջներ է քննադատում ժամանակի լեզվամտածողությանը, գրական նոր վերելքը՝ նոր չափանիշներ պարտադրում արևմտահայ լեզվի նորմավորման ընթացքին: Եվ երև նույն 70-ականներին, անգամ 80-ականների կեսերին պարբերական մամուլում («Մասիս», «Ճաղիկ», «Արևիկ») և այլն՝ ոչ շարքային գրողների, այլ գրական նոր վերելքը գլխավորելու կոչված հեղինակների (Ա. Արիխայան, Տ. Կանտարական, Լ. Բաշայան և ուրիշներ) գրվածքներում համախաղեսկ երևույթ էր նեղ բարբառային բառերի, բուն գրարարյան իմաստով տարբեր արտահայտությունների ու դարձվածքների գործածությունը, քերականահայ տարբերացություններում զգալի կշիռ էին կազմում գրարարյան գրգռվածները, սպա մեկ, մեկուկես սաստմանյակ հետո պտակները նկատելիորեն փոխվում է 90-ականների կեսերին արևմտահայ հասարակական-մշակութային կյանքում գործառվող գրական աշխարհաբար իմնականում ազատված է ժողովրդին անհասկանալի գրարարյան ու նեղ բարբառային տարրերից, անհարկի բազմաձևություններից, համախաղեսկ չեն աշխարհաբարին ոչ հաստկ կառուցվածքները: Լեզվի շուրջ մամուլում ծավալված բանավեճերն էլ իրենք բովանդակությամբ փարթիճ: այլ են: Դրանք ժամանակավրեպ բանավեճեր չեն (քնն այդպիսի առանձին հոդվածներ էլ եղան) գրական աշխարհաբարի արդեն հաստատված իրավունքների վերստին հաստատման շուրջը (նոր սերունդն այս խնդիրը վերջնականապես լուծված էր համարում), այլ և փնտռում ունեն ճշգրտելու այն հնարավոր ուղիները, որոնցով պիտի գարգանար ու հարստանար նոր գրական հայերենը: (Ուշագրավ է, որ Կ. Գյուլի կեղծոճական վարժարանի սաներին նույն 90-ականների սկզբին իրեն լեզվական վարժություններ հանձնարարվում էր գրարարայան տերտեր փարբառաբար մարքո աշխարհաբարով):

1890-ական թվականների վերջերին և 1900-ականների սկզբներին արդեն արևմտահայ գեղարվեստական գրականության ու իրապարակախոսության մեջ գործածվող գրական աշխարհաբարն անբողոքային մեջ հաստատված է, հիմնական սկզբունքներում ու օրինակաբանություններում նորմավորված:

1890-1900-ականների դեբր արևմտահայ գրական լեզվի գարգացման շրջանում, սակայն, միայն դրանով չի սահմանափակվում: Օրավարգում դրվում է մի կարևոր լեզվական խնդիր ևս: Խոսքը արևմտահայ գրական աշխարհաբարի գեղարվեստական մշակման ու կատարելագործման, հետագա ժողովրդայնացման, իրապարակագրական ոճի գերակշիռ ազդեցությունների հարուստարման մասին է: Ու երև 80-ականներին այս ձգտումը դեռ որոշարկված է (քնն առանձին հեղինակների՝ Գ. Ջուրայի, Լ. Բաշայանի, Տ. Կանտարականի և ուրիշների մոտ նկատելիորեն սամոլիդայնացման, իրապարակագրական արդեն նոր հեղինակների գրական-գեղարվեստական գործունեության մեջ այն սամուն է ծրագրային նշանակություն: Արևմտահայ գեղարվեստ սերունդը սկսի որդիգրել լեզվի պաշտամունքի նրա և՛ ազգային (իրև, ազգային գոյության ձև), և՛ գեղարվեստական (իրև, բարձր գրականության գործիչ) շնրանմաներով:

1895-ի «Ճաղիկ» քնն կարճատև, քայքայ նշանակալից ու հաջողված փորձ է այս ուղղությամբ: Բայց միայն այդքան: Գրական լեզվի հետագա առաջընթաց կարիք ուներ անկան ու իմնավոր գործունեության:

Այս բնագավառում կատարած իր դերով պարբերական իրապարակություններից առանձնանում է «Անահիթը»:

#### 4.1 «ԱՆԱՀԻԾ» ԵՎ ՊԻՆՏՈՒՄՆԻՍ

Լեզվական խնդիրների քննությունը «Անահիթում» ելակետ ունի հանդեսի գործունեության ընդհանուր գաղափարական սկզբունքները:

Ազգային ինքնություն գոյության հաստատման համար անպայման է համաշխարհային մշակույթին սովոր ժողովրդի հոգևոր տուրքը, մշակութային ինքնօրինակությունը: «Անահիթի» ազգային ծրագրին հաստով այս արամարանությունը լեզուն դիտում է անհնարորոշ հայասանչա ժողովրդի հոգևոր անկախության ու ինքնատիպության, հետևարար՝ մեծազույն ազգային ֆիզիկական գոյության: Ու որպես մշակված, հարուստ, ինքնատիպ և ուժեղ, որպես ավելի կենդանի է լեզուն, այնքան բացահայտ է նրա ժողովրդի հոգևոր անկախությունը, անփոքիչ՝ գոյության իրավունքը: Այդ մասին շատ հաստկ ու որոշակի է ձևակերպվում «Անահիթում»... «Ազգային»

տեսակետով, ոչինչ ավելի արժեք ունի մեզի համար քան մեր լեզուն, մեր ցեղային ինքնությունը մարդկության մեջ մշակակերպող մեծագույն աստարը և որում ուղիղ այն ամբողջ պահպանման ու կազմավորման արժանարանական և ուշիմ գարգացմանը նպաստելու ուժ ջանք «ազգային գործին համար աշխատելու կը համապատասխանեն նորեն» (1903, թիվ 2, էջ 61):

Հայոց լեզվի ու հայ ժողովրդի պարագային բնկող ժամանակաշրջանում լեզվի հազարամյակն ու հասարակական նշանակությունը քննդժվում էր հավանաբար պատմական ու քաղաքական պատճառներով, լեզվի գարգացմանն ուղղված յուրաքանչյուր ձեռնարկ նկատվում էր հայքենասիրական դրսևորում, ազգամոլեր գործ: Լեզուն դիտվում է *ազգային գոյության ձև*:

Այս բնութեանով է, որ հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների հուզեր մերձեցման հարցում հանդեսը քացատիկ կարևոր դեր է հասկացնում լեզվական գործոնին: (Նույնիսկ փորձ է արվում մշակել հասուկ կանոններ՝ երկու «բարբառներն» իրար մերձեցնելու համար, ինչպես օրինակ ներգոյական «ում» ձևի ներմուծումը արևմտահայերեն՝ *Պոլսում*, Իզմիրում, Պիերլինում, Փարիզում (1903, էջ 86, 105), որը սակայն քննդեկտություն չգտավ):

Լեզվի քնդիմանոր կառուցվածքում «Անահիտան» առանձնացնում է երկու կողմ՝ այսպես կոչված ուղեաշարը և մարմինը: Առաջինը լեզվի առևական, կայուն, համեմատաբար անվճռելի մասն է (քերականական կառուցվածքը), երկրորդը՝ մշակական անձան, փոփոխումն ենթակա մասը (բառապաշարը): Երև առաջինն ազդեցություն է լեզվի ամբողջությունը, քնդիմանոր միությունը, սահմանվում տեսական օրենքների ձևով, ապա երկրորդը իմանական խթանն է լեզվի արագ բնաշրջության ու գորգացման: Հարկ է միայն քնդիմանոր սահմանները գծել այդ գորգացման, մնացադր, ինչ որ խորք է ու անհաշտ իր ուղուն, իզուն ժամանակի քնդացքում մի կողմ կենտ):

Այսպիսով, լեզուն չի դիտվում անշարժ, անփոփոխ արված մի բան, «բավարանական խնդիր», որ մեկ հարվածով լուծվելիք միայն մեկ պատասխան ունի: «...Լեզու մը քայդ էակ մըն է, որ, մշակակերպական լինելիության մը մեջ, հավիտենաբար կը կազմվի՝ միշտ փոփոխվելով...» (1902, թիվ 5, էջ 102):

Արտահայտված կարծիքներում դժվար չէ նկատել պատմական մոտեցում հարցին: Գա առավել որոշակի է երևում, երբ հանդեսում բնկվում են հայոց լեզվի պատմությունը, նրա գարգացման այս կտ

այն շրջափոխին առնչվող խնդիրներ: Ի դեպ, դրանք որոշ վիճելի հարցադրամներով բնկություն են բունում այսօրվա գիտականորեն մշակված տեսակետների կողքին:

«Անահիտան» մի շարք փաստարկներով պաշտպանվում է այն կարծիքը, քառ որի հայերենը, ինչպես ամեն մի լեզու, պետք է ունենա լինի իր բնիկ կնքը, որը հարստամալով այլ լեզուների փոխառված տարրերով, «զանգուր իր ուրույն հուզվույն մեջ համաձայնեցնելով», մշակվում ու կերտարանսփոխելով՝ հասկ է այն քազմաասարը, ներդաշնակ ու ինքնատիպ լեզվին, որ է ոսկեդարյան հայերենը:

Առաջ է քաշվում և պաշտպանվում այն տեսակետը, որ աշխարհարարի տարրերը սկսել են ձևավորվել դեռ 13-14-րդ դարերում, ապա փոխանցվել հետագա դարերին՝ հարստամալով լեզվական նոր իլոդություններով: Իսկ նոր լեզվի կազմավորման կարևորագույն շրջանը համարվում է 19-րդ դարի կեսերը: Անորադասնալով մոտ անցյալում աշխարհարարի հաստատման համար մղվող պայքարին հանդեսը միանշանակ պաշտպանում է աշխարհարարի իրավունքը: Գրաբարը մեծախելու է ու պարզ, կանոնավոր ու վճիռ, ազատ ու անկասկա է, «զորիչ Հայության մը գոյությունն ու հանդարտ ուժն ունի»: Սակայն որքան էլ ճոխ ու մշակված՝ այն իր դերը վաղուց կատարել է («իր դերը կատարած, ալվարած ու մեռած է շատեց» իբրև գրական գործիք):

Արևելահայ աշխարհարարի հարցանակի գործում հանդեսը մեծ դեր է հասկացնում Մ. Նալբանդյանին, Սա. Նազարյանին, Կ. Արվալանին և այլոց: Իսկ արևմտահայ հատվածում՝ Ն. Չորայանին, Գ. Օսյանին, Սա. Ոսկանյանին, Հ. Սվանյանին և ուրիշների: Ըստ որում, դիտվում է, որ արևմտահայ հատվածում հարցանակը փորքին ուշացավ, որովհետև արևելահայերենում Արվալանն առաջին հարվածից հարցանակ տարավ իր գործը կատարելով գրական իրաշխիքներով: Իսկ մյուս հատվածում ծայր առան վեճերը, և աշխարհարար կենդանի գրականությունը հետո եկավ:

Այս քնդուշումներից երևում է, որ հանդեսը գրական լեզվի հարցանակն անպայման կապի մեջ է տեսնում գերտրվատական գրականության հետ, քառ որի՝ ճշմարտ, կենդանի գրականություն է վկայությունը լեզվական հարցանակի: Մյուս կողմից, բժում է, հակասություն է տեղեղմում այլ ամբողջ հանդեսում արտահայտված մեկ այլ մարքի հետ: Արվալանին հատկացնելով արժանվույն անդ (Արվա-

յանն առաջինն էր, որ «խտված լեզվով» շարադրեց գլուխգործոց մը») միաժամանակ ստված է, որ արևեկահայ աշխարհաբարի հաստատման մ վերջնական հաջողման հեղինակը ինքը՝ Նազարյանն է, նա է, «որ կոված է վճռական կեխիք աշխարհաբարին համար և վերջնական հաղթանակը տարած է» (1903, թիվ 1, էջ 2): Իրականում այստեղ ոչ մի հակասություն էլ չկա: Ուղղակի տարբեր են հարցի մտացման կերպերը. մի դեպքում խաբը նոր լեզվի գեղարվեստական բարձրանքներ կիրարկման մասին է, մյուս դեպքում գաղափարական-տեսական խնդիրն է ուշադրարյան կենտրոնում:

«Անահիտում» յուր բնույթյան առարկա են դառնում հայոց լեզվի զարգացման ժամանակակից շրջանի խնդիրները, որոնց շուրջը քաջված բանավեճին («Արի հայերենը») մասնակցում են Ա. Չոպանյանը, Գ. Չեարսյանը, Գ. Վանցյանը, Ա. Սևյեն և ուրիշներ:

Որ աշխարհաբարն անվերապահորեն հաստատել է իր իրավունքները, դարձել իշխող գրական լեզու, այն Չոպանյանի համարում է այլևս վեճ չբերողով ճշմարտություն: Ավելին, նա սկզբունքորեն մեղծում է ամեն մի փորձ, որ միտում է գրական աստվածը դուրս բերել *գրարարական* աշխարհաբարը. «...մեր արդի գրականության համար պետք է գործածել միմիայն աշխարհաբարը, և գուտ աշխարհաբարը...» (նույն տեղում, թիվ 5, էջ 93): Այսպիսին է Չոպանյանի մտացմամբ: Թեև պետք է տեսլ, որ նա հատկապես չի սահմանափակում, իսկ երբեմն էլ ուղղակի նույնացնում է գրական լեզու և գրականության լեզու ըմբռնումները, չեն դիտարկվում գրական լեզվի մյուս տարբերակները կամ ոճերը: Գրական լեզուն նախ և առաջ ընկալվում է իբրև գեղարվեստական գրականության լեզու: Բայց դա չի խանգարել շատ դիպուկ և հստակ ձևակերպումներն արտա արձանահայ գրական աշխարհաբարի զարգացման խնդիրներին:

Լեզվի հասարակական ու պատմական բնույթի ընդգծմամբ գուգահեռ հանդեսի տեսակի դրույթներում առանձնակի շեշտվում է նաև նրա *գեղագիտական* կողմը: Ըստ այդ ըմբռնման՝ լեզուն ինքնին գեղագիտական արժեք է և գուտ գեղեցիկի տեսանկյունից ու չափանիշներով գնահատվող իրողություն: Նվաճությունը, պարզությունը, հստակ ու հեղված նկարագիրը, հեշտուրկալ ու դուրիմաց կերպը նրա բնութագրական հատկանիշներն են:

Հիմնական տեսական խնդիրը, որ այս մտացմամբ «Անահիտում» մշակվում է հետադարձություն, լեզվի *գեղարվեստականոր* յան խնդիրն է: Դա, անշուշտ, չի սահմանափակվում լեզվի ստեղծարվածությունը, հղված է գեղեցիկ ոճի ստեղծմամբ: Լեզվի գեղարվեստականությունը անպայմանորեն անգլայանություն ենթադրում է նախ և առաջ լեզվի բարձր ժողովրդայնություն, ազգային ոգու, ազգային նկարագրի ընդգծում և ապա, իհարկե, գուտ «գեղեցիկագիտական» չափանիշների պահպանում:

Որիչ խոսքով, լեզվի հարցում նույնպես ազգային ու գեղարվեստական հանցից դիտում է անբաժանելի միասնություն մեջ:

Չնայած անհատի դերի որոշ չափազանցված գնահատմանը՝ հանդեսում շեշտվում է այն միտքը, որ վերջին հաշվով լեզվի ստեղծողն ու կրողը ժողովուրդն է, և անհատի ազատությունը ենթարկ է ժողովրդական կենդանի խաբի ու ավյալ գրական լեզվի հիմունքը կազմող բարբարի օրենքներին ու օրինակարարություններին: Հետաքրքրական է հետևյալ փաստը. առանձին բառերի թեքված ձև-վերած *ի* և *ու* ձայնավորների պահպանումը (*չարժամի, ժողովուրդի, գիտի, բիծի, փառի* և այլն) հատուկ է պոետայն բարբարին, սակայն դեմ է գրարարի կանոններին: Հաստիկ ընդգծելով այդ փաստը՝ «Անահիտը» դա նկատում է աշխարհաբարի անճարճությունը թեքականական հատկանիշներից մեկը: Նույն պատիկ զարգացվում է այն միտքը, որ լեզուն կենդանի է, ուժեղ և ինքնատիպ ինքն այդ տարբերությունների մեջ. «Նոր լեզուներում կյանքի իրավունք տվողը, գիտնք իրենց մայր լեզվին գատողը, իրենց գլխավոր ինքնատարությունը կազմողը, իրենց «բարբարություններն» են, երբ աշխարհաբարին գրարարի դեմ մեղանումները ջնջելու, աշխարհաբարը գայություն առնելու իրավունքն իր դարի, որքան ավելի գունոր շեշտենք, այնքան ավելի աշխարհաբարին ինքնուրույն ոգին է ուժը քազմապատկած կ'ըլանք» (նույն տեղում, էջ 95):

Նույն չափանիշներով կնք գնահատվում նաև գրարարյան նախ-դիրքերի, հոգնակերտ *քի* գործածությունը, թեքականական առանձին կատյցներ, ինչպես նաև բառասուշարի հարցերը:

Վերջին դեպքում հատկապես հանցից խիստ հետադարձ է, լինի դա ինք, մտացված գրարարյան բառերի, բարբարային ձևերի օգտագործում, թե վիտատություն օտար լեզուներից: Սկզբունք այն է, որ բոլոր բառերն էլ գործածելի են, երբ խաբը չեն արդի աշխարհաբարի լեզվազգացողությանը: Թեև նախաձեռնար են համարվում խոտակական լեզվում պահպանվածներն և գուտ ժողովրդական ու գաղա-նական բառերը, բանի որ դրանք «ավելի կյանք կը պարունակեն, ա-վելի հստակ ու արթա, հետևարար և ավելի գեղեցիկ կերպով կ'ար-

առաջադեմ մտածումը»:

Հանդես իր որոշարկված վերաբերմունքն ունի փոխառությունների նկատմամբ: Վերջիններս դիտվում են լեզվի հարստացման կարևորագույն աղբյուրներից մեկը: Լեզուն իր դռները օտար բառերի արևո գոց չպետք է արևի, երև դրանք անհարազատ չեն ու չեն խաբարում նրա ինքնությունը, ազգային, հիմունքը: Սա ընդունելով իբրև կրակե՛ր՝ հանդեսն ավելացնում է նաև, որ օտար լեզուներից փոխառված բառերը հարկ է որ մշխ համապատասխանեն «պետքի մը» և յուրացվեն փոխառյալ լեզվի կողմից: Որքանով որ՝ «Լեզու մը երբք իր ինքնությունը չի կորցնցներ՝ բարձրագույն զարգացում ունեցող լեզվի մը գեղեցկագիտական առավելաբայունները յուրացնելով, երբ գիտն իր փոխ առածը իր նկարագրին համաձայնեցնել, զայն իր ուրայն կենթիզը գրռչնէ...» (նույն տեղում, էջ 99):

Այսպիսով, «Անահիտը» տեսականորեն ընդհանրացնում է հստակ ձևակերպում է իր ըմբռնումները գրարարի, բարբառների, ժամանակակից փոխառությունների և արդի հայերենի փոխհարաբերությունների մասին:

Լեզվի գեղարվեստականացման խնդիրը, ինչպես ասվեց, չի դիտվում գեղարվեստական գրականության զարգացման ընթացքից դուրս: Այս հիմքի վրա զարգացնում է ուշագրավ հայացք լեզվի կաշվորագույն հատկանիշներից մեկի՝ լեզուն իբրև բարձր գրակամության ստեղծման գործիք (և առհասարակ, ազգային մշակույթի ձևավորման ու զարգացման կարևոր գործոն) դարձնելու վերաբերյալ: «Հոյ՛ արդեն լեզվի խնդրեն դուրս կ'ելնեն, ոճի, գրական արվեստի ոլորտը կը մտնենք»: Իբրև շարունակություն այս մտքի՝ լեզուն դիտվում է «ոճին նյութեղենը», իսկ նրա բնականոն զարգացումը՝ ոճի մշակման, կատարելագործման անպայման պահանջ: Իր հերթին լեզվի գեղարվեստականացումն անվիճելիորեն կապվում է ոճի զարգացման հետ, գրողի անհատական ոճի մշակման, հարստացման հետ. «առանց ոճի մշակման, առանց «գեղեցկագիտական ձգտումների» լեզու մը չի կրնար զարգանալ և առող համար է որ լեզվի մը զարգացումը կը կատարվի ավելի գրագիտներու քան քերականագիտներու ձեռքով» (նույն տեղում, էջ 97):

Ոճը, ըստ հանդեսի, գրելու արվեստն է, և իբրև այդպիսին՝ անհատական երևույթ է, շատ բաժնով կախված է հենց իր՝ գրողի հմտությունից, ստեղծագործական վարպետությունից, յուրացրած գրական ազդեցություններից, այն կարողությունից, որով ունի օգուր-

վում է լեզվի ընձեռած հնարավորություններից: Իսկ հայերենն այդպիսի հնարավորություններ լայնորեն բացում է գրական օգտագործման համար:

Այս բնորոշումներում ըստ էության տրվում են ոճի անձնատիպական հատկանիշներից զոճն մի բանիս: Այն է՝ ոճը լեզվի կիրառման, օգտագործման կատեգորիա է: Հետևաբար ոճն ըմբռնվում է իբրև տեսություն, այնպես, ինչպես լեզուն: Մրանց էլ հետևում է, որ նրան նույնպես հատուկ է պատմականորեն սկզբունքը: (Խոսելով է. Սվաճյանի լեզվի և ոճի մասին՝ հանդեսը շատ հստակ ընդգծում է այն միտքը, որ այդ ոճի հրապարակախոսականությունը քիչարժեքում էր նաև պատմական իրականությունը, ժամանակով: Նույն դիրքերից են գնահատվում 80-ականներին Լրվիխյանի սերնդի՝ հասարակական օգտավարության միտող գրվածքների ոճի խնդիրները): Եվ վերջապես, ոճը խորապես անհատական երևույթ է, կախված է գրողի ճաշակից, հմտությունից, կարողությունից, որ ոչ միայն ազդանդի, այլև գրական ու լեզվական իստատարական հարց է: Այս առումով հանդեսը բացառիկ տեղ է հատկացնում անցյալի գրական ժառանգության յուրացմանը և, ինչպիսի, բարձրանություններին:

«Անահիտը» բազմաթիվ աղիքներով անդրադառնում է րե՛ հին ու նոր շրջանի հայ գրողների և րե՛ օտար եղիցանակների լեզվի ու ոճի հարցերին, առաջի դիպուկ բնութագրումներ, որ արժեքավոր են նաև գիտական տեսանկյունից: Առհասարակ, «Անահիտը» ժամանակի այն պարբերականն է, որ լեզվի ու ոճի հարցերը մշտապես ունեցել է ուշադրություն կենտրոնում: Գաղտնիք չէ, որ հանդեսի բնագրատությունը մեծաքանակ գրականություն էր տեսնում այնտեղ, որտեղ հարուստ գաղափարական բովանդակության հետ չկար իղկված, մշակված, բարձր ոճ, չկար գեղարվեստականություն նաև գրու լեզվական առումով:

#### 4.2 «ԱՆԱՀԻՏ» ԵՎ «ԱՊՐԱՎԱՍՈՒՄՈՒԹՅԱՆ ԼԵՋՈՒՆ ԵՎ ՈՃԸ

«Անահիտը» բնութագրող մի շարք գործոններ հնարավորություն են առաջ խոսելու նրա լեզվի և ոճի՝ իբրև քիչ քան շատ համապարփակ երևույթի ընդհանրական գծերի մասին: Որք՛նք են այդ գործոնները:

Առաջին. հանդիսի հրատարակատեսական բաժնի նյութերի գզալի մասը մի հեղինակի (Ա. Չապանյան) գործ է, խորապես կրում է անհատական ոճի կնիքը:

Երկրորդ. մյուս հեղինակների գրվածքները հանդեսում տեղ են գտել քննադատարար՝ հենց լեզվի և ոճի առումով: Բացի այդ, դրանց մի մասը ոճական խնդրագրան է ենթարկվել: Այդ «միջամատուրյունը» հիմնականում ընդունվել է հեղինակների կողմից (Միամանքո, Վարդման, Թեբեյան և արիշներ), բայց երբեմն էլ անդիք է տվել ակնհայտ դժգոհությունների (Ա. Չառքզ, Գ. Վանցյան): Բոլոր դեպքերում, Չապանյանն իբրև խմբագիր հետևել է շատ որոշակի սկզբունքների, ցանաճել է հարգապան մնալ լեզվի և ոճի հարցերի շուրջ հանդեսում աստաշարված անսական դրսյունքներին<sup>5</sup>:

Երրորդ. որքան էլ բազմաբնույթ է հանդեսի աշխատակից-հեղինակների ոճը, որքան էլ առարսես է նրանց լեզուն, այսու-հանդերձ, մի կարևոր գծով ընդհանրական է գրերի բոլորի համար: Խոսքը կանոնարկված ձևերի, հաստատացող գեղարվեստական պահանջների, լեզվի ժողովրդայնացման, ազգային լեզվամտա-ծողության մասին է:

Թեև 1890-ականների սկզբի արևմտահայ մամուլի լեզվում նորմավորման միօրինակությունը ակնհայտ է, գրական հայերենը՝ բոլոր հիմնական օրինակափոխություններով հաստատված, սակայն մի շարք ձևեր դեռևս ընդհանրացված չեն: Ժամանակի, առանձին դեպքերում նաև ավելի ուշ շրջանի պարբերականներում («Բյուրական», «Մասիս», «Արևելյան մամուլ», «Հանդես ամսօրյա», «Շիրակ», «Նոր կյանք», «Բազմավեր» և այլն)<sup>6</sup> դեռ համախառնել կիրառություն ունեին գրարարի, միջին հայերենի ու բարբառների ստղծությունը կազմված ձևեր, առաքրբաց քերականական կառույցներ, նախորդավոր կապակցություններ, որոնք հետագայում պիտի դուրս մնային արևմտահայ գրական լեզվից: Անմի-օրինակությունը գզալի էր հատկապես հոլովման ու խոնարհման համակարգերում: Այս անակնեղ «Անահիտ» լեզուն ներկա-յանում է ավելի կանոնական ու մշակված<sup>6</sup>: Այսպես.

1) Երև նախորդ շրջանի (առանձին դեպքերում նաև ժա-մանակակից) արևմտահայ մամուլի լեզվում գործածություն ունեին անճանկան, ցուցական և հարաբերական դերանունների՝ նաև գրա-բարբից ու միջին հայերենից վկայված ձևերը, սպա «Անահիտում», թիք բացառություններով, գործածական են գրական աշխար-

հարարում կանոնազրկված ձևերը: Մի դեպքում ունենք՝ քստ նոր կարգադրության *մերում* (Բյ., 1889, թիվ 1, էջ 1), *նորս, նորս, մեր* (ն. տ., էջ 13), Այլ և չիք գործ *որոյ* ընդհանրական հանգամանք (ն. տ., էջ 157, էջ 217), *նորս* կրճատական պիտույից (Ծ., 1890, թիվ 311, էջ 153), *ս'ը* լին *որ...* (ն. տ.), *իճրանք* ինչ դիրքի տեղ ալ լինին (ն. տ.), հեռու կենալու *ձեճ* (ն. տ., 1890, թիվ 318, էջ 210), *որը* (Մս., 1893, թիվ 3978, էջ 83), կ'տու *իճ* (ն. տ., թիվ 1, էջ 2, 5), *յորում* (ն. տ., 1896, թիվ 4, էջ 100), *որոյ* բաները, *որոյ* կ'հակին (Աք. ս., 1897, թիվ 1, էջ 75, 76), *որոյ* գրություն շարժադիրին (Բզգ., 1898, թիվ 6, էջ 267), կու տայ *մեզ* (ն. տ., էջ 263), *սորս* կը կուտուին (ն. տ., թիվ 8, էջ 367) և այլն, մյուս դեպքում՝ «Անահիտում», ունենք՝ հարաբերություններ խզվող *իճձ* (1901, թիվ 3, էջ 75), անուանելով *գիս* (ն. տ.), հայտնած էին *իճի* (ն. տ.), *որոնք* հայտն պիտի տան (ն. տ., թիվ 9, էջ 217), *որում* ամբողջ կենալը (ն. տ.), *զիրենք*, տան *իրենք* (ն. տ., թիվ 4-5, էջ 135), *գործը* բոլորն ալ (1902, թիվ 5, էջ 102), *իճձ* անելի քս (ն. տ., թիվ 8, էջ 170), *գայն* ցույց տուած շղջան (ն. տ., էջ 169), Մանեկային *մեզի* կը հաղորդին (ն. տ., 1903, թիվ 9, էջ 106), *մեզ* մոլեռանդ կուտուրան մը մէջ պահեր (1902, թիվ 8, էջ 169) և այլն: (Հազվադեպ՝ *մեճ* շատեր (1902, թիվ 5, էջ 99):

2) Գրական արևմտահայերենի ժխտական խոնարհման կազմությունը միշտ չէ որ պահպանվում է 90-ականների, երբեմն նաև ավելի ուշ շրջանի մամուլի լեզվում: Չի-ն համախ օգտագործվում է այնտեղ, որտեղ քստ կանոնի պետք է լինեք եղանակելին կամ օժանդակ բային կցված չ: Այսպես՝ ազգորին *չի մոռնալ* (Բզգ., 1900, թիվ 6, էջ 244), *չի ծանոթացան* (Մս., 1902, թիվ 1, էջ 1), *չի կայ* (ն. տ., էջ 33), *չի կենդանացած* (Ծ., 1890, թիվ 311, էջ 156), *չի հաճան* (Բյ., 1903, թիվ 10, էջ 181), *չի փայլացոց* (ն. տ., թիվ 17, էջ 322): Չի օժանդակ բայի ժխտական ձևի այսպիսի գործածության օրինակներ են հանդիպում նաև այնպիսի պարբերականներում, որոնց լեզուն վերջիններին համեմատության բավականաչափ մշակված է ու նորմավորված: Խոսքը «Շիրակ» և «Նոր կյանք» հանդեսների մասին է. տեղ *չի կայ* (Շ., 1905, թիվ 2, էջ 138), *չի կրցա* (ն. տ., էջ 139), *պիտի չի մնան* (Ն. կ., 1898, թիվ 6, էջ 83), սանձում *չի կայ* (ն. տ., թիվ 15, էջ 225), յնգափոխական *չի կայ* (ն. տ., էջ 226) և այլն: «Անահիտում» անց քստաց բացառությունների պահպանում է խոնարհման՝ գրական լեզվին հատուկ կազմությունները՝ *չարոնակից* շնորիկ (1901, թիվ 2, էջ 60), կենսի նշան *չէ առած*



(ն. ա.), *պիտի չգանուի՞ն* (ն. ա.), արքայող *չի գիշանիր* (ն. ա.), պետք է *չմտնայ* (ն. ա., թիվ 4-5, էջ 103), ասարակոյս *չկայ* (ն. ա.) և այլն:

3) Ժամանակի արևմտահայ մամուլում լայն գործածություն ուներ *իննչ* բայն իր խոնարհված ձևերով, սակայն «Անահիտ» քննարոն է *ըլլայ ձևը*, որ վկայված է գրական արևմտահայերենում: Հետևաբար պատկերն այսպիսին է՝ *պիտի իննի* (Մ., 1890, էջ 321, 234, 289), *կ'իննի* (Ար. մ., 1899, թիվ 7, էջ 258), *կ'ըմայ իննի* (ն. ա., էջ 263), գիտուն *իննի* (ն. ա., 1897, թիվ 1, էջ 5), կ'ըմանայ *իննի* մեծ կեղոն մը (Մս., 1896, թիվ 6, էջ 166), *իննի* (Շ., 1905, թիվ 1, էջ 12), իսկ «Անահիտում» ունենք՝ պետք է այսպես *ըլլայ* (1901, թիվ 2, էջ 60), ստիպուած *ըլլայ* (ն. ա.), հեռացած *ըլլայ կը բռնի* (ն. ա., թիվ 4-5, էջ 103), ճիգը *պետք է ըլլայ* (ն. ա.), գաղափարն ընթրեամ *ըլլա՞նու* համար (ն. ա.) և այլն:

Ըննվող պարբերականներում հանդիպում են նաև գրական լեզվի օրինաչափություններից այլ շեղումներ, տարբերություններ, գարաուղի ձևեր, որոնք, սակայն, ավելի մասնական բնույթ ունեն, ոչ բոլոր պարբերականներում են գործածվական: Ինչպես՝ 1. սեռական *իմ, քու, մեր, ձեր, իր, իրենք* ձևերի հետ *իր* գրաբար հոլովածնի գործածությունը: Օրինակ *իր* լեզուն և *իր* գիտին համար (Մս., 1896), *իր* վարդապետութան (ն. ա.), *իր* քահանայները (ն. ա.), *իր* քառազուլտրեան (Բզմ., 1898), *իր* արքայազուցըր (ն. ա.) և այլն: 2. Հոգնակի կազմության ժամանակ առանձին դիպելքում *չի* պահպանումը: Օրինակ *պարագայներ* (Շ., 1905), *քահանայներով* (Մ., 1890): 3. Գրաբարից եկող հայազական նախդասվող (ն. ա.) ձևը պահպանումը որոշ գոյականներում: Օրինակ՝ *գեայերն* որիչ բանով շնամբարեանեն (Հ. ամս., 1901), մաքսը կարող չէ *զատատան* ճանչնալ (Բյ., 1903), կը քաշայիլը *զմիարանորիքն* (Բզմ., 1898), կը ստիպեն *զՊնարտա* կը *զդեղնեան* օժը (ն. ա.) և այլն: 4. Սահմանական ներկայի և անցյալի համար բաղաձայնով սկզբող բայերի դիպումը կը եղանակիչ՝ բային միացած և առանց *քի* կազմությունն ու գրությունը: Օրինակ՝ *կ'վանէ, կ'նշակէ* (Ար. մ., 1899), *կ'վիսիքայի* (ն. ա.), *կ'նմայ* մեզի (Մս., 1896) և այլն: 5. Սահմանական ներկայի հոգնակի առաջին դեմքի *մը* գրաբարաձև կազմությունը: Օրինակ՝ *բակ կուզեմը* (Բյ., 1889), *անցնիմը* (Ար. մ., 1895), *կը դիտեմը* (Մս., 1893), *պիտի քանամը, չեմը* ուրամար (Բզմ., 1896), ոչ *կընամը*, կը *քննեմը* (ն. ա., 1894), մեք *կըմայեմը* (Բզմ., 1898), *չանիմը* (ն. ա.):

«Անահիտի» հրատարակախոսության լեզվում նշված քերականական իրողությունները չեն առկայում: Եվ քնդիմանալիս, գրեթե բացակայում են անհարկի բազմաձևությունները, նեղ բարբառային ու գուռ գրաբարյան իմաստով բառերի ու արասահայտությունների գործածությունները՝ չհաշված, ինարկի, գրաբարով կամ բարբառով, նաև արևելահայերենով շարադրված առանձին նյութեր, որոշ եղևույթների գրաբարամետ ու բարբառագիր ձգտումների ինչ-ինչ դրսևորումներ: Իսկ գործավող ձևերն ու արասահայտությունները (այդ բվում՝ աշխարհարարի ընդհանուր օրինաչափություններից շեղվող եղևույթաները), իբրև կանոն, խոսակցական լեզվում պահպանվածներն են, որ հետո պիտի ստորակային գրական արևմտահայերենում, ինչպես՝ *ի հարկի, ի նպատակ, ամեն ի վեր, առ Հայաստան, ի Յրանսան, ի Փարթի, տարի մը ի վեր, ի մտառ, հրատարակավ քննադատել, ըստ իս, ի յույս պիտի քննայեմք, զճն ի ձևիք, ի զիդ առնի, ժողովրդայան, հայս օսանցվող, որդայակցան, կարծյաց, Ռտասց և Վրացվող, ինչպիսյան* և այլն: Դրանք հանդեսում ավելի ռճակոն-արասահայտական արժեք ունեն, քան գուռ լեզվական-քերականական:

Լեզվական տարբերությունների շարքը, անշուշտ, կարելի է շարունակել, սակայն այս համատար ուրվագրումն անգամ, մեր կարծիքով, որոշակի է ցուցադրում «Անահիտի» լեզվի մշակված, կանոնական և նորմավորված բնույթը: Իսկ դա լեզվի *ժողովրդայնություն* կարևորագույն հատկանիշը:

Դրա հետ մեկտեղ, սակայն, «Անահիտի» լեզուն ունի ներքին որոշակի գծեր, յուրահատկություններ, որոնք առանձին դրսևորումներում շեղվում էին լեզվի ժողովրդայնության՝ իր ժամանակի հաճախ պարզունակ ըմբռումներից: Եվ դա երբեմն պատճառ է հանդիսացել, որ հանդիսի լեզուն ու ոճը սուր քննախոսության ենթարկվեն հսկասակ դիրքերից՝ իբրև ապաժողովրդական, ինքնամայատակ գեղարվեստի ոլորտներից մտաղի երևույթ՝:

Ի՞նչ գծերի և յուրահատկությունների մասին է խոսքը: Հայտնի է, որ լեզվի ժողովրդայնության կարևորագույն հատկանիշներն են լեզվամտածողությունը, արտասահայածեկին հաստի մի շարք միջոցներ, խոսակցական, պարզ, «խասարակ ժողովրդական» բառերի ու արասահայտությունների գերակշռությունը, կրկնություններ, գեղեցիկ, սեղություն, մառ:եխություն, համադրաս, անշողկապ կապակցությունների, խոսակցական շարահյուսական կա-

ույցների առաաություն և այլն:

«Անահիտում» նշված արտահայտչամիջոցները խիստ որակա-  
յին ու բանական ընտրության են ենթարկված: Դա վերաբերում է  
և՛ բառային, և՛ քերականական մակարդակներին:

Հազիվ թե կարելի է ասել, որ հանդեսում գերակշռում են գուռ  
խոսակցական ու բարբառային բառերն ու արտահայտությունները:  
Դրանք հանդեսն ավելի շատ չի գործածում, բան նույն շրջանի այլ  
պարբերականներ: Սակայն «Անահիտում» մշակվում են բառօգտա-  
գործման բնույթի երե ոչ նոր, ապա մի շարք հետաքրքրական  
սկզբունքներ:

Այստեղ բառի ընտրությունը նախ և առաջ բերադրվում է բառի  
իմաստով, նրա այն հատկությամբ, թե ինչ ստուգությամբ է արտա-  
հայտում երևույթը: Ասել է թե բառի ծագումնային պատկանելությու-  
նը առաջին պլանի վրա չէ: Սակայն, մյուս կողմից, հասուկ նշանա-  
կություն է տրվում այն սկզբունքին, թե ավյալ բառը որքանով է հա-  
րազատ ժողովրդական լեզվամտածողությանը, ինչ չափով է արտա-  
հայտում ազգային մտածողությունը: Ուստի ընտրության հնարավոր-  
ության դեպքում նախապատվությունը տրվում է բուն ժողովրդախո-  
սակցական ձևերին ու արտահայտություններին: Ինչպես՝ *ճիար ծուռ,  
լուծին տակ, յորճուկ, գեվգեկ(ություն), գեշ, քեֆ, քֆրեկ, պգաիկնայ,  
մանտրիկի, մեծկակ, նհարկեկ, կը քաշկտես, կը սկրդեն, մնառույ-  
յուն, աղորբան, պռռռա, խլրաուն, քաշվրռառ, պղառ, կլափ, քո-  
վերով, հողին վրա կրած, ձեռք գարնելու* և այլն: Այս տեսակետից ու-  
շաղղության արժանի է հետևյալ փաստը. մի շարք գոյականների  
անհնչյունափոխ( *ու* և *ի* ձայնավորները պահպանող) և հնչյունա-  
փոխ հիմքերից կազմվող թեթևած ձևերից (ինչպես՝ *փուշի // փըշի,  
սուրբի // սըրբի, քիչեր // քըչեր, մուրի // մըրի, գիծի // գըծի* և այլն): «Ա-  
նահիտը» հակված է գործածելու ստաջին ձևը՝ *սուրբի, քիչեր, փուշի,  
նակ՝ ծանուցումի, շարժումի, հյուրընկալումին ու դարբնումին մեջ* և  
այլն, որը հիմք բարբառի կարևորագույն հատկություններից է: Բացի  
այդ, այս ձևերն ավելի հնչուն են ու գեղեցիկ:

Հանդեսում, այսպիսով, ազատ գործածություն են ստանում ինչ-  
պես խոսակցական-բարբառային, այնպես էլ գրարարյան լեզվա-  
տարբեր, ծագումնային ու ոճական տարբեր պատկանելություն ու-  
նեցող բառաշեքները, քերականական զուգաձևերը: Գրարարյան ու  
խոսակցական բառերի, ձևերի ու արտահայտությունների այսպիսի  
ազատ կապակցումը ոճական բացառիկ արժեք ունի: Այն հանդեսի

բառօգտագործման բնույթի երկրորդ կարևորագույն առանձնահատ-  
կությունն է:

Այդպիսի կապակցման օրինակները բազմաթիվ են ինչպես Ա.  
Չոպանյանի հեղինակած գրվածքներում, այնպես էլ հանդեսի աշ-  
խատակիցներից շատերի գիտական գործերում: Հետաքրքրական է,  
որ դրանք հաճախ են հանդիպում նաև հրատարակախոսական բաժ-  
նի նյութերում:

Հրատարակախոսական ոճը նախ և առաջ բնութագրում են  
այնպիսի բառապաշարային ու դարձվածաբանական միավորներ,  
քերականական կառույցներ, որոնք լեզվաբանական գրականության  
մեջ ընդունված է կոչել կաղապար (շառմպ): Սակայն հրատարա-  
կախոսական ոճը չի սահմանափակվում միայն դրանցով: Այն լայնու-  
րեն կիրառում է նաև արտահայտչական միջոցներ: Տեղի է ունենում  
կաղապարի և արտահայտչամիջոցի մի հետաքրքիր հաջորդափո-  
խություն: Այս երևույթն ասես թե ինչպես է ներկայացնում ռուս  
լեզվաբան Գ. Կոստոմարովը. «Լրագրային-հրատարակախոսական  
ոճում գոյություն ունեն և սլայքարում են երկու հակադիր միասուններ.  
ձգտումը կայունացման (պատրաստի ձևակերպումների, բառաձևե-  
րի, բառակապակցությունների ու կառույցների ստեղծում) և ձգտումը  
դեպի արտահայտչականություն, որը ծնում է նոր միջոցների  
փնտրառարձակումների վրա ներգործելու համար: Արտահայտչա-  
կան միջոցները շատ արագ վերածվում են շառմպների՝ կորցնելով ի-  
րենց զգայական լիցքը, և պահանջում են նոր փոփոխություններ:  
Լրագրային-հրատարակախոսական ոճը և՛ կայուն է, և՛ շարժուն»<sup>8</sup>:

Լրատվական ու արտահայտչական տարբերի այս հերթագա-  
յունը կազմում է հրատարակախոսական ոճի Լուրյունը և գլխավոր  
հատկանիշը:

Շճմարիա է դիտված, որ ժուռնալիստիկայում ձևը (նկատի ունի  
նաև լեզուն ու ոճը) առավելագույն չափով է սրայնամավորված պար-  
բերական հրատարակության բովանդակությամբ, խնդիրներով, նշա-  
նակությամբ, նրա ախյով ու բնույթով<sup>9</sup>, ուրիշ խոսքով, արտալեզվա-  
կան գործոններով:

«Անահիտի» ազգային-գեղագիտական ծրագիրը, նպատակադ-  
րումը, գրական-գեղարվեստական հանդեսի ախյը, ընդհանուր քե-  
մաաիկան և բովանդակությունը, ընթերցող լսարանի լրատվական ու  
գեղագիտական պահանջմունքները և վերջապես աշխատակից-հե-  
ղինակների անհատականությունը արտալեզվական այն գործոններն

են, որոնք զգայի չափով պայմանավորում են հանդեսի լեզվի և ոճի բնույթը:

Այսպես, հանդեսն իր բնույթով ու նպատակադրմամբ և, ինտր-կն, գործունեությամբ լրատվական ներգործող «Ֆունկցիային» (որ ընկած է հրատարակատեսակի ոճի հիմքում) զուգահեռ առաջին պլան է մղում գեղարվեստական գրականությունը հաստի գեղագի-տական-ճանաչողական գործառնությունը, ուստի և այդ հիմքի վրա լայնորեն օգտվում է գեղարվեստական ոճի կառուցվածքային ու ար-տաստիպական հնարաններից: Դա շատ հստակ արտահայտվում է հանդեսի ժանրային կառուցվածքի լեզվաճանկան նկարագրում:

Նյութի ժանրային տարաբաժանումը շոշափում է ոճի սկզբուն-քային հարցեր: «Որևէ լրագրային ժանրի լեզուն ու ոճը նկարագրել, նշանակում է որշչկ նրա բառային-դարձվածաբանական ու քերա-կանական կազմը, բացահայտել բառի, արտահայտության, կառուց-վածքի օգտագործման սահմանները և դրանց տարածման ընդգրկու-մը»<sup>10</sup>:

«Անսիխո» լայնորեն օգտվում է վերլուծական-հրատարակա-խոսական ու գեղարվեստական-հրատարակախոսական ժանրերի ընձեռած արտահայտչական հնարավորություններից՝ դրանց լեզուն ու ոճն ընդլուստ մտնեցնելով գեղարվեստական գրականության լեզ-վին ու ոճին: Ավելին: Նույն ձգտումը նկատվում է նաև լրատվական ժանրերում: Ընդհանրապես այդ ժանրերին հատուկ լրատվականու-թյունը, հրատարությունը թեպետում են համաճառատախան լեզվա-կան միջոցներ լրատվական բառերի գեղակառույցում, լեզվական-քե-րականական պարզ կառուցվածքներ, արտահայտչական խիստ սահմանափակ հնարավորություններ և այլն:

«Անսիխո» քրոնիկների բառային-դարձվածաբանական կազմն անշուշտ ունի «ինֆորմատիվ» բնույթ: Կիրառություն ունեն նաև կողապարային ձևերը: Անս այդպիսի լեզվական միավորների մի քանի օրինակներ. «Անարուլ Յրանս շատ սիրուն ընդունելություն մը գտած է այնտեղի հայերուն կողմէ...», «Շահինի գործերը շատ մեծ հաջողություն գտած են», «Ավաճյան գտած է շատ սիրալիր ու շատ փառաշահական ընդունելություն մը ամերիկյան բարձր դասի ե-րաժշտասերներեն, «Հանույթով կ'իմանանք, որ...», «Հանույթով կ'ի-մանան նաև մասնավոր անավերներ», «Մեպետները 14 թվականով Պոլսեն նետագիր մը կը ծանուցանեն», «Պոլսեն, անճատույց աղբ-յուրի մը, մեզի կը հաղորդեն...» և այլն:

Սակայն նույն քրոնիկներում նկատվում է հրատարակա-խոսական ոճի բառային և քերականական մակարդակների ակտի-վացում. բառը, դարձվածք նոր օգտագործմամբ ստանում են հաստ-րակական երանգ, միաժամանակ սրվում է դրանց զգայական-ար-տահայտչական կոմք:

Բառերի նոր օգտագործում անելով՝ նկատի ունենք ամենից ա-ռաջ վերն ինչված հերթագայության սկզբունքը. գրաբարյան, հնա-ցած, խոսակցական ու բարբառային բառերի և արտահայտություն-ների անսովոր կիրառումները, որոնք սովորական (ընդունված է ստել նաև «շարքային») բառերի ընդհանուր շրջալույս անմիջապես ուշա-րույթուն են գրավում, խաթրի հաղորդում նկատելի արտահայտչա-կանություն: Օրինակ՝ «Ճայց Տանկաստանի խնդիրը ժիշկ այն մասի կետը կը կազմե որ առական և ֆրանսական բաղաբանություն-ներն իրար կը սկզբեն», «Շատ ծանր ու փափուկ դիրքի մը մեջ կը գտնվինք. մեկը մեկ կողմ կը քաշկտան և մյուսը մյուս կողմ», «Անը Հայքս ջերմորեն բաղձալու ենք գայր...», «Անոր տակական կյանքը հրատարակի վրա կը քաշկտան և այդ գծով գործին մեջ ի կիր կ'ար-կանեն խնդարյութումի, գրպարաության, ստուրյան աղտոտ գնեթե-րը», «Պ. Հախումյան առքի մը առաջ ի ծայց փողո և թնրկի ծա-նույց...»:

Իրրև արտահայտչականության աղբյուր հանդեսը դիմում է նաև փոխտաղայ բառերի ու արտահայտությունների, օտարաբանու-թյունների, իմաստային տարբեր նրբերանգներ ունեցող գիտաբառերի՝ տիրերանք, աղբյուրում, քոլեծ, ֆրագ, մնալիք, թեժիկ, թայա, սր-կիսներ, a priori ներքեր, «մեծորսանում»-ում, բարոյագրուկ մը (amoral) ըլլալ, «գրանջները, սրանալ, քաքրիկ, բրուկյան, բուսան-սեչներուն և օֆորքներուն, ճանարեռաներ, փարեխ, index, ախրա-պետող «թարս»ին, պատարիտան; այլուրտկրաստական», «պաշարա-քոյ» և այլն: Ինչպես երևում է քերված օրինակներից, օտար բառերը հաճախ առնվում են չակկումների մեջ, գրվում շեղակիր, կամ էլ գոր-ծածվող օտար բառի դիմաց փակագծում տրվում է հայերեն բացառ-ությունը կամ հակասակը: Սա նպատակ ունի էլ ավելի շեշտելու բառի ուղղակի, անմիջական իմաստը:

Պետք է ստել, սակայն, որ հանդեսում գործածվող փոխառու-թյունների մի մասը (դրանք իմնականում ֆրանսերենից են) արևմտահայ լեզվի զարգացման նետագա ընթացքում բնութայուն չի բունկ և դուրս է մնացել բառապաշարից: «Անսիխո» լեզուն արդա-

քացի քննադատության և արժանացել ինչպես այդ, այնպես էլ հայերենին խորք մի շարք բառաձևերի ու արասահայտությունների համար *չեղջեղյա՞մբ, պաշտպո՞ւնե՞րուն, փո՞ղզոցնե՞նի, կը խաղալասե՞ն, խնարայան, դո՞նդո՞ւներ, լիսկի՞րներ, խառնամանու՞մ, լիխյուկ, գաղփաղփոյուն* և այլն:

Հանդեսի լեզուն հարուստ է դարձվածքներով, փոխարեդրյուններով, մակդիրներով, համեմատություններով: Դրանց գործառնությունը չափավոր է հրապարակախոսության մեջ, մասնաձևից լրատվական ժանրերում: Մակայն կիրառվող մի շարք լեզվաձևական հնարքներ ավելի են սրում դրանց զգացական բովանդակությունը, քնդգծում արասահայտվածությունը խոսքի համեմատաբար փոքր հատվածում:

Գարձվածային միավորները, օրինակ, իբրև կանոն գործածվում են ոչ թե ուղիղ, այլ խոնարհված ձևերով, մի բան, որ զգալի արասահայտվածություն է հաղորդում խոսքին: Ինչպես՝ «Մուսապեյի դասը, որ մեծ ազնուկ հանեց, արքան *կրակը տված էր վառուպին*», «... մեր ազգային բաղարակաճության *ժանրության կեղտերը սխալ տեղ դրին*...», «Այդ երեկույթին *դաս մը պնար է որ քաղն* Բարիկի Հայությունը», «Մերեն այդ «շավիտություն» բառը վերջապես *զամբողջը կը նետեն*...» և այլն: Երբեմն գործ են ածվում նաև օտարաբովու ասացվածքներ, դարձվածքներ. «Բայց չի մտնանք նույնիսկ անոցն այն առածը որ կ'ըստ *«պապոց պաշտան օգոսար»* (հոտած գոլիս)», «...պատասխաներ էր թե ատիկա *Հիքմեթի հյորյունը* (կատալարական գաղափեր) մըն էր»:

Լրագրային ժանրերում փոխարեդրյուններն ու համեմատությունները սովորաբար կազմվում են երևույթի արտաքին, ակնհայտ գծերի ու հատկանիշների հիման վրա: «Աճանխախ՝ հրապարակախոսության լեզվաձևում նկատելի է ներքին բովանդակային գծերի հաշվամասն ձգտումը, որն ավելի արտահայտիչ ու ազդեցիկ է դարձնում խոսքը: Անա այդպիսի փոխարեդրյունների ու համեմատությունների մի քանի օրինակներ. «Այս բոլորը երազ մըն է եղել: Իրականությունը չուշացավ իր թիտ ու աղօտս մտաներովն այդ երազը բզկատու», «...սրբես թե դեռատի սաղանդի մը մանգաղտնն ինասանիքը», «...քարզմանության մը՝ ոճը կը հոսի սովակի մը պես, ու կ'ըբզ ու կը շողաս», «Տառակալան բարձրամտությունը կը նմանի սպանված ու զննաված անասուններու գոր բնական գիտությանց մտանուններու մեջ կը ցուցադրեն...», «... զայն կը ներկայացնեն այնքան հա-

փատարձությունը, որքան ճանիճ մը իր վրա ծող դեմը մը կը պատկերացնե՞ր», «Վազ գրագետն քան ետեին ժամըլիցը» և այլն:

«Աճանխախ» լեզվին հատուկ են ասանձանավորումը, համագոր, համապաս անգամների ու կապակցությունների կրկնությունները: Մի բան, որ առեսարակ հատուկ չէ հրապարակախոսական ոճին: Լեզվական միջոցների նման քնարությունն ու գործածությունը ամենից առաջ պայմանավորված է երևույթն իր բովանդակ էությանը, բազմակողմանիորեն ներկայացնելու ձգտումով, ինչպես նաև թվում «ինքն իր մեջ» զարգացնելու մտահոգությամբ: Բանն այն է, որ 80-90-ականներին մտածողն դեռ ամբողջությամբ հաղթահարված չէր քառի իմաստային առումների նկատմամբ ու ճշգրիտ մտանցումը, երբև՛ն անհրաժեշտ ուշադրություն չէր հատկացվում բառիմաստային նրբություններին: Բառերի իմաստային առումների նկատմամբ թծախնդրության հասնող վերաբերմունքով և դրանց ճշգրտման դեբով «Աճանխախ» լեզուն առանձնանում է:

Գործածված յուրաքանչյուր բառ, լեզվական յուրաքանչյուր միավոր, իբրև կանոն, կրում է իմաստային իր ծանրությունը, նոր գիծ, նոր ներբերանգ է ավելացնում ավածին: Պատկերայնության քնույրք տարբեր է. ընտրված փոխարեդրյուններն ու համեմատությունները, միայնաց հաջորդող մակդիրները երբև՛ն չեն կրկնում իրար և ճշգրիտ են, նախատեսված ոչ միայն արասահայտվական ներգործության համար, այլև գլխավորապես առարկաների ու երևույթների քննարկուման, խորացման կամ, ինչպես հանդեսում է սաղան, իմաստային ու արասահայտվական «բարակ տարբերություններ ստեղծելու» համար: Բազմաթիվ օրինակներին բերելը միայն մեկը հրապարակագրության էությունն ու դերը քննարկող այս տողերը. «Այդ քառիսն մեջ, որ այնքան գեղեցիկ տարբեր այնքան ազեղ տարբերու հետ կը խառնամանեին, բերելու համար որոշ, հզոր, սուր, ասք, ասք, ասք քափանցելու և ցույց պիտի տար շխտակն ու սխալը, ազեղն ու գեղեցիկը, անհրաժեշտ էր հրապարակագրությունը, այսինքն սեմյակն դուրս էլան, Պառնասան փայ իլյան, քնարը մեկըլի ձգած, հրապարակի վրա նետված ու ժողովրդին խառնված, ժողովրդին առօրյա կյանքովը միայն զբաղիլն իրեն նպատակ քնարած ու ժողովրդին լեզվովն անող խոսող ու կյանքի ճանրա մը անող ցույց տվող սրբալ ու հոտակն և «գործող» գրակախությունը»:

Բառերի իմաստային առումների «բարակ տարբերություններ»



րու» հաշվառումը «Անահիտի» բառօգտագործման բնույթի երրորդ կարևորագույն առանձնահատկությունն է:

«Անահիտի» հրապարակախոսական ոճին հատուկ են նաև լեզվի պատկերավորության ու արտահայտչության այլ միջոցներ ու հնարներ. բայական կապակցությունների փոխարեն անվանական կապակցությունների գերակշռություն, նույն բաղադրիչ մասերից կամ համահնչյուն տարրերից կազմված բարդությունների գուգադիր գործածություն (*Ճշտապես ու ամբողջապես, հակակիր ու հակախոհ, որոշաբար ու զիտակցաբար, անընտիր ու անխտիր*), բառաբարդումներ՝ մի մասը գրաբարից փոխառված (*օտարախորթ, ծանրատաղտուկ, փրփոտույց, որոշաբար, ճոխապանույճ*), մյուս մասը՝ ինքնաստեղծ (*սաստկարուռն, չափագիտություն, նախընդօր, կազդույր, արեհավրաշունչ, անդրջրհեղեղյան, Հայաստանասիրություն*), երրորդները՝ գործածվող բարդություններ, բայց նոր համադրությամբ (*հոգեբան-գեղարվեստագետ, հայրենասեր-մակարյուծներ, պոռոտախոս-դիվանագետ, հայրենասեր-բոտիսք-դերասան-գործիչներ*) և այլն:

Ինչ վերաբերում է լեզվի ժողովրդայնությունը հատկանշող քերականական-արտահայտչական միջոցներին (պարզ նախադասություններ, խոսակցական շարահյուսական կառույցներ, անշաղկապ կապակցություններ և այլն), վերն ասվածից դժվար չէ կռահել, որ դրանցով «Անահիտն» աչքի չի ընկնում: Ընդհակառակը, հանդեսի լեզվում գերակշռում են շաղկապական կապակցությունները, բազմաբարդ քերականական կառույցները, ծավմուն պարբերությունները (վերջիններս մեծ լարվածություն ու հրապարակախոսական լիցք են հաղորդում խոսքին): Առանձին դեպքերում նախադասությունը կազմող բառերի թիվն անցնում է հարյուրից:

Նշված հատկանիշները, սակայն, դույզն չափով չեն խանգարում բառընկալմանը, նյութի մատչելիությանը:

Հանդեսի հրապարակագրական խոսքը հակիրճ չէ, բայց երբեք մթազնված, երկարաբան: Անմշակ չէ, հղկված է ու գեղեցիկ:

Լեզվական տարրերի ճշգրիտ ընտրությունը և դրանց ոճականորեն պատճառաբանված կիրառումները, նախադասության կառուցվածքի ու կազմության, պարբերության ստեղծման օրինաչափությունների իմացությունն ու խստիվ հաշվառումը այն գործոններն են, որոնք հանդեսի խոսքը դարձնում են պարզ, մատչելի, կառուցիկ:

Այս յուրահատկություններն «Անահիտի» հրապարակախոսու-

յան լեզվաոճին հաղորդում են գեղարվեստական խոսքի հատկանիշներ, պայմանավորում այդ հրապարակախոսության ակնհայտ *գեղարվեստականությունը*:

Հրապարակագրական ոճի յուրահատուկ գծերի սահմաններում կիրառվող այս հնարները շատ կողմերով նոր էին հայ մամուլի լեզվական արվեստի ու մակարդակի համեմատությամբ:

## V. «ԱՆԱՀԻՏԻ» ԸՆԹԵՐՈՅՈՂ ԼՍԱՐԱՆԸ

Յուրաքանչյուր պարբերական հրատարակության հասարակական տեղի ու դերի, նրա տիպաբանական հատկանիշների քայքայախայտման ու բնութագրման հարցում հիմնորոշ նշանակություն ունի լրագիր (հանդես)-ընթերցող լսարան կապի ռուսմենսիտությունը: Շատ կարևոր է պարզել լսարանի քանակային, քնկերային-ժողովրդագրական կազմը, մասնագիտական ու կրթական առանձնահատկությունները, լրատվական պահանջույթները, մասնագիտական հետաքրքրությունները և այլն: Ընկերաբանական նման հետազոտություններն օգնում են խոր և հիմնավոր պատկերացում կազմելու տվյալ պարբերաբերի դերի ու նշանակության, գործունեության ու բովանդակության հասկանալի կողմերի մասին, ճշտելու նրա լրվանդակային ու սոցիալական ուղղվածությունը, հատարակական ներգործության չափը: Եվ, որ ամենից կարևորն է, հնարավորություն է ստեղծվում բովանդակության ձևաչափաված վերլուծության շնորհիվ վերացարկվել պարբերականի կոնկրետ համարների, կոնկրետ նյութերի անհատական հատկանիշներից և պարբերականի գործունեությունը գնահատել իրրև մեկ ընդհանրական երևույթ, որ բնութագրվում է քանակապես արտահայտված հատկանիշների ամբողջությամբ: Այս տիպի հետազոտությունների ժամանակ առանձին դժվարություններ են ծագում, երբ գործ ենք ունենում անցյալի պարբերական հրատարակությունների հետ: Նախ և առաջ այն պատճառով, որ հետազոտման կարևորագույն եղանակներից մեկը լսարանի հարցումը, այս դեպքում հնարավոր չէ կիրառել: Բացի այդ, անցյալի պարբերականներն իրենց էջերում սովորաբար տեղեկություններ չեն տվել բաժանորդների քվի, սոցիալական կազմի մասին: Այս պարագային արդեն հետազոտման կիմնական աղբյուր են այդ պարբերականների արխիվները (խմբագրական փոստը): Անհրաժեշտ նյութ կարելի է քաղել նաև դրանցում հրատարակված տեղե-

կալական հաղորդագրություններից, ազգագրերից ու հայտարարություններից, որոնց հեղինակներն իրենք՝ ընթերցողներն են: Որոշակի նյութ են տալիս նաև ժամանակի րեքրերն ու հանդեսները՝ մասնալի տեսության իրենց համապատասխան բաժիններով: (Արևմտահայ մամուլում այդ բաժինները սովորաբար կրում են «Հանդես հանդեսներու» խորագիրը):

Հայանի է, որ հայ պարբերականների մի զգալի մասի արխիվները չեն պահպանվել, մասնալից արևմտահայ րեքրերինն ու հանդեսներինը: Սակայն «Անահիտ» այն շչիցի է, որի խմբագրական փոստը մեծավ մասամբ մնացել է անվնաս և այժմ էլ Չոպույանի արխիվի հետ պահվում է Հայաստանի Ե. Չարինգի անվան գրական թանգարանում և արվեստի թանգարանում: Սեր ռուսմենսիտության համար հիմնական նյութ ենք քաղել այդ արխիվից, ինտրիկ, միաժամանակ օգտագործելով վերոհիշյալ օժանդակ աղբյուրները:

### 5.1 ԼՍԱՐԱՆԻ ԹՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Այդ մասին «Անահիտ» համարներում որևէ ստույգ տեղեկություն չի տրվել: Այդպիսի փաստերի չեն հանդիպում մեր ձևերի առկայեց մյուս նյութերում նույնպես: Հետևաբար հանդեսի բաժանորդների ընդհանուր թիվը հնարավոր եղավ որոշել միայն մտավոր կերպով՝ ինքն ունենալով հետևյալ աղբյուրները. ա) ստույգ թիվը հանդեսի աշխատակից-հեղինակների՝ 93, բ) թղթակցած, քայքայազրկված հեղինակների մտավոր թիվը՝ 70, գ) գործակալների բաժանորդագրական ցուցակներում նշված անունները՝ մոտ 420՝ չհաշված ա և բ խմբերի բաժանորդներից:

Բացի այդ, որոշ թվով նոր բաժանորդների մասին տեղեկություններ են քաղել ընթերցողների անհատական նամակներից (այդ թվում անձնական բնույթի, որոնցում իշխատակվում են առանձին բաժանորդների անուններ), հանդեսի «Ազգային բրոնիկ», «Ազգ», «Երրակցություններ», «Սեր բաժանորդներում», «Սեր ընթերցողներում» բաժիններում և կազմարկերի հայտարարություններում բաժնեգիր, նվիրատվությունների ու հանգանակությունների ստացման, լսարանի պահանջների ու կարծիքների մասին ժամանակ առ ժամանակ տրվող յուրերի և, ինտրիկ, Ա. Չոպույանի նամակներից:

Այս ալյաբներով «Անահիտ» բաժանորդների թիվը պետք է ն-

դամ լինի 620-640: Բայց դա դեռ բոլորը չէ: Ավելացնենք նաև այսպես կոչված հավանական բաժանորդների քիվը: Դրանք մախ և առաջ այն անձինք են, ովքեր բեռ նամակներում, գրություններում կամ որևէ որչիչ առիթով չեն հիշատակվի որպես բաժանորդ, անհավանական է սակայն, որ «Անահիտ» բաժանորդագրված չլինեին, քանի որ համընդհանուր հրատարակության շրջանում ակտիվ նամակագրություն են ունեցել նրա խմբագրի հետ, լավ ծանոթ են եղել Չոպանյանի գրական և խմբագրական գործունեությանը: Դրանք թվին անցնում է 70-ից՝ չհաշված, ինտրելի, արդեն նշվածները:

Եվ հետո, երկրորդ տարեշրջանից սկսած (1900-ից) հանդեսի կազմաբերքի վրա պարբերաբար տրվել են աարքեր բնակավայրերում գտնվող նրա գործակալների անվանացանկերը (ընդհանուր թվով՝ 100-ից ավելի): Բայց մեր ձեռքի առկա եղած նյութերը տեղեկություններ չեն տալիս 30-ից ավելի քաղաքների ու գավառների (հիմնականում՝ Արևմտյան Հայաստանի, 1908-ից հետո՝ նաև ԱՄՆ-ի) բաժանորդների վերաբերյալ, որոնց գոյության մասին է վկայում ինքնին գործակալների գոյության փաստը: Եթե այդ պարբերներից ու գավառներից յուրաքանչյուրում «Անահիտ» ունեցած լինի նվազագույնը 4-5 բաժանորդ (հսկաառակ դեպքում անխնայա կլիներ այդ վայրերում հատուկ գործակալներ պահելը), ապա, հանդեսի բաժանորդների ընդհանուր թվին կարելի է ավելացնել ևս 130-140-ը (30×4,5): Այսպիսով, ընդամենը 850-900 կամ՝ մի քիչ ավելի: Սեր կարծիքով, սա հանդեսի երբևէ ունեցած բաժանորդների առավելագույն թիվն է, որը, ինչ՝ խոսք, անփոփոխ չի մնացել նրա երկարատև հրատարակության տարբեր աստիճանում:

Մակայն հարց է առաջանում. հանդեսի ընթերցող լսարանի թվական կազմը արդյո՞ք պետք է սահմանափակել միայն բաժանորդներով:

Այդպիսի մտաեցումը, սխալուշա, սխալ կլիներ և անհամեմատ կկորցացներ լսարանի ընդգրկման շրջանակները:

«Անահիտ» ընթերցվել է ոչ միայն բաժանորդների կողմից: Հանդեսի համարներն ստձեան վաճառվում էին առանձին քաղաքներում (Կահիրե, Ալեքսանդրիա, Թիֆլիս՝ 1902-ից, Փարիզ, Կ. Պոլիս՝ 1908-ից), ստացվում է ընթերցվում էին մի շարք զրազարաններում, ընթերցարաններում, տարբեր կրթօպիսներում ու միություններում, ինչպես նաև բազմաթիվ քերթրի ու հանդեսների խմբագրություններում՝ «Բազմավայր», «Մորեթ», «Մշակ», «Նոր դար», «Շի-

բակ» և այլն: Այդ պարբերականներից շատերն իրենց հերթին հաճախակի տեղեկություններ էին տալիս «Անահիտի» բովանդակության մասին, կրթնն նաև քննում ու վերլուծում այս կամ այն նյութը՝ ընդարձակ մեջբերումներով, կամ բաժանվեցնում որևէ խնդրի շուրջ:

Եվ հետո, առանձին գաղաթվայրերում «Անահիտի» օրհնակները ձեռքից ձեռք էին անցնում, մի համարը երբևէ ընթերցվում էր սասնակյալ գրատեր-մտավորականների կողմից, իր բովանդակությանը դառնում քննարկման առարկա տարբեր սոցիալական խմբերում և ընթերցողական լսարաններում: Իսկ մի շարք վայրերում էլ (ինչպես՝ Կ. Պոլսում և Արևմտյան Հայաստանի գավառներում մինչև 1908 թ.) հանդեսի մտարքն արգելված լինելու հանգամանքը էլ ավելի էր մեծացնում հետաքրքրությունը ազգային այդ պարբերականի նկատմամբ և փաստորեն հսկառակ ու բարենպաստ ներգործությունը ունենում նրա աղարածման համար: Հիշում է պոլսոբնակ Հակոբ Սիրունին. «Ժանի՛ րախտապոլ կար, որ տեսած ըլլար «Ազգանիկ» ու «Անահիտը», «Գրոշակի» ու «Շիրակի» Համայնի սև օրերուն... Երբևէն, սանկ, բարի քոթիկ մը կը սպրդեր ներս կիցար մեր ձեռքը և կուռցներ մեր հոգին՝ ինչ քաղցր, քայց և ինչ՝ միամիտ հոթիզուններ բանալով մեր տեխիքներում: Ու աղե աղու կը պտտցնեինք մներս հաշոր օրը մեր այդ անուշ խառվրք...»: Հանդեսի շատ համարներն նույն րախտին են արժանացել նաև Թիֆլիսում:

«Անահիտ» ընթերցվել է նաև շատ բաժանորդների քնտանիքների անդամների կողմից: Հովհաննես Թումանյանը, օրինակ, «Անահիտին» բաժանորդագրվել է 1904-ից (տես ԱՉԳ-1988): Բանաստեղծի կինը՝ Օլգա Թումանյանը, ամենայն հավանականությամբ նույնպես պարբերաբար ընթերցել է «Անահիտ»-ները: Արքիին համարում կարողավ հանդեսի դպրարքցման լուրը՝ նա Չոպանյանին ուղղած իր նամակում խոր ցավ է հայտնում այդ հավակցությանը և ցանկանում, որ հնարավորության դեպքում Չոպանյանը շարունակի իր սիրած գործը:

«Անահիտի» բաժանորդներից էր դերասանուհի Ա. Հրաչյան: Նրա ամուսինը՝ ճանաչված մշակութային գործիչ Անտոն Գարսն, 1899թ. Բարվից Չոպանյանին իրավ գրության մեջ հայտնում է իր և կնոջ խաղը համակրանքը նրա խմբագրական և հրատարակատեսական գործունեության նկատմամբ, միաժամանակ խնդրում է իրեն նույնպես արձանագրել հանդեսի բաժանորդ (տես ԱՉԳ-1473): Գեար է ներարթել, որ նա նույնպես կարողում էր կնոջ ստացած

«Անահիտ»-ները:

«Անահիտի» և նրա խմբագրի գործունեությանը լավ ծանոթ են եղել նաև Թեոդիկ ամուսինները (հայտնի խմբագրապետ Թեոդորոս Թեոդիկը և հասարակական, մշակութային գործիչ Արշակունի Թեոդիկը, տես ԱԶՖ-2242, 2250-5):

Հետաքրքրական է նկատել, որ երբեմն ընտանիքի մի քանի անդամներ միասին են բաժանորդագրվել «Անահիտ», ինչպես՝ մոսկովաբնակ գրասեր հայերից Ժամհարյան եղբայրները, նաև Շահնագարյան, Ճանունյան եղբայրները և այլք:

Այսպիսով, բաժանորդ և ընթերցող լսարան հասկացություններն այստեղ ակնհայտորեն չեն նույնանում: Իրականում հանդեսի (ինչպես ցանկացած պարբերականի) ընթերցողների շրջանակը շատ ավելի լայն է, քան փաստացի բաժանորդներինը: Մեր ուսումնասիրության մեջ առաջնորդվել ենք հենց այդ համոզմամբ, և եզրակացություններն էլ հիմնվում են հանդեսի իրական լսարանի հետազոտման վրա, որի կազմի մեջ մտնում են և՛ բաժանորդները, և՛ բոլոր նրանք, ովքեր այս կամ այն ճանապարհով ձեռք էին բերում հանդեսը, ընթերցում<sup>2</sup>:

## 5.2 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1890-ականներից սկսած արևմտահայության մեծ արագադրի հետևանքով նոր զանգվածներով համալրվեցին հայոց հնագույն գաղթօջախները՝ Եգիպտոսը, Պարսկաստանը, Լեհաստանը, Ֆրանսիան, Լիբանանը, Հունաստանը, Սիրիան, նաև՝ Ռումինիան, Հունգարիան: Հայկական հայաշատ համայնքներ կազմակերպվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Անգլիայում, Բելգիայում, Արևմտյան Եվրոպայի մի շարք այլ երկրներում:

Այդ շրջանում երկրից հեռու գտնվող գաղթօջախներից որևէ մեկում գործող հայերն պարբերականը, եթե ձգտում էր կազմակերպել հայ հասարակական կամ գեղարվեստական միտքը, մեկ գաղափարի շուրջ համախմբել հայության տարանջատ զանգվածներին, անպայմանորեն իր առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է նկատեր մեծաքիվ ընթերցող լսարան ունենալ այդ գաղթօջախներում: Հակառակ դեպքում նրա նպատակադրումները՝ որքան էլ ազնիվ ու արդիական, գործունեությունը՝ որքան էլ սպասված ու ազգօգուտ, պիտի

մնային չիրագործված:

Շրագրելով «Անահիտի» հրատարակությունը՝ Ա. Չոպանյանը հենց սկզբից էլ գիտակցում էր հարցի կարևորությունը: Ահա քե ինչու հիմնադրումից ամիսներ առաջ (և հետագայում էլ) նա հատուկ ջանքեր է գործադրել հանդեսի տարածումը հայկական տարբեր գաղթօջախներում ապահովելու համար: Եվ գուր չանցան այդ ջանքերը: Կարճ ժամանակ անց «Անահիտ» իր բաժանորդներն ունեցավ հայկական ամենատարբեր բնակավայրերում՝ Եգիպտոս, Պարսկաստան, Անգլիա, Հարեշտան, Ռումինիա, Բուլղարիա, Լիբանան, Ավստրիա, Իսպանիա, Ճապոնիա, Շվեյցարիա, ԱՄՆ, Կանադա, Բելգիա, Գերմանիա, Հորդանան, Սիրիա, Հունաստան, Ռուսաստանի ու Անդրկովկասի մի շարք քաղաքներ և այլուր: Թվով մոտ 31 երկրների 130-ից ավելի նահանգներում, քաղաքներում ու գավառներում:

Հանդեսը լայն տարածում գտավ հատկապես այն գաղթավայրերում, ուր գոյություն ունեին կամ կազմավորվում էին խոշոր հայ համայնքներ՝ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Եգիպտոսում:

**Ֆրանսիան** հայոց հնագույն գաղթօջախներից է: Նոր ժամանակներում այստեղ տասնամյակներ շարունակ կրթություն է ստացել հայ (մասնավորապես արևմտահայ) ուսանողությունը: 19-րդ դարի վերջին քառորդում Փարիզը դարձավ նաև գաղութահայության մշակութային ու հասարակական կյանքի խոշոր կենտրոն և հայ-եվրոպական առնչությունների մի յուրօրինակ քառերաբև՝ արևմտահայոց ազգային ազատագրության գաղափարական ոգորումների իմաստով: Այդ շրջանում Թուրքիայից հարստացված արևմտահայ մտավոր դասը առաջին հերթին դիմում էր Ֆրանսիա, Փարիզ՝ իր ջանքերը միացնելու ազգապահպանության ընդհանուր գործին: Մեկը մյուսի հետևից Փարիզում ստեղծվում են գրական-մշակութային ու հասարակական տարբեր միություններ, կազմակերպություններ, քննկերություններ, սկսում են լույս աեսնել հայ մամուլի տարբեր օրգաններ: Այս բոլորը նպաստում են ֆրանսահայ ուժերի համախմբմանը, համայնքի կազմակերպման ու հասարակական եռանդուն գործունեության ծավալմանը: Ահա հանգամանքներ, որոնք, մեր կարծիքով, պակաս կարևոր դեր չեն խաղացել այն քանում, որ Ա. Չոպանյանը հենց Փարիզում սկսեց իր նոր հանդեսի հրատարակությունը, քանի որ Փարիզը, իբրև այդպիսին, մեծ դյուրություններ կարող էր բնծայել հայերնիքից հեռու հիմնադրվող հանդեսի գոյությանն ու գործունեությանը: Ու նաև դա էր պատճառը, որ «Անահիտը» մեծ թվով բա-



ծանոթներ և աշխատակիցներ ունեցավ հենց Փարիզում: (Հասարակական պահվող բաժանորդագրական ցուցակների՝ 53-60, անս ԱԶԳ-ՅՕՉՅ<sup>33</sup>): Այս ինստիտուտը բնութագրական է, որ հայ խմբագրիչներից շատերը հույս են ունեցել կոթակական հայ գաղթօջախներից հասկապես Փարիզում ձեռք բերել ընթերցող մեծ խորան: Օրինակ Միրայել Շամուսանյանը, 1898-ին Կ.Պոլսում ստանձնելով մոր «Մասիս» (գրական, գիտական և ինստատիքական կիսամսյա հանդեսի) խմբագրությունը, դիմում է Չոպանյանին. «Եր ուսում, - որ Բարիկ ունի մոտ 50 բաժանորդ գտնես սա «Մասիս» (ԱԶԳ-5489):

Յրանախայի հայ բնակչությունը կենտրոնացված էր հիմնականում Փարիզում ու Մարսելում: «Անահիտ» ֆրանսահայ բաժանորդների գերակշռող մասն էլ բնակահարար այդ քաղաքներին է: Գավառական քաղաքներում՝ Նանսի, Էրինակ և այլն, դրանք թվով անհամեմատ քիչ էր:

Փարիզում, բացի բաժանորդներից, հանդեսի համարներն ստանում էին «Հայ ուսանողաց» և «Հայ երիտասարդաց» միություններից, ինչպես նաև մի շարք պարբերականների խմբագրությունների՝ «Բանասեր», «Կուռնկ», «Համալսարան» (1899-1902), «Ժողովուրդին համար» (1901), «Գորսան» (1901-1905), «Ասպարեզ» (1905-1910), «Պրո Արմենիա» (1900-1914), «Լ.՝ Արմենիա» (1898-1906): Մարսելում հանդեսի մշտական բաժանորդն է եղել «Հայոց ընթերցասիրաց քննչությունը»:

«Անահիտ» *եզիպատիս* յարաբեր հիմնականում բաղկացած է Ալեքսանդրոփայի և Կահիրիի հայությունից: Տարբեր աղբյուրներում հանդեսի՝ այդ քաղաքների գործակալներն են եղել Սիսակ Արմենյանը (Տիգրան Կասաբական), Հովհաննես Գարսանյանը, Աղաթա Նորատունկյանը (Ալեքսանդրոփայում), Հակոբ Օհանյանը, Թորգոմյանը, Կիրակոս Չուլալյանը, Աշոտ Մուրադը, Ասաբըր (Առաքել Փավազյան), Արմենակ Առիկյանը (Կահիրեում) և ուրիշներ, բոլորն էլ՝ զբաղմունքով ու մասնագիտությամբ հրատարակիչներ կամ գրական գործիչներ: Չոպանյանին ուղղված նրանց նամակները հետաքրքիր տեղեկություններ են տալիս յարասնի քանակական ու տեղակայման կազմի, հետաքրքրությունների, դեպի հանդեսն ունեցած վերաբերմունքի, նույնիսկ ստանձնի ընթերցողների անձնական հատկանիշների մասին:

